Կ/Ժ – 6-41-08

# ԸՆՏԻՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

---

## Ն. ՇՆՈՐՀԱԼԻ



C. Rizzard dis. A. Viviani inc.

Սբ Եկեղեցւոյ Ընդհանրական
Հայաստանեայց ։



Ի ՎԵՆԵՏԻԿ
1830

891.99
Ն-63

ՏՆ. ՆԵՐՍԵՍԻ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

# ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

## ԲԱՆՔ ՉԱՓԱՒ

6435
246

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԲՆ ՂԱԶԱՐ
ՌՄՀԹ

## ԶԳՈՒՑՈՒՄՆ

Ի մի յայս մատեան բովանդա-
կեմք զամենայն տաղաչափութիւնս
Շնորհալւոյն, բայց յընտրելագու-
նէն 'ի քերթածս նորա յՈղբոյն Ե-
դեսիայ, և 'ի Շարականացն։

Բայց գիտասցեն ընթերցօղք, զի
ոչ եթէ վարկպարազի ընտրանաւ
այսոքիկ 'ի տիպ ածան՝ ըստ յետ-
նոց ինչ պատուասուտ գըչագրաց, ո-
րոց յաւելուածք անդստին յանհա-
մութենէ տողիցն և 'ի կաղ ոտիցն
չափոյ նշանակին՝ առ անհմուտս ե-
թէ պատրուակեալ, այլ ամենայն
զգուշեաւ բաղդատեցան ընդ տասն

և ընդ առաւել ևս ձեռագիրս , յո-
րոց մանաւանդ չորք վաղեմիք են և
հարազատք . 'ի ձեռին ունելով և
զամենայն տպագիրս : Իսկ զերկբայ-
ելի ընթերցուածս յետ կոյս մատե-
նիս դրոշմեցաք : Բայց զվիպասա-
նականն միահետ ողղերդութիւն ,
ըստ ոմանց 'ի դրչագրաց , յերիս
գիրս բաժանեցաք :

---

ՏԵԱՌ՛Ն

# ՙՆԵՐՍԵՍԻ

## ՆՈՒԷՐ ՄԱՂԹԱ՛ՆԱՑ

ՆԵՐԶԱՓԱԿԱ՛Ն ՏԱՂԻՒ
ՏՈՒՈՂԻ՛Ն ԲԱ՛ՆԻՑ ԸՂՁՈՒՄ՛Ն
ԱՂՕԹԻՑ

ՆԵՐԱ՛ՆՁՆԱԿԱ՛Ն ՀՈԳՒՈՑ
ՋԱՐԹՈՒՑԵԼՈՑ ՄՏՕՔ
Ի ԹՄԲՐՈՒԹԵՆԷ ԿՐԻՑ

ՅԻՇԱՏԱԿԱՒ ԱՆՑԵԼՈՒՄ՛Ն ԻՐԻ
ՆԵՐԿԱՅԻ ԵՒ ԱՊԱԳԱՅԻ

ՈՂԲՈՒՄ՛Ն
ՀԵԾՈՒԹԵԱ՛Ն ՄՐՏԻ

ԽՕՍՔ

ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

# ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ

# ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ Ի ՏԱՌԻՑ

## ՍՐԲՈՑ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ՅԻՍՈՒՍ, Որդի Հօր միածին,
Եւ ճառագայթ կերպարանին.
Ծընունդ անճառ ակըզբնաւորին,
Անհատաբար քում ծընօղին.
Յորմէ եղեալքըս ներգործին,
Իմանալիք, որք երեւին,
Մարմին եղեալքս և անմարմին,
Անբանականք, հանդերձ բանին.

Կենդանականք, որ բուսանին,
Եւ անկենդանք որ ոչ շարժին ։
Յորոց ընդ հօր քում սիրողին
Քեզ գոհութիւնք մատուցանին ,
Եւ ընդ հոգւոյդ քում էակցին
Փառաւորութիւնք վերառաքին
Ի յընդրելոց մաքրագունից՝
Որք ընդ յարկաւ քո մուծանին
Ընկալ և զիս , տէր , ընդ նոցին
Ըզպատուանդանօղս պատուիրանին ,
Ըզհրամանօղս անուանկին
Եւ զինչըս հօրըդ վատնողին ,
Զ՚ի քէն պատիւն անգիտողին ,
Եւ հաւատար գող անմըտին ,
Ի դիւացն ագարակին
Զերամ խոզից արածողին ,
Սովեցելոյն՝ ոչ սով հացին ,
Այլ լըսելոյ տեառնըդ բանին ,
Ցանկացելոյ ջերմ եղջերին ,
Քաղցըր մեղաց դառնագունին ։
Որպէս Ադամն այն առաջին ,
Այն որ մեղօքն անուանի հին ,
Որով մեռաք ամենեքին ,
Եւ կորուսաք ըզցանկալին ։
Ո՜հ ես նըման մեղայ նըմին ,
Եւ յանցանաց մօրն Եւային ·

Եւս առաւել քան ըզ Նոյին
Գըտայ յանցող սուրբ օրինին :
Զի պատուիրանն էր Նոցա մին ,
Վասըն միոյ դառըն պըտղին .
Իսկ ինձ բազումըս քարոզին ,
Վասն բազմաց ըզիս սպանողին .
Յորոց 'ի բաց կալ հրամայիմ ,
Զի մի՛ մահու մեռանիցիմ .
Եւ ես կալեալ կամ 'ի Նոյին
Տոռամբ մեղաց , որպէս ասին :
Բացի զականջըս պատրողին ,
Եւ զհրաւէրըս չար օձին .
Լեզուաւս ետու զպատասխանին ,
Անմըտաբար խորամանկին .
Ձայնըս հարի առ ցանկալին ,
Յորմէ արգել բան հրամանին .
Ոտք իմ յընթացս արշաւեցին ,
Փայտին մահու մերձ զիս ածին .
Ձեռն իմ ձըգեալ յուղէշ ծառին ,
Կըթել պըտուղ ինձ մահածին .
Բերանս առեալ զճաշակ մեղուին ,
Բայց յորովայնըս մաղձ դառին .
Յորմէ վիժեալ թոյնք վիշապին
Եւ գարշահոտ մահաբերին ,
Եհեղ ըզախտս 'ի պըղծալին ,
Զերիկամունս 'ի ջերմ ախտին :

Ըզպատմուճան սըրբասիրին՝
Զոր ըզգեցայ յաւազանին՝
Զայն մերկացայ խաբմամբ չարին,
Զլինել արկի զմաշկեղինին։
Ընդ փափկութեան կենաց դրախտին,
Որ իմաստից օրինակին,
Մըշակեցի յիմումն անձին
Զփուշ և զտատասկ մեղաց բուսին։
Ընդ անաշխատ կենաց վայրին,
Որ ըստ յուսոյն թեթև ասին,
Ուտեմ քրտամբք զաւօրէին,
Դառնամ'ի հող ուստի առին։
Արդ աղաչեմ ես ընդ նըմին,
Թէ, հայր, մեղայ քեզ'ի յերկին.
Չեմ արժանի կոչել որդին,
Այլ վարձկանացն արա վերջին.
Արժանացո մաքրագունին
Հօրըդ բարւոյ սուրբ ողջունին։
Ընդ հովանեաւ հարսնարանին
Ժողովեսցես զիս վերըստին.
Եւ զպատմուճանըն զառաջին
Զոր աւազակըքն մերկացին,
Արկցես զինել դարձեալ կըրկին
Որպէս ըզզարդ պըճնեալ հարսին։
Զարքունական ըզմատանին,
Ըզնըշանակ տիրականին,

Տայցես ունել յաջոյ ձեռին,
Ոչ խոտորել այլ յահեկին :
Եւ պահապան ընդդէմ օձին
Շնորհեա կօշիկ գարշապարին ,
Զի մի՛ հարցէ ընդ խաւարին ,
Այլ կոխեսցէ գլուխ նորին :
Զենման եզին պարարակին՝
Որ 'ի խաչին պատարագին ,
Եւ տիգահոս արեան կողին՝
Կենաց վտակ մեզ բղխողին ,
Հաղորդս արա զիս վերըստին
Ըստ առակի անառակին .
Ուտել ըղձաց կենարարին ,
Ըմպել զբաժակ քո զերկնային :
Մոլորեցայ յանապատին ,
Թափառեցայ յանվայր վայրին ,
Որպէս առակն է ոչխարին
Մի 'ի թըւոյըն հարիւրին .
Զոր պատուեալ չար թշնամին ,
Վիրօք լցոյց անհընարին .
Ուստի այլ ոչ դեղ գոյ վիրին ,
Բայց թէ 'ի քէն բժշկեսցին :
Առ որ գոչեմ զարտասուելին ,
Աղաղակեմ զիս փրկողին .
Հովուըդ քաջ և երկնային ,
Եւ 'ի խնդիր փոքու հօտին .

Այց արա, տէր, անկեալ դրամին
Եւ կորուսեալ քո պատկերին,
Զոր թաղեցի մեղաց յախտին
Եւ չարաչար հոտեալ յաղբին:
Լուա զիս, տէր, յաղտոյ անձին
Ի մաքրութեան ձեան աւազանին .
Լցցես ըզթիւ տասներորդին,
Որպէս ըզաւուրբ քառասնեկին :
Բարձ 'ի յուսոյդ բարձօղ խաչին,
Հանցես 'ի վեր զանկեալ հոգին .
Ուրախացո զգօրացն վերին
Վասըն միոյ մեղաւորին:
Ընդ Ադամի պատարագին
Ի հոտ անոյշ քեզ ընծային,
Ընկալ և զիս, տէր, ընդ նոցին.
Մի խոտեցայց ընդ Կայենին,
Թէպէտ և ոչ բոտ արժանին
Քեզ մատուցի զողջակիզին .
Զի ընտրեցի զիմն առաջին,
Եւ զքոյն վերջին մասն 'ի զոհին :
Նըմանեցայ Նենգաւորին
Եղբայրըսպան դաւաճանին ,
Սպանանելով զիս կամովին,
Եւ նենգելով անձամբ անձին .
Ոչ զարտաքին եղբօր մարմին,
Այլ ըղհոգիս իմ ըղներքին .

Ուստի շրջիմ զերերալն ,
Մխոք և խորհուրդք իմ տատանին։
Որ մխիթար տրտմագնեցին
Նուր ընդ Սէթ ընդ Հաբելին ,
Լինել սերունդ նախաստեղծին
Եւ նահապետ բարւոյ ազգին ,
Փառաւորեալ , ասէր , և յինէն
Զորդեկորոյս սուգ տրտմագին .
Որք են մատունք խնամատութեան ,
Ծննդեան մանկունք գործականին .
Եւ աճեցո յիս վերլուսին
Զանապականն սերմն բանին ,
Զլուսոյ ծննդոց իմանալին
Հրեշտակական և երկնային ։
Մի նմանեցայց որդւոց Սեթին ,
Ցանկալ դստերցն Կայենին .
Այլ Ենովսայ նահապետին ,
Որ յուսացաւ նախ առաջին .
Եւ Ենովքայ անպարտին ,
Այն որ փոխեալն է 'ի դրախտին ,
Որ ժառանգեաց ըղհայրենին
Ընդ պահելոյ պատուիրանին ։
Բայց յայսցանէ զի՞նչ օգտիցիմ ,
Որոց նման ես ոչ լինիմ ։
Զի չհետեւիմ շաւղաց նոցին ,
Խոչ վերանամ մտօք յերկին .

Այլ կամ անկեալ յախտըս խորին,
Ի գուբ տըղմոյ գէճ խոնաւին.
Որով անդունդք անհընարին
Զիս 'ի յինքեանս ըմբըռնեցին:
Որպէս մարդիկ նախնի դարին,
Որք 'ի յաւուրս էին Նոյին.
Որք ուտէին և ըմպէին,
Անյամաբար խառնակէին,
Մինչև եհաս ջուր հեղեղին,
Ապականեաց զամենեսին:
Միայն պահեալ զայն որ պահեաց
Ամ հինգ հարիւր ըզկուսութիւն:
Այլ որ ըզնոյ և զեւթն ոգին
Ապրեցուցեր 'ի տապանին,
Հանդերձ սեռիւք չորքոտանին
Եւ օդական թեւաւորին,
Եւ զիս պահեա 'ի հեղեղէ
Յաշխարհածուփ ալեաց չարին,
Քո տապանաւ սուրբ խորանին
Ամփածածուկ ընդ հովանին:
Մերժեա յոգւոյս իմ տապանէ
Զգիշերատեւ գոյն ագռաւին,
Որ է նա տիպ գաղտնի նենգին,
Այնմ որ թըռչի ընդ խաւարին.
Եւ բաց 'ի սիրտս աղջամղջին
Ինձ պատուհան մեծի լուսին,

Յորմէ խաւարըն մեղաւծին
Հալածական անհետ լինին ։
Մութ ընդ բացեալ լուսարանին
Զ'ի գոյն ոսկւոյ սուրբ զաղաւնին ,
Բերել առ իս ըղձիթենին ,
Որ է մաքուր և սուրբ Հոգին ։
Բայց ես ախտիւ մարմնականաւ
Միայն չհեղձի զանձն 'ի ծովին ,
Այլ հոգեկան և մըտաւոր
Վըրխւքն եղէ անօթ չարին ։
Քանզի՛ նըման գոլով՛ նոցին,
Որ զաշտարակըն շինեցին
Ի Քաղանէ մեծի դաշտին
Ի յաշխարհի Բաբիլովնին ,
Զի 'ի ջըրոցըն հեղեղին ,
Որ թէ գայցէ այլ , պահեսցին .
Կամ՛ թէ յերկինըս վերանալ
Հըպարտութեամբըն խորհէին ։
Մինչև շընչեալ հողմոյ ուժգին ,
Հօդւոյն հընչումըն սաստկագին ,
Քակեաց զերինըս հըպարտին
Եւ զաշտարակն այն ահագին .
Եւ ըզլեզուացըն միակին
Զայն խառնակեաց յեօթանասնին ,
Զի մի՛ 'ի չար միաբանին ,
Այլբարբոջք բաժանեսցին ։

246

Նո՛յնպէս և ես բարձրացուցի
Զպարիսպ մեղաց աշտարակին ,
Հրապարտութեամբ շինեալ քարամբք
Անբարտաւան ամբարտակին .
Որոյ հիմունս Ճարտարապետ
Է Արուեստն անդընդային ,
Եւ գործօնեայք չար իշխանին
Դիւացըն գունդք լեգէոնին .
Որք և անկեալ կործանեցին
Ընդ մեքենայս զոր շինեցին .
Եւ խմ զերծեալ հալբից նոցին
Որպէս երբեմն երբայեցին ։
Որ յօրինակ քեզ ընտրեցեր
ԶՄելքիսեդեկ քահանային ,
Անհայր անմայր անազգային
Եւ քահանայ աստուածային ,
Տասանորդօղ ղեւտականին ,
Մինչ էր յերանն Աբրահամին ,
Եւ թագաւոր էր Սաղիմին ,
Որպէս և դու, տէր երկնային .
Ընկալ և զիս հայցմամբ նորին
Յերուսաղէմըդ քո վերին ,
Թագաւորել ընդ քեզ 'ի նմին
Իբրև զորդիսըն Սիոնին ։
Որ կոչեցեր ազդմամբ ձայնին
Ըզնահապետն հանուրց ազգին ,

ԶԱբրահամն այն առաջին ,
Պանդխտանալ յօտար երկրին .
Երեւեցար 'ի Մամբրէին
Մինչ դեռ նստէր նա ընդ կաղնին ,
Կերակրեցար որպէս մարդին
Յորժամ բնութիւնդ էր անմարմին .
Եւ խոստացար նմա զորդին ,
Որով որդիք մարդկան օրհնին .
Ի յօրինակ քո գալստեանդ ,
Որ մարմնացար յորդւոյ նորին ։
Հանցես և զիս յորոց նեղիմ,
Միջոյ չարեաց նենգաւորին ,
Ի բազմադոյն ախտից նեղչին
Եւ 'ի բանդից մեղաւորին ։
Զնըժդեհացեալս մարմնով 'ի սմին
Յօտարոտի կեանս երկրային
Փոփոխեսցես 'ի հայրենին
Որպէս զորդին Աբրահամին ։
Երեւեցո զերեսս քո , տէր ,
Ինձ որ նստիմ ներքոյ ստուերին ,
Զի ընդ առաջ քո յարուցեալ
Երկիր պագից քեզ 'ի գետին ։
Խոնարհեսցիս յիջեւանիս ,
Ընդ քեզ և Հայր քո և Հոգին .
Կերակրեսցիս յիմում բարին
Յաղքատանաց և 'ի չընչին ։

Զանձնընդական ամուլ հոգիս
Բարեաց գործոց հոգեւորին
Պտղաբերեա ընդ Սառային
Աւետաբեր բանիւ քոյին .
Որ աղօթիւք հայրապետին
Սերեցելոյ Աբրահամին
Ազատեցեր զեղբօրորդին ,
Հանեալ ըզՂովտ 'ի Սոդոմին ,
Զիս արձակեա , Տէր , ընդ Նըմին
Կապից մեղաց՝ հայցմամբ Նորին ,
Ի խորհրդոց սոդոմային
Եւ 'ի գործոց պըղծասիրին .
Զի մի՛ 'ի հուր ծըծըմբածին
Տոչորեցայց որպէս նոքին .
Եւ մի՛ յարձան մածանիցիմ
Որպէս ըզկինն 'ի չար դարձին ։
Այլ հրամայեա սուրբ հրեշտակին
Յափըշտակել զիս ընդ նոսին ,
Հանել 'ի լեառնըդ երկնային ,
Կարգել 'ի դասն ընդ որ կային ։
Ստեղծիչ սըրտից , Տէր , առանձին
Տեսող գործոց և խորհրդին ,
Ի փորձ մըտեր առ սիրելին ,
Պատարագել քեզ զամորդին ,
Երթալ 'ի մեծ բարձր 'ի լերին
Ի Գողգոթա , որպէս ասին ,

Բառնալ ըզփայտս ողջակիզին
Իւր միածնին ողջախոհին .
Զոր և հանեալ ՚ի սեղանին
Որպէս ըզքեզ, տէր, ՚ի խաչին ,
Բուռըն հարեալ ՚ի սուսերին .
Եւ մերձ եդեալ պարանոցին ,
Մինչ ՚ի վերուստ հընչեալ ձայնին
Թէ մի՛ մըխեր ՚ի պատանին ,
Այլ հայեսցիս յաջոյ ձեռին
Կախեալ ըզխոյն ՚ի սաբեկին :
Զոր փոխանակ բանականին ,
Իսահակայ քում ծառային ,
Ետուր ՚ի զոհ պատարագին
Զանբան ստեղծեալըն կենդանին :
Մի՛ զիս փորձեր , տէր , ընդ նըմին
Զանփորձ բարեաց ամենայնին ,
Զփորձեալս ՚ի չարն և ոչ բարին
Եւ զանհամբեր անձն ՚ի փորձին :
Զի ոչ արծաթ եմ քուրային
Եւ ոչ ոսկի թէ հրով փորձիմ .
Այլ եմ անագ ընդ կապարին ,
Որ ՚ի պարզելըն կորընչին :
Եւ ոչ եմ՛ վէմ յեզըր ծովին ,
Որ ՚ի յալեացն անշարժ պահիմ .
Եւ ոչ արմատ ծառոց խորին ,
Որ ՚ի հողմոց ոչ տապալին :

Այլ եմ՝ նըման բեկեալ նաւին
Տարաբերեալ միջածովլին ,
Կամ հողմահար խըռովի խոտին
Ի ժամանակս աշնանային ։
Այդ մի՛ տանիր 'ի փորձութիւն ,
Որ ոչ փորձեալ զոք երկրածին ։
Զի քո անփորձ գոլով չարին ,
Փորձիմք 'ի մէնջ որպէս տաին ։
Այլ 'ի վըրկել զիս փութացիր
Ի փորձութեանց բըռնաւորին ,
Որպէս ըղձայըղն հաւատոյ
Յորդայթից փորձասիրին ․
Պատարագել ընդ խընդալին
Զհոգի ըղձիս և ըղձարմին ,
Կենդանական զոհ անմահից
Հաճոյ և սուրբ աստուածային ։
Որ ընկերակր ծընեալ զորդին
Իսահակայ և Ռեբեկին
Անուանեցեր քեզ սիրելի
Զ Յակոբ փոխեալ յԻսրայէլին ․
Ցուցեր նըմա զաստուածային ,
Կանգնեալ սանդուխք յերկրէ յերկ
Յոր տէր 'ի նմա բարձր 'ի գլխին ,
Եւ ելեւէջք հրեշտակային ։
Իւղով օծեալ ըզգըլուխ վիմին ,
Տուն անուանէր տիրականին ․

Ի նմանութիւն մեծ խորհրդին՝
Զոր հոգեկիրքըն ծանուցին ,
Գօտէմարտեալ յերեկոյին ,
Որպէս է գրեալ 'ի սուրբ տառին ,
Եւ ժուժկալեալ յառաւօտին ,
Ծակոյն յաղթեալ որպէս մարմին :
Եւ ես կըրսերս առ 'ի բարին
Եւ կատարեալ գոլ 'ի չարին ,
Որպէս Եսաւըն նախածին ,
Բայց ըստ հոգւոյ գոլով վերջին .
Վաճառակուրս անգին գանձին
Վառըն յագման որովայնին ,
Եւ եղծանողըս կամովին
Զգիր անդրանկայն որ 'ի յերկին .
Զոր աղաչեմ զՀայրդ վերին
Զփշխան դաստուցըն հրեղինին ,
Բացցին և ինձ դրունք եթերին
Որպէս յայնժամ Իսրայելին ,
Հանցես 'ի վեր զանկեալ հոգիս
Ընդ լուսակայլ աստիճանին ,
Որ յօրինակ մարդկան բերին
Յերկրէ յերկինս անդրադարձին :
Օծմամբ անոյշ իւղոյ Հոգւոյն ,
Զոր կորուսի խաբմամբ չարին ,
Օծցես ըզգլուխ իմ վերըստին
Պահպանական աջով քոյին :

Ով ժուժկալեալ դէմ հըզօրիդ
Գօտէկըռուիւ ըստ Յակոբին ․
Քանզի տըկար գոլով անձին
Անկայ 'ի բուռն անըզգամին ․
Այլ կարկառեա զաջդ երկնային ,
Հաս 'ի թիկունս ինձ 'ի մարտին ․
Եւ խորտակեա զիմ թշնամին ,
Զի մի կացցէ այլ 'ի յատին ։
Երկոտասան ցեղապետին
Ծընեալ որդւոց նահապետին ,
Դաւաճանեալ մետասանին
ԶՅովսէփ , 'ի ձեռն Իսմայէլին
Զեղբայրն իւրեանց վաճառեցին
Ընդ երեսուն դահեկանին ,
Ի նմանութիւն աշակերտին
Գաղտ նենգաւոր զոլ Յուդային ։
Վաճառեցար , տէր , ընդ նըմին
Ծառայ 'ի տան Պետափրէին ,
Եւ փըրկեցեր յեգիպտուհւոյն
Զհոգի մաքուր ողջախոհին ․
Մըտեր 'ի բանդ փարաւոնին ,
Տեսիլ ցուցեր 'ի գիշերին ․
Արձակեցեր վասն երազին
Եւ կացուցեր տէր աշխարհին ։
Նոյնպէս և ինձ դաւ գործեցին ,
Որդիքըն մօր գաղտ նենգեցին ․

Բազմաբեղուն ախտից մեղաց
Վաճառեցին զիս դիւրագին ։
Թէ և լըցի զկամըս նորին ,
Անհաճոյական գոլով նըմին ,
Սակայն էարկ զիս 'ի բանդին ,
Յանել յանլոյս արգելանին ։
Այլ որ ըղձեա յամենայնին
Ազատեցեր յանյոյս վայրին ,
Եւ զիս փրկեա , տէր , ընդ նըմին
Ի զանազան ախտից չարին ․
Եգիպտացի վաւաշոտին
Մի՛ մատնեսցես գարշ պատնըկին ,
Այն որ տայ նըման օձին
Ահեղ գոչէ ըստ առիւծին ։
Այլ բարձրացո քան ըղձոտին ,
Եւ տէր կացո յեգիպտոսին ,
Զի յաղթեցից չար իշխանին
Աներեւոյթ բըռնաւորին ։
Ի սովամահ լինել նոցին ,
Զխոտ տուն արա կենաց հայցին ․
Զի յադեցայց և բաշխեցից ,
Որք են կարօտ անմահ բանին ։
ԶՅոբ յիշեցից զերանելին ,
Զայն որ յիշման է արժանին ․
Թէպէտ յորդւոյն է յԵսաւին ,
Այլ գերագոյն քան զՅակոբին ։

Այն որ 'ի քէն յոյժ գովելին
Եւ վերկայեալն է 'ի բարին ,
Թէ այր արդար և ճշմարիտ
Եւ կատարեալ յամենայնին .
Զոր բանսարկէր չար Թշնամին ,
Խնդրէր 'ի փորձ պատերազմին .
Որում տուեալ իշխանութիւն ,
Յայտնի լինել քում ծառային :
Նախ զարտաքին ստացուած մեծին
Ջնջէր 'ի սպառ ընկենդանին .
Ապա զորդիսն տանեացն
Սպան յապարանս 'ի բազմոցին :
Որոց հասեալ առ նա գուժին ,
Ոչ բանս ասէր նա մարդկային ,
Այլ գոհութիւնս աստուածային
Իմաստութեամբ ընդլնէր հոգին .
Տէր , տայ , եւ ըզմեծութիւն
Եւ տէր կառ որպէս կամին .
Մերկ ելաք յորովայնէ ,
Եւ մերկ դըմնիք 'ի տապանին :
Դարձեալ վառեալ առ նա չարին
Զխուր մեքենայս բազմադունին ,
Խնդրէր 'ի քէն զնորին մարմին
Տանջել ցաւովք անհընարին :
Որոյ առեալ ըզցանկալին ,
Բայց ոչ ինչ յիւր ըղձալին .

Այլ մանրեցաւ ծախող ժանին,
Իբր 'ի պղընձն կամ յերկաթին:
Քանզի սաստիկ շարժեաց յախտին
Եւ որդնալից արար զմարմին.
Նըստէր նեխեալ 'ի մէջ աղբին,
Քերէր քարամբք զշարաւ վիրին:
Բարեկամացն, որ մերձ էկին,
Բանիւք զըզուէր զերանելին.
Այլ և կընոջն անըղգամին,
Զոր զէն առեալ բաս Եւային:
Եւ այսքանեօք ոչ շարժեցին
Զանդամանդեայ վէմ հաւատին,
Խօսել բանիւ հայհոյութիւն
Առ տիրականըդ քո բարին.
Այլ գոհանայր ըղքէն 'ի նմին,
Ու'նդդիմանայր բանից նոցին.
Մինչև եղև զըրաւ մարմին
Եւ կատարումըն հանդիսին,
Երևեցար, տէր, 'ի միգին
Եւ խօսեցար ընդ սիրելին.
Պըսակ ետուր դու յաղթողին,
Խաղաղութիւն յոյժ հիւանդին.
Ըզկենդանեաց ազգ անբանին
Զայն շնորհեցեր նըմա կըրկին.
Իսկ ըզբնութիւն բանականին
Պարգևեցեր նոյն միակին:

Եւ այս խորհուրդ ծածկեալ խորին
Յառաջագոյն անդ ցուցանէին,
Թէ որք մեռան ոչ կորընչին,
Այլ յարիցեն յօրըն վերջին:
Արդ ես հայցմամբ նահատակին
Եւ համբերող Ճըգնաւորին
Առ քեզ կարդամ և պաղատիմ,
Հեղում զարտօսըր ցաւագին.
Զի թէ խընդրէ իմ թըշնամին
Առ 'ի փորձել զիս 'ի մարտին,
Մի՛ տար 'ի ձեռս տապականին,
Մի՛ մատնեսցես կամաց նորին:
Զի ես տըկար լուծեալ մարմին,
Հոգիս յօժար բայց ոչ շարժին.
Անձն իմ խաւար, միտքըս մըթին,
Կամաւ 'ի բանդ կամ 'ի խորին.
Բայց դու ընդ իմ տարտամս անձին
Մարտիր ընդդէմ ախոյանին.
Որ ատացեր քաջալերել,
Զի յաղթեցեր չար իշխանին:
Միայն զկամելս իմ 'ի բարին
Ընկալ փոխան Յոբայ ջանին.
Եւ ըզպըսակս յաղթանակին
Ինձ պարգեւեա յապագային:
Որ ըզՄովսէս ըզքանչելին
Զ'ի ծընընդենէ ընտրեալ արին

Փըրկեալ 'ի ջուրց հեղձականին ,
Մնուցեր 'ի տան փարաւոնին •
Եւ 'ի լըրման ժամանակին
Կըրկին ամաց քառասնեկին ,
Երեւեցար , տէր , 'ի լերին
Բոցով հըրոյ 'ի մորենին •
Փըրկիչ ըղնա գերեալ ցեղին
Առաքեցեր Իսրայէլին ,
Վասն առաջին սըրբոյ ուխտին
Եղեալ առ հօրն Աբրահամին •
Ի չարձակել փարաւոնին ,
Եգիր ըղնա աստուած նորին •
Եւ զօրութեամբ գաւազանին
Ետուր նըմա զբան նըշանին :
Հարեր զաշխարհ Եգիպտոսին
Տասըն հարուած , որպէս պատմին •
Յորում խորհուրդ զենման գառին
Եւ ելք որդւոցն Իսրայէլին :
Բաժանեցեր յերկուս մասին
Զանդունդս խորոց կարմիր ծովին ,
Եւ ըզզինութիւն լուծականին
Կարծրացուցեր իւր արձանին •
Որպէս ծաղկեալ մարգագետին
Իր ճանապարհն անդընդային ,
Ընդ որ ոտիւք ընթանային
Ոչ թանալով գարշապարին :

Եւ զփարաւոն եգիպտացին ,
Որ զհետ մտեալ կառօք նոցին ,
Ընկըղմեցեր 'ի մէջ ծովին
Ի յօրինակ Բելխարին :
Իսկ քո ընտրեալ և սուրբ գընդին
Առաջնորդեալ որպէս խաշին ,
Հորդան ետուր յանապատին
Հըրով լուսոյ և սեամբ ամպին :
Ետուր նոցա հաց երկնային
Եւ մանանայ հրեշտակային ,
Տըրպաուորեալ ըղձիցդ մարմնին
Զյերկնէ իջեալըն կենդանին :
Հարեր ըզվէմն և բըղխեցին ,
Զերկոտասան վըտակն աղբերն ,
Ի յօրինակ աղբեր կողին
Իառաքելոցըն քարոզին :
Երբեակ պահօք քառասնեկին
Մովսէս գոլով 'ի մէջ միգին ,
Որպէս կենաց ժամանակին
Ամքըն նորա այսքան թըւին ,
Ցուցեր զյետոյս քո խորհըրդին
Թագուցելոյն 'ի փապ վիմին :
Հեղեր ըզլոյսդ անճառելի
Ի հողեղէն դէմըս նորին ,
Առեալ զօրէնսն 'ի տախտակին
Գըրեալ մատամբդ աստուածային

Վասն անօրէն սանձաւանին
Եւ խըստերախ ժողովրդին.
Զոր խորտակէր նա զառաջին
Ընդ պիղծ որթուն զոր կազմեցին,
Առ 'ի խորհուրդ ծածկեալ լըրին՝
Վասն օրինացն որ լուծանին.
Որպէս երկրորդն որ հաստատին
Քրոնմեդեալ անշարժ ուխտին,
Որ կայ և մնայ յաւէտ 'ի սմին
Մինչ 'ի կատար յաւիտենին:
Հրաման ետուր կազմել նոցին
Ընտանազան կարգ խորանին,
Ի նմանութիւն պետրեան վիմին
Կամ դեբրակայ մօր Սիոնին.
Եւ տապանակ կտակարանին
Յանփուտ փայտից պատեալ ոսկին, *
Անապական մարմնոյ քոյին
Ի աստուածութեանդ զինակին:
Եւ զպատմուճանն Ահարոնին
Ըզգեստական քահանային
Առ 'ի խորհուրդ հոգեւորին
Զարդարեցեր զերեւելին:
Եւ այսքանեօք բարեգործեալ,
Եւ առաւել քան ըզսոսին,
Սակայն որթուն երկիր պագին
Ու'ի Բեղբեգովր զոհ մատուցին:

Զմեծըն Մոլոխա դառնացուցին ,
Եւ զԱհարոն անարգեցին .
Ընդ Մադիամ խառնակէին ,
Զօրդիս դիւացըն զոհէին .
Մինչեւ 'ի սպառ բարկացուցին ,
Զներող բնութիւնըդ շարժեցին .
Հուր 'ի Յակոբ բորբոքեցին
Եւ բարկութիւն յԻսրայէլին :
Եւ յաւետեաց սուրբ աշխարհին ,
Զոր խոստացար դու տալ նոցին ,
Բայց 'ի յերկուց անդր ոչ մըտին
Վասըն մեղացն որ գործեցին :
Այդ ես ժըխտողս յամենայնին
Եւ համեմատ չարեաց նոցին ,
Որ առաւել տալ զբարին
Ունիմ ապերախտ քան ըզնոսին :
Նոցա հերձեր զծով ըզգալին ,
Իմ ըզխաւարն աղջամըղջին .
Յայնժամ ծածկեալ զեգիպտացին ,
Եւ առ զիշխանըն մահածին .
Նոցա 'ի տուէ ամպ հովանին
Ու'ի գիշերի սիւն արփենին ,
Իսկ ինձ է լոյս իմաստ բանին
Եւ հովանի է սուրբ Հոգին :
Ընդ մանանայ լուծանելին ,
Զի որք կերան մեռանէին .

Եւ տաս մարմին քո երկնային ,
Որ կեանըս տայ ճաշակողին ։
Նոքա արբին ջուր վիմածին ,
Եւ ես զարիւն վիմիդ կողին ։
Նոցա կախեալ օձ պղնձին ,
Եւ ես տեսի զկեանսդ 'ի խաչին ։
Նոցա օրէնքըն Մովսէսին
Գրաւորականն 'ի տախտակին ,
Եւ ինձ Հոգւոյդ իմաստութիւն
Աւետարանդ աստուածային ։
Վասն այսորիկ յոյժ պահանջին
Քան ըզնոցունց յինէն բարին .
Որպէս առաւել է ծառային ,
Գիտող կամաց ուոչ գիտողին ։
Նոքա յանկուց որթ կաղմեցին
Եւ քո փոխան երկիր պտղին ,
Եւ ես 'ի սէր հիւթանիւթին
Խոնարհեցայ յանդյադ ախտին .
Նոքա քաղցեալ ըղձալընջէին
Վասն հացի յանապատին ,
Եւ ես ըղձամբ հարկաւորին
Միշտ 'ի խընդիր աւելորդին .
Նոքա զերկիր շաղախէին
Պանդխտութեամբ Մադիամին .
Եւ ես զհոգիս իմ երկնային
Աղտեղեցի գործովք չարին ։ —

Բայց որ քաւիչ եղեր նոցին ,
Տէր խմ գըթած Հօր միածին ,
Եւ դարձուցեր ըզգերութիւն
Հայցմամբ մեծի մարգարէին ,
Անցս յինէն զանըներելին
Ըզպատուհան որ ինձ պահին ,
Եւ պարգեւես ըզզօրումն անձին
Եւ թողութիւն անցեալ յանցին :
Մի արգելցես զիս ընդ բազմին
Յաւետարեր յերկրէ քոյին .
Այլ ընդ երկուսն , որ անդ մըտին ,
Մուծ զիս յաշխարհըդ քո վերին :
Որ ըզՅեսու որդի Նաւին
Ընտրեալ իշխան յետ Մովսէսին ,
Այն որ ընկալ 'ի խորանին ,
Եւ 'ի լերինն էր ընդ նըմին ,
Անուանակիցն ըզքանչելին
Անուանըդ քում փըրկականին .
Որում Ովսէ նախ կոչէին ,
Եւ զկնի Յեսու անուանէին :
Որ յաղթական գոլ 'ի մարտին
Ընդդէմ ժողովրդ Ամաղէկին ,
Մինչ տարածմամբ Մովսէսի ձեռին
Գտեր օրինակ քեզ 'ի խաչին .
Որով զորդիսն Իսրայէլին ,
Զայն որ ծընան յանապատին ,

Ածէր յաշխարհըն Պաղեստին
Ըստ քո խոստման անսուտ բանին ։
Ընդ Յորդանան անցանէին
Տապանակաւ կտակարանին ․
Ջուրքն ՚ի յակունսըն դառնային
Ի յօրինակ մարդկան ազգին ։
Պարիսպքըն եւթն Երիքովին
Ի նմանութիւն խոր դըժոխին ,
Եւթնիցըս շուրջ գալով նոցին ,
Զերթ ջուր հեղեալ կործանէին ։
Եւ զթագաւորըս եւթն ազգին ,
Որ երեսուն թըւով էին ,
Հարեր նովաւ զամենեսին
Կախեալ զփայտէ նըշաւակին ։
Զարադընթաց շարժումն արփին
Զարեգական լուսաբերին
Կացոյց հանդէպ Գաբաւոնին ,
Զլուսին ձորոյն Եղիոնին ։
Եւ այլ բազում որպէս պատմին
Հրաշագործեալ յայնմ աշխարհին ․
Զոր վիճակեաց ցեղից նոցին ,
Ինք ժամանեաց հարցն առաջին ։
Արդ Ճըշմարիտ զօրինակին
Հոգւոց փրկչին՝ զմարմնականին
Յաղերս ածեմ վասն իմ անձին
Զարդարութիւն գործոց նորին ։

Թէպէտ և ոչ նըման նըմին
Արխայայ ընդդէմ չարին,
Այլ մեղկացայ յաստարախին,
Եղէ հանգոյն վատ ծառային.
Բայց ձեռըն տուր յիմում մարմին
Ընդ անմարմին Ամաղէկին:
Ձըգմամբ ձեռին քո 'ի փայտին
Ըստ Մովսէսի անդըր 'ի լերին,
Հարցես և զեւթն ազգ խորհըրդին
Որպէս Նաւէ զքանանացին.
Զորկորըստեանն և զպոռնըկին,
Զարծաթասէրն և զձանձրալին,
Ըզբարկութիւն, ուրախականին,
Եւ զնորափառ սփիւծ հըպարտին:
Կարկուտ քարեայ հոսեա նոցին,
Եւ ըղպլծակ զօրաց քոյին:
Անցօ ընդ գետս այս երկրային
Անթաց յախտից գարշապարին.
Դարձո անդրէն, ուստի եկին,
Յանմահական վայրըս դրախտին.
Պարիսպ մեղաց Երիքովին,
Դըրամբք փակեալ անյուսալին,
Աղաղակաւ տապալեսցին,
Դըրունքն'ի հիմանց քանդեալ բարձցին.
Եւ յաւետեաց յաշխարհ վերին,
Յորում մըտեր նախ աւազին,

Հեռուեցո հետոց.քոյին ,
Ժառանգ լինել ինձ մերըստին :
Որ ըստ արդար դատաստանին ,
Որով դատիս զազգ երկրածին ,
Խնամեալ պահես բոլորովին ,
Զխուրաքանչիւր ոք ըստ կարգին ,
Ընտրեալ եդիր յԻսրայէլին
Յետ Յեսուայ զօրավարին
Ըզդատաւորս ցեղից նոցին ,
Ըստ օրինաց դատել զնոսին :
ԸզԳեդէոնն յաղթող արին ,
Որ զՄադիամ հարեր նովին ,
Երեք հարիւր զօրականաւ
Զբիւրըս բիւրուց այլասեռին :
Եւ ըզՍամփսոն անյաղթելին ,
Որ ուխտական յորովայնին ,
Այն որ զգիսակս ունէր մազին
'Սա Հոգւոյն շնորհացըն եւ թնարին:
Եւ զայլս անուն որ կայ 'ի գրին ,
Մինչ 'ի Հեղին յայն ծերունին .
Այն որ մեռաւ բեկմամբ ողին
Վասըն դերեալ տապանակին :
Ահա և յիմըս քաղաքի ,
Զոր չինեցեր ձեռամբ.քոյին ,
Եդիր դատել դատաւորին ,
Զհոգիս այրի՝ մըրտաց խըղճին .

Բայց ոչ դատեաց ըստ օրինին ,
Ոչ գխնդրեաց չար ոսոխին .
Այլ մեղկացաւ կամաւ յախտին ,
Մատնեաց 'ի ձեռս աւազակին :
Արդ որ փրկիչ եղեր նոցին ,
Եւ տուր յաղթել հակառակին ,
Տացես և ինձ , տէր , յաղթութիւն ,
Ընդդիմանալ ախոյանին .
Ուստ դատել որպէս նոքին
Արդարապէս մըտաց զհոգին ,
Զի մի՛ զյետին նաքարակման
Պահանջեցայց անդր 'ի բանդին :
Որ Աննայի լըւար ձայնին ,
Եւ յամլութեանն ետուր զորդին ,
Զոր քեզ մատոյց 'ի խորանին
Ընծայ զպտուղ որովայնին .
Եւ ես գոչեմ ձայնիւ նորին ,
Անշարժ շըրթամբք խորոց սրտին .
Աղաղակեմ անլըսելի ,
Հեծեմ հոգւովըս վըշտագին ,
Թէ զանպըտուղս անձն 'ի քարին
Եւ զպտղաբերս գործոց չարին
Պըտղաբերեա բարեաց գործովք ,
Եւ գօսացո զարմատ դառին :
Զախտըս մեղաց ըզբազմածին
Դադարեցո ըստ Փեննային .

762 Ամուլ հօգւոյս բառ Աննային
Շնորհեա որդիս եւթներեկին :
Մեռցին անդամք իմ երկրային ,
Կեցցէ հոգիս իմ վերբնային .
Իջցէ 'ի գուբ չար Թշնամին ,
Եւ զիս հանցես յերկին վերին :
Որ ըզԴաւիթ յեսսէածին
Յորդեան եղեալ ծընունդ վերջին ,
Մանուկ խարտեաշ գեղեցկածին ,
Հովիւ խաշանց անբան հօտին ,
Օծեր իւղովն որ յեղջերին ,
Առ 'ի բեկումն որ յապականին ,
Ի ձեռըն սուրբ մարգարէին
Սամուէլի տեսանողին :
Յորժէ հեռէ խաղայր Հոգին ,
Եւ հալածի լինէր նըմին ,
Հընչէր նովաւ զերգ Սաղմոսին
Իմաստապէս 'ի տասնաղին ,
Հալածելով զայսըն ձայնիւ ,
Որ հարկանէր 'ի Սաւուղին :
Մերժէր զգազանան երեւելի ,
Զարջ եւ զառեւծ 'ի միասին .
Եւ 'ի խըմբել պատերազմին
Ճակատ ընդդէմ Իսրայէլին ,
Վաներ նովաւ դու ըզնոսին
Առանց զինու պատերազմին .

Քանզի սպարսիւ հոլովականին
Դըշղըն քարիւ հեղեղատին
Հարեր զճակատ Գողիաթին ,
Բարձեր զնախատ յԻսրայէլին .
Եւ 'ի նեղչացն , յորոց հասին
Բազմադիմի փորձանք նըմին ,
Ապրեցուցեր զկեանըս նորին
Եւ կացուցեր գըլուխ նոցին :
Ոչ ընտրեցեր զազգն Եփրեմին ,
Ոչ ըզխորան Սամուէլին ,
Այլ զյուդայեան Բեթղահէմին ,
Յորմէ և դու առեր մարմին :
Ետուր նըմա պարգեւ կըրկին
Յոյժ բարձրագոյն քան ըզբնուլին ,
Արքայ օծեալ հրէաստանին
Եւ մարգարէ աստուածային .
Թէպէտ և անց ըստ հրամանին ,
Սխալեաց կամաւ 'ի յերկոսին ,
Պոռնըկեցաւ ընդ Բերսաբէին
Եհեղ զարիւնն Ուրիային .
Զի յոյս լինի թէ է մարմին
Խոնի բնութիւն նա մարդկային .
Եւ ոչ օտար կամ երկնային՝
Այլ 'ի ծնընդոց հողեղինին :
Նա և 'ի յոյս յանցաւորին ,
Ետուր գըթել յայնժամ մեծին .

Զի մի՛ մեղօք անյուսասային ,
Այլ որպէս նա փութով դարձցին :
  Եւ զիս առեր մարդ հողածին
Ի յԱդամայ որդւոց վերջին ,
Ծընունդ գողով գիշերային ,
Ախտիւք բերեալ և ախտային .
Ծընար անախտ զիս վերըստին ,
Ստեղծեր նորոգ յաւազանին .
Օծեր իւղովքո երկնային
Յորդեգրութիւն Հօրըդ վերին :
Բայց ես անկայ յախտըս կըրկին ,
Եղեալ ծընունդ մեղաւորին .
Զօծումըն սուրբ աստուածային
Աղտեղեցի գործովք չարին :
Արդ պաղատիմ երդւոյ Նորին ,
Հայցեմ՝ ի քէն ըստ Սաղմոսին .
Սիրտ սուրբ հաստատեա յիս վերըստին ,
Յորովայնիս զուղիղ հոգին .
Ինձ լըսեցո զուրքո ձայնին
Զուրախարարին և զցընծալին :
Յորժամ հընչէ փողն ահագին ,
Ազդել յոսկերս իմ ցաւագին ,
Տէր , 'ի մեղաց դարձո զհոգիս ,
Պարտեացն իմոց գիր ջընջեսցին .
Եւ յարենէ դոյն յորդանին
Մաքրեա յիմոց և յօտարին :

Յանժամ հոգւոյս շըրթունք բացցին,
Բերանս օրհնել արժանասցին.
Եւ զուարակիդ զենարանին
Հաղորդ գըտայց պատարագին:
Որ յօրինակ քեզ ընտրեցեր
Զորդի մեծի մարգարէին
ԸզՍաղոմոն, խաղաղութիւն,
Ի քէն բերեալ երկնաւորին:
Նա 'ի հօրէն իւր սեփհական
Զաթոռն առեալ ըզհայրենին,
Որպէս և դու Հօր միածին
Ոչ յօտարուստ կամ՛ արտաքին:
Տաճար շինեաց նա երկրային,
Դու ըզբնութիւնըս մարդկային.
Նըմա տըւաւ իմաստ բանին,
Բայց դու տըւող անճառ շնորհին.
Նա ժողովող յոգն իմաստին
Անուանեցաւ յԻսրայէլին,
Իսկ դու ցըրուեալ ազգ երկրածին
Ժողովեցեր 'ի միասին.
Նըմա գըշխոյն հարաւային
Եկն 'ի տեսիլ ըղձմամբ սըրտին,
Քեզ քաւանկին կողմ աշխարհի
Անտեսաբար երկիր պագին:
Եւ ես շնորհաց քոց ընդ նըմին
Եղէ ստացօղ մի քանքարին,

Ոչ պաշտելով զայն ընդ վատին ,
Այլ կորուսի ըզգլուխ նորին :
Զի որպէս նա զփառս անեղին
փոխեաց փառաց եղծականին ,
նոյն ես ըզլոյս շնորհաց քոյին
փոփոխեցի ընդ խաւարին :
Արդ եթէ նա վասըն յանցին
Տուժիւք պատժեալ յօրինակին ,
Զի՞նչ ունիմ յոյս թըշուառս անձին
Կորուսողիս ըզճըշմարտին :
Եւ եթէ նորա գոլ թողութիւն
Երկրայելի զղջմամբ սրտին ,
Ինձ արդարեւ անյուսալի
Բարկացելոյդ Հօր հաշտութիւն :
Բայց որ գըթածդ ես ամենից ,
Հեղ յիս ըզանէր շնորհաց քոյին :
Խնամութիւն Հօրըդ վերին ,
Խնամանացդ զիս յերկրոսին ,
Յորդինաբար գործականին
Եւ ՚ի յիմաստ տեսականին .
Զի կարացից լուսով շնորհին
Երկու աչօք նայել յերկին :
Քանզի է սկիզբն իմաստութեան
Երկեւղ քո սուրբ ըստ Առակին .
Եւ գիտութիւն , առանց նորին ,
Առիթ չարեաց է ունողին :

Այսուիկ բազումք յանդիմանին ,
Եւ Սաղոմոն նախ տուաչին :
Սոյն խմն և խուն խմաստութիւն ,
Անօգտակար տուանց սանձին :
Թողից զյոլովս որ բառ կարգին ,
Զի ոչ ներէ բանըս բազմին ·
Ըզմարդարէս և զԹագաւորս
Եղեալ 'ի տան հրէաստանին ,
Որ 'ի յերկուս եղեալ բաժին
Ի Յուդային և յԵփրեմին :
Զի և գիրք սուրբք աստուածային
Յառաջագոյն մեզ պատմեցին ,
Զխւրաքանչիւր վարըս նոցին
Ի զգուշութիւն մեզ ծանուցին ·
Զոմանց բարեաց վըկայեցին ,
Զի յօրինակ մեզ եղիցին ·
Զայլոց ըզչար վըկայեցին ,
Զի մի նըման լիցուք նոցին :
Եւ ես մերժեալ յինէն զբարին ,
Չբերի զաւացըն տխալ յանձին ·
Այլ ընտրելով զներհակ նորին ,
Եղէ նըման յոյժ վատթարին :
Բայց քեզ դոչեմ զաղերս բանին
Եզեկիեայ Թագաւորին ,
Ի նեղութեանց փրկեալ կըրկին ,
Որպէս և յայն ժամ ըղձային

Ի յԱստուծոյ բղխմանէն
Ի սպառնալեաց Ռափայելին ,
Եւ 'ի յախտիցըն սատակողին
Հայցմամբ մեծի մարգարէին :
Հարցէ 'ի սպառ սուր հրեշտակին
Ըզբազմութիւն լեգէոնին
Զանմարմնականս որք 'ի մարմին
'Դ եկեղեցւոյ քում մարտընչին .
Եւ զախտ մեղաց մահաբերին
Տագնապելոյս ջերմամբ նոցին
Բարձցես յինէն , հըզօր , դիւրին
Որպէս կարող յամենայնին :
Դարձո ըզստուեր երեկոյին
Ի լոյս կենացդ առաւօտին ,
Որպէս նովաւ օր միակին
Դարձեալ եղեւ ախ երրակին .
Որ էր նշան երեք լուսոյ
Երրորդութեանդ երրեակ անձին .
Նա և ծագման քո և դարձին
Եւ դալըստեան 'ի յերկրորդին :
Բայց իմ բարձեալ՝ որպէս նորին՝
Աւուրք կենաց հողեւորին ,
Մերձ եմ 'ի դրունս դըժոխոց ,
Եւ ստուերք մահու զիս ծածկեցին .
Ի յիշատակ թողում յետ իմ
Զհամբաւ չարեաց զալաբասեա անձին,

Կամաւ մատնեալ չար տախտին ,
Որ 'ի յառեւծ նշանակին ․
Այն որ մանրեաց զանկերս խորին ,
Եւ խորտակեաց զխորհուրդ սրտին
Ի ծնընդենէ առաւօտին
Մինչ 'ի գիշեր մահու տուներին :
Եւ ես ալկար որպէս ծիծեռան ,
Անդխաղաղարած իբր աղաւնին ,
Տեսեալ ճըչեմ առ թըշնամին
Նըւաղ ձայնիւ որպէս մընչիւն :
Զաչս 'ի լուսոյ խաւարեցին ,
Եւ կուրութեամբ զիս տանջեցին ․
Յաշխարհ նայել ինձ ուսուցին
Եւ ոչ 'ի լոյսդ աստուածային :
Արդ ինձ շնորհեա , տէր , ընդ նըմին
Մերժել յախտից ցաւոց անձին ․
Դարձո զմեղացս դառնութիւն
Ի քաղցրադոյն խաղաղութիւն :
Ընդ որս և զիմ փոխարկեսցես
Ի պըղպաղեր զամուլ հողին ,
Առ 'ի ծնանել զարդարութիւն
Զորդիս լուսոյ հոգեւորին ․
Զի անդադար քեղ օրհնութիւն
Մատուցանեմ մինչ 'ի մահմին ,
Եւ ընդ հրեշտակս յապագային
Փառըս հընչել 'ի տաճարին :

Եւ ընդ սմայ երից հընդկին ,
Զոր յաւելեր կեանըս նըմին ,
Շնորհեա և ինձ զանթըւելին
Յանզըսպականն յաւիտենին :
  Զայնիւ մաղթեմ Մանասէին
Զըղջացելոյ յանցաւորին .
Որ ըզպատկեր չորեքդիմին
Կանգնեաց 'ի տան սըրբարանին .
Եհեղ զարիւն մարգարէին ,
Սղոցիւ հերձեալ նըման փայտին .
Եւ ինքն եառ զդարձուած չարին ,
Կապեալ յերկաթ 'ի տան բանտին :
Գոչէր լալով այրմամբ սըրտին ,
Արտասուելով թախծեալ անձին .
Աղաղակէր յաղերս բանին ,
Բախէր ըզկուրծս ողորմագին .
Ամենակալ անեղծ գոյից ,
Տէր և Աստուած Աբրահամին ,
Իսահակայ քում ծառային
Եւ Յակոբայ սըրբասիրին :
Որոց չեղեր ապաշխարել ,
Զի մեղք մեղաց ոչ ունէին .
Այլ իմ ցաւոցս է ապեղանին ,
Զի քան զաւազ շատ է գծովին :
Զեմ արժանի նայել յերկին ,
Զի կափուցի զոչս 'ի բարին .

Եւ կորուսեալ յաշխարհ տարին,
Կապեալ մեղօք իբր յերկաթին ։
Եւ կանգնեցի զպատկեր չարին
Հանդէպ աչացս ըզտիպ ախտին.
Այժմ 'ի խոնարհ քեզ արկանեմ
Ծունր ըզծընգաց եւ ըզսրտին ։
Հայցեմ անձամբըս ցաւագին,
Լեզուաւ սակաւ, մեղայ յերկին.
Թող ինձ, տէր, թող մինչ 'ի մարմին,
Զի մի կորեայց 'ի մեղս անձին.
Մի՛ դատեսցես ընդ ամբարշտին
Ընդ փայլականըն տարտարին.
Այլ ընդ զուարթունն արժանացայց
Փառաւորութեան անվախճանին ։
Յաւէրս բանի քեզ ընդ բազմին
Ըզվերս ածեմ զնշխեայլին.
Զայն որ յերկրի էր երկնային,
Իբր անմարմին կեալ 'ի տաստերին.
Որ կերակրէր 'ի յանձաւին
Ի յագռաւուց բերեալ հացին.
Շըրջէր մարմնովք մեռեալ մանկին
Սողոմականն յանապատին.
Զիջավանեալն առ կինն այրի
Եւ զլիութեան շնորհօղ 'նըմին,
Ի յօրինակ կենաց հացին
Եւ օծութեան Հոգւոյդ շնորհին.

Զփակօղ բանիւ քայալ դէրկին
Եւ ըղբայօղըն յետ զոհին ·
Զոր 'ի սեղան ողջակիզին
Լըսոր նըման հրով երկնային ·
Այն որ անձրեւ յետ երաշտին
Իջոյց նըման իջման քային ,
Որով պայքեալ աղգ մարդկային
Զցօղըն կենաց հոգւոյն առքին ։
Ի տասնանալեացն Եղիսէին
Փախեան պաշտք քառասնօրին ·
Զի տկարութիւն բնութեան յայտնին
Թէ չէ օտար հողանիւթին ։
Եւ 'ի Քորեբ լեառն Մովսէսին ,
Եմուտ 'ի յայրն լեառն հրամանին ·
Լուաւ զհընչիւն սաստիկ հողմին ,
'Նըման անցեալ ջրհեղեղին ։
Նաեւ եւ զհուրըն Սոդոմին,
Յորում՝ դու ոչ, այլ, 'ի նոսին ·
Զի բարկութեանն հանդերձ էին
Եւ ոչ սիրոյ ցուցման մեծին ։
Լըսաւ եւ ձայն ըզ քաղցր օդին ,
Ի տիպ իջման քո մեղմագին ·
Որ զհեզաբար զալուստ քոյին
'Նըշանակէր յանդիմ վերջին ։
Զնոյն որ մաշկեաւ մեռեալ այծին
ԶԵղիսէոս կոչեաց յանդին ,

Որպէս և դու զվէմ հաստատուն
Եւ սուրբ զորդիսըն Զեբեդեին,
Եւ զՅորդանան ցըլեալ նովին ,
Անցին ցամաք ըստ Յեսուին ։
Հրեղէն կառօք հաներ յերկին .
Զհոգին եառուր միւսոյն կըրկին .
Որ համբարձման քո գուշակին,
Տալ ըղձողին մետասանին .
Եւ քո փոխան լինել նոցին ,
Եւ յետ նոցա որք ըստ կարգին .
Զի որպէս նա վարդապետին
Եղեւ նըման ամենեւին ,
Եւ քեզ ընտրեալքըն յաշխարհէ
Ի գործ հրաշից նըմանեցին ։
Նա մաշկեկաւ ափածեալ շնորհին
Եհերձ ըզջուրըն Յորդանանին .
Սոքա զմեղաց ծովըն հերձին
Քաղցրութեամբ կենաց բանին ։
Նա ըզմանկունսըն Բեթէլին
Տապաստ էարկ վասն այպանին .
Սոքա ըզծնունդ մեղաց չարին
Սըրով Հոգւոյն կոտորեցին ։
Նա յամլութեան շնորհեաց զորդին ,
Զօր և յարոյց ըզմեռեալ դին ,
Գալուստ առ նա եւթանեկին ,
Ըստ գալըստեան քո 'ի յուլթին .

Եւ յետ մահուն կենդանութիւն
Ետուն ոսկերքն 'ի տապանին ,
Ի տեղւոյ մահուան քո 'ի վիմին ,
Որով յարեաք մեք վերստին :
Ողքա զամուլ զեկեղեցին
Ի բազմածնունդ փոխարկեցին ,
Եւ ըղձանեալըս յարուցին
Ի յարութեան հաւատ վերջին .
Նա զգետըն Ջուրան Երկքովին
Փոխեաց 'ի քաղցր արկմամբ աղին.
Ողքա 'ի քէն աղ անուանեալ,
Զանհամ բնութիւնս անուշեցին :
Նա զՆէեմանն դամասկացին
Յորդանանաւ սրբեաց յախտին .
Ողքա ըղձեալըս մարդկային
Աւազանին Ջուրբ մաքրեցին :
Արդ քեզ հաճոյ վարուք սոցին
Զիմ փոփոխեա զվարս 'ի բարին ,
Եւ փոխադրեա յերկրէ յերկին
Զհոգիս մարմնով յապագային :
Հայցմամբ կտուօք ամբարձողին ,
Զոր 'ի Թաբօր բերեր լերին ,
Հանդերձելոց հանդերձողին
Կարապետի քո յերկրորդին ,
Այլև հոգւոյս տուր լիութիւն ,
Որպէս Նոքօք աւ երկոսին .

Եւ մաշկեկեաւ մեռելութեան
Անգո ընդ գետս այս երկրային ։
Ըղձառն որակ մեղաց համին
Փոխեա 'ի քաղցր և 'ի բարին
Անապական աղբեւ բանին ,
Զոր յիս արկցես ըստ առակին ։
Յարո զհոգիս մեռեալ յախտին ․
Որպէս Նոքօք զերկիս մարմին ․
Մաքրեա ըզբոր մահու մասին
Ըստ Ասորւոյն Նէեմանին ․
Զիս վերածեա ըստ առապարին ,
Փայլիւ քոյոյ կենաց կարթին ․
Եւ բիբք աչաց հոգւոյս բացցին ,
Ըստ պատանւոյն յիմնալին ։
Տուր աղեղամբ ինձ հըզօրին
Հարուլ ըզզօրս Բելիարին ,
Որպէս և նա 'ի վախճանին
Նետիւք նշան ետ աղքային ։
Ինձ յօրինակ պարտ է լինել
Ըզգերութիւն Բաբելոնին ։
Յորժամ զուխտի սուրբ օրինին՝
Զոր տասցեր նոցա՝ անձին ,
Ածեր պատիժ 'ի ծոց նոցին ,
Յաւուր վրիժուց գըթել ամին՝
Ըզպարտնական ըզցեալ բանին ,
Զոր աւանդեաց Մովսէս նախկին ։

Քանզի արքայ քաղդէացին
Եմուտ յերկիր հրէաստանին .
Զերուսաղէմ տապալեցին ,
Զորդիս նորա խողխողեցին .
Զտաճարըն սուրբ հըրով լուցին ,
Ըզսըրբութիւնըն պղծեցին .
Եւ զօրհներգութիւնըն Սիոնին
Ի գերութիւն խիստ վարեցին .
Որք 'ի յուռխըն կախէին
Սուրբ զերգարանըս տաճարին ,
Եւ անդադար նըստեալ լային
Միշտ առ գետով Բաբելոնին :
Նոյնպէս և զիմ քաղաքս առին
Խառնակութիւնք ախտատիրին ,
Անօրինական զօրքըն չարին ,
Որ 'ի Բաբել նըշանակին :
Զմասունս երիս տիրականին
Անխնայ սըրով խողխողեցին ,
Եւ ըզքաւեալ ծընունդ սորին ,
Որով մասունք իւր յարգարին ,
Ի գերութիւն տարագրեցին
Յօտար աշխարհ այլասեռին .
Ի յարածել զերամ խոզին
Յայսմ աշխարհի ապարակին :
Եւ 'ի տաճարս աստուածային ,
Յորում բնակեաց քո սուրբ հոգին ,

Ըղձոյր մեզաց բորբոքեցին ,
Կիզմանք ախտից տոչորեցին ։
Զայգւոյս ոլնկեալ աջովլ քըցին
Եւ մըշակեալ հօր քո ձեռին
Զ ցանկըն քակեալ յատակեցին ,
Կըլթեն անցորդք ճանապարհին ։
Այլ որ զգերեալըն Սիոնին
Ցետ դարձուցեր 'ի հայրենին ,
Շինել զտաճարըն մերբատին
Պայծառ և չքեղ քան զառաջին ,
Դարձո և զիմըս գերութիւն՝
Որպէս և զուխտըն հարանին՝
Յօտարոտի երկրէ չարին ,
Զմիտըս գերեալ բատ երգողին .
Որք 'ի յերթալըն խմ ողբոցին
Մինչ ըզսերմանըն տանէին ,
Դարձեալ 'ի գալըն ուրախացին
Յարդիւնաբեր հունձս որային ։
Հատո դըրացեացըս եւթնեկին
Ընդ բիւր չարեացն 'ի ծոց նոցին .
Ըզպատանելոյս շահեա զհոգի ,
Խընդրեա զարիւնըն զոր հեղին ։
Այլ և գըտաեր Բաբիլոնին
Թըշուառականն և դըժնէին
Հատո փոխան 'ի ծոց նոցին ,
Զոր 'ի սկըզբանցն լինէ արարին ։

Հըզօր, տուր ինձ լինել ուժգին,
Եւ 'ի գինի հարուստ չարին.
Առնուլ զաւից մանկանց նորին
Եւ հարկանել զկարծըր վիմին.
Ասել ըզբան մարգարէին
Ընդդէմ մահու բըռնաւորին.
Ո՞ւր, ասէ, մահ՝ քո յաղթութիւն,
Կամ ո՞ւր, դըժոխք, խայթոց քոյին.
Մինչ դարձուցես առ հայրենին,
Ուստի անկաւ մարդն առաջին,
Ի փափկութեան Ադին դրախտին
Յանմահական և յերկնային:
Հայցմամբ մաքուր յորովայնին
Երեմիայ մարգարէին,
Եւ քրովբէից տեսանողին
Զաւէրդ 'ի վերայ Քոբար գետին.
Որք ընդ գերեալն ընթանային
Որպէս հովիւ ըզկնի հօտին,
Զի մի յանդիմա մոլորեսցին
Եւ զահավէժ հոգւով լիցին:
Նա և յոգունց համանմանից,
Որք յայնմ էին ժամանակին,
Քոյին Հոգւով տեսանէին
Եւ զապագայսն պատմէին.
Ովսեայ բարւոյ սերմանողին,
Եւ Ամովսայ քարոզողին.

Մինչեւ ըղձնումն քո տեսողին
Ի Բեթղահէմ տուն Եփրաթին.
Եւ Յովսեփայ ողբերգակին,
Որ 'ի գեհն խոր վայ տայր անձին.
Եւ Արգիլու հօգեկրողին,
Ընդ որս Նաւում եղկելացին:
Ամբակումայ զարմանալւոյն
Պահօք եղօղ բարձր 'ի վիմին,
Այնմ որ զվարափիցըն հրեշտակին
Առեալ բերէր ճաշ 'ի գըբին.
Սոփոնիայ հրատարակին,
Եւ Անգէի քարոզ բանին:
Յովնանու որդւոյ կեոլին,
Եւ Նինուէի մեծ քաղաքին,
Զի իս վերածեա, տէր, ընդ նըմին
Յորովայնէ չար վիշապին,
Հայցմամբ քոյոյ օրինակին
Երեքօրեայ թաղմամբ յերկրին:
Զաքարիայ տեսանողին
Եւ Թնալոյս աշտանակին,
Այն որ նըստեալ յաւանակին
Զքեզ աւետէր նոր Սիոնին:
Մաղաքիայ՝ որ էր վերջին
Ի մարգարէան այն դասին,
Անուանակիր սուրբ հրեշտակին
Եւ համառօտ գեղոյ նորին:

Երից մանկանց Բաբիլոնին ,
Աշակերտաց Դանիէլին ,
Անանիայ , Ազարիէլին ,
Մաքուր մանկան Միսայէլին .
Այնք որ 'ի հուրն անկան հնոցին ,
Զի պատկերին ոչ զոհեցին .
Յորում իջեր , տէր , առ նոսին ,
Չորրորդ եղեր ընդ երրորդին .
Փոխարկեցեր զընութիւն հրոյին
Ի մեղմագոյն ցօղ երկնային ,
Որ բարձրանայր չորրեակ տասին
Ի՞նքն կանգուն յաւելուածին ,
Ի յօրինակ եւթնից եւթին ,
Այլում կենաց եւթանց դարին .
Յորում զօրէ հուր ախտային
Վառեալ փրչմամբ մեղսասախին .
Այն որ յաւուր ութերորդին
Բառնի 'ի սպառ գալըստ.քոյին ,
Եւ մեղաւորք մեղօք ջընջին
Եւ ամպարիշտք ոչ դատանին :
Բայց ես մեղօք յայժմուս կիզիմ
Իբր ըզվառող այնըր հրատին ,
Եւ բարձրանայ յիս բոց չարին
Յոյժ առաւել քան ըզհնոցին .
Փրկեա և զիս , տէր , ընդ նոսին
Յայրեցմանէ չար խորհրդին ,

Ի կիզմանէ անբնականին
Եւ 'ի հրատից բնութեան ախտին :
Ցօղ քո լիցէ իւր 'ի հնոցին ,
Անձրեւ կենացդ առաւօտին
Զիմ շիջուցէ ըղբոց տապին ,
Փոխարկեսցէ յամիկ ցօղալին .
Եւ զանվաղճան հուր գեհենին՝
Զոր ժառանգեն հրեշտակք չարին ,
Ընդ դառնագոյնն եւ զխաւարին՝
Որ է ծընունդ մեղացն ախտին ,
Զոր վառեցի անձամբ անձին
Բորբոքեցի փըշմամբ չարին ,
Շիջո յինէն հայցմամբ նոցին ,
Արժանացո լուսոյդ վերին :
Պաղատանօք մարգարէին
Ի մանկութեան անսանողին ,
Դանիէլի հզօրով ծերին ,
Մարմնով ծերոց կըշտամբողին ,
Զանյայտ տեսիլըն մեկնողին
Բաբիլոնացւոց մեծ արքային ,
Զվէմըն հատեալ առանց ձեռին
Զոր 'ի կուսէն քո ըզմարմին .
Եւ զգալըստեան քո օր վերջին
Որպէս տեսեալ ծանուցողին ,
Զհայր հինաւուրց անուանողին ,
Եւ զքեզ ընդ ամպըս տեսողին .

Եղիազար Մակաբէին
Ինքնամըռւէր քահանային ,
Եւ ըստ հոգւոյ որդւոց նորին
Եւթըն եղբարց և մօր նոցին .
Որք 'ի վերայ հարցն օրինին
Մարմնով մեռան և ոչ լուծին ,
Եւ զԱնտիոքն երեւելին
Եւ զանմարմնին անարգեցին .
Զիս աղաչեա հայցմամբ նոցին
Ի ըղձմունթեանց Բէլիարին ,
Զարչարանացս քո տանջին , *
Գուշակողաց գլխորհուրդ խաչին :

# ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՅՑ այսքանեօք բժիշկք անձին
Ոչ բուժեցաւ ախտ մարդկային .
Քանզի կարեօք բնութեամբ էին ,
Եւ բժշկել ոչ կարացին .
Զի ըստ հզօր ցաւոց վիրին
Հզօր դեղոց պիտանային .
Զոր ըղձացեալ երկար մարմին
Ապաքինել ոչ բաւէին .
Մինչեւ զկենաց դեղ երկնային
Էառ բնութիւն մեր ախտային ,
Եհեղ ըզմաղձն ցաւագին ,
Փոխեալ 'ի կենացն յառաջին :
Նախ 'ի Հոգւոյդ աստուածային
Մաքրեալ հոգի սրբոց կուսին ,
Եւ զօրութիւն Հօրդ վերին
Հովանացեալ զարգանդին ,
Ապա Որդիդ Հօր միածին
Կամաւ իջեալ յորովայնին ,

Ճշմարտապէս եղեր մարմին,
Աստուած և մարդ՝ մի երկոքին.
Ծնեալ մարմնովըս մարդկային,
Որ 'ի Հօրէ նախ անմարմին :
Լուծեր զերկուսն նախաստեղծին,
Զանիծապարտն՝ 'ի խանձարրին.
Բանդ 'ի մսուրըն յանբանին,
Գոլ կերակուր բանականին.
Լոյսըդ յայտնեալ լուսով աստղին,
Մոգըքն նուէր երկիր պագին :
Դասք հրեշտակաց իջեալ յոյլին,
Եւ սուրբ ծնընդեան քո սպասէին.
Հովուացն աղդեալ աւետէին,
Փառք 'ի բարձունս վերերգէին :
Ըստ նախահարցըն սուրբ ուխտին
Թըլփատեցար յութօրէին,
Զի զանթըլփատ սիրտ մարդկային
Թըլփատեսցես հոգւովքըն :
Օրինադիրդ ըստ օրինին
Մըտեր յընծայ 'ի տաճարին.
Եւ զհինաւուրցըդ ծերունին
Տըղայ գըրգուէր 'ի սուրբ գըրկին :
Զիս որ մեղօք ծընեալ յախտին,
Ծընար դարձեալ յաւազանին.
Զոր մերկացայ խաւարամբ չարին,
Ըզգեցուցայ յախտըս կըրկին,

Սրբեա ծննդեամբ քո վերստին
Ընծայելով հօր 'ի յերկին ,
Աղաչանօք Աստուածածնին
Եւ ծերունւոյն Սիմէոնին ։
Որ յերկնուղէ ողջապապանին
Մանկակտոր հերովդէին ,
Գնացեր յաշխարհ Եգիպտոսին
Ըստ բարբառոյ մարգարէին ,
Զի յերկնուղէ գիշերային
Մարդախոշոշ բընաւորին
Ամբոցուցես աջով քոյին
Ի գաղտամիջ նեղից նորին ։
Որ շըրջեցար խոնարհ յերկրի ,
Երկնաւորաց բարձր ահագին ,
Զի վերացո յերկրէ յերկին
Զանկեալս 'ի մեղս անդընդային ։
Որ յետ լընլոյ երից ամին
Աճման մարմնոյ քո հասակին ,
Զքեզ մըկըրտեաց սուրբ առըրդին ,
Վըկայելով հայր և հոգին ,
Ոչ թէ կարօտ՝ մաքրագունին
Մեզ սպարգեւիչ մաքրող բանին ,
Այլ զի ըզմեղս ադամային
Լուացես ջրով Յորդանանին ․
Եւ զիմ լըւա զանցանս անձին
Զախտմըն մեղաց սեւագունին ,

Որպէս երբեմն յուսադանելն ,
Զոր հնացուցի մեղօք կըրկին :
Ընդ յաղթութեան քո երրակին
Ի փորձութեան անապատին ,
Տուր ինձ յաղթել չար իշխանին
Անհերեւոյթ բռնաւորին ,
Գըտնալ բանիւ քո հրամանին
Ցեծին վերայ եւ 'ի քարին .
Կոխել ոտիւք գարշապարին
Զգլուխ կամակոր վիշապ օձին :
　Ընդ ընտրելոց մետասանին ,
Զոր ընտրեցեր գերաշխարհին ,
Հրաւիրեցեր զիս ընդ նոսին
Լինել կըցորդ լուսադունին ,
Բայց ես հոգւով հեղգըս վերջին
Խոստան գըտայ ըստ Յուդային .
Թէպէտ եւ ոչ տիրականին ,
Այլ մատն եղէ անձամբ անձին :
Ի քէն մաղթեմ հայցմամբ նոցին ,
Դարձեալ ուղղել լուսոյ շաւղին .
Անել գործով զքարոզ բանին ,
Զոր հրամանաւ քո ուսուցին :
　Ի հարսանիսըն մարդկային ,
Յոր կոչեցար ընդ մօր քոյին ,
Փոփոխեցեր զջուրըն 'ի գինին ,
Ի քէն հրաշից նախ առաջին .

Եւ զիմ լուծեալ յախտից բնութիւն
Փոխարկեսցես 'ի կարծրութիւն.
Ցամաքեցո զջուր հեղեղին,
Արբո զբաժակ պատուիրանին:
Դարձեալ զորդւոյ Թագաւորին
Բանիւ լուծեր զախտըս ջերմին.
Եւ ես մաղթեմ ընդ հօր նորին
Զառողջութիւն հիւանդս անձին:
Եղեալ նըստար բարձր 'ի լերին,
Որպէս երբեմն իջեր 'ի Սին.
Ցամբոյն խօսեալ զօրէնսըն հին,
Զնորս ուսուցեր, Բանդ 'ի մարմին.
Բացեր զբերանդ աստուածային,
Երանեցեր զորս 'ի բարին.
Ընդ տախտակաց տասըն բանին,
Նորոյս ետուր զինն երանին:
Սանդուխք եդեր յերկրէ յերկին
Ինըն մաստամբք աստիճանին.
Հաներ նովաւ զազգ երկրածին,
Դասակցեցեր Իննեակ դասին.
Բայց ես այնքան եղէ ստորին
Մեղաց ախտիւք ծանրաբեռին,
Մինչ զի և ոչ ելի ընդ մին
Ցաստիճանացն իններորդին:
Զաղքատացայ հոգւով չարին
Աղքատութեանըդ պատճառին.

Այլ միշտ փարթամ կամ'ի նոսին ,
Աղքատ բարեաց ամենեւին :
Ոչ սուգ էառ հոգիս նեղքին ,
Լալ արտասուօք զմահ իւր յինքնին ,
Զի սփոփէի յայնմ աշխարհին
Ծիծաղական անուամբ բանին .
Այլ'ի մտօքս յոյս ծիծաղիմ ,
Եւ խրախանամ'ի վնաս անձին ,
Որում և վայն փոխանակին ,
Եւ սատանայից կախմամբ լալեն :
Ոչ հեզ բանիւ առ համոզքին
Խօսակցեցայ ըստ հրամանին ,
Զի ընդ պաշտօն սուրբ օրինին
Ժառանգէի զերկիրն վերին :
Ոչ քաղցեցայ արդար հացին ,
Եւ ոչ ծարաւ է յիս բանին ,
Զի յագէի սիրով քոյին
Ի յըմպելւոյդ աստուածային :
Չողորմեցայ ես աղքատին
Քոյ յուսոյդ կերպարանին ,
Զի յոր մեծի դատաստանին
Ողորմէիր թշուառ անձին :
Ոչ սրբեցի յաղտոյ չարին
Զիմ անմաքուր սիրտ և հոգին ,
Զի տեսութեանդ աստուածային
Արժանացայց մինչ'ի մարմին :

Խաղաղարար հակառակին
Չեղէ առ իս , ոչ յօտարին ,
Որով որդի հօրըդ վերին
Լինել ըստ քեզ գործովքըն :
Հալածեցայ , բայց ըրժգոհիմ
Ի գործակցաց չարախորհին .
Զոր թէ կամաւ , ժառանգէի
Զարքայութիւն քո երկնային :
Բանիւք բազմօք նախատեցին ,
Բամբասանօք զկըծեցուցին .
Բայց ոչ ընդ քո , կամ առաւ նոքին ,
Այլ արդարեւ ճշմարտէին :
Արդ պաղատիմ , տէր , ըսլադին ,
Գիրկս արկանեմ առանդրդ ոտին .
Թեթեւացո զիս 'ի մարմին
Ի ծանրութեանց մեղաց բեռին ,
Զի հնար լիցի հոգւոյս սորին
Ելից առ քեզ մըտօք յերկին
Ընդ սանդղաձեւ բանըս քոյին
Գտնէ մատամբք աստիճանին :
Անապական ազգ երկնային ,
Որ յագեցեր զազգ մարդկային ,
Աղ անուանեալ հայցմամբ գընդին
Զիս յաղեսցես բանիւ քոյին .
Զանհամութիւնս իմոյ անձին
Համեմեսցես շնորհիւ բանին ,

Ձի մի՛ անհամ գըլխաւ տալին ,
Արտաքս անկեալ կոխան լինիմ :
Լոյս 'ի լուսոյ Հօր միածին ,
Լուսով լըցեր զազգ երկրածին .
Եւ զաշակերտս լուսոյ բանին
Լոյս ասացեր անուանբ քոյին .
Լուսաւորեա լուսովդ նոցին
Զանգիտութեան խաւարս անձին ,
Թէպէտ և ոչ յաշտանակին ,
Այլ իբըր ճրագ ընդ գըրուանին :
Ի նոր օրէնըս հրամանին
Հրամայեցեր զայս բառ կարգին ,
Թէ որք լուծցէ ինքեամբ ըզմին ,
Փոքըր կոչի առ արքունին .
Զի՞նչ արասցէ առ այսպիսին
Հոգիս լուծօղ զամենեսին ,
Որ և միոյ , թէ քըննիցին ,
Չէ կատարօղ պատուիրանին :
Պահանջեցեր ըզկնի նորին ,
Առաւելուլ յարդար մասին
Քան ըզդըպրաց հին օրինին ,
Զաշակերտացըն Մովսէսին .
Ես ոչ միայն չեմ յաւելին ,
Այլ և 'ի նուազ համեմատին .
Նա և թափուր ամենեւին
Ի հին և նոր կտակարանին :

Զի պարտաւոր հրոյ գեհենին
Զիս արարի ցասմամբ սրբոյն.
Եւ բարկացայ եւ ընկերին,
Տարապարտուց շարժեալ յախտին:
 Աչօք նայիմ ցանկականին
Ի գեղ դիմաց իգականին.
Ի սիրտ առնում զխոցուած նետին,
Ոչ գիտելով առ իս ձգողին:
Ոչ շատանամ միով խոցին
Ի միանգամ հայեցուածին,
Այլ յօժարիմ բազմադունին,
Մինչ կարէվէր խոցեալ լինիմ.
Եւ այն զի ձայն քո հրամանին
Միշտ 'ի յականջս հնչեալ ուժգին,
Թէ որ հայի տարփմամբ 'ի կին,
Շնացաւ անդէն յիւրում սրտին:
Ում դատաստանն յայտնի լինին
Յաւաքելոյ քո սուրբ ատենին,
Թէ շունք եւ դողք, նոր 'ի կարգին,
Յարքայութեան քում արտաքսին:
 Բայց զինչ ասեմ ըղձականին,
Ըղձարարփումն խռովս անձին.
Զի թէ աստուստ այսքան տուժին,
Զինչ յանդիմանականն ոյք սխալեցին:
Որով հարեալըս յերկոսին
Ի մահաբեր նետից չարին,

Աղաղակեմ ըստ ախտակրին ,
Դիր դեղ հոգւոյս խոցոյ ներքին .
Յաչաց մտաց զախտից փոշին
Մաքրեա զներքին և զարտաքին ,
Որով յըստակ տեսից յերկին
Ըզկերպարանս նախատըպին :
Եւ ընդ լըրոյ ալդեղ բանին ,
Յունականութիւն լըսարանին
Տըպաւորեա զբան սուրբ տառին
Աստուածախօս կտակարանին :
Դիր պահապան շրթանց լեզուին ,
Ոչ բարբառել ՚ի վնաս անձին .
Այլ միշտ խօսել կամաւ քոյին
Ի շնորհ ՚ի շահըս լըսողին :
Ձեռաց շնորհեա գործարանին
Ըզմնացական գործել բարին ,
Ոչ հեշտական վարել սովին
Ի վնասակար շօշափելին .
Եւ թէ գըթեալ դայթակղեցին ,
Տուր հեռանալ ըստ հրամանին
Սպանող անձին ըզխըրելին ,
Ի յոչ տուժել բոլորովին :
Զոտըս հոգւոյս ուղղեա յերկին ,
Եւ հաստատեա յանշարժ վիմին ,
Զի մի՛ գլորման բոլորս անձին
Անկման ՚ի հուրն աւխթ լինին :

Բերան բացեալ անդուուն ունիմ,
Որով բարկս ոչ բարբառիմ,
Այլ վայրապար դատարկ բանին
Հեռուեցայ մխտատակարին .
Եւ երանի թէ դատարկին ,
Թէ և համար տալ պահանջին ,
Եւ ոչ թունոք մահաբերին
Սուտ և նենգող չարախօսին :

Որ ըստ օրէ քում հրամանին
Լըսեմ ունկամբ մարմնականին ,
Թէ մի՛ երդնուլ ամենևին
Ոչ յերկրային և ոչ յերկին .
Եւ իմ խըցեալ զականջս անձին ,
Ոչ տամ տեղի և մուտ բանին ,
Այլ հակառակ ըերիմ նըմին
Եւ անհնազանդ պատուիրանին :
Զի ոչ միայն յաթոռ մեծին
Եւ 'ի ստորև պատուանդանին ,
Այլ որ նըստոխադ յերկնից երկին ,
Եւ յէակից Հայր և Հոգին .
Զոր ոչ յոգւոյս ըղխէ Հոգին :
Այլ է ազդումն բանաւորութին .
Զի քեզ այսն է Ճշմարտին ,
Եւ ոչն 'ի բաց հրաժարելին ,
Իսկ աւելին քան զայս չարին
Ի սկըզբանէ մարդասպանին .

Զորս 'ի յլուրոց անտի խօսմին ,
Որպէս յառաջ 'ի ձեռն օձին :
Բայց որ ետուր գործի բանին
Զմիտս և զլեզու շունչ օդային ,
Բաց ըզբերանս Հոգւով Քոյին ,
Լից օրհնութեամբ հոգեւորին ,
Խօսել յօրէնս աստուածային ,
Յաւետարանս նորոյ կտակին ,
Յիմաստութիւն տեսականին
Եւ 'ի խորհուրդ գործնականին :
Հեռի արա զբան հերձուածին ,
Զհայհոյութիւնն աններելին ,
Եւ ըզպարսաւանջն ընդ բամբասին ,
Ըզքրթմնջիւն ընդ շողմոգին .
Զխաբէութիւնն առ ընկերին ,
Եւ զմատնութիւն նենգաւորին .
Զերդմանըն բանն երդմնահարին ,
Ըզսուտ խօսելն որ է չարին :
Ըզգրգռութիւն կռուասիրին
Իբրեւ ըզշուն առ կերակրին .
Ոչ անհեթեթըս բարբառին ,
Ի թըշնամանս միմեանց բերին .
Ըզծաղրածու խեղկատակին
Եւ զախտաշարժ բանըս նոցին .
Զանլուր բերան բազմախօսին ,
Եւ ըզմեծապարծ բան յիմարին .

Ըզչարախօս գլուականին ,
Եւ զղօղանջիւն զխմադրաւին .
Եւ զհամօրէն հոյլըս բանին ,
Որ յետ խօսիցըն զըղջացին :
Եւ տուր ինձ բան, Բանդ 'ի մարմին,
Ի միջա խօսել բանիւ քոյին .
Ի շնորհըս տալ իմ լըսողին ,
Ի շինութիւն քաղաքական անձին :
Ոչ մատուցի հարկանողին
Յետ այլ ծնօտին զկողմ աջեկին ,
Եւ ոչ գնացի ընդ վարողին
Տարապարհակ մըղոն կըրկին :
Ոչ սիրեցի ըզթըշնամին ,
Եւ ոչ ցուցի գութ ատողին .
Եւ ոչ ետու փոխ աղքատին ,
Որոց փոխան տալ ոչ ունին .
Այլ առեցի ըզախրելին ,
Զար հատուցի բարերարին :
Միրեմ շըրթամբք շարժմամբ լեզուին,
Նըման գոլով նենգաւորին :
Ըզգուշացայ ոչ քո բանին
Յողորմութիւն տալ աղքատին ,
Այլ ծախեցի զնըւազ չընչին
Ընդ մարդկայնոցըս գովեստին .
Զի ոչ միայն աջեակ ձեռին ,
Որ են կողմանք հակառակին ,

Այլ և փողոյ 'նըման ձայնին
Հրաւիրակեցի զոչինչ բարբին ։
Ըստ աղօթից պատուիրանին
Զմիտ մըտօք 'ի տուն սըրտին ,
Եւ ոչ յանգեան հրապարակին ,
Գտնէ ունել վարձ մարդկային ·
Այլ հեղգացայ ես յերկոսին
Եւ կերպարանին և Ճըշմարտին ·
Զի ծուլութիւնս յաղթեաց յուսին
Երկրաւորիս և երկնային ։
Արդ ըղձութեամբ քո Հայր յերկին ,
Զոր մեզ ետուր շնորհիւ քոյին ,
Տուր ինձ կարդալ բոլորովին
Ի սուրբ սըրտէ զանուն նորին ։
Արքայութիւն տիրականին
Գայցէ տիրել իմում անձին ·
Եւ յերկրաւորս առ իս լըցցին
Կամըք նորա որպէս յերկին ։
Զհաց առօրեայ և զմիշտ էին ,
Զմարմնոյս դարման և ըզբանին ,
Տացէ առատ կարօտ անձին
Զիմանալին և ըզգալին ։
Թողցէ զյանցանս իմում պարտին ,
Որպէս և ես պարտապանին ·
Կամ մանաւանդ թէ զերկոսին
Թողուլ տացէ , զի ինձ թողցին ։

Եւ մի՛ տայց թոյլ փորձողին
Փորձել ըղձոյս որպէս զօրին ,
Այլ պահեսցէ ՚ի սրոյ նորին ,
Ինձ մարտիցէ ընդ դէմ չարին :
Ոչ ծըրնչեսցի պահովք զինարմին ,
Գոնէ համգոյն կեղծաւորին .
Եւ ոչ Հոգւոյն օծի զհոգիս
Խղճով լուսոյ պատուիրանին .
Ոչ լուացի զմիտս խղճին ,
Որ ՚ի յերեսս օրինակին .
Այլ պարապատմամբ որովայնին
Լուծի զկանոն սուրբ պահոցին :
Աղօտ լուսոյ առօրէիս
Ճըրագ մարմնոյ աչքս մըթին .
Խակ աչք հոգւոյս բանականին
Մխեցքս նըսեմ խաւարային :
Արդ եթէ զլոյս պատկերքոյին
Մեղօք փոխեմ գիշերային ,
Խաւարին որ քան յիս զօրացին
Անկեալն յերկնից Արուսեկին :
Այլ աղաչեմ զլոյդ երկնային
Զփառաց ծագմանըդ հայրենին ,
Զպատկերդ մըտաց հոգւոյս ճրագին
Դարձեալ վառեա լուսով քոյին :
Երկուց տերանցն , որք ներհակին
Ծառայեցի գործովք կըրկին .

Կերպարանօք խակականեալ ,
Եւ Ճշմարտիւ խաբեբային :
Ի սեր ժպտող մանկանցն
Զիս կապեցի կամաւ յախտին ,
Եւ զքոյդ լուծի առողջային
Ընկայ սիրոյ պատուիրանին :
Պատուիրեցեր չհոգալ զվաղուին
Ընկերակուր և զըմպելին ,
Զի պատրաստեալ 'ի քէն լինին ,
Ըստ աղաւնեացն որ կերակրին :
Չհաւատացի խոստման բանին
Եւ ոչ անալեամբքն շուշանին .
Այլ ծիւրեցայ հոգովք նոցին ,
Եւ մաշեցի զկեանս ընդ նոսին :
Ամաց յառաջ ժամանակաւ
Ամբարեցի զնիւթ երկրային ,
Որպէս անմահ մահկանացուին
Եւ անվախճան աւօրէին .
Եւ չխնդրեցի զարքայութիւն
Ըստ հայրօրէն բարւոյ խրատին ,
Զի և տուեալք լինէին
Ինձ հարկաւորքն և աւելին :
Մեղօք խաւար տեսարանաւս
Ոչ նկատեմ յիս գերանին .
Սրատես լինիմ՝ այլում՝ շիւղին ,
՛Նման գոլով կեղծաւորին :

Ըզսըրբութիւն աւազանին ,
Եւ զմարգարիտ քոյոյ շնորհին ,
Շանց և խոզից նըմանողին
Կամաւ ետու սըրբծառիրին :
Բայց արդ խընդրեմ զոր ոչ ունիմ ,
Տուր ինձ , իմ Յոյս , ըզխընդրելին .
Հայցեմ 'ի քէն զոր կորուսի ,
Արա գտանել լուսով ճրագին :
Բախեմ ըզդուռնըդ երկնային
Նախ քան զփակելն ընդ դէմ հընդին.
Զողորմութեան դուռըն բաց ինձ ,
Մինչ դեռ փակեալ է ճըշմարտին :
Ընդ պողոտայն չոգայ սորին
Լայն և արձակ ճանապարհին ,
Ի կորըստեանն օթեւանին՝
Յորում բազումք հեանեցին :
Ուղղեա զոտս իմ յանձուկ շաւղին ,
Թէթեւ արա մեղաց բեռին ,
Զի կարացից ընդ ասկաւին
Թէթեւ թըռչել ամպով յերկին :
Մոյծ զիս ընդ քեզ, դուռնըդ վերին ,
Ածցես առ Հայր քո երկնային
Ճանապարհաւ նեղ և նըրբին
Ուղիղ վարուք աստուածային :
Այլ որ չարաց ապաշնորհին
Եւ արդարոց որք 'ի բարին

Տաս հաւատար զցօղ անձրեւին
Եւ ըզծագման լոյս արեւին ,
Ինձ՝ որ մեղօք մեռեալ չարին
Եւ ապաշխարհ առ քո բարին՝
Ցօղեա ըզցօղ շնորհաց քոյին ,
Եւ ըզծագումն խնամալին :
Զեկեալքս առ քեզ ըստ հաւատին
Եւ ըզլըսօղ կենաց բանին
Ըլինել շնորհեա ըստ արժանին
Ի վերայ քո անշարժ վիմին ․
Զի 'ի շրջել հողմոց չարին ,
Եւ 'ի յառնել գետոց փորձին ,
Տանըս հիմունք մի՛ շարժեսցին
Ըստ յիմարին որ յաւազին :
Այս և ինձ ըստ բորոտին
Եւ հաւատով մերձեցողին ,
Կամիմ սրբեաց բոլորովին
Եւ մաքրեցիր յաղտոց չարին :
Զինուորեցայ կայսեր սորին
Որպէս և պետըն հարիւրին ․
Բարբառեցայց ես ընդ նըմին
Զաղերսական բանըս նորին ․
Չեմ արժանի թէ ընդ յարկաւ
Մըտցես ընդ իմըս տաճարին ․
Այլ հրամայեա , Բանըդ , բանիւ ․
Զախտ իմ մերժեա ընդ ծառային :

Տագնապեցայ ջերմամբ ախտին
Պառնըլական զաղլորդութենին ,
Եւ յանկողինըս դարչելիս
Մեղկեալ անկայ զանկանգնելին :
Ընդ զոքանչի այրբոյ Վ խմին
Զիս յարուցեա , աջ հըզօրին ,
Զի պաշտեցից ես ընդ նըմին
Զկենդանատուդ խոյ անձին :
Աղբեւր կենաց , ջուր խընդրեցեր
Սամարուհւոյն 'ի ծարաւին .
Եւ խոստացար ջուր կենդանի
Փոխանակել անցաւորին .
Շնորհեա և ինձ կենաց աղբեւր
Ըզհոգեւոր առբ ըմպելին ,
Գետահեղեալ յորովայնէ
Զառատաբուղխ շնորհաց հոգին :
Ընդ բաղմամեայ լուծեալ անձին
Պրոբատիկէ աւազանին ,
Յորում և ես զօգ ոչ ունիմ
Զի զիս արկցէ մինչ յուզեացին ,
Ասա բանով խոյ մաչձին ,
Այս է մարմնոյս թանձրագութենին ,
Ոչ մեղանչել դարձեալ կըրկին ,
Յետ ողջութեան բառ հրամանին :
Որ 'ի խռովել աղեաց ծովին
Եւ յընկըղմել բարձեալ նաւին ,

Դու տատանեցեր և լըռեցին
Ալիք ծովուն հանդարտեցին ,
Տուր և ինձ ձեռն ըստ Պետրոսին
Վերաբերել յալեաց չարին ,
Զի մի մեղաց շարժեալ ալին
Հեղձուցանէ զիս 'ի նըմին :
Ընդ գլխատանջըն մոլեգին
Ի գերեզմանըն բնակողին
Տանջիմ և ես յոյժ ցաւագին
Ի խորհրդոց որ չերեւին .
Սատանայ և իմ չարադեւին
Որպէս և յայն ժամ առ Նոյին ,
Եւ անդընդոց մատնեա խորին
Որպէս ըղխոզս երամակին :
Որ զանդամոք լուծեալ մարմին
Կարծրացուցեր հոգւով քոյին ,
Շնորհեա և ինձ լըսել ձայնին ,
Թէ մեղքդ քո թողեալ լիցին :
Իշխան մտօք ընդ Յայրոսին
Բուռըն հարից տեառնըդ ոտին ,
Վասըն դըստեր մեռելոյ անձին
Ի տան մարմնոյս մահաբերին .
Խոնարհեցիս յիս ըստ նըմին ,
Դադարեցո զձայն կականին .
Կալ ըղձելոյ բանականին ,
Դարձո զայրէն յիս ըղջոգին :

Եւ ընդ մուսայ ախտաւորին ,
Ի քղանցըս տեառնըդ հըպաղին ,
Մաքրեա զհոսուածըն վըտակին
Արեան մըրուց զաղըտութենըն :
Յոյժ կաղացայ պատուիրանըն
Եւ կուրացայ լուսով բանին ,
Կանգնեա և զիս , տէր , ընդ կաղին ,
Եւ լոյս ծագեա ինձ ընդ կուրին ,
Զի վաղեցից իբր եղջերու
Ըստ կանխասաց մարգարէին ,
Եւ զարուսեակդ առաւօտին
Տեսից 'ի փառաւորըն հայրենին :
Ես համրացայ բարեաց բանին
Որպէս բերան այսահարին ,
Նըման գոլով խուլ և համրին
Եւ 'ի դիւաց խըցեալ խըլին .
Ընդարձակեա զկապըս լեզուիս ,
Բարբառեցո ինձ ըզբարին .
Եւ խլից զականջս ընդ դէմ օծին ,
Զի մի՛ լըւայց ըստ Եւային :
Որ գօսացեալ գործնականին
Եւ չորացեալ յախտէ ձեռին ,
Բան տիրական քո հրամանին
Ի զգայութիւն փոխարկեցին ,
Հընչեա 'ի յիմ մեռեալ մտին
Կենդանարար ձայնիւ քոյին ,

Զի կարկամեալս անհընարին
Ի գործ բարւոյ արձակեսցին։
  Այրի հոգիս լոյ ընդ այրին
Իբր 'ի նոյին մեռեալ զորդին.
Գըթա և յիս, տէր, ընդ նըմին,
Արժանացո կենաց ձայնին։
  Եւ ընդ կընոջ մեղաւորին
Բուրըն հարից կենացդ ոտին,
Տուր համբուրել ինձ ընդ նըմին
Որպէս և նա սիրով սըրբոյն,
Բըղխել աղբերս արտասուելին,
Լըսել ըղձայնդ աստուածային.
Հաւատըք քո զքեզ կեցուցին,
Գընա յանքոյթ խաղաղութիւն։
  Կաւով մարմնոյս լըպըրծողին
Գըթեաց ընկեց զիս թըշնամին.
Անկմամբ խոով գայթակղեցին
Որք փոքրոգիք յիմաստս էին,
Որ ինձ պատժոց գերադունին
Քան զիմ՝ յանցանս առիթ լինին,
Զարարանացդ ծանր արձանին
Անկմամբ 'ի ծովըն գեհենին։
Այլ, որ հընարդ ես անհնարից,
Կանգնեա և զիս այժմ 'ի յոտին.
Զի որք գըլթեալ վասն իմ՝ կանգնին,
Եւ որ կանգունքն են՝ գոհասցին։

Յարդարանքի թշուառական անձին ,
Յոր ցանկէր սէր ըղձալին ,
Ի քուն լինել հեշտոյս հոգին ,
Ցանկեաց որոմն թշնամին ։
Որ նախ հնձաց ժառանգականն
Քաղեալ յինէն 'ի բաց գիցին ,
Զի մի զցորեանն առցես ճշմարտին ,
Զորոմն սաստ հրոյ գեհենին ։
Յոյժ կարծրացայ 'ատ տառապանքին ,
Եղէ նըման ճանապարհին ․
Փուշք աշխարհի զիս հեղձուցին ,
Եւ անպտուղ զանձն արարին ․
Այլ՝ սերմանող՝ սէր՝ ըղձալին ,
Ախս անձկաց ըղձոյս բանին ․
Զի սաց տըղաւ մի յերեսին ,
Ջարխուր · վախճանն կամ դերկանին ։
Ով ծախեցի զգիւրղանանելին
Ընդ գիւտ գանձին յադարականին ,
Զոր գողացաւ իմ թշնամին ,
Եւ ես փոխան ըզկապանելին ։
Ըղձեցայ , որ գանձդ ես երկնոյին ,
Մաղթեմ ողորմու բոլորովին ․
Տուր ինձ խնամս գանձել յերկին ,
Եւ անդր ունել զխորհուրդ սրտին ․
Որ 'ի գողոյն գիշերային
Գաղտնի ական ոչ հասանին ,

Այլ զգուշութեամբ ամենապահին
Ըստ քո լուսոյ պատուիրանին :
Ոչ 'ի խնդիր քո մոլորելոյն
Եղի նըման փախստականին ,
Եւ ոչ փոխան անփոխանելին
Նաւու ըղձէր անցաւորին .
Զվաճառեցի ըստ հրամանին
Ըզգանկութիւն նոյն թագաւորին ,
Աւ 'ի տասցումն մեծագնին
Եւ ցողածին լուսաբերին :
Մարդըմտօրէն ծընունդ կուսին
Աստուած և մարդ մի երկոքին .
Տուր ինձ սիրոյդ աստուածային
Լինել խընդրող խանդակաթին .
Բայց զատուպատ փափագողիս ,
Մուտ 'ի սենեակ առագաստին ուրախին .
Տաճարացդ զիս մերձաւորին ,
Եւ ընդդըրկեա աջով քոյին :
Զհաւատ բերող մանանեխին
Զարքայութեան օրինակին
Որ լատացոյ խնամն անձին ,
Զի չար լերինք փոփոխեսցին :
Եւ ոչ նըման թըռչնոց երկնին
Յառուս հանգեայ պատուիրանին ,
Յորում հոգիք մարդոյ հանգչին
Փառանդք երկնից սուրբ խորանին :

Եւ ոչ եղէ խնամ ըստ համին ,
Կամ կարծրագոյն ճըճեաց մըտին .
Զորոց մանրեա մանր ըղձանին ,
Եւ զիս կառս յոտըս ծառին :
Խոլմոր եղէ վատթար և հին ,
Եւ ոչ յառակ անձման բանին ,
Յայն որ թաքոյց յաւերըն կին ,
Եկեղեցի զխորհուրդ քոյին :
Զի նա 'ի քէն առեալ նախկին ,
Նշխար ծանեան դաքըն վերին .
Եւ ընդ զանգուածս ադամային
Խառնեալ բոլոր խըմորէին :
Զըրկեալ միայն ես յերկոսին
Յանճառելի լոյս իմաստին .
Ում արասցես հաղորդ կըրկին ,
Տացես դարձեալ զոր կորուսին :
Ընդ որսացեալսն 'ի յուռկանին
Ջաներ և զիս յեզըր ծովին .
Բայց յընտրութեան քո ըղբարին ,
Անկայ 'ի բաց ընդ խոտանին .
Որով 'ի նոյն ջուրըս խորին
Դարձեալ իջի 'ի գէջ տըղմին ,
Յորում անդունդք անհընարին
Զհոգւոյս մասունս պաշարեցին :
Ա՜յլ՝ դու կարող յամենայնին ,
Վերաբերեա զիս վերըստին .

Եւ 'ի բարի սուրբ առմանին
Ժողովեցես ընդ ընտրելին ։
Որ 'ի հնգից նըկանակաց
Նըշխարեցեր հինգ հազարին ,
Եւ 'ի չորից դարձեալ զնոսին
Կերակրեցեր յանապատին ,
Զիս , որ քաղցեալ եմ քո հացին
Աստուածայնոյդ երկնաւորին ,
Արա լընուլ հոգւոյս նովին
Յերկնից իջեալ և անմահին ։
Քանանացւոյն լըւար ձայնին ,
Եւ շնորհեցեր ըղձայցելին ․
Աղաղակեմ ես ընդ նըմին ,
Շնորհեա և ինձ զիմ խընդրելին ․
Զի եթէ շուն կոչես վերջին ,
Արագասցես լըսել ձայնին ,
Ճեպել յընթացս 'ի կոչ հոլուիդ ,
Եւ հալածել զօտարոտին ։
Թէ և մանկանցն անարատից
Չեմ արժանի կըցորդ մասին ,
Այլ փըշրանաց սուրբ սեղանին ․
Արժանացո կենաց հացին ։
Կարկամ եղէ ես առ բարին ,
Նըման կընոջըն կարկամին ,
Ձեռըն տացես ինձ ընդ նըմին ,
Զանկեալ հոգիս կանգնել յոտին ։

Որ յայտնեցեր զաստուածութիւնդ
Աշակերտացդ 'ի լերին ,
Եւ զանձառ փառացն հայրենին
Փայլեալ ցուցեր աչաց նոցին ,
Մաքրեա և զիմ միտքս մթին
Եւ զգայարանքս խաւարին ,
Ընդ յայտնապէս 'ի յերկրորդին
Ցագիլ փառօքդ աստուածային :
Ըստ լուսնական այսահարին
Մանկանըն հօր անհաւատին
Որ ըստ օրէ տանջիւր նովին
Ի հուր ցասման 'ի ջուր գիջին :
Յորոց հընարքս մարդկային
Չէ ողջութեան ինձ յերկոսին ,
Այլ թէ 'ի քէն , տէր երկնային ,
Ցաւոցն ախտք հալածեսցին ·
Զի ջերմութիւն տուընջենային
Եւ լուսնականքըն գիշերին
Մի մեղիցեն ինձ ըստ Դաւթին ,
Եւ մի մեղաց պատճառ լիցին :
Ի հարցանելն ընդ քեզ Վ խմին ,
Քանից թողուլ եղբօրն յանցին ,
Ոչ տացեր թէ եւթնեկին ,
Այլ չորս հարեւր ընդ ինըսունին ·
Յոր կենցաղոյս ամքըն թըւին
Անցաւորիս եւթեանց զարին ·

Թէ որչափ եմք 'ի յայս մարմին,
Պարտ է թողուլ զըղջականին ։
Եւ ես թէպէտ եղէ վերջին
Ի յոչ թողուլ պարտականին,
Վասն ախտաւոր բնութեանս անձին
Եւ անկատար գոլ 'ի բարին,
Սակայն առ իս 'ի քէն լըցցին
Քո ինձ եղեալ բան հրամանին,
Թողուլ ըզմեզս առ քեզ պարտին,
Որ քան զաւազ շատ է զծովին.
Ոչ յաղքատիս միայն չափին
Յեւթանասնեկըն կանոնին,
Այլ առաւել քոյդ զօրացին
'Ըստ ողորմութեանդ որ ոչ թըւին ։
Կենդանական չըրւոյ ձայնին,
Որ ոչ թողեալ զհայրըն թողին.
Այլ և մեռոյ ընդ մեռելին
Մեռելոտի գործովք չարին ։
Բուռըն հարի զմաճոյ բանին.
Բայց ոչ նըման մաճակալին.
Զի նա չհայի անդր 'ի յետին,
Այլ 'ի յակօսն որ յառաջին.
Եւ ես թողի զխորհուրդ վերին
Ըզճանապարհ մըտից յերկին,
Դարձայ այսրէն յերկիր սորին,
Ուստի հանէր իջման քըլին ։

Արդ բարձրացո զիս վերլուսին ,
Առ քեզ հանցես յերկնից յերկին .
Մի՛ սար դառնալ առ թշնամին ,
Զի մի՛ հարցէ ընդ խաւարին ։
Ի ներքինեայն երից բաժին ,
Զոր որոշեաց բանին քոյին ,
Յարավայնէ և մարդկային
Եւ ընդ վարուց երկնաւորին ,
Նու խրեցայ և ես մասին
Հրեշտակական կուսականին ,
Պատերազմել ընդ դէմ ախոյին
Եւ ընդ բնութեանըս շարժողին .
Բայց թոյլ դըրոյ յապաշխարին
Եւ զինընկեց 'ի ճակատին ,
Յորում և ներքք մուխ չարին
Ի սիրտ հարան ախտականին ։
Զապահանջեցեր զանկարելին ,
Այլ զիս եգիր իշխան նըմին ,
Թէ որ կարողքն են՝ տանիցին ,
Եւ որք տկարք՝ ոչ պահանջին .
Վասն այսորիկ ոչ ունիցիմ
Պատճառ բանի խոցմանս անձին ,
Եւ ոչ գիտող զպատասխանին
Ի քո արդար դատաստանին ։
Այլ՝ որ քննիչ ես խորհրդին
Եւ տեսանող գաղտնեաց սրտին ,

Մարմնոյ փոխան պարտեալս անձին
Ընդ Թըշնամւոյն իմ յաղթողին .
Մի՛ տար տեղի յիս փորձողին
Մարմնոյ ախտիւք զիս պատրողին ,
Ա՛յլ պարագրեա Թեւօքդ քոյին ,
Որպէս ըզտիպսըն բիբ ակին ։
Յընթրիսըն մեծ կազմեալ մեծին
Տեառնըդ ծառայք զիս կոչեցին .
Յորմէ 'ի բաց հրաժարեցի ,
Պատճառելով խըստու չարին ,
Վասն աշխարհի ագարակին
Եւ վասն եզանց զգայականին ,
Եւ ընդ կընոջ հեշտասիրին՝
Որով կապեալ կամ 'ի սմին .
Լուծից կապից զըժոխային ,
Նոյն ըզկապանս իմ զերեալին .
Ձա՛ն 'ի հովուէս այս տըրտմագին ,
Տար 'ի տաճար յուխտեալ տեղին .
Արժանացո կենաց հացին
Եւ ըմպելոյդ աստուածային ,
Ուրախանալ գինեաւ բանին՝
Զոր խառնեցեր անըզգալին ։
Յերուսաղէմ մերոյ դրախտին
Ընդ Ադամայ յանցաւորին
Ի յԵրիքով իջի սորին ,
Անկայ 'ի ձեռս աւազակին .

Որք 'ի լուսոյն մերկացուցին
Զհոգիս մեղաց վիրօք լցին.
Ոչ կիսամահ թողեալ գնացին.
Այլ յետ մահու պատերազմին :
Զոր և Մովսէսին ղեւտացին
Եւ Ահարոնին քահանայն հին ,
Տունըն մեծի նահապետին
Եւ մարգարէք հնոյ օրինին ,
Զվէրըս ցաւոցն անհընարին
Եւ ըղխոցուածըս սաստկագին
Դեղով բանից անցեալ անցին ,
Եւ բըժըշկել ոչ կարացին :
Սամարացւոյդ` զոր կոչէին
Տոհմըն ժըպիրհ հրէականին ,
Ցուցից ըզցաւս խոց անձին
Տեսօղ աչացդ աստուածային .
Գըթա և յիս ըստ Ադամին ,
Դիր դեղ հոգւոյս խոցոյս խորին .
Պատեա զգեստուքն իմ առաջին ,
Զոր աւազակքըն մերկացին .
Արկ 'ի վերայ ըձէթ և զգինին
Զդեղըն կենաց հոգւոյ վիրին ,
Տալով զօծման դարձեալ զհոգին
Եւ ըզբաժակ նորոյ ուխտին :
Բարձ 'ի վերայ գրաստու խաչին ,
Տար 'ի պանդոկ յեկեղեցին .

Յանձնեա ցըլխոյ քահանային ,
Զքեզ ըստ մարմնոյ պատարագչին :
Տուր ընդ երկուս դահեկանին
Զբան հին և նոր կտակարանին ,
Տանել դարման հոգւոյս նուաղին ,
Որպէս կեցցէ հացիւ մարմին :
 Նախ քան ըզդալ բարեկամին
Հոգւոյս խմոյ պահանջողին ,
Ի յերկնայնոցն երկնաւորին
Եւ զիս յերկիրս ուղեւորին ,
Բնութեամբ բարւոյ բարեկամիդ ,
Զոր առեալ սիրով չարին ,
Առ դրունս լուսոյ առաւօտիդ
Կանխեամ հոգւով գիշերային .
Տուր ընդ երիս նըկանակին
Զդաւանութիւն երից անձին .
Եւ ըզմարմին քո երկնային ,
Որով ծանեաք զերիս զիմին :
Զի 'ի բարեաց գործոց մասին
Չունիմ գընել բարեսիրին .
Միայն զհաւատ շնորհաց քոյին
Եւ ըզթոշակ կենաց վերջին :
Ընդ դէմ անժամ աղաչողիս
Մի պատճառեր ըզգրանց փակին ,
Եւ ըզմանկանցն 'ի յանկողնին ,
Զանմեղ հոգւոյն 'ի հանդըստին .

Եւ մի՛ տար զանկարելին ,
Որ չկամելոյն փոխանակին .
Զի քո կամելն ամենեւին
Է կատարեալ գործ 'ի բարին .
Այլ տուր ժրանել ըստ տաւկին ,
Զի ընկալցայ ըղխընդրելին .
Ոչ ընդ սիրոյն , զոր կորուսի ,
Այլ ընդ ժառութեան աղաղակին :
Ըստ մեծատանըն յիմարին ,
Որում ետուն անդք առհմային ,
Յիմն աճեցին սերմանք չարին
Եւ բազմացան 'ի միտս անձին .
Մինչեւ քակել շտեմարանին ,
Հոգւոյս մտաց բանականին ,
Եւ մեծագոյն գործել զտեղին
Յոգնաբեղուն ալրողոյ չարին :
Զոր մանկացաւ քո երկեղին
Հատցես ըզբոյս դառնաբերին ,
Եւ աճեցո՛ յիս ըզբարին
Պտղաբերել քեզ 'ի յերկին :
Ի մաքրութեան աւազանին ,
Յորում ստեղծեր զիս վերըստին ,
Այքըն չարեաց յինէն ելին ,
Այնք որ յօձէ անդըր մըտին .
Որոց շրջեալ ընդ անջրդին
Յօդի յախտից ցամաքային ,

Որ հանդըստեան վայր ոչ գըտին
Յորս ըստ կամաց իւր ոչ էին ,
Եւ զի աղբեւր մեղաց սխալին
Միշտ անըսպառ յինէն վիժին ,
Որ և պատուշաճ իսկ յարդարի
Տուն և տեղի հոգւս նըմին ,
Առեալ զընկերըս եւթնեսին
Ըստ կենցաղոյս չարք ընդ չարին ,
Խառնեալ յինքեան այսն առաջին
Դարձաւ նորօք 'ի տունս անձին ·
Որ գերազանց չարըս վերջին
Եղեւ ինձէն քան ըզնախնին ·
Զի յաղբերէն այլ ոչ մաքրին ,
Այլ տաժանմամբ և գըժուարին ·
Եւ վշտաշատոյն գոլով նորին
Յետ ըմբըռնման ամրականին ,
Որում տիրեաց դարձեալ կըրկին
Ըստ առաջնում յարացուցին ·
Զոր հերքեսցես դու վերըստին
Ի յանապատն անդընդային ·
Թէպէտ և ոչ ըստ օրինին ,
Այլ ըստ առատ քո պարգեւին ·
Եւ ըստ չարեացըն եւթնեկին ,
Զոր մերժեսցես ըզներհակին ,
Բնակեցուսցես յիս ըզՀոգին
Ըզեւթնարփի շնորհաց քոյին ·

Ըստ Մարեմայ Մագդաղենեին ,
Յորմէ եւթըն դեւն ելին ․
Եւ ըստ Զակքեայ մաքսաւորին ,
Եւ ըստ բազմացն օրինակին ։
Զեղէ նմանող քում ծառային ,
Որ ակն ունէր անառակորդ դարձին ․
Եւ ոչ յերկրորդ կամ յերրորդին
Պահու սպասեմ գալոյ քոյին ։
Ըստ այսմ եւ ոչ յուսամ վեհին
Եւ անպատուեմ խոստման պատուին ,
Ածել ընդ մէջ քո ըղձօտին ,
Անցեալ պաշտել ընդ ծառային ․
Այլ եմ նըման յուսահատին
Քում ծառայից հարկանողին ,
Արբեցողին եւ կերողին
Եւ զինչըս անառակորդ վատնողին ․
Եւ երանի թէ արդիւնին
Եւ ոչ հանդոյն չարխմատին ,
Զի չըմնէլի գան տատակողին ,
Այլ յոյժ առկաւ չափով մնալին ։
Բայց արդ գլխաւն եմ վատթարին ,
Տըրդէտ կամաւ լաւագունին ․
Զեմ զգուշական պահող անձին
Արթուն մըտօք ըստ հըսկողին ։
Ի քնոյ զարթօ մահաբերին ,
Զի զգուշացայց աստղակին ։

Տուր ակն ունել առաւօտին ,
Զի յագեցայց անուշեամբ քոյին :
Արա ՚նըման զիս ծառային
Ծառայակցաց կերակրողին ,
Տալ ՚ի ժամու զիմաստ բանին
Իւրաքանչիւր քաղցեալ անձին :
Զարիական տուր ինձ գօտին ,
Պընդել ըզմէջ ցանկականին ·
Լոյս ըղձըրագ պատուիրանին
Յոգիս յանլոյս և խաւարին :
Կարկամութիւն կռամոլ ախտին
Ողորմութեամբ խորտակեսցին ·
Եւ քանկըն հին փոփոխեսցի
Յաւանց հնութեան ունող գանձին :
Ի դասս ընտրեալ փոքրիկ հօտին
Խառնեա զծուլիս անբեր հոգին ,
Զի հօր քո կամք հաճոյացին ,
Զարքայութիւն տալ ընդ նոսին :
Հեղեր յերկիր զհուրդ երկնային ,
Որով մարդկան հոգիք մաքրին ·
Բորբոքեսցի յանձն իմ ցըրտին ,
Զհոգիս ջեռո սիրով քոյին :
Դու , Տէր , միայն լեր ինձ բաժին
Ըստ Պօղոսի զքեզ սիրողին ,
Չփոխանակել էից մասին ,
Ոչ տանջանաց զանազանին :

Զհաշիւն ես ոչ ընդ ստոխին
Եւտու յաստեաց ճանապարհին ,
Առ 'ի չմտանել դատաստանին
Ընդ մոմնութեան չարախօսին :
Որոց բերանքըն կարկեսցին ,
Ոչ դատախազ լինել վասն իմ :
Զիս 'ի ձեռաց կորզեա դահճին ,
Եւ հան յանել բանտէ նորին :
Ի նոր ձորձոյ աւազանին
Սփածեալ զմեղաց կապերտըն հին ,
Որ ընկալաւ 'ի լոյս նորին
Ըզգոյն ոսխուր և զպատեղին :
Զերծ առ յինէն զքուրձ ըզգեստին ,
Եւ ըզգեցո զուրախալին .
Եւ զպատմուճան հոգւոյս ներքին
Լըւա աչաց ջուրբ արտասուքին :
Զնորացուցի ըզտոիկըն հին
Ի հնութենէ մեղաց զհոգին ,
Զի նոր գինի պատուիրանին
Առանց հեղման յիս պահելին .
Նորացուցես զիս վերըստին ,
Աջով կարող Հօր հըզօրին .
Զի հայրատունկ որթոյդ գինին
Անապական յիս պահեսցին :
Ի վեհագոյն նըստոյ բարձին
Յատախճանաց քոց առաջին ,

Ոչ յառաջեաւ կուսմամբ քոյին ,
Այլ յինքնաշարժ փառատուին :
Յորժամ կոչես զազգ երկրածին
Ի հանրական կոչարանին ,
Մի՛ յանդրգնիս բան կոչողին
Ի վայր մատիր բարբառեսցին .
Այլ և անկեալս այժմ 'ի գետին
Լըւայց բարեաց 'ի քէն բանին ,
Ի վեր մատիր բարեկամին
Ի բարձրութիւնս աստուածային :
Զելից յերկինս աշտարակին
Եւ զամրութիւն ընդդէմ չարին ,
Ըզկուսութիւն հրեշտակային
Եւ ուղղնոյն մաքուր պահին ,
Ոչ հաշուեցայ զծախըս վարձին ,
Եւ ոչ զերկուսնըս շինուածին ,
Այլ հինն արկի հրոնից կարգին
Անանց գըլխոյ կատարածին .
Բայց , կատարիչդ ամենայնին ,
Կերտող բոլոր էականին ,
Զիմ կատարեա շինուած անձին ,
Յօդեա 'ի գլուխըդ վերըստին ,
Զի մի անցորդք ծիծաղեսցին
Յատանց լըրման թողեալ շինին .
Այլ քո բանիւ պըսակեսցին
Հինն և աւարան 'ի միասին :

Իմ Թագաւոր իշխան հոգիս,
Յորժամ մըտի յաշխարհ սովին,
'Ի աշխարհակալըս խաւարին
Եմուտ 'ի մարտ պատերազմին.
Նախ ոչ խորհել էր 'ի մըտին,
Եթէ տատամբըլք հազարին,
Իւրեւ մարմնոյ զգայարանին,
Զիցէ կարող մըղել մարտին
Ընդ այնմ որ գայ բըռնաւորին
Հանդերձ զօրըք քանի հազարին.
Որք իմ տատամբք լինքեամբք կըրկին
Խմոյս ընդ իս անդուլ մըրցին :
Յորս և անսօղք զիս գովէին
Իբր ըղձխօղ չափոյ անձին,
Ի մարտ մըտեալն ընդդէմ ակարին
Եւ ոչ քան զիս դիմադրաւէին :
Այլ առաքել իմ հրեշտակին
Նախ քան ըղձալ պատերազմին,
Ըզկամս իշխող ընտրականին,
Զի օրինօք խաղաղասցին :
Սակայն չէգի ունկըն խրատին
Առակաւոր քո հրամանին.
Որով անկայ 'ի մէջ մարտին,
Խոցեալ վիրօք անհընարին :
Զայլըս տեսի համամարտին
Յաղթող դըռնեալ յասպարիսին,

Եւ կարծեցի զիս ընդ նոսին
Յաղթել կռուոյ մենամարտին .
Բայց փորձութիւնքն իբրեւ հասին ,
Զանժուժութիւնս իմ յայտնեցին .
Յառաքինեացն որոշեցին
Եւ ընդ վատացըն զիս լըքին ։
Այլ՝ Թագաւորդ իմ երկնային ,
Ամենազօր Հօր միածին ,
Լեր մարտակից տըկարս անձին
Ի հոգեւոր պատերազմին ։
Հար ըզհազարսն որ յահեկին ,
Որ յայտնապէս չարեօք կռուին ,
Եւ զբիւրաւորս աջակողմին ,
Որք և բարեօք կերպարանին ։
Զիս ամրացո ՚ի սրոյ նոցին
Ճըշմարտութեան զինու քոյին .
Եւ պահպանեա զլեհ անդամս
Սաղաւարտաւ քո նըշանին ։
Մոլորեցայ ըստ ոչխարին
Ի բանաւոր հօտէ քոյին .
Նըւազեցի զԹիւ հարիւրին ,
Զոր յանապատ Թողեր վերին ։
Եկիր խընդրել սիրով ըղձին ,
Գըտեալ հաներ ուսով յերկին .
Լըցեր ըզԹիւ անկեալ դասին
Յուրախութիւն հրեշտակային ։

Եւ զիս բարձեր, տէր, ընդ բաղմին,
Լուայեր յաղօթս մեղաց ողղմին.
Յորում դարձեալ արդ թաւալիմ
Ըստ անմիտն աղբասիրին:
Ելուս դարձեալ զիս արտասուօք,
Զոր շնորհեցես անզեղջս անձին
Աւաղ վտակ և սատակագին,
Ըստ յորդութեան աւազանին:
Եւ զմոլորեալս կամաւ կրկին
Դարձո 'ի կամաց աստուածային.
Զիշխանական կամս իշխողին
Բարձ, որ քոյումդ ոչ հնազանդին,
Թէ արտաքոյ է բնականին՝
Զոր շնորհեցեր բանականին,
Այլ զի պատճառ է ինձ չարի
Ի թուլութեան թըշուառս անձին:
Զարքունական պատկեր քոյին,
Դրոշմեալ 'ի դէմս մարդկային,
Խոր թաղեցի յաղբեւս ախտին
Կորըստական խորատուք չարին.
Զոր խնդրեցես լուսով ճրագին
Աստուածութեանդ որ 'ի մարմին.
Եւ տանս աւել ած ըստ բանին,
Մաքրեա յախտից ըստ աշխարհին,
Քով հրամանաւ գործեալ զայս կին
Եկեղեցւոյ օրինակին,

Կոչել զԳթյացիս դերաշխարհին
Յուրախութեան խնդոյ դարձին .
Եւ զիս կըցորդ արա նոցին
Ի խրախութեանն որ է վասն իմ,
Զըւարձանալ ընդ ցընծալին ,
Որք ըզմեղաց սուգ ոչ առին :
Հեռաւեցայ անառակին
Ի հեռաւորնակ տարաշխարհին .
Զհայրենական վաստակոյ բաժին ,
Զոր ընկալայ յաւազանին .
Յորում սովիմ կենաց հացին
Եւ ըմպելոյդ աստուածային :
Ի յարածել խոզերամին
Զյագիմ մեղօք քաղցր եղջերին .
Զհայրըդ կոչեմ ընդ կըրսերին ,
Մեղայ ասեմ քեզ 'ի յերկին .
Թէ և որդւոյ կոչման ձայնին
Չեմ արժանի հօրըդ վերին ,
Արա զիս մի ըստ վարձկանին ,
Որք ընդ վարձու գործեն զբարին .
'Դ ապրեցելոցն երկրորդ կարգին ,
Քանզի լուծի զսէր հայրենին ,
Ի գիրկս ընկալ խնամոց վեհիդ ,
Արժանացո սուրբ համբուրին .
Փոխարկելով զչար անմահիդ
Ընդ զխակնեալ հոգւոյս հատին :

Տուր ինձ ըղձիս պատարագին ,
Ըմպել զգինին որ 'ի խաչին ․
Ջրուարձակաց զգաստ անմարմին
Ընդ մեռելոյս կենաց գիւտին ։
Երեկ որդի հերքայեցին ,
Եւ կամ որ են յարդար մասին ,
Որք յօրինացն ազատակէն
Ցեկեղեցի քո մերձ եկին ,
Միայն լուան հեռուստ ձայնին
Պարակցելոյ մանկանց նորին ,
Եւ 'ի տաճար անդր ոչ մտին
Իբր ախտացեալք ըստ մարդկային ․
Նախանձաբեկ գոլով նոցին
Առ փրկութեամբ հեթանոսին ,
Որով նախնիքըն պարծէին
Զի զօրինօք քո ոչ անցին ․
Որք ոչ միայն պատարագին
Զենմամբ Որդւոյդ չաղաղակէին ,
Այլ ոչ փոքու զենեալ ուլին
Հրեշտակական կամ մարդկային ։
Թէ և նոցունց պարգևէին
Նախնի բարիքն ամենքին ,
Կտակարանքն , ըստ Պօղոսին ,
Եւ աւետիքն և քոյդ մարմին ,
Բայց առ ինև չհամեմատին
Մխաք այսոցիկ , զի ոչ յանգին ։

Այլ նախանձոտ իմ թըշնամին,
Նա արարչութեանն երէց որդին,
Որք չարախօս զինէն լինին
Միշտ անդադար Հօրըդ վերին,
Որպէս Յոբաւ ծանուցանին,
Եւ այլ բազմօք որ ըստ կարգին.
Զորոց կարկել հայցեմ լեզուին,
Եւ ոչ դընել ունկըն բանին,
Եւ մի մատնել փորձասիրին,
Թէ և խընդրէ զիս ընդ նըմին ։

Արարչական բնութեամբ քոյին
Մի տուն շինեալ բանականին,
Տընտես գոլով մարդն առաջին,
Յատակըս տանս այս երկրային.
Եւ յառաջեալ ծընընդոց նորին,
Տընտեսք 'ի քէն զանազանին.
Ոմանք մարմնով գերափառին,
Եւ այլք բաշխօղք հոգեւորին.
Ի վեհ սկըսեալ թագաւորին
Մինչ 'ի խոնարհ գործակալին,
Եւ 'ի պետէ հարցն առաջին
Մինչ յիններորդ դաս խորանին,
Իւրաքանչիւր ոք ըստ կարգին
Տընտեսք 'ի քէն կարգեալ լինին.
Ոմանք դոյից նիւթականին,
Եւ այլք աննիւթ պարզեալ բանին ։

Յորում էհաս վիճակ մասին
Ընդհանրական թշուառ անձին,
Տընտես լինել տանըն քոյին,
Բաշխօղ բանից աստուածային,
Տալ 'ի ժամու ծառայակցին
Ըղկերակուր կենաց հացին,
Զոր ոչ ետու քաղցեալ անձին,
Այլ սովամահ թողի զնոսին ։
Դարձեալ տընտես հաւատարիմ
Մարմնոյ հոգւոյ միաք անմարմնին,
Զիւրաքանչիւր ախտըս նոցին
Տնօրինաբար տալ ըստ կարգին,
Կերակրելով բանիւ զհոգին
Եւ դարմանել չափով զմարմին .
Եւ յերկոցունց կացեալ միջին,
Պահել անվրէպ ըղկարգ նոցին ։
Ի ծառայի դոլով մասին
Որպէս ստեղծեր կարգել զմարմին,
Եւ տիրական իշխան զհոգին
Ըստ նախատիպըդ պատկերին .
Բայց անիրաւս 'ի յերկոսին,
Ի յիմ անձին և յօտարին,
Նըմանեցայ անիրաւին,
Իմ վատութեանս օրինակին ։
Որ ամբաստան զինէն լինին
Վասըն չարեացս որ միշտ գործին

Սուրբ պահապանին իմ անմարմին ,
Եւ մարմնաւորք որ տագնապին :
Եւ ես չունիմ իմաստութիւն
Զօգուտն ընտրել ժամանակին ,
Ոչ առ 'ի կեանս մինչ 'ի մարմին ,
Եւ ոչ կենացըն փաղձանին ,
Թէ ոչ 'ի լուսմըն կենցաղոյս
Կարեմ գործել ես ըղձալին ,
Եւ ոչ մուրալ յորոց ունին ,
Զի ամաչեմ յոչ տալ նոցին :
Այլ դու , առատ յամենայնի ,
Տուր ըզղղջումն անզեղջս անձին ,
Դառնալ առ քեզ բոլորովին ,
Նախ քան կոչման զիս յատենին
Պարտապանաց դատաստանին՝
Մասն ինչ թողուլ դընէ պարտին ,
Հոգւոյս գլխաւորըն մար ձիթին ,
Մարմնոյս ըղքան քուռ ցորենին .
Դարձեալ ըզկնի օծման շնորհին
Մեղուցելոյ զըղջականին ,
Բազում շնորհել գլխներեկին ,
Տըկար թուլթեանըն պատճառին :
Իսկ որ 'ի հայ քո երկնային
Անմաքրապէս ըստ իս մերձին ,
Սակաւ թողուս թըլով քանին ,
Քանզի կարեօք չըրունադատին :

Նա և ըղձեղան որ բառ հայցին
Գործով ծանու թանձրագունին .
Եւ զխորհրդովն , որ բառ ձխթին ,
Մաքրեա յինէն շնորհիւ քոյին :
Շնորհեա և ինձ բառ տրնտեսին
Լինել արժան քում գովեստին .
Թէ և որդի եմ աշխարհին ,
Տուր ինձ զիմաստ մեղաց դարձին :
Ըստ մեծատան փափկասիրին
Ես փափկացայ յաւօրէին
Մարմնովս այսու անասնային
Ի փափկութեան անըզգամին :
Զգեցայ զբեհեզն և զծիրանին ,
Եւ զանկուածոյ բազմագունին .
Թէպէտ և ոչ զերեւելին ,
Այլ զբազմագոյն կեղծեօք բարին :
Սեղան զեղեալ ամենային
Յոգնահանճար խահարարին .
Թակոյք լցեալ զանոյշ գինին
Զյիմարութեան առաջնորդին .
Ուրախ եղէ ես յայսպիսին
Յուրախութիւն անցաւորին .
Յերգ և քընար ձայն ախտային
Փոխան երգոյն աստուածային .
Եւ յայսքանեաց բարեաց բազմաց
Զոր շնորհեցեր պարգեւ մասին ,

Ոչ դարձուցի զտասներորդին
Քեզ 'ի քոյոցն պարգեւին.
Այլ սեփհական ինձ կարծէի
Զորս ընդ յարկաւ ժողովէին
Յերկրէ, յօդոց, և ծովային
Բիւրապատիկ բարիք քոյին.
Յորոց չետու ես աղքատին,
Եւ ոչ բարձի զպէտս նոցին.
Ոչ կերակուր քաղցեալ անձին,
Եւ ոչ ծածկոյթ մարմնոյ մերկին.
Ոչ հանգստեան տուն օտարին,
Ոչ օթեւան հիւր օտարին.
Ոչ տեսութիւն առ հիւանդին,
Եւ ոչ խնամ զորս 'ի բանդին:
Ոչ տրտմակից եղէ վշտին
Տրտմեցելոյ յիրս տառանձին,
Եւ ոչ խնդալ ընդ խնդալին,
Այլ նախանձու վառեալ նովին:
Որք և Ղազարք օրինակին,
Բազմապատիկք են և ոչ մին.
Առ դուրս անկեալ իմ ապարանքին
Աղաղակեն ողորմագին,
Եւ ես անլուր ձայնից նոցին
Չտալով փշրանս ընդունելին.
Յորում պոռնիկքըն յագէին
Եւ հացկատակք պարարտէին:

Շունք օրինաց քոյ արտաքին
Գտանէ լեղուաւ ողորկէին ·
Եւ ես լըսօղ քում հրամանին
Լեզուաւ հարի զքո նըմանին ։
Ի միտ չառի զմխոյս բանին
Զաստուածախօս քո առակին ,
Որ միշտ լըւեալ անտես լինին ,
Վասն զի չունիմ ականջ ներքին ։
Ոչ յիշեցի զմահ աղքատին ,
Ի հրեշտակաց տանել զհոգին ,
Յաբրահամու նահապետին
Ի հաւատոյ հանգչել գոգին ։
Թէ օրինակ է մարդկային
Յաղքատութեան համբերողին ·
Զի յետ Ճըգնանցըն վախճանին ,
Յարքայութեան ուտանըրդ հանգչին ·
Եւ ոչ ըզմահ յըղփասիրին ,
Որ ՚ի դըժոխս էջ ըստորին ։
Յորում լեզուն պապակէին
Ի տապ բոցոյ դառնագունին ,
Որ կարօտէր կաթիլ ջըրին
Ի Ղազարէ ծագիւ մատին ,
Ընդ թակուկաց լի բաժակին
Բարձեալ մատանց մատռուակին ։
Թէ մեծատանց որ յաշխարհի
Սա առ ՚ի խըրատ բոլորակին ,

Մի՛ պարարել որդանց զմարմին ,
Այլ փոքր ինչ տալ և աղքատին ։
Արդ մի՛ լուայց զպատասխանին
Այս մեծատունն զԱբրահամին ,
Թէ ընկալար դու ըզբարին
Զոր գործեցեր զփոխարինին ,
Եւ Ղազարոս փոքու չարին
Հատոյց ըզվրէժ ցաւօքն անձին ․
Որով սա աստ մխիթարի ,
Դու պապակիս 'ի գեհենին ․
Այլ տուր աստէն զըղջումն , ինձէն
Ապաշաւել զոր գործեցին ։

Ընդ յըղփութեան որովայնին ,
Պահօք ճըշնել ըզստուար մարմին ․
Եւ ընդ երգոցըն պոռնկին
Ի գինարբուսն անառակին ,
Տուր ձայն ողբոց արտասուագին ,
Լալ լինձ 'ի տուէ և գիշերին ․
Զի բորբոքեալ նոքօք հնոցին
Վառուսն այրմանց չիջանիցին ,
Եւ խորափիս մեծի վըհին
Լըցեալ, անցայց ես առ նոսին ։
Եւ ընդ բարուց անողորմին
Խառնեաս յիս գութ ողորմագին ,
Զի յողորմելն ինձ աղքատին՝
Ողորմութեան հասից քոյին ։

Ի յիմ քաղաքս մարմնոյս դրնին
Աթոռ մըտաց դատաւորին ,
Ի յԱստուծոյ աներկեղին
Ի մարդկանէ անամօթին ,
Զի անձնիշխան է յայնմախին
Յոչ երկընչելն և յերկեղին ,
Եւ անպատկառ ըստ խորհրդին ,
Զի յուժքէ ոչ տեսանին :
Աստ և հոգիս 'ի քէն այրին
Ի փեսայէդ իւր երկնային ,
Քանզի սեղեխ օտարոտին
Ի յաւաղաւան եմուծ քոյին .
Որ անդադար այրմամբ սըրտին
Աղաղակէ մըտաց խըղճին ,
Իւր դատ առնել ընդ սոխին
Զըրկող մարմնոյ քաղաքակցին .
Զնեղքինն առնել դարձեալ վէրին ,
Եւ ըղձերինն առնել տարին ,
Որպէս կարգեալ է Արարչին ,
Հոգւոյ ծառայ լինել մարմին :
Ոչ կամելով անխրատին ,
Լսել ձայնի աղաղակին
Վասն երկեղի աստուածային
Եւ ամօթոյ ինչ մարդկային .
Սակայն յաշխատ առնել այլւոյն
Յիշատակաւ խոցեալ վիրին ,

Դատաստանի լըսել նորին
Ի նըշխարեալ ժամանակին ։
Այլ՝ դատաւորդ իմ երկնային ,
Որով երկինք ուերկիր դատին ,
Դատաւորիս խնամ անձին
Դատել տացես զիս ըստ կարգին ,
Զի մի՛ յաւուր դատաստանին
Դատապարտիմ ընդ դատողին ։
Յորժամ կայես ՚ի միասին
Հոգւով զմարմին յանլոյծ կապին ,
Եւ զայրեցեալս ՚ի քէն դարձեալ
Կապակցեսցես սիրով քոյին ,
Փեսայ լինել հոգւոյս հարսին ,
Յօդմամբ ՚ի գլուխ քո վերըստին ։
Եւ զհակառակս ստոյն մարմին
Նըհանջեսցես ներքոյ նորին .
Ծառայակես լըսել բանին ,
Եւ անյապաղ գործել զբարին ։
Օրինաւոր փարխեցին
Աղօթելով ՚ի տաճարին ,
Դնէր առաջի զգործեալ բարին
Ամենատես աչաց քոյին .
Հրապարակայր յիմար հոգին
Առ հեռաւոր ազգ մարդկային ,
Եւ ՚ի վերայ մերձաւորին
Աղօթակից մաքսաւորին ։

Զոր ոչ միայն զաղօթելին
Չէառ լեզուաւ մեծարանին ,
Այլ և յարդար գործոց նախկին
Վրիպեալ անապարծ խըռովլ բանին :
Բայց զի՞նչ ասնեմ խմուս անձին
Անխառնիրիս բոլորովին ,
Բարեաց գործոց հեղգացունին ,
Չարեաց մասանց ժողովողին .
Զի բարութեանցն ոչ հետեւիմ ,
Զոր պանծացաւ փարխեցին :
Եւ գերապանց նըմին լինիմ
Ի փառաւոր հըպարտ ախտին :
Այլ տուր ըղձայն մաքառողին ,
Բաժեալ հոգւոյս մաքառելեալին .
Աղաղակել բանիւ նորին ,
Աստուած , քաւեա զմեղս իմ անձին :
Արդարացո զիս ընդ նըմին ,
Որպէս ըզնա միով բանին .
Խոնարհեցո զմիտս իմ ներքին ,
Զի բարձրացայց շնորհիւ քոյին :
Ընդ Ղազարու բարեկամին
Մեռեալ եղայ 'ի տապանին ,
Ոչ քառօրեայ այլ բազմամին
Մեռեալ հոգիս է 'ի մարմին .
Զայնըդ հընչեա յիս երկնային
Եւ լսելի արա բանին .

Լոյծ 'ի կապից զըժոխային ,
Հան 'ի տանէս խաւարային ։
Ընդ Ջահքէի մաքառօրին
Ոչ բարձրացայ յերկրէ ստորին
Ի բարձրագոյն ծառ խմատին ,
Ի տեսութիւնդ աստուածային ․
Փոքրր հասակ հոգեւորին
Բարեաց գործովք յիս չաճեցին ,
Այլ յարակայ նըւազեցին ,
Մինչ կաթնաբբու զիս արարին ։
Դարձեալ յառակ հակառակին ,
Նըլ 'ի ծառ մարմնոյ ժանդին ,
Ի քաղցրահամ սէր երկրային ,
Որպէս և նա 'ի թըզենին ․
Յորմէ հըզօր բանխւքըլին
Փութով իջո զիս ըստ նըմին ,
Ագանելով 'ի տունս անձին
Ընդ քեզ և Հայր և սուրբ Հոգին ,
Հոգւոյս զըրկման տալով մարմին
Ջծառայութիւնըն չորեքկին ,
Եւ զկէս գոյից մարմնականին
Աղքատացեալ ախտականին ․
Ջի փըրկական առ նա բանին
Արժանացայց քոյդ ձայնին ,
Որդիս գոլով Աբրահամին
Ըստ հաւատոց նահապետին ։

Որ յօրինակ հրեշտակնին
Եւ անմաքուր հեթանոսին ,
Նըստար 'ի յէշ յաւանակին
Զգօնացելոյն և ողորմելին ,
Մաքրեա և զիս ըստ առակին ,
Եւ յիս հանգիր Հոգւովդ քոյին ·
Արա աթոռ քեզ երկնային ,
Բազմեաց յոգիս ըստ Քրովբէին :
Եւ ըստ մուտում օրինակին
Հրեից ազգաց առ Թըղթենին ,
Յոր 'ի խընդիր գոլով պտղին ,
Ոչ ընձայեաց զերախայրին ,
Մի անիծեր ինձ ըստ նոցին ,
Թէ և նըման եմ անբերին ,
Զի մի տերեւըն հաւատին
Պըտղով գործոյն իմ չորացին ·
Այլ հաստատեա զիս 'ի բարին ,
Որպէս և զուռն 'ի սուրբ որթին ,
Զոր մըշակէ Հայրդ երկնային ,
Պտղաբերէ յաճումն Հոգին :
Եւ զանպըտուղ ծառըս քաղցին
Եւ զպըտղատուս դառնագունին
Մի հատաներ յայգւոյ քոյին ,
Այլ փոփոխեա բրելով յայլին :
Հրաւիրեցոյ յառաւօտին ,
Իմ 'ի սկըզբան յաշխարհ մըտին ,

գործել յայգի պատուիրանին ,
Ընդ քո պատկեր դաշնականին .
Եւ ես լըւայ հրաւիրողին ,
Մըտանելով միայն յայգին .
Բայց հեղգացայ 'ի գործ բանին ,
Որով չունիմ ակըն վարձին ։
Այլ, տէր տուող յամենայնին ,
Տուր ինձ ձըրի զպարգեւ շնորհին ,
Ըստ մըշակաց մետասանին .
Մըտեալ յայգի Ադին դրախտին ։
Ի հրամանիդ աստուածային՝
Զոր Հայր տուաւ քեզ, Միածին ,
Կոչեաց և զիս ձայն քարոզին ,
Ուրախանալ յանձնառելին .
Այս 'ի խորհուրդ քո խորանին ,
Եւ անդ յանխուլթ քաղաք վերին ,
Յաւէժական յանպատմելին
Յանփոխական ուրախալին ։
Եւ քանզի զգեստ պայծառ չունիմ
Արժանաւոր հարսանարանին ,
Զի սեւացոյն մեղօք անձին
Աղտեղեցի զաւազանին ,
Զգեստ և զգեցող տէր անքըննին ,
Զգեցո զիս քեւ այժմիկ կըրկին .
Եւ զպատմուճանըն զառաջին
Պայծառացո զայժմ աղտեղին ,

Զի մի՛ լըւայց տեառնըդ ձայնին ,
Զընկերն անուն ընդ եղկելին ,
Եւ մասնեցայց նըման նըմին
Ի բանդն անել դըժոխային ։

Չիմաստնացայ ես յերկուսին
Ըստ իմաստնոց կուսից հընգին ,
Զի զըխուրադոյնն ընդ դըժուարին
Ոչ բառացայ ես ըղլարին .
Այլ յիմարացն եղէ յետին ,
Ոչ պահելով եւղ լապտերին ,
Ընդ կուսութեան զողորմութիւն
Եւ կամ զօծումն աւաղանին ։
Որք 'ի գիշերն անդործ վերջին
Ինձ արծաթով ոչ վաճառին .
Որով և դրունք հարսնարանին
Հեղգացելոյս ընդդէմ փակին ։
Այլ ատաանօր մինչ 'ի մարմին ,
Փեսայդ իմ , լուր հոգւոյս հառային .
Զոր փոխան անդր աղաղակին
Այժմիկ գոչեմ ողորմագին .
Բաց ինձ ըզդուռնըդ երկնային ,
Մոյծ յառագաստըդ քո վերին .
Արժանացո սուրբ համբուրին
Անախտական մաքուր գըրկին ։
Ինձ մի՛ լիցի լըսել ձայնին ,
Զոչգիտականն պատասխանին .

Այլ տուր վաւել շիջեալ ջահին
Մըտաց կուրիս լուսով քոյին :
Նըմանեցայ չար ծառային ,
Ի տաղանդայն ոչ շահողին ,
Եւ գերազանց գըտայ նըմին ,
Զի կորուսի զպարգեւ շնորհին :
Ոչ գործեցի ըղքոյն կըրկին ,
Քառեակ զերկուս , տասըն զհընգին ,
Զի ոխրեի բոլորովին
Տասըն քանաք զգայականին .
Այլ թողուցի յերկիր ըզմին
Ծըրարեալ ախախուք վարշամակին :
Զարկի զարծաթն 'ի սեղանին ,
Զի խընդրեիր ըզտոկոսին .
Այս է ըզքան պատուիրանին
Ի լըսելիս բանականին ,
Որք են սեղան իմանալի
Իմաստութեան կենաց հացին :
Վասն այսորիկ ես ակն ունիմ
Ընդ մէջ հատմանն եւ խաւարին ,
Մինչ 'ի խընդիր գաս տաղանդին ,
Զոր շնորհեցեր յաւազանին :
Այլ փըրկողիդ իմոյ անձին
Լալով յինէն այս աստացին .
Թէ մինչ 'ի ձեռս է ինձ բարին ,
Տուր քեզ հաճոյ լինել նովին .

Որով լուսոյ զուրախալին
Ընդ ծառայի հաւատարմին ,
Թէ մուտ 'ի տուն իմ երկնային
Յուրախութիւն տեառնըն քոյին :

# ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Որ զփրկական խորհուրդ խաչին
Յայտնեալ ցուցեր յերեկոյին,
Եւ զկենարարդ քո մարմին
Բաշխեալ ետուր ընդ բաժակին.
Արա և զիս ընդ սուրբ դասին
Հաղորդ լինել քում սեղանին,
Կենաց հացիդ՝ յորմէ սնիմ,
Եւ ըմպելոյդ՝ ում ծարաւիմ:
Որ մաքրեցեր յաւազանին
Մաքուր ձեռօք զոտս նոցին,
Եւ ուսուցեր զխոնարհութիւն,
Զոր նախ բանիւ՝ յայնժամ յիրին.
Լուա և զիմ ախտմին չարին,
Աղաչանօք սրբոյ դընդին,
Եւ ըղձընայս ուղղեա զոտին
Խոնարհութեամբ ելիւք յերկին:
Որ ըղձմութիւն քո մարդկային
Ցուցանելով 'ի գիշերին,

Տագնապեցար դու յերկեղին ,
Աղօթեցեր առ Հայր յերկին ·
Փրկեա և զիս գաղանի նեռին
Եւ յերկեղէ գիշերային ,
Մատուցք հոգւոյս իմ և մարմնին
Յերկիւղ քո սուրբ բեւեռեսցին ։
Որ կապեցար ընդ կապելոյն ,
Արձակեցեր զհանգոյց կապին ·
Զիս արձակեա յինքնակապէս
Մեղաց կապից դըժոխային ։
Որ ընդ մեղօք դատապարտին
Կացեր անմեղդ 'ի յատենին ·
Յորժամ փառօք գաս հայրենի ,
Մի՛ դատեսցես զիս ընդ նոցին ։
Որ ձաղեցար 'ի թուք պըղծին
Վասն անօթոյ նախաստեղծին ·
Ջնջեա զանօթ մեղաց լըրբին ,
Որով զերեսս իմ ծածկեցին ։
Որ ներեցեր չար ծառային
Ածել ձեռամբ քեզ ապտակին ·
Հար ուժգնակի զդէմս չարին ,
Որպէս և զիս էհար ուժգին ։
Որ ոչ թողեր հոսել վիժին
Ի խոր մեղաց անդընդային ,
Այլ դառնապէս լալով սրտին ,
Քաւիչ եղեր ուրացողին ·

Կանգնեա և զիս նըման նըմին
Ի գըրըմանէ սայթաքողին ,
Յորդ արտասուս տալով աչայս
Եւ ջուր գըլխոյս նըման ծովին :
Որ ըղձեցայր ըղձերանին ,
Արկեր քըղամիդ կարմիր յանձին ,
Նախատանաց զոր կարծէին
Զինուորք Պոնտոս Պիղատոսին .
Ըզքուրձ մեղաց մերկեա յինէն ,
Զյորդան կարմիր արեան գունին ,
Եւ ըզգեցո զուրախալին ,
Որ զգեցուցեր զմորդն առաջին :
Ի ծունր իջեալ կատակէին ,
Խաղ առնելով ծիծաղէին ,
Յոր հայեցեալ զօրքն երկնային ,
Ահիւ երկիր պագանէին ,
Զի ըզընութեանն ազատին
Բարձցես զամօթ մեղաւորին .
Եւ զիմ հոգւոյս մըտաց խորշին
Լուծցես զամօթըն տըրտմագին :
Որ ըզգըլուխ քո զերկնային ,
Յորմէ սարսեալ Սերովբէին ,
Ծածկեալ ձորձովըն կըռփէին
Եւ եղեգամբ հարկանէին ,
Վասըն գըլխոյ հողեղինին
Խոնարհելոյ կընոջըն ատին ,

Զի վեհագոյն երկնից դասին
Ըղձա գիցես 'ի քոյդ մարմին ․
Եւ զինմ անկեալ մինչ 'ի գետին
Եւ խոնարհեալ առից չարին
Վասն գործոց անօրինին՝
Որ զիս յերկիր կործանեցին ,
Մի՛ թողուցուս խաւարա՛ոլին
Որպէս մանկանց գընդաւկ խաղին ․
Այլ փըրկեսցես 'ի թըշնամւոյն ,
Յօդեալ 'ի գլուխ քո վերբասին :

Որ 'ի բոլոր քոյին մարմին
Եւ բոլանդակ մասն անդամին
Աւեր սաստիկ զհարուած գանին
Յետ վըճռոյ դատաւորին ,
Զիս որ յառից մինչեւ ցըգլուխ
Ցաւօք նեղիմ անհընարին ,
Առողջացո դարձեալ կըրկին ,
Որպէս շնորհօք սուսդանին :

Որ փոխանակ մեղաց փըշին ,
Զոր մեզ անէծքըն բուսուցին ,
Պըսակ 'ի փշոց 'ի գլուխ եդին
Մըշակք այգւոյն Իսրայելին ․
Խորեա ըզփուշ մեղաց յինէն ,
Զոր յիս էհար խիմ թըշնամին ․
Եւ ողջացո զխայթուած վիրին ,
Զի սպիք մեղացըն ջընջեսցին :

Որ ընդ պըղպջ քաղցրադունին
Գառնախոյզի մանչացուցին ,
Ճաշակեցեր զխառնեալ լեղին
Եւ ըղձացախն 'ի ծարաւին .
Ըզդառնութիւն թիւնաւորին ,
Զոր 'ի մասունս հոգւոյս արկին ,
Մաքրեա 'ի բաց հանդերձ նովին ,
Եւ քաղցրացի սէր քո 'ի սմին ։
Որ փոխանակ մանչարերին
Ծառոյն բուսեալ 'ի մէջ դրախտին ,
Բարձեր յուսոյ ըղձիւղո խաչին ,
Ի Գողգոթայ հաներ տեղին .
Զիմ առ 'ի մեղս անկեալ զհոգի
Եւ ծանրադոյն բարձող բեռին ,
Թեթեւացո քաղցր լըծով
Եւ փոքրոգի բեռամբ խաչին ։
Որ յուրբաթու ժամ երրորդին ,
Յօր պատրանաց նախաստեղծին ,
Բեւեռեցար , տէր , 'ի փայտին
Ընդ անօրէն աւազակին .
Զեռք որ զերկիր հաստատեցին ,
Տարածեցեր զայն 'ի խաչին
Փոխան նոցա ձըգմանն ձեռին ,
Որ 'ի ծառոյն մահ կըթեցին ,
Զիս որ յանցեայ նըման նոցին
Եւ առաւել քան ըզնոսին ,

Ձեռամբ տընկեալ տունդ Գոմորին
Պտուղ կըլթեալ սոդոմային ,
Մի՛ տուժեսցես չափով չարին ,
Մի՛ պահանջեր զհամար պարտին .
Այլ լեր քաւիչ իմոյ յանցին
Որպէս նոցա յանցյս վայրին ։

Որ բարձրացար 'ի սուրբ խաչին ,
Բարձեր զյանցանըս մարդկային ,
Եւ ըզբնութեանըս թըշնամին
Բեւեռեցեր դու 'ի նըմին .
Զիս ամրացո ընդ հովանեաւ
Ամենայաղթ քո նըշանին .
Եւ 'ի ծագելըն յարեւելից ,
Լուսաւորեա լուսով նորին ։

Որ աջակողմ աւազակին
Բացեր ըզդուռն Ադին դըրախտին ,
Յիշեա և զիս յորժամ գայցես
Արքայութեամբ քո հայրենին .
Լըւայց և ես ըզցընծալին
Զ քո տայցեալ պատասխանին ,
Այսօր ընդ իս լիցես յԱդին
Ի հայրենիս քո սուրբին ։

Որ ողբալով բախմամբ սըրտին
Տեառնըդ իմոյ մայր առ խաչին ,
Յորժամ լըսէր ըզծարաւոյն ,
Հեղձոյր արտօսըր ցաւագին .

Տայցես և ինձ հեղուլ վասն իմ
Յորդ արտասուս՝ նըման ծովին ,
Զի լըւացից զյանցանս անձին
Եւ զաղտ հոգւոյս պատմուճանին :
Որ յահագին գոչման ձայնին
Բարբառելոյ զելի ելին՝
Հիմունք երկրի տատանէին ,
Լերինք բարձունք սասանէին ,
Եւ փարագոյր հին օրինին
Վերուստ 'ի վայր պատառէին ,
Եւ գերեզմանըք բանային ,
Մարմինք սըրբոցըն յառնէին ,
Արեգական լոյս քօղարկեալ
Խաւարանայր միջօրէին .
Նա և լուսինն , օրինակին
Փոփոխելով յարեան գունին .
Քանզի ըզտէրդ իւրեանց տեսին
Մերկ 'ի խաչին , չհանդուրժէին .
Որ փոխանակ բանականին
Ընկան տարերքըն սարսէին .
Արդ ընդ վիմացն , որ շարժէին ,
Շարժեա զանշարժ սիրտս 'ի բարին .
Ընդ մեռելոցն , որ կանգնէին ,
Կանգնեա զմեղօք մեռեալ հոգիս .
Ընդ պատառել վարագուրին
Վառին պարտեացն ադամանցին՝

Զի՛մ սպառնալեա զհնութիւն չարին,
Ջնջեա ըզգիր մեղացս անձին ·
Ընդ խաւարել լուսաւորին՝
Հերքեա յինէն զգունդ խաւարին ·
Ընդ լուսանալ յիններորդին՝
Լուսաւորեա զիս վերըստին ·
Ընդ մերկանալ քո 'ի փայտին՝
Ընդ մերկութեան նախաստեղծին,
Զիս ծածկեսցես փառօք քոյին
Յաւուր մեծի հրապարակին ։

Որ փոխանակ խաչահանուաց
Տանջին ըզբեալ հրեից ազգին
Աղօթէիր առ Հայր յերկին ·
Թողուլ ըզմեղսն որ գործէին ·
Ինձ որ հոգւով հաւատացեալ
Երկրպագեմ քեզ, Միածին,
Թող զիմ զյանցանս որ գործեցի,
Մի յիշեսցին մեղքն առաջին ։

Որ յետ լընլոյ գրելոյ բանին,
Աւանդելոյ առ Հայր զհոգին,
Տիգով հարեալ զինուորին՝
Աղբեւր բըղխեաց 'ի սուրբ կողին,
Ջուրն 'ի լուացումն աւազանին,
Արիւնն յարբումն խորհրդին,
Վարդն վերայըն կողածնին՝
Որով մեղաւ մարդն առաջին ·

Զի՛ս որ յախտէ ծընեալ մարմին
Եւ 'ի հողոյ զանգեալ արիւն ,
Զոր մաքրեցեր ցօղով կողին
Եւ ես դարձայ 'ի նոյն կըրկին ,
Մի՛ թողուցուս կալ 'ի նըմին ,
Այլ լըւասցես զիս վերըստին ·
Թէ ոչ պարգեւքըն շնորհեացին ,
Այլ արտասուօք ոռոգեացին :
Բաց ըղձերան իմ՛ վըտակին
Քո սուրբ արեան կողահոսին ,
Որպէս աղըւոյ առընդխացին՝
Որ զմօրն յինքեան ձըգէ ըղտոյն ,
Զի ես արդէն զուարթութիւն
Եւ զմայլեցայց 'ի սուրբ հոգին ,
Եւ քաղցրացայց համ՛ բաժակին
Մեր անարատ անապակին :
Որ 'ի մահու քո անմահիդ ,
Զոր ընկալար մահ 'ի մարմին ,
Յանմահութիւն զիս փոխեցեր ,
Զմահու համեր ջիլըս վերջին ·
Զիս , որ մեղօք մեռայ կըրկին
Եւ կորուսի զանմահ բարին ,
Կենդանացո կամաւ քոյին
Արդարութեամբ պատուիրանին :
Զանանց պարգեւդ անցաւորին
Ի պարգեւի խընդրեալ մասին ,

Ըմպարգեւիչդ արարածոց
Մահկանացուաց և անմահից ,
Ընդ Յովսեփայ Արեմաթին
Արդար և սուրբ աշակերտին ,
Ինձ պարգեւեա զքեզ ձիր շնորհին ,
Կենաց բաշխող յամենայնին :
Որ պատեցար սուրբ կըտաւովք ,
Եդար 'ի նոր գերեզմանին .
Զիս մի՛ թողուր նըման լինել
Որք իջանեն 'ի դուռ ներքին .
Այլ մեռուցեա զանձն իմ՛ ախտին ,
Կենդանացո երկնաւորին ,
Առ 'ի խորհուրդ սուրբ զմըռսին
Անուշահոտ մաքուր խընկին :
Որ 'ի դասուց հողեղինաց
Ահիւ պատուիս յիմանալին ,
Նոյն պահեցար 'ի զինուորաց ,
Պահպան անքուն Իսրայելին .
Զիս պահպանեա աջով քոյին ,
Եւ յանձն արա սուրբ հրեշտակին ,
Պահել ամբողջ 'ի գիշերին
Յաներեւոյթ պատերազմին :
Որ կընքեցար դու մատանեաւ
Դատուք լուծեալ քահանային ,
Գանձըդ կենաց անմահութեան ,
Ծածկեալ եդար 'ի սիրտ երկրի .

Զգրուանըս մըտաց ընդդայութեանցս ,
Յորս է բարւոյն մուտ և չարին ,
Կըներես խաչիդ քո նըշանաւ ,
Եւ հաստատես յիս ընդարին :
Որ 'ի կանանցն խուզարկելոց
Արտասուեցար յառաւօտին ,
Շնորհեա և ինձ կաթիլ սըրտիս
Ջերմ արտասուս տարփմամբ քոյին .
Եւ աւետեօք Սերովբէին ,
Որ 'ի վերայ գոչէր վիմին ,
Ինձ լըսելի արա զհըրճուն
Զայն յարութեան փողոյն վերջին :
Ի նոր և կոյս գերեզմանէն
Յարեար մարմնով քո կուսածին ,
Եղեալ պըսաւղ և անդրանիկ
Ննջեցելոց մեզ առաջին .
Զիս , որ կապեաց իմ Թըշնամին
Ախտիւ մեղաց՝ որ 'ի մարմին ,
Արձակեսցես դու վերստին
Որպէս զհոգին որ 'ի բանդին :
Որ յայտնեցար 'ի պարտիզին
Մարիամու Մագդաղենին ,
Եւ մերձենալ ոչ ներեցեր
Որ յԵւայէ ազգէն կըրկին .
Յայտնեաց և ինձ յութերորդին
Մեծ և վերջին առաւօտին .

Եւ ներեսցես յայնժամ մերձիլ
Անարժանիս խնոյ անձին ։
Որ յարութեան երեկոյին
Միաշաբաթ կիրակէին
Երեւեցար մեռոտանին
Փակեալ դըրանքն 'ի գիշերին ,
Եւ ըզփըչումն զառաջին՝
Զոր կորուսաք մեք 'ի դրախտին՝
Պարգեւեցեր դարձեալ նոցին ,
Նըշըշ բնութեանըս մարդկային ։
Զիս որ զհոգւոյս փակեալ ունիմ
Զդըրունըս մըտաց քոյոց բանին ,
Եւ անձանձանչ խաւարային
Իբրեւ ըզտուն գոլով մըթին ,
Մի թողուցուս յանկըյս յարկիս ,
Մի օթանկից լինել չարին ։
Այլ զառագաստ բաց ըղորմաւ ,
Փայլեա 'ի սա ըզլըյս արփին ։
Ի նմին աւուր կիրակէին
Յետ ութաւուց Ճանապարհին ,
Կըրկնակելանց , մինչ երթային՝
Խօսակցելով քո ընդ նոսին ,
Ծանօթս եառուր յօթեւանին
Ի բեկանել ըզբեղ հացին ։
Անսեա եղեալ յաշաց նոցին ,
Ճըմլեալ ըզըրտիք վարանէին ։

Դանո և ինձ զանձառելին
Զծածուկ տեսիլ.քո բաղձալին ,
Եւ ճըմլեալն սիրտ իմ՝ յանձին
Ցնծամբ սիրոյ.քո երկնային :
Յայսըմ՝ հովուէ սրբամաքրանէ
Նըս 'ի սըրտի գըտնել յերկին ,
Յոր ուխտեցեր մեզ , Միածին ,
Զարքայութիւնըդ.քո վերին :
Որ 'ի յաւուր ութերորդին
Մըտեր դարձեալ , տէր , առ նոսին ,
Լըցեր զըղձումն աշակերտին
Թերահաւատըն Թովմային ,
Շօշափելով զխոցուած կողին
Եւ զբեւեռացըն սուրբ տեղին .
Որով առաք մեք զերանին ,
Որք ոչ տեսաք որպէս նոքին .
Զիս , որ հոգւով հաւատացեալ
Տէր և աստուած խոստովանիմ՝ ,
Զայնիւ դոչեմ՝ զայս ընդ նըմին
Որպէս ուսայ բանիւ նորին ,
Արժանացո յորըն վերջին ,
Յորժամ՝ գայցես փառօք.քոյին ,
Զ.քեզ տեսանել մարմնով նովին ,
Ողջագուրել սիրով սըրտին :
Որ առ ծովուն տիբերային
Ներգործեցեր հրաշըս կըրկին ,

Լըռնաւք ձըկանցն 'ի յուռկանին
Եւ նորաստեղծ ձուկն 'ի կըռակին ,
Զիս որ աղէքս այս երկրային
Ի ծով մեղաց ընկըղմեցին ,
Վերադարձեա յանախտ բարին
Սուրբ ուռկանաւ պատուիրանին :
Որ երկակի սիրով բանին
Հարցանելով քո յետ ճաշին ,
Զուրացութիւնըն գերեւսին
Բըժըշկեցեր ըզՊետրոսին .
Յիս , որ լէ բեւր հարցափորձիւ՝
Բարեաց մտանք ոչ երեւին ,
Առողջացո զվէրըս խոցին ,
Եւ դիր 'ի խոր ըզսպեղանին ,
Զի խոցեցայց սիրով քոյին ,
Քեզ ընդգըրկեալ սիրտ իմ լըցին ,
Որպէս երգեալ առակողին
Ըզսէր հարսին առ փեսային .
Եւ ուղղեսցես զիս ընդ նըմին
Հետեւանալ քեզ 'ի յերկին .
Թէպէտ նըմանն լինել անհնարին ,
Բայց քեզ հընար ամենեւին :
Որպէս միւսումն աշակերտին ,
Սիրեցելոյ քո ըստ անձին ,
Խոստանալիր բանիւ քոյին ,
Ոչ ընդ մահու լինել ձեռին .

Որ վերլուծեալ այլաբանելն ,
Անմահ մնալ բանից նորին ,
Կամ թէ կամաց իմ չներհակէն՝
Թէ կամիցիմ ըղձեալ գործն .
Զիմ ըղձմունեալ հոգիս կերպին
Կենդանացո , տէր , վերըստին ,
Եւ գաղտնեացըն քո վերջին
Անմահացոյ զիս ընդ նոցին .
Եւ ընդ օդոյս իշխանութեան ,
Զոր բռնութեամբ այժմիկ ունին ,
Անխռովաբար խաղաղութեամբ
Զիս անցուսցես հայցմամբ նորին ։
Որ 'ի լըրման քառասնեկին
Յետ յարութեան սուրբ պասեքին ,
Ի ձիթենեաց հանէր լերին
Զընտրեալ ըղձաւ մետասանին .
Եւ զաւետիս հօր ըղձողին
Խոստմանցըն շնորհել նոցին .
Եւ օրհնելով , տէր , ըզնոսին ,
Վերհամբարձար փառօք յերկին .
Եւ ըզբնութիւնըս մարդկային ,
Զոր չարն արար անդընդային ,
Բարձրացուցեր գեր 'ի վերոյ
Քան ըզբնութիւնըն հրեղէնին ։
Նըստար յաջմէ քում ծընողին
Ըստ կանխասաց մարգարէին ,

Երկրպագեալ յանմարմնական
Զօրացն ընդ Հօր և ընդ Հոգին .
Եւ զիս , զանշարժս առ 'ի բարին ,
Վերաբերեա ընդ քեզ յերկին .
Զնեխեալ անդամս այս երկրային
Յօդեա 'ի գլուխըդ վերըստին .
Թէ և վերջին ամենայնին
Իբրեւ ոտից զարշապարին ,
Սակայն 'ի թիւ սուրբ անդամին
Համարեցայց ես ընդ բազմին :
Որ յիններեակ յոբելինին ,
Ի կատարման պենտակոստին ,
Առաքեցեր զքո սուրբ զՀոգին
Ի վերնատունըն խորհրդին ,
Ըստ կանխագոյն խոստման բանին
Եւ աւետեաց քոց հրամանին ,
Մխիթարել ըզտրտմութիւն
Աշակերտաց մետասանին .
Յորում անսան և անքընին
Հընչեաց 'նըման հողմոյ ուժգին ,
Եղեւ ըզտունն՝ յոր 'նըստէին՝
Մաքրէչ բոցով ծախող չարին .
Յորմէ պարգեւք աստուածային
Հրեղէն լեզուօք բաժանէին ,
Ի համագումն ընտրեալ բանին՝
Որ ցըրուեցան յաշտարակին .

Յիս, որ Թախծեալս եմ տըրտմագին
Ի հեռանալ շնորհաց քօղին
Վառն մեղաց՝ որ միշտ գործին
Յանձն իմ ոխող կամաւ չարին ,
Առաքեսցես զպատուատ Հոգին ,
Որ է անծախ 'ի պարգեւին ,
Լինել սփոփիչ տըրտմական անձին
Ի մեղկութիւն չար խորհրդին .
Եւ նորոգեա զուղիղ զհոգին ,
Որ ոչ հնանայ ամենեւին ,
Յիս 'ի հնացեալ մեղաց բաղին
Եւ յօթարան կամակորին :
Հոգւով հաստեա տիրականին ,
Եւ մի' հաներ յինէն զհոգին .
Այլ առաջնորդ ինձ 'ի յերկին
Հոգիդ լիցի սուրբ և բարին :
Պաղատանօք Աստուածածնին
Անապականն և միշտ կուսին ,
Եւ Յովհաննու Կարապետին
Յանապատէ բարբառ ձայնին :
Աղաչանօք մաքուր դասին
Առաքելոց նախ առաջին ,
Որք ըղհաստան Հոգւոյն սրբին ,
Եւ ընդհանուր մեզ արբուցին :
Աշակերտաց գերագունին
Սուրբ հաւատոյ անշարժ Վիմին ,

Եւ Անօթոյ ընտրեալ բանին
Անճառելեացն լսողին ։
Մարթուր որդւոյն Զեբեդէին,
Որք 'ի մերումս որոտացին ·
Եւ Անդրէի քում խաչակցին,
Եւ Մատթէի քարոզ բանին ·
Փիլիպպոսի գծչայր հարցողին,
Բարդուղիմեայ զմեզ կոչողին ·
Յակոբայ մանկ ալփէենին,
Եւ Թովմայի երկուորեկին ·
Նախանձայոյզ Շմաւոնին,
Եւ յակոբեանին Յուդային ·
Եւ ըստ անուան եղբօրքին
Արդար անուն հայրապետին ։
Եւթանց սրբոց զոր ընտրեցին,
Սարկաւագաց փոքու հօտին ·
Որոց նախկին պարուց դասին,
Պսակ անուանն է ընդ նոսին ։
Եւ քում ընտրեալ եւ Թանանին,
Աշակերտաց քարոզ բանին ·
Եւ որք նոցայն հետեւեցին
Յիւրաքանչիւր ժամանակին ։
Հայրապետաց հանուրց ազգին,
Վարդապետաց ուղիղ բանին ·
Որ զմեզ Որդի հօր միածին
Խոստովանել մեզ ուսուցին ։

Սպասաւորաց սուրբ խորհրդին
Յինեալ զաստուց յեկեղեցին ,
Համանմանից վերնադասնին
Փառաւորողաց աստուածային ։
Նա և նոցունց՝ որք են յերկինս՝
Հայցմամբ վեհիցն ողորմեա ինձ ․
Որք և վասն իմ՝ քեզ պաղատին ,
Ընկեա չառնել զգործս ձեռին ։
Մարտիրոսքն անթիւ անձին ,
Որք վասն քո զարիւն հեղին ․
Տուր ինձ արտօսր ցաւագին
Հեղուլ փոխան արեան նոցին ։
Ի վերայէն սուրբ սուաքին
Սանձահարեալ զքեզ ատողին ,
Մինչ 'ի վերայն բնաւից վերջին ,
Որ 'ի նեռնէն կատարեսցին ։
Զարչարանօքն ամենայնին
Ի տանջանաց փրկեա չարին ,
Եւ կամաւոր մահուամբ նոցին
Ի մահուանէ անվախճանին ։
Խաւար բանդիւք արգելանին
Լուսաւորեա զխաւարս անձին ,
Եւ կարութեամբ աչաց նոցին
Յաչս հոգւոյս փայլեա զարփին ։
Հատմամբ ունկանց լսարանին
Զխլս բացցես քոյդ ձայնին ,

Եւ ծայրակատար փողոց օդին
Յոգիս բուրեաց զհոտ անմահին։

Կրարեալ ընդունօք սրբարանին
Զիմս արարգեաց բանիւ քոյին,
Եւ ատամանց քաղմամբն ուժգին՝
Բաց ըղբերանս առնուլ զՀոգին։

Համամամբ յուսոյն երկուց ձեռին
Զիմս արձակեա միշտ 'ի բարին,
Եւ կատարմամբ մատանց նոցին
Զիմս գրեսցես անուն յերկին։

Հերձմամբ մաքրոյն որովայնին
Հերձ առ յինէն զխորհուրդ չարին.
Եւ կորեալով ամից նոցին,
Ոտք իմ կրթաւք հաստատեսցին։

Վերմամբ մորթոց սրբոյն անձին
Բոլորք մեղաց իմ քերեսցին,
Եւ մորմոքմամբ հարման աղին
Հեշտախառնութիւնքըն մաքրեսցին։

Ընդ բազմահնար տանջման նոցին,
Տանջանք հոգւոյս բժշկեսցին.
Եւ ընդ հատեալ մատանց յօդին
Ցաւք յօդուածոյն իմ ողջասցին։

Բեկմամբ բարձիցն և յօդուածին
Զիմս սընդեա յողդողդ մարմին,
Եւ խիստ ցանիւ ցաւազանին
Ըզխըստութիւն կակղեա սրտին։

Ընդ տատանկաց սուր երկաթին
Ըզսուր քո հան ընդդէմ չարին ,
Եւ բեւեռօք գարշապարին
Զիս բեւեռեա յերկիւղ քոյին ։
Ընդ նետաձիգն , որ առ նոսին ,
Զիս խոցեսցես սիրով քոյին .
Եւ ընդ գեղոց գեղարդանին
Զիմ ձգմլեսցես սիրտս առ բարին ։
Ընդ եռացումն կապարին ,
Զոր 'ի բերանսն արկանէին ,
Շիջո զեռանդ բոցոյ ախտին ,
Եւ եռացո յիս ըղձողին ։
Ընդ սարսռալեաց խոստովանին ,
Զոր առ ոչ ինչ համարէին ,
Ի սարսռալեաց փըրկեա չարին ,
Եւ դարձուցես 'ի գլուխ նորին .
Եւ ընդ խոստման անցաւորին ,
Յորոց 'ի բաց հրաժարէին ,
Մի մատնեսցես ես պատրողին ,
Խաբել սիրով հիւթանիւթին ։
Կախաղանօք սրբոցն սոին
Զընթացս ուղղեա առ քեզ յերկին ,
Եւ կապանօք ծանր երկաթին
Թեթեւացո զհոգս երկրային .
Ընդ շղթայից պարանացին
Զիս կապեսցես սիրով քոյին ,

Եւ ընդ կոծեալս՝ որ յողբսն՝
Զիս 'ի կարգից խոլեալ չարին :
Որք վարըն քո ընդ հուր անցին
Եւ ընդ եռանդըն կաթսային ,
Ընծո զիմ հուր մեղաց ախտին
Եւ ըղխառումըն գեհենին :
Եւ ծովահերձ սառամանք ցըրտին ,
Որոյ նոքա համբերեցին ,
Զիմ ըղպաղեալ սիրտս առ բարին
Ջեռո սիրովդ աստուածային :
Որք վարըն քո տղաքէն
Ըզչար գազանն՝ ուտել զնոսին ,
Զիս 'ի ժանեաց փրկեա չարին
Եւ յեղջերէ միեղջերին :
Ընդ բազմօրեայ քաղցի նոցին
Տուր ինձ ըղհաց քո երկնային ,
Եւ ընդ պապքումըն ծարաւին
Զանմահական աղբեւր կողին :
Ընդ օձաբնակ խաւար գբին ,
Ցոր Լուսատուն էր իմ անձին ,
Հան զիս 'ի գբոյ ախտաւորին
Տըղմուտ կաւոյ հայցմամբ նորին :
Եւ զինչ ասեմ . զի ոչ թըւին
Լեզուաւ մարդկան տանջանք նոցին .
Որք այժմ առ քեզ ծածկեալ պահին ,
Եւ անդ յայտնի հատուցանին :

Որոց տուժիւք զանազանին
Բուժեա ըզցաւս խոց անձին.
Զմարմնոյ, հոգւոյ և ըզմտաց
Եւ զխորհրդոց, գործոց, բանին:
  Եւ ընդ հատման գըլխոյ նորին,
Որով գըլխոյդ անդամք լինին,
Զիս յարմարեա, տէր, ընդ նոսին,
Առնուլ աճուին ընդ բոլորին:
  Ճըգնաւորօքն յանապատին, ×
Հետեւողաց կենաց ձայնին
Եւ բարձողաց յուսով խաչին,
Մեռո և զիս ըստ աշխարհին:
Պաղատանօք մեծն Անտոնին,
Հեղինակի սուրբ երամին,
Եւ որք նովաւ յայս կարգ եկին
Մինչեւ յայժմուս և որք լինին.
Զանազանեալ վարուք նոցին
Եւ ծաղկերանգ քեզ ընծային
Շնորհեա փոխիլ անբերս անձին
Ըստ պըտղաբեր քոյոյ տընկին:
  Որք զաղօթիցըն շնորհ առին
Եւ զարտասուաց յորդ վըտակին,
Ձըգեա և զիս հայցմամբ նոցին,
Թէ և հեղգամ 'ի նոյն բարին:
  Եւ որք պահօքըն մեռուցին
Զախտըս մարմնոյ սկըզբնաչարին,

Տուր ինձ նոքօք առ ցանկալին
Սանձել ընկլոյս որովայնին ։
Ո՛րք խորհրդովքըն յաղթեցին
Պոռնըկական պատերազմին ,
Տուր յաղթութիւն ծուլիս անձին
Գոնէ լըրման գործոց չարին ։
Եւ որք 'ի խուն փոքու նիւթին
Ագահութեանըն տիրեցին ,
Տուր ինձ փախչել յանիրաւին ,
Եւ շատանալ բաւականին ։
Քաջ եղելովքն 'ի յարութիւն
Ընդ ձանձրութեան միջօրէին ,
Արիացո զհեղգս առ բարին
Եւ զերագոյս առ վատթարին ։
Ո՛րք բարկութեանըն յաղթեցին ,
Եւ զոխութիւնըն սանձեցին ,
Նոքօք սանձեա , տէր , զերկոսին ,
Մինչ տարապարտ առ իս շարժին ։
Եւ որք հըպարտ փառասիրին
Յաղթող գըտան յասպարիսին ,
Զիս փըրկեսցես հայցմամբ նոցին
Յաջակողմեան մենամարտին ։
Ո՛րք գերազանց պատուիրանին
Քան ըզգնութիւն՝ ժուժկալեցին ,
Տուր ինձ գոնէ բառնալ քոյին
Քաղցր լըծոյ թեթեւ բեռին ։

Եւ թէպէտ ոչ ըստ առաջին
Ճանապարհորդս որ 'ի յերկին,
Սակայն վերջնոյն եղէց վերջին
Հետեւելով հետոց նոցին.
Եւ թէ վեհիցն օթեւանին
Չեմ արժանի հօր քո յարկին,
Արժանացո յոյժ խոնարհին
Քան ըզմնացից թերեւս յետին ։
Միայն 'ի թիւ օգեաց դասին
Կացո և զիս յաջակողմին,
Եւ լսեցո ըզցընծալին
Զերանաւէտ ձայնըն քոյին,
Յորժամ գըրեալքըն կատարին՝
Որ զայնմ աւուր մեզ պատմեցին,
Մարգարէից բանքըն յարգին,
Առաքելոցըն վըճարին.
Յորժամ տարերքըս գըլորգին,
Հաստատութիւնքըն սասանին,
Իբր ըզծովու կոհակք կուտին
Ի յեռանդանըն կաթսային.
Լայնատարած գօտւոյ գետին
Ի թանձրութեանց հրմանց շարժին.
Մի ըզմիոյ հետ խափանեին,
Կառեալ յերկուցըն սաստանին.
Լերինք հիմամբըք զարհուրին,
Եւ ուժգնակի բախմամբ թընդին,

Կարծըր բնութիւնք վիմաց հալին,
Եւ ամենայն նիւթք հըրդեհին.
Մինչ դեռ հրեղէնք յորդահոսին
Իբր ըղհեղեղ ջուրց ծաւալին,
Հողմով հանդերձ սաստիւ հընչեն
Եւ միգախառըն մըրըրկին.
Խըրթնահայեաց դիմօք վառին,
Եւս թափանցիկ վայրակերին.
Իբր ըղձաբերեւ մի բորբոքին
Բնութիւնք ամէն հողեղինին.
Բըլուրք լերամբըք հալեսցին,
Եւ դաշտաձեւ աշխարհք լինին.
Ծովու ալիքըն ցամաքին,
Եւ կենդանիք նորա նուաղին.
Յորժամ բարբառքըն նըւագին,
Փողըն գոչէ Գաբրիէլին
Յանկարծակի մէջ գիշերին
Ի յեղակարծ ժամանակին.
Յորժամ հոգիքըն ըղձասցին,
Ուր ամբարեալք այժմիկ պահին.
Գան միանան ընդ նոյն մարմին
Որք յԱդամայ և անդ լինին.
Մինչ գերեզմանք մարդկան բանին,
Փըտեալ մարմինքըն նորոգին,
Եւ զոր կերեալ ձըկանց ծովին,
Եւ զոր գազանք 'ի ցամաքին:

Քանզի տարերք ամենեքին
Անուն յաւանդ ըղձեր մարմին,
Եւ անկորուստ պահեն նոքին,
Զի հնազանդին քում հրամանին.
Եւ 'ի լռել ահեղ ձայնին
Աստուածորդւոյդ կենաբաշխին,
Զխուրաքանչիւր պահեստ մասին
Բերեն յառաջ ըստ Ղազարին:
Ի նոյն բնութիւն դարձեալ խառնին,
'Ըստ արուեստաւոր քոյդ բանին.
Ոչ 'ի յայժմուս լուծանելին,
Այլ 'ի յանեղծն որ 'ի դրախտին:
Ոչ ծերն 'ի ծեր յառնէ մարմին,
Եւ ոչ տըհաս տըղայն 'ի նմին,
Այլ հաւասար յերեսնամին,
Ի չափ յառնեն նախաստեղծին:
Եւ ոչ բնութիւն այլ է արուին,
Ուոչ ճանաչի թէ սա է կին,
Այլ հրեշտակաց նման բերին
Ըստ կանխասաց բանից քոյին:
Ցորժամ նըշան քո սուրբ խաչին
Որպէս փայլակն երեւեսցին,
Ցարեւելից ճառագայթին
Ընդ չորս անկիւնս տարածանին.
Արեգական լոյս նըւաղին,
Եւ լոյս լուսնի խաւարեսցին.

Աստեղք յերկնից թօթափեցին
Եւ զօրութիւնքըն շարժեցին,
Եւ հրէական ազգըն կոծին,
Զի տեսանեն զոր խոցեցին.

Որք անարգեն զնըշան խաչին.
Երկըրպագուքըն քեզ պարծին,
Եւ խաչակցեալքըն բերկրեցին.
Իսկ մեղաւորքըն թախանձին,
Որք ծուլութեամբ զկեանս անցուցին.
Լապտերք կուսից պայծառ վառին,
Որք զիւղն յառաջ պատրաստեցին.
Իսկ յիմարացըն շիջանին,
Որք անագան գընել գնացին:
Յորժամ հայր և սուրբ հոգին
Ընդ քեզ յերկիր խոնարհեցին,
Որպէս տեսեալ Դանիելին
Ըզհինաւուրցն և զմիշտ Էին.
Զի արարածք արժանացին
Յայնժամ տեսլեան երրեակ անձին,
Ի վըկայել քեզ, Միածին,
Ըստ Յորդանան և 'ի լերին:
Ընդ քեզ և զօրք վերինք հօսին,
Մինչ զի թափուր մընալ երկին.
Հրեշտակք յառաջ ընթանային,
Հրեշտակապետք պարունակին.

Սուրբ Զօրութեանցըն դաս կարգին,
Եւ Պետութեանցըն գումարին.
Իշխանութիւնքըն զարհուրին,
Եւ Տէրութիւնքըն սարսափին.
Սերովբէք թեւապօղին,
Եւ 'ի խոնարհ ըզդէմս ունին.
Եւ Քերովբէք աթոռ կարգին,
Զի զԹագաւորդ ընդունիցին:
Իսկ Թագաւո՛րդ 'ի մեծ բեմին
Նըստիս յաթոռ դատարանին.
Զի հայր չդատէ զոք երկրածին,
Այլ քեզ միայն ետ, Մխածին:
Հոլովիդ հանդէպ դան ժողովին,
Հօտից նըման, ազդ երկրածին.
Օդէքն յաջեայըդ կարգեսցին,
Ուլքն 'ի ձախմէ քումմէ դասին:
Անդ թագաւորք ոչ երեւին,
Եւ ոչ իշխանըք պատուեսցին.
Ոչ մեծամեծք հըպարտասցին,
Եւ ոչ հըզօրըք բարձրասցին.
Զի միայնակ միայն լինին,
Առանց զօրաց զոր այժմ ունին.
Եւ տեսանեն զոր ոչ տեսին,
Եւ ճանաչեն թէ սուտ էին:
Աղքատք հօգւով թագաւորեն,
Եւ բարեգործըք մեծասցին.

Քաղցեալք կենաց հացիւ լցցին,
Եւ մեծատունք ունայնասցին.
Լեզուք ծարաւոյք անդ համբասցին,
Եւ հայհոյիչքըն կարկեսցին.
Զի ոչ ունին զպատասխանին
Տալ քում արդար դատաստանին:
Անդ կարկամից ձեռըք կասին,
Որք 'ի յաղքատս ոչ արձակին.
Ի քէն լըսեն ըզպատկալին,
Ի հուրն երթայք յաւիտենին:
Անդ զըրկողաց կըշիռք դընին,
Որչափ զըրկեացըն պահանջին.
Եւ 'ի գողոց գողունք խընդրին,
Դառնալ 'ի տեարս ուստի առին:
Եւ զի թափուր և մերկ լինին,
Հատուցանել ոչ ունիցին,
Զգործըս բարեաց փոխան առնուն,
Թէ ոչ ըզշնորհս աւազանին:
Անդ և ապանողքըն պատժեսցին
Ցանպարտ արեանցըն զոր հեղին.
Եւ բորբոքեալքըն 'ի բոց ախտին
Պոռնիկքըն անշէջ հըրով տանջին:
Անդ ամենայն գաղտնիք յայտնին,
Զորս 'ի ծածուկ աստ գործեցին,
Քո առաջի և Հօր քոյին
Եւ հրեշտակացն ամենայնին:

Մխա՛յն որք սուտ խոստովանին ,
Լինին ծածկեալ և ոչ յիշին .
Եւ որ զամօթ կըրեն առ մին ,
Ոչ պատկառեն յայնմ՛ ատենին ։
Որք 'ի մարմին սերմանեցին ,
Հընձեն զորամըն հրոյ լուցկին .
Եւ դուք յոգիս սըրաղաբերին ,
Առնուն զորայն առոք հասկին ։
Որք յերգարանս գինեաւ ըրկոին
Եւ պակշոտեալ ծաղու ըրցցին ,
Լան և ողբան 'ի գեհենին ,
Եւ տատամունքըն կափկափին ։
Որք զորովայնըն պաշտեցին
Եւ զամօթոյըն պատուեցին ,
Յանմահական հացէդ սովին ,
Զգենուն զամօթն յաւիտենին ։
Որոց պըղծեալ են անկողինք
Եւ պակշոտեալ առ ցանկալին ,
Ի կայծականց վերայ նիրհին ,
Անքուն որդանցըն կեր լինին ։
Որք 'ի կըշիռ տուրեւառին
Վաճառականքըն խաբեցին ,
Յարդարամէտ քո կըշըռին
Բազմապատիկ պահանջեսցին ։
Որք յաշխարհի գործ արուեստին
Ի յերկաթոյ կամ յարծաթին

Եւ կամ յայլ ինչ նուաճեղինին
Զաւարըս նուաճողըն նենգեցին ,
Հաստուցանեն անդրէն նոցին
Ի քո արդար դատաստանին ·
Ոչ թէ ընդնութըն զօր առին ,
Այլ թէ բարիս ասա գործեցին :
Որք դատաւորք են երկրային ,
Եւ ոչ զաղքատս ուղիղ դատին ,
Ի յանաչառ քո յատենին
Յանդիմանեալըք կըշտամբին :
Որք տէրութիւն յաշխարհ ունին
Իշխան բազմաց կամ նըւաղին ,
Եւ դառնադոյն սըրտիւք լինին
Առ հնազանդեալըն հրամանին ,
Քո քաղցրութիւնդ ամենեւին
Ի դառնութիւն փոխի նոցին ·
Ի յերեսաց քոց որոշին ,
Եւ 'ի յանեղ բանտն արկանին :
Որք ընդ փոքու ինչ սպատճառին
Հատին զանդամ քո առեղծուածին ,
Եւ կամ սպանին բոլորովին
Զոր ոչ օրէնք քո դատեցին ,
Պահանջեսցես զարիւն նոցին
Եւ ըղհատեալ մասն անդամին ·
Եւ խորեւ ոչ տալ ունիցին ,
Մատնես 'ի մահ յաւիտենին :

Որք նենգաւոր միմեանց լինին ,
Դաւաճանեն զանմեղ ոգին ,
Գաղտնիք նոցա յանդիմանին ,
Եւ ըստ չարեացըն տուժեսցին ։
Որք ոխակալ են 'ի սըրտին
Եւ ոչ թողուն յանցաւորին ,
Յայնժամ 'ի քէն ոչ ընկալցին
Ըզթողութիւն իւրեանց պարտին ։
Որոց իժից թունոջ լեզուին
Հայհոյութեամբ առ քեզ խօսին ,
Եւ որք յերդմունըս յանդըգնին
Եւ 'ի յերգըս զազրալին ,
Լեզուք նոցա հրով տոչորին
Եւ 'ի գեհեանըն պապակին .
Քանզի համար տալ խընդրեսցին
Դատարկ բանից՝ ըստ հրամանին ։
Որք բամբասանս ըստ նախանձու
Յօդեն սուտ թեամբ առ ընկերին ,
Ըզչափ մեղացն՝ որով սատեցին՝
Յանձինս իւրեանց ընդունիցին ։
Որք՝ որպէս ես՝ այժմ երանին ,
Եւ չարք եղեալ՝ բարիք կոչին ,
Տիեզերաց ծանակ լինին
Մինչ մերկանայ մարդըն ներքին ։
Դարձեալ որք ինձ համեմատին ,
Եւ կոյր աչօք լոյս անուանին ,

Մինչ խաւարին գործքըն յայտնին ,
Ի կոչողացըն նախատին ։
Որք յերկեղէ ինչ մարդկային ,
Կամ ընդ փառաց անցաւորին ,
Զառ.քեզ հաւատն՝ յոր մըկըրտին՝
Փոխանակեն ընդ մոլարին ,
Հօր առաջի և հրեշտակաց
Ցուրատ լինիս վասըն նոցին .
Յանհաւատից դասըն կարգին ,
Որոց անշէջ հուրն է բաժին ։
Որք 'ի խորհուրդ.քո երկնային
Մեռեալ մեղօք հոգւով մերձին ,
'Դ աստուածասպանըն կարգեսցին
Կայիափայ և Աննային ։
Եւ ամենայն որք յայնմ աւուր
Անապաշխար մեղօք լինին ,
Իւրաքանչիւր ըք զարժանին
Առցեն 'ի քէն չափով յանցին ։
Նա և բարւոյն կողման մասին
Պարգեւք բարեաց 'ի քէն տացին ,
Ըստ հաւատոցն և ըստ գործոց
Եւ ըստ շնորհաց աւազանին ։
Նախ առաքեալքըն քո դասին
Յերկոտասան աթոռ նըստին .
Զերկոտասան ազգըն դատին
Մեղուցելոյ Իսրայէլին ։

Անդ մարգարէքըն յարդարին ,
Երամ երամ դասաւորին ,
Որք զայնմ աւուր մեզ պատմեցին
Ցառաջագոյն զոր ինչ լինին :
Անդ նախաստեղծքըն հիացին ,
Եւ նահապետքըն սքանչացին ,
Զայնքան տեսեալ ազգ մարդկային՝
Որ 'ի յինքեանց յառաջ եկին :
Անդ և հովիւքըն քաջ պարծին ,
Եւ զբրաբիոնն ընդունիցին .
Իսկ հեղգացեալքըն տուժեսցին ,
Որք 'ի գայլոցն ոչ պահեցին :
Անդ մարտիրոսքըն պսակին ,
Որք և մարտեան ըստ օրինին .
Կոյսքըն մաքուր Թագիւ պճնին ,
Որք փեսայիդ ըսպասեցին .
Արեգական նըման ծագին ,
Փայլեն հանդոյն արուսեկին .
Պէսպէս փառօք զանազանին ,
Ըստ աստեղացն որ 'ի յերկին :
Իւրաքանչիւր յարդար մասին
Առցեն 'ի քէն զոր գործեցին .
Ամուսնացեալքն ըստ օրինին
Եւ Ճըգնաւորքն որք առանձին .
Եւ ամենայն որք ըստ կարին
Զիւրոյ անձին գործեալ բարին

Քեզ ընծայեն խորուս ծաղիկ
Ի հոտ անոյշ և երկնային ։
Ոմն զաղօթըս սուրբ սրտին
Եւ զարտասուսն որ միշտ հոսին ․
Այլ ոմն ըզսէրն աստուածային ,
Եւ որ յեղբարսն է ըստ անձին ։
Ոմն զհըսկումըն գիշերին
Եւ ըզկանխումն առաւօտին ։
Ոմն զպահոցըն մաքրութիւն ,
Ըզկերակրոցն և ըզըմպելին ։
Ոմն զառատ տուրս աղքատին ,
Զոր ընդունիս ձեռամբ նորին ։
Ոմն զբաժակըն ցուրտ ջըրին ,
Զոր տայցէր թէ չկորընչին ։
Ոմն զխընդալն ընդ խընդալին
Եւ զարտասուելն ընդ արտասուելին ․
Այլ ոմն զայցըն հիւանդին
Եւ զհետեւումն որ ՚ի բանդին ։
Մինն ըզծածկոյթ լինել մերկին
Եւ զհովանի յարկ օտարականին ,
Այլ ոմն զհայր լինել որբոց
Եւ խնամածել գըթով զայրին ։
Ոմանք զաղթելըն խորհըրդին ,
Այլ որ շարժէին ըզլեզոց ախտին ․
Այլք ըզփակել զգայարանին
Ըզպատուհանսն ընդդէմ չարին ։

Ոմըն զպարկեշտ ամուսնութիւն ,
Միւսըն զամբիծ ըզկոյս հոգին :
Ոմըն զարիւնըն պանծալի
Եւ զչարչարանս՝ որ 'ի մարմնին :
Միւսն ըզներող լինել սիրային
Ի բարկութեան ժամանակին ,
Եւ թշնամւոյ առնել զբարին
Վասըն քոյոյ սուրբ հրամանին :
Բայց ես , թափուր յամենայնին
Մեծամեծաց և նուաղին ,
Զի՞նչ տաց յայնժամ քեզ ընդ բազմին
Բարեաց աղքատս ամենեւին .
Զի յայցանէ՝ զոր տացին ,
Որ յըստարելոց քեզ ընծային ,
Զունիմ մի մասն 'ի բոլորին ,
Այլ եմ ունայն հակառակին :
Վասն այսորիկ նոցա տացին
Վարձս ըստ գործոց զանազանին ,
Եւ ես զըրկեալ ամենեւին
Յառատաձիր քո պարգեւին :
Արդ 'ի յաղերս բանիւ խօսիմ
Կամեցողիդ բարեաց վասն իմ ,
Զի ես փոփոխել այժմ 'ի բարին ,
Զի մի՛ անփոխ մանիմ տուժին :
Աղաչանօք ընտրեալ հօտին ,
Որք յաջակողմըն քո դասին .

Ի յԱբելէ սըրբոյ նախկին
Մինչ 'ի յարդար մարդըն վերջին,
Նահապետաց մարգարէից
Նախ քան զօրէնս և յօրինին.
Առաքելոց նորոյ կտակին,
Եւ ոյք նոքօք հաւատացին.
Ի յարձակել մահու զհոգիս
Եւ 'ի կապել քո վերըստին,
Ողորմեսցիս ինձ յերկոսին,
Զի քաղցրագոյնք պատահեսցին:
Եւ լըսեցո, տէր, ընդ նոսին
Զերանաւէտ բարբառ քոյին.
Եկայք օրհնեալք Հօր իմ վերին,
Ժառանգեցէք զանձառ բարին:
Եւ ոչ միայն խնամս անձին,
Այլ և խնդրեն այս եղիցին.
Նախնի ծնօղաց հարցն առաջին,
Այժմու եղբարցս և ոյք լինին.
Եւ որք բարի մտաւ ինձ ցուցին,
Կամ անարգիս պատիւ եդին,
Հատո նոցա զպարտըս վարձին,
Իբր արժանւոյ թէ արարին:
Նա՝ ոչ միայն որք սիրեցին,
Այլ ողորմեա և ատողին.
Եւ թըշնամեացն իմոյ անձին
Թողցես զյանցանս առ իս պարտին:

Հանուրց ծնելոցն աւազանին,
Որք այժմ 'ի քեզ հաւատային,
Ոչծանօթից և ծանօթին
Ողորմեսցիս յայնմ ատենին:
Եւ ինձ շնորհեա, տէր, ընդ նոսին
Ցօթեւանաց հօր քո վերին.
Թէպէտ և ոչ առ առաջինսն,
Այլ հաւուկ յետոյ վերջնոցն յետին:
Եւ որք 'ի բանս աստուածային՝
Զոր շնորհեցեր յիմարս անձին՝
Ի յընթեռնուլն աշխատեսցին
Եւ յաղօթելըն տաժանին,
Շնորհեա նոցա զաղօթելին,
Հատո ըզվարձս աշխատողին:
Լոյս տուր աչացն որք նայեսցին,
Մաքրեա զլեզուսն որք վերծանին:
Նա և ձեռամբ մակագրողին
Եւ ուղղապէս փոխարկողին,
Այլ և գծիւք ըստացողին
Մատուցք բարեաց 'ի քէն տացին:
Եւ աննախանձ փափագողին,
Եւ ջերմեռանդն ընթերցողին,
Եւս 'ի բերան զբանս առողին,
Լըցցես սովաւ զիղձըս սըրտին:
Այլ թէ և յախտ ոք շարժիցին,
Պարսաւագէտ բանիւ լինին,

Որք ոչ յինէն յառաջ եկին՝
Ա՛յլ աննախանձ քո պարգեւին ,
Մի՛ համարիր մեղս նոցին .
Ա՛յլ մաքրեսցես զախտս որդւոյն ,
Քաջ իմանալ զիմաստ բանին՝
Որ ամփոփեալ կան 'ի սմին :
Եւ որք լինել և կամ յետ իմ
Ա՛յսու բանիւ քեզ պաղատին ,
Համարեսցիս միշտ ընդ նոսին
Զիս ըղձերանեա մաղթել սմին :
Եւ առ հոգիս իմ յաւանդին
Եւ 'ի մարմինս իմ տապանին
Բարեաց ազդումն 'ի քէն լիցին ,
Եւ ցընծացեալքն կայտառեսցին :
Եւ մնացւանդ զիս յիշողին ,
Եւ թողութիւն ինձ խնդրողին ,
Բարեբարոյ ընթերցողին
Զմիտս բանիցըն քննողին ,
Ողորմութեանց պարգեւք տացին
Յատատագոյն բարեաց քոյին :
Եւ հատուսար զամենեսին ,
Տէր իմ, յիշեա յօրըն վերջին :
Եւ քեզ ընդ Հօր քում անծընին
Ընեղ աներք խակականին ,
Եւ ընդ Հոգւոյդ քում էակցին
Ընծաւ բղխմանըն հայրենին ,

Միոյ բնութեան աստուածային
Մի տէրութեամբ և միշտ Էին ,
Գերակատար երկիւղ անձին
Կատարողի արարածին ,
Փառք և պատիւ և զօրութիւն
Եւ բարձրագոյն իշխանութիւն
Յանցեալն , յայժմուս , յապագային ,
Եւ յանըսպառ յաւիտենին :

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ԵՐԳՈՂԻ ԲԱՆԻՍ

Ի վեց հարիւր Հայոց թուական
Եւ յառաջին սկըսեալ նոր ամ՛,
Բանըս գրեցաւ աղօթական
Երկհազարեան ամամբ յանգական ,
Սկիզբն 'ի հօրէն մեր նախնական
Մինչ 'ի վերջին դարուս վախճան ·
Ըզբան և զգործ համանգամայն
Առ իս փոխեալ դիմուական ·
Արթուն հոգւոց խրախճանական
Ի բանս և յերգս զանազան ·
Ընդ Աստուծոյ դէմ յանդիման
Խօսակցելով անձն անարժան ։
Քանզի սիրոյն արարչական ,
Որ սերմանեալ 'ի մեզ բնական ,
Սա զարթուցիչ ներքուստական ,
Հատող յաճումն արդիւնական ։
Զհոգին մըթին նըսեմական
Զանկեալ 'ի հող այս նիւթական ,

Սա փոփոխէ լոյս պարզական
Խառնէ 'ի գունդն անմարմնական ։
Զմիտս անմաքուր աշխարհական ,
Որ ըստ ծովու ալեաց ծփման ,
Սա վերբերէ հըրոյ նըման ,
Որպէս բնութիւնն է վերնական ։
Զանձըն զգածեալ և զհոգական
Ի պատճառէ ինչ ողորմական ,
Սա ներգործէ ուրախական
Ի թաղծութեանցըն հիւթական ։
Եւ որք արբեալն են թըմբրական ,
Ըմպողք գինւոյն յիմարական ,
Սովաւ զարթնուն և զգաստանան ,
Թէ ընթեռնուն մըտաւական ։
Որք Աստուծոյ տեսոյն բաղձան ,
Գերագունին լուսոյ ցանկան ,
Սորին թեւովք վերասլանան ,
Մերձին 'ի տիպն անտեսական ։
Եւ զփոքրագոյն անձըն մարդկան ,
Որ է բնութիւն ծառայական ,
Անտանելոյն և տիրական
Բնութեանն առնէ սա օթարան ։
Ըզծայրագոյնըն բարձրութեան ,
Որ 'ի յերկնից երկրին բնական ,
Սա վայրբերէ խոնարհական ,
Որք յիւր անուն ժողովեցան ։

Եւ զարարիչըն հանրական,
Որով բոլոր էակք ստեղծան,
Սովաւ կոչել որդիք մարդկան
Հայր ըստ շնորհի արժանացան:
Վասն այսորիկ տաժանեցայ
Գըրել չափով ըզքանս 'ի սմայ,
Ներսէս եղբայր Գրիգորիսի
Հայրապետիս ազգին Հայկայ.
Այժմ որ յոքունց գոլ գերակայ,
Նախ նըստելոց յաթոռ սորայ.
Արեւմտուոր լոյս ծագօղին,
Եւ հետեւող հետոց նորայ:
Բայց ես հոգւով գոլ բացակայ,
Մարմնով չօգտիմ թէ մերձակայ.
Զի ոչ յիմոցըս խրատեցայ,
Եւ ոչ յայլոց՝ զոր ընթերցայ:
Զուարթուն թուէի և թըմբրեցայ.
Եւ իմաստուն, յիմարեցայ:
Լոյս կարծէի, խաւարեցայ.
Եւ միջօրեայ, նըսեմացայ:
Լուսաւորիչ անուանեցայ,
Բայց մառախուղ մըթին յիս կայ.
Բըժիշկ այլոց հրաւիրեցայ,
Բայց ես ախտիւք մեղաց լըցայ:
Փոխան մեծին ես կոչեցայ
Յանզուգական անուն նորայ.

Եւ 'ի նմանւոյն յոյժ հեռացայ ,
Որքան երկին առ ստորակայ :
Քանզի Ճրագի նըմանեցայ ,
Որ տեսողաց ըզլոյսըն տայ ,
Այլ ինք մըրով տըգեղանայ ,
Եւ յիւր լուսոյն չպայծառանայ :
Եւ կամ աչացս՝ որ 'ի մեզ կայ ,
Տեսող այլոց գոլ 'ի բացեայ ,
Բայց ինքն ինքեան անտեսանայ
Եւ ըզխաւալանսն անգիտանայ :
Եւ կամ քարին այն յեսանայ ,
Որ սուսերաց ըզսուրըն տայ ,
Եւ ինքըն գուլ և ոչ սրանայ ,
Թէ և բազում անգամ ջանայ :
Նոյնպէս և ես յայս յարակայ ,
Զայս մաղթանաց բան խօսեցայ ·
Թէպէտ և յիս ոչ ազդէ սայ ,
Սակայն արթնոց մաքրիչ մընայ :
Եւ մի՛ 'ի յայս ոք ախտանայ ,
Թէ չափաւոր բանիւ է սայ ,
Եւ արտաքին կարծի նըմայ
Որպէս և զերգն Ափրոդիտեայ :
Զի եթէ սուտն որ ձեւանայ ,
Սովաւ այն քան գեղեցկանայ ,
Քանի՞ արդեւք վայելչանայ
Ճըշմարտութեան բանս որ 'ի սմայ :

Երգոյն հանգոյն Սողոմոնի
Սա, որ Երգոց երգ անուանի,
Որ զփեսայն երկնաւորի
Ըզսէրն ասէ հարսին կուսի,
Եւ կամ գաւթեանըն Սաղմոսի
Այսահալած մարգարէի,
Որ յօծմանէն Սամուէլի՝
Հոգւոյն երգէր 'ի տասնաղի,
Եւ այլ բազմաց՝ որ են յայսմի,
Որք վարեցան չափով բանի,
Ոչ 'ի յինքեանց՝ այլ 'ի Հոգւոյն,
Այն որ շարժէ յորըս կամի,
Զի մի՛ աղքատ մեծըն կարծի
Եւ կամ տուաան ըռիշտ ասի :
Ըստ այսմ և շնորհն ոչ միակի,
Այլ 'ի բազումս բաժանի.
Ոմանց տայ շնորհ մեկին բանի,
Զի հանրական լուր օգտեսցի.
Այլոց իմաստ ծածուկ ճառի,
Զի զարթուսցէ զնիրհեալ հոգի :
Ոմանց տայ բան՝ որ ոչ չափի,
Բայց զօրաւոր և ըստ կարգի.
Այլոց շնորհէ բանըս տաղի,
Զի և այնու միտքըն բանի :
Վասնզի բնութիւն մեր է յայսմի,
Աղագայագ և ձանձրալի.

Վասն այսորիկ տայ 'նա լեզուի
Զյոգնասնուեան ազգըս բանի ։
Ըստ այսմ և ես 'ըլկարեցի
Զ'ներբողական բանս 'ի քարտի ,
Ի զուարճութիւն բանասիրի
Եւ բարեմիտ ընթերցողի ։
Յորում յիշման գիս արժանի
Համարեսջիք սիրով սըրտի ,
Զի թողութիւն ինձ պարգեւել
Յառատաձիր տեառնէն Հըրի ։
'Նա և ծնողաց մերոց բարի ,
Որք 'ի ժողովս են այժմ երկնի ,
Մաղթեմ յիշմանք աղօթելի
Յարատեւելոյն ժամանակի ։
Այլ և եղբարցն իմ ըստ կարգի ,
'Նախ վեհագոյն տեառնըս մեծի ,
Ապա Վազի վեհ իշխանի
Զօրավարին բարձրագունի ։
Եւ ծնեալ 'նոցունցըն զաւակի ,
Եւ բովանդակ ազգատոհմի ,
Յինէն 'նորոգ բանս այս լեցի
Պատճառ բնաւից յիշատակի ։
Եւ Մարեմայ Ճըգնաւորի ,
Քեռ ըստ մարմնոյ մեր պանծալի ·
Եւ Վահրամայ իւր զաւակի ,
Հանգուցելոյն առ Քրիստոսի ,

Միշտ յիշատակ սա եղիցի
Այժմ և յաւուրն ապագայի·
Թողուլ զանցանս որ 'ի մարմնի,
Կարգել 'ի դասս հրեշտակի:
Նա և հանուրց ամենայնի,
Մերձակայից և որք հեռի,
Որք հաւատան իմ Յիսուսի,
Տէր համօրէն ողորմեսցի:
Եւ նմա փառք յեկեղեցի,
Ընդ Հօր Հոգւոյն ճշմարտի,
Յաւէտ յայժմուս և միշտ էի
Եւ յաւիտեանս յաւիտենի:

ՏԵԱՌՆ

# Ն Ե Ր Ս Ի Ս Ի

## ԲԱՆ ՀԱՒԱՏՈՅ

ՈՏԱՆԱՒՈՐ

ՏԱՂԻՒ ՉԱՓՈՅ

# ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

# ԲԱՆ

# ՀԱՒԱՏՈՅ

ԽՈՍՏՈՎԱՆԻՄ *Աստուած ըզՀայր*
*Անծին անեղ և անըսկիզբն .*
*Խոստովանիմ Աստուած զՈրդին ,*
*Անժամանակ Հօր միածին .*
*Խոստովանիմ Աստուած զՀոգին ,*
*Ի բնութենէ Հօր անքննին .*
*Երրեակ անձամբ Երրորդութիւն ,*
*Միասնական աստուածութիւն .*

Մի էութիւն և մի բնութիւն,
Մի աստուածային իշխանութիւն։
Հայր ծնօղ, Որդի ծնունդ,
Հոգին 'ի նոյն 'ի բնութենէ։
Ոչ մարմնական ծնընդեան նման,
Զի է աննիւթ և պարզական.
Եւ ոչ աղբեր համեման հանգոյն
Գետոյ անմարմին բղխումն Հոգւոյն։
Ոչ բաժանեալ յէութենէ
Բանն և Հոգին առ 'ի Հօրէ.
Ոչ մին առեղծիչ, մին արարած,
Եւ միւսն օտար պաշտօնատար,
Որպէս կարծիքն Արիոսի
Հեթանոսաց համախոհի.
Որ եղեւ էջս տանջանի
Բնութեանն եմոյծ հաւատայի։
Եւ ոչ անձամբ խառն առնլով,
Երեքն 'ի մի ժողովելով.
'Ի որում թուեցաւ այս Սաբելի,
Հրէականին հետեւողի։
Այլ 'ի յերիս լոյս զատուցեալ,
Երեքն 'ի մի լոյս միացեալ,
Որպէս 'ի մի ջահ ժողովեալ,
Երից լուսոյըն մի եղեալ.
'Ի արեգականըն հաւաքման
Զհուր և ըզլոյս և զօթարան։

Կամ՝ թէ զաղբեւր, գետ և ըղձով
Այսմ օրինակ առբերելով.
Երիցըն ջուր բնութեամբ գոլով,
Անուամբ ուանձամբ բաժանելով:
Եւ այս է մի աստուածութիւն,
'Սա երից անձանց անուանդրութիւն:
Կամ՝ լոյս 'ի ջուրըս ծագելով,
Եւ ճառագայթ ներգործելով.
Որպէս և Հայր, յորմէ Որդին,
Հոգին ծաւալ ճառագայթին:
Հայր է պատճառ անպատճառից,
Որդւոյ ծնընդեամբ, Հոգւոյ բղխմամբ.
Զի Աստուծոյ չէ ինչ պատճառ,
Ինք պատճառաւ գոյից պատճառ:
Ոչ է յառաջ Հայր քան զՈրդի,
Եւ կամ՝ Որդի քան ըզՀոգի.
Այլ որպէս Հայր միշտ յաւիտեան,
Եւ համագոյք յիւր յէութեան:
Զի եթէ լոյս Որդին փառաց
Եւ կենարար Հոգին կենաց,
Զիա՞րդ երբեմն առանց լուսոյ,
Եւ անկենդան յոչ գոլ Հոգւոյ:
Ոչ ըստ բնութեանըն մեծ է Հայր
Քան որոց սկիզբըն է և պատճառ,
Եւ ոչ նըւաստք՝ որք 'ի նմանէ,
Զի այս և զՀայր տըկար առնէ:

Ըստ աստուածային մեծ սուրբ Հայր ,
Եւ ոչ բնութեամբ քանզի է Հայր .
Որպէս և մերըս հաւատար ,
Եւ ոչ նըւազ Որդի քան Հայր ։
Բայց զի որդի սուրբ Որդին ,
Ոչ մարմնական և ախտային ,
Իբրու կարծեն կոյրքըն մըտօք ,

Որք Բան ասեն ըստ Յովհաննու ,
Եւ յանուանէ փախչին յորդւոյ .
Ոչ գիտելով յիմար հոգւով
Թէ չէ օտար Բանն 'ի յորդւոյ ։
Զի որպէս ծնունդ է բան սրտի ,
Նոյնպէս և Հօր ծընունդ Որդի .
Լոյս 'ի լուսոյ յառաջ բերումն ,
Եւ ոչ նըման ծնընդեան մերում ։
Բան ասացաւ անուն նորին ,
Զի անմարմին է ծնունդ բանին .
Եւ զի նըմին Հօր է բնութիւն ,
Անուանեցաւ յորդիութիւն ։
Անհաս մարդկան և հրեշտակաց ,
Բանն անճառ , անտես մըտաց .
Միայն հաւատ ուղղափառաց
Երրորդութեանն է մերձակաց ։
Զի է անկէտ և անսահման ,
Անէրբ , անուր և անփոփոխման .

Է՛ր միշտ, և է յայժմուս,
Եւ կայցէ յանհուն դարուց :
Ոչ ըմբռնեալ, ոչ դադարեալ,
Եւ սկսանելոյ պատճառ եղեալ,
Իմանալեաց և զգալեաց,
Եւ զօրս նոքօք պարունակեաց :
Ոչ այլայլեալ ՚ի բնութենէ,
Եւ ոչ փոխեալ ՚ի տեղւոջէ .
Զի այլայլին որք եղանին,
Եւ փոփոխին ոյք փոխադրին :
Այլ է նովաւ լցեալ երկին,
Երկիր և խորք անդընդային .
Նա և ներքոյ ամենայնի,
Եւ արտաքոյ արարածի :
Խնամօղ տածօղ էականացս,
Եւ ՚ի յէից անպարագայից .
Հուպ ամենից և մերձաւոր,
Եւ յումեքէ ոչ հեռաւոր :
Տեսօղ մարդկան ծածուկ սրտից
Զխորհուրդս ըղձման ըզգործըս կրից,
Եւ ինքն յաչաց հողեղինի
Անտեսութեան ամփոփ ծածկի .
Միայն մտօք նըկարագրի
Աղօտ նըւազ ըստ փայլածուի .
Իբրև ըղհուր սըրբեցելոյ,
Ջինջ և մաքուր ըստ հայելւոյ,

Որ սկըզբնատպին լուսոյն ծագման
Ձինքըն դիցէ դէմ յանդիման ,
Նա ըզնորին գեղոյն նըման
Ցնորըն ցուցցէ տիպ տիրական ։
Այլ՝ ի բնութիւնն անտանելի
Եւ ոչ աղօտ միտըք ձըգտին .
Ոչ մարդկային մաքրագունից ,
Ոչ երկնայնոց սեռին վեհից ։
Զի եթէ է , գոլ հաւատամք .
Բայց թէ զինչ է , անգիտանամք .
Ի յառաջինն յիմաստ փութամք ,
Եւ յերկրորդէն յայժ վերջանամք ։
Որք յառաւելըն նըկըրտին ,
Առ ՝ի նըւաղըն տկարանան .
Եւ որք չափով վերաբերին ,
Գեր.քան ըղձափըն վերանան ։
Ցարարածոցըս ծանուցաւ
Ստեղծող սոցուն , թէ է անբաւ .
Եւ ՝ի տեսլեանցըն զանազան ,
Թէ չէ բնութիւնն այն որ ցուցաւ ։
Զանձինս առ ինք կամաւ ձըգէ ,
Զորս ՝ի բարին գոլ ճանաչէ .
Որպէս ճարտար արհեստաւոր ,
Ընտրէ ըզնիւթ պատշաճաւոր ։
Զի թէ անհաս յամենայնի ,
Նա յամենից անյուսալի ,

Անյայտն է ոչ ձեռնարկելի ,
Եւ ոչ մտաւոր հաղորդելի ։
Վասն այսորիկ խոնարհի նոյ
Յանհաս փառացըն գերակայ ,
Զի մեք եղցուք փոքր ինչ առ նոյ
Ի յաշխարհէս բանաւորակայ ։
Եւ այն սիրով բաղձմամբ սըրտի ,
Որով հոգին սըրբեալ մըքրի ,
Աստուածատես այնու լինի ,
Որպէս խոստումըն տեառնի ։
Արդ այսպիսիքս աստուածացան ,
Ընտանեբար խօսակցեցան
Ընդ անեղին և միակին ,
Եղեալք բաղումըք միացան ։
Սակայն յորժամ խորոց վերին
Միտք այսպիսեաց դան 'ի քընին ,
Ոչ տեղ ունին ուր դադարին ,
Եւ ոչ կայեան ուր հաստատին ։
Զոր անըսկիզըն անդ անուանեն ,
Եւ անցանել անդր ոչ կարեն .
Այլ 'ի սորինս այսր իջանեն ,
Ընմահական անուն դընեն ։
Եւ ժողովեալ միագումար
Զոչ ըմբռնելըն և զանդադար
Յաւիտենից և մըշտաբար ,
Բանիւ զանուն Էլին արար ։

Արդ մի յանձանցըն միշտ էից ,
Մինն 'ի յերից այս անբաւից ,
Անճառ ծընունդ գերագոյին ,
Ծածկեալըն 'ի ծոց Հօր իսկակից ,
Հօր իւր սահմանն անշարժական ,
Կընիք շարժումն և կերպարան ,
Աներևոյթ անտեսական ,
Լոյս 'ի լուսոյ անմարմնական ,
Պատկեր Հօր ոչ փոփոխական ,
Այլ անփոփոխ համանմանն ,
Սկիզբըն սկըզբան արարչական ,
Աղբեւր կենաց անմահութեան ,
Ի կերպարանըն յիւր ստեղծեալ
Գայ կամաւ Հօր անդ խոնարհեալ ,
Զոր 'ի լուէն յայնժամ առեալ ,
Ի վատթարէն այժմիկ առեալ :
Էջ աւետեօքըն հրեշտակին ,
Բնակիլ յարգանդ սըրբոյ Կուսին .
Նախ 'ի Հոգւոյն մաքրեալ ողին ,
Հօր զօրութեան օթարանին :
Բանն անմարմին ըստ էութեան ,
Եղեւ մարմին ճըշմարտութեամբ .
Զիւրըն պահեալ անյեղապէս ,
Եւ զմեր առեալ ըստուգապէս :
Նոր այս խառնումըն սքանչելի ,
Աստուած ընդ մարդ բնութ̃ խառնի .

Ոչ էութիւնըն փոփոխի ,
Եւ ոչ ձեւով կերպարանի ,
Որպէս ասաց ժամանն Եւտիքէս՝
Թէ ոչ մարմին առ ի կուսէս ,
Այլ առ աչօք անց ընդ կուսին՝
Խողովակի նմանապէս ,
Կամ կաղապար հրահալելեաց՝
Որ ըղձմութիւն ոչ տայ ինքեանց ,
Միայն ըղձեւըս քանդակեալ
Եւ ըզքանակս ենթակայեալ :
Եւ ոչ երկուցըն միութիւն
Բաժանելով յերկու բնութիւն ,
Եւ կամ յերկուս որդիս ըզմին ,
Ըստ Նեստորի չարաբանին :
Եւ ոչ մարմին անմարմնաբար ,
Որպէս ասացն Ապողինար ,
Թէ անհոգի իբր 'ի բագին
Բնակեաց Աստուած Բանն 'ի մարմին :
Արդ յայտնեաց փախչիմք 'ի բաց,
Իբր 'ի քարբից թունաւորաց .
Հեռանալով լուսոյ շաւղաց ,
Ըստ ուղղափառ վարդապետաց .
Եւ դաւանեմք միութիւն ,
Ոչ այլայլեալ այնու զբնութիւն .
Այլ նոյն Որդին , որ 'ի Հօրէ ,
Նաեւ որդի առ 'ի մօրէ :

Եւ մի ասեմք բնութիւն այսու ,
Ըստ խառնըրդմանն անճառելւոյ :
Որպէս հոգի մեր և մարմին
Ի մի բնութիւնըս ժողովին :
Զի թէ սոքա , որ արարած ,
Եւ միմեանց անայլայլած ,
Ի յանմարմնոց և 'ի մարմնոյ
Անգիտաբար գոլ միացած ,
Զի՞նչ են զարմանըք հրաշման՝
Թէ արարիչ բնութիւնն և Բան ,
Այն որ յաւէտ անմարմնական
Եւ եղելոցս արարչական ,
Խառնի ընդ մեզ անչփոթաբար
Եւ միանայ անճառաբար ,
Ի յօրինակ և գաղափար
Միաւոր բնութեանս և ոչ օտար :
Զի որք երկուս բնութիւնս ասեն
Եւ 'ի յերկեակըս բաժանեն ,
Հարկ է յերկս գոլ զատանել ,
Եւ կամ 'ի մին միաւորել ,
Այս է յոգի և 'ի մարմին
Եւ 'ի բնութիւն աստուածային ,
Եւ կամ զխառնուածն մարդկայնոյն
Առնել հզօրքան զԱստուածոյն :
Երկուս ասել դարձեալ բնութիւն
Վասն 'ի յերկուց գոլ միութիւն ,

Զի այս օտար ճշմարտութիւն,
Թէ չբաժանեն յերկուս ըղձին :
Բայց մեք այսպէս խոստովանիմք,
Աստուածայնոցըն հետեւիմք ·
Եթէ հոգի, մարմին և միտք,
Որով մեղան ազգ մարդկայինք ·
Էառ 'ի մէնջ Աստուածըն Բան,
Եւ միացոյց բնութեամբ յինքեան ·
Անմեղ արար զմեղանչական,
Զապականեալըն՝ անապական :
Էր բովանդակ յորովայնին,
Եւ էր նոյնա լըցեալ երկին ·
Ծածկեալ յարգանդ սըրբոյ կուսին,
Եւ 'ի ծոցոյ Հօր անբաժին :
Զոր խնամնեան ժամանակաւ
Տըկար բնութեամբ յինքեան առեալ,
Եւ որպէս մարդ զԱստուած ծընաւ,
Եւ կուսութիւնն ոչ խախտեցաւ :
Ստեղծօղ մանկանց մանուկ ցուցաւ
Եւ հնաւուրցըն աղայացաւ ·
Ի յանբանից մըսուր եդաւ,
Ի հրեշտակաց փառաւորեցաւ :
Աստեղբըն լոյսըն ծանուցաւ,
Եւ 'ի մոգուցըն պատուեցաւ ·
Խորհըրդաբար ընծայեցաւ
Ոսկեաւ, կընդրուկ, և զմըռսաւ :

Բազօթեից հովուաց յայտնեալ
Աստուած, փըրկիչ, տէր, և օծեալ,
Այն որ հովուէրըն զԻսրայէլ
Որպէս խաշին առաջնորդեալ:
Կերպարեցաւ կաթն 'ի մօրէ
Ի կուսական սուրբ ըստենէ,
Որ զարարածս իւր կերակրէ,
Բանայ ըզձեռն և լըցուցէ:
Ըստ նախահայրըն Թըլփատի,
Յիսուս փըրկիչ վերակոչի.
Քառասնօրեայ եկաւորի
Ըստ օրինացն 'ի տաճարի:
Ի գիրկս առեալ Սիմէոնի,
Առ արձակող տէր պաղատի:
Ի յԱննայէ գոհաբանի
Եկեալ փըրկող Իսրայէլի:
Նըստի թեթեւ յամպոյն նըման,
Գնայ յԵգիպտոս փախըստական
Որպէս ըզմարդ երկեղական,
Բայց մանրէ զկուռսն եգիպտական:
Յեգիպտոսէ կոչմամբ դառնայ,
Ի Նազարեթ պանդըխտանայ.
Մնանի 'ի տանըն Յովսեփայ,
Զոր անուանեաց հայր և վըկայ:
Յերկոտասան լըրումն ամաց,
Յերուսաղէմ տօնին զատկաց,

Զինքեան խօսեալ բանս օրինաց
Գնէր առաջի հրեից ազգաց ։
Մարմնով աճէր և զօրանայր ,
Որով մանկունք հասանեն յայր ·
Իմաստութիւնն իմաստնանայր ,
Որ իմաստնոց զիմաստըն տայր ։
Որում հնազանդ են հրամանաց
Դասք անմարմնոց հոգեղինաց ,
Լինէր հնազանդ մարմնով ծնողաց
Ըստ օրինացն իւր հրամանաց ։
Ամս երեսուն այնպէս լռէր ,
Եւ ոչ նշանըս ցուցանէր ·
Եւ ոչ բանիւ վարդապետէր ,
Այլ թագնաբար յերկրի շրջէր
Մինչ 'ի լընուլ թիւ երեսնին
Յայր կատարեալ չափ հասակին ,
Զի մի՛ առ աչս երեւեսցին
Տնօրէնութիւնքըն մարդկային ։
Յայնժամ գայ 'ի Յորդանան
Առ Յովհաննէս 'ի Բանին ձայն
Անկարօտըն մաքրութեան
Առ 'ի մաքրել զաղտըս մարդկան ։
Ում կարապետըն վըկայէ ,
Գառն Աստուծոյ վերաձայնէ ·
Ի մըկրտել զնա հրաժարէ ,
Թէ ինձ 'ի քէն մըկրտիլ պարտ է ։

Քանզի ծանեաւ 'ի հրեշտակէն ,
Այն որ կոչեաց յանապատէն ,
Թէ սա է Բանն 'ի սկզբանէն ,
Զոր ծանուցեր յորովայնէն :
Թոյլ տուր արդէն , ասէրն աւելով ,
Եւ Յորդանան իջանելով .
Եւ Մըկրտիչըն մերձ կալով ,
Ստեղծօղն ինքեան մըկրտելով :
Հայր 'ի վերուստ աղաղակեալ ,
Դա է Որդի իմ սիրեցեալ .
Աղաւնակերպ Հոգին իջեալ ,
Զանձն էակցին մատամբ ցուցեալ :
Ի յանապատ Հոգւով վարէր ,
Քառասնաթիւ աւուրս պահէր .
Որպէս Մովսէս 'ի Սինա էր ,
Եւ Եղիաս նովին ճըգնէր :
Եւ զի սա տէր գոլով նոցին ,
Եւ անկարօտ յամենայնին ,
Յինքն ոչ տայր թոյլ մերձիլ քաղցին
Մինչ 'ի լընուլ քառասնեկին .
Այլ զի մարմին էր մարդկային ,
Ծանկեաւ նովաւ լոյսն երկնային ,
Արկեալ կամաւ փափաք հացին ,
Իբր կարթիւ կեր փորձողին .
Որ մերձենայր յերկրորդ Ադամ ,
Ըստ առաջնոյն խորին խաբմամբ .

դնէր առաջի , որպէս յայնժամ ,
Բանիս պատրօղս երկուք փոխձամբ ·
Եթէ Որդի ես Աստուծոյ ,
Որպէս լուայ ձայն 'ի վերոյ ,
Գործովք ըզնոյն ճշմարտեցոյ ,
Առ 'ի քարանց հաց լինելոյ ։
Զոր ոչ սաստեալ ըմբերանեաց ,
Իբր կարող յանդիմանեաց ·
Այլ հեզաբար պատասխանեաց ,
Մեզ յօրինակ վարդապետեաց ·
Թէ ոչ հացիւ միայն կեցցէ
Մարդ երկրածին , զի կրկին է ·
Հաց ըզմարմինըն բուծանէ ,
Բանըն զհոգին կեցուցանէ ։
Ի տաճարին այն աշտարակ
Դարձեալ կանգնի չարըն դիմակ ·
Ի յայդմանէ զքեզ 'ի վայր արկ ,
Ի հրեշտակաց լեալ ընդունակ ։
Որում տուեալ պատասխանի
Ըզգրեալըն յօրէնսըն Մովսէսի ,
Մի՛ տար ըզքեզ 'ի փորձ չարի ,
Զի տէր Աստուած քո ոչ փորձի ։
Հանէ դարձեալ բարձր 'ի լերին ,
Եւ ցուցանէ զփառս նոցին ·
Զոր խոստանայ տալ ստեղծողին ,
Եթէ երկիր պագցէ նըմին ։

Որում՝ տատանեայ նա տխրայէս,
Լերըն փոխեալ ծառայայէս.
Հրեշտակք մատեան ՚ի յայն հանդէս
Եւ պաշտեցին աստուածայէս
Ի կերակրոց ինչ հիւթական,
Որչափ մարմնոյ պատշաճական,
Ոչ ՚ի յերկրէ յօդեալ մարդկան,
Այլ նորաստեղծ արարչական:
Դարձեալ յետ փորձին կատարման
Յայտնէ զընութիւնն աստուածական
Նըշանօք զարմանազան,
Զոր ոչ տեսին ազգըք մարդկան:
Նախ յաղթելով չար իշխանին,
Ապա առեալ զաւար նորին.
Զի իրաւունք դատաստանին
Բըռնադատօղ մի՛ կարծեսցին:
Վասն այնորիկ բնութեամբ մերով
Մեր յաղթողին յաղթեաց մարմնով,
Առ ՚ի չպարծել չարին այսով,
Թէ յաղթեցայ մերկ Աստուծով:
Եւ մեք ուսցուք յօրինակէն,
Նախ խորտակել ըղչարին զէն,
Ապա առնել զիւայն անդէն,
Զադգըս մարդկան բուժել յախտէն:
Եթէ ախտից մեղաց յաղթեմք,
Զախտըս ցաւոց մարմնոց բուժեմք.

Եթէ զօրէնսըն կատարեմք ,
Ապա քարոզ լինել կարեմք ։
Արդ մինչ վանեաց զընդդիմակացն ,
Առ Յովհաննէս գայ Յորդանան .
Զոր անուանէր 'ի լուր մարդկան
Գառն Աստուծոյ և քաւարան ։
Գտանայ յաշխարհըն Գալիլեայ ,
Ի յանուանեալ գեղըն Կանայ ։
Յերրորդ աւուր գալըն նորայ ,
Ի հարսանիսըն կոչի նայ .
Յորս լինքն և մայրն անդր ընթանան ,
Յայտնել ըղփառսն արարչական ։
Սկիզբըն գործոյ սքանչելական
Առ 'ի տեառնէ եղեալ յայնժամ .
Զի որ ըղջուրըն հիւթական
փոխէ 'ի տուճկըն սեռական ,
Դարձոյց և այժըմ նոյն հրաման
Զջուրն 'ի գինի անապական ,
Այն որ զընութիւնըս լուծական
Արար կայուն անմահական ,
Յայժմուս լուացմամբըն յաւազան ,
Եւ անդ լուսոյն աստուածական ։
Ի Ճանապարհ վաստակեցաւ ,
Որով երկինք հաստատեցաւ .
Այլէ հանգիստ աշխատելոյ ,
Եւ Ճանապարհ մոլորելոյ ։

Ա՛ռ ջերհորին ծարաւելով,
Զբնութիւն մարմնոյն յուզանելով.
Սամարուհւոյն ջուր խնդրելով,
Ըղձուր կենաց խոստանալով:
Այլուր առ ինք ձայնիւ կոչէ
Ըղձաւորս, զի արբուսցէ.
Եւ որ ըստ գրոց կատարեսցէ,
Գետոց բղխել յորովայնէ:
Պարգեւեալ Կանայ Գալիլէին
Յայտնեաց ըզփառսն աստուածային
Տալով որդւոյ թագաւորին
Զառողջութիւն ընդ հրամանին:
Պարուրանիկէ առագանին
Ութուերեսուն ամ հիւանդին
Ասաց բառնալ զիւրեան մահճին,
Շրջել նովաւ յօր շաբաթին:
Յետ Յովհաննու մանկիլ բանդի
Ճրագին դնիլ ընդ գրուանի,
Ձայնըն քարոզ յանապատի
Լռել սըրով հերովդէի,
Արեգականըն լոյս ծագէր,
Բանըն փոխան ձայնին խօսէր,
Զազգըս մարդկան լուսաւորէր,
Զախտըս մարմնոյն 'ի բաց մերժէր:
Նախ զաշակերտացն ժողովեաց,
Զորս 'ի սկըզբանց յառաջ ընտրեաց.

Երկրատամս իւր անուանեաց ,
Եւ Թամնատան զորս տարբեաց :
Նոքք 'ի լեառըն հեռուէ ,
Եւ ժողովոց որք ընկերնի ,
Խոնարհութեամբ բաղձեալ նըստի ,
Բանից զըկրանըն կենդանի .
Յորմէ բարի բանըս բըղխեալ ,
Կենդանարար ջուր արբուցեալ ,
Երանութիւնս ինձեակ տուեալ ,
Որոց գործովքըն հետեւեալ :
  Նոյն որ երբեմն առ Մովսէսիւ
Մինէ խօսէր ահեղ ձայնիւ ,
Սա աստ խոնարհ և հեզ բանիւ
Լըռու զօրէնսն որ խիստ դանիւ ,
Առ որս ընդդէմ զնա կարծէին
Օրինական տուեալ բանին ,
Ասէ . չեկի զի լուծանին ,
Այլ 'ի լըրուլ զնըրուաղ թերին :
Անդ տացու թէ մի շընար .
Բայց ես դատեմ , թէ հայեցար :
Ի ապանմանէ անդ արդեւար .
Բայց աստ դեհեն , թէ բարկացար :
Ի յերդմանէ ուղիղ յԱստուած
Զէ յօրինացն այս արդելած .
Բայց առ յինէն է հրամայած ,
Թէ մի երդնուր ոչ յարաւած :

Եւ այսպիսի բանիւք բազմօք
Խրատեաց զաշխարհ ամէն նորօք,
Ուսոյց մաքուր լինել պահօք
Եւ ողորմած՝ որ ոչ կեղծօք:
Եւ մինչ հոգւով կերակրեցան,
Բազումք մարմնով բժշկեցան.
Կոյրք լուսով պայծառացան,
Զլոյսն՝ որ յերկնից՝ աչօք տեսան:
Զձայնըն կենաց խուլք լուան,
Եւ 'ի մարմնի անմահացան.
Համրոց լեզուք բարբառեցան,
Եւ Աստուծոյ խօսակցեցան.
Ձեռք կարկամք պարզեցան,
Եւ գօսացեալք առողջացան.
Իսկ եղջերուք կաղք ընթացան,
Անդամալոյծք կանգնեցան:
Յաստուածակոխ լեռնէն իջեալ,
Եւ ըզբորոտըն զայն սրբեալ.
Կափառնայում քաղաքն եկեալ,
Զհարիւրապետըն ծանուցեալ.
Զհաւատըն մեծ յայտնի արար
Քան զԻսրայէլ հըզօրաբար.
Զծառայն հիւանդ յախտ մահաբար
Կեցոյց բանիւ կենդանարար:
Զոքանչն անկեալ կայր Սիմոնի
Յախտըս ջերման յոյժ տագնապի.

Զրգեալ ըղձերըն կենդանի ,
Ցարոյց առողջ վաղվաղակի :
Բազմաց եղեւ նա կենսատու ,
Ցորժամ եհաս մուտ արեւու .
Որ զՆայեաց բանըն լընու ,
Թէ զցաւըս մեր 'ի մէնջ առնու :
Զանձըն նենգօղ խորամանկին
Կըցորդ չէառ ճանապարհին ,
Զորջք աղուեսուց ըղչար հոգին ,
Որպէս սափ ըզՍիմոնին :
Միսսումն որ էր յաշակերտաց ,
Այն որ գընալ ըղհետ աստաց ,
Թողել զմեռեալն ոչ հրամայեաց ,
Այլ քարոզել զբանըն կենաց :
Ընդ աշակերտաւն եմուտ 'ի նաւ ,
Այն որ կայլէ զծով առազաւ .
Զոր 'ի շարժելըն մըրըրկաւ ,
Հանդարտեցոյց մի հրամանաւ :
Եկեալ յաշխարհ գերգեսացոց ,
Պատահեցան տանջեալք յայսոց .
Զմարդիկն արտաք առողջացոյց ,
Զդեւսըն խոզխըքըն խորացոյց :
Լուծեալ մարդոյն ըզմեղս եթող
Որպէս հըզօր տէր և յաղթող .
Զմարմինն այնքան արար կարող ,
Մինչ զի մահճացն եղեւ բարձող :

Ի յանցանելն առ մօրքանոյն ,
Նման նըշանաւ ընդ Մատթէոս .
Ծանեաւ զՀոգւոյն որ 'ի նմա լոյս ,
Կոչեաց որպէս զԵղիսէոս :
Աշխարհական սիրոյն կապան
Խզեաց սիրովն աննիւթական ,
Չեղև արգել ինչ և խափան
Լըսել ձայնին աւետարանական :
Յայրոս անուն դուստր իշխանի ,
Ախտին մահու հասեալ զոգի ,
Կանգնեալ բանիւ նորին լինի ,
Որպէս 'ի քնոյ զարթուցանի :
Ի ճանապարհին յայն բարի
Տեսանես կինըն հուպ լինի .
Քղանցիւք զգեստուն յախտէն բուժի ,
Հաւատովն մեծ հրապարակի :
Կուրաց երկուց առ նոս անկեալ ,
Ձեռին հրամանք լուսաւորեալ :
Համըր դիւի զամլըն կալեալ ,
Շնորհեաց խօսել ընդ ծնացեալ :
Ըզգօսացեալն 'ի մէջ կոչեաց ,
Զորս ըզձեռըն հրամայեաց .
Զմեռեալ անդամն 'ի կարգ թըլեաց
Այլ անդամոցըն կենդանեաց :
Դիւահարին խուլ և համր
Շնորհեաց ըզխօսս և ըզլըսել .

Որով լեզուքն մահաբեր
Բեեղզեբուղաւ , ատեն , հանեն :
Նըշանեալ 'ի նաւ յեզըր ծովին ,
Վարդապետէր առ ցամաքին
Ըզսերմանեայն առակ խորին ,
Զոր եւ ցանել յերկիր բանին :
Ոմն 'ի թըռչնոց օդականին
Առ ճանապարհ քաղեալ հատին ,
Ոմն յապառաժ տապով կիզին ,
Եւ այլք 'ի փուշսն հեղձանին .
Իսկ որ յոգի բարի անկաւ ,
Եբեր պտուղ առհմականաւ .
Բարեբախտից պատահեցաւ ,
Ըստ հաւատոց պարգեւեցաւ :
Օրինաւորն երեսնաւոր ,
Եւ կուսութիւն վաթսունաւոր ,
Իսկ պատարագքըն բանաւոր
Վըկայքն արեամբ հարիւրաւոր :
Դարձեալ հարիւր բերեալ պտղոց ,
Գաւառն երկնից վիճակելոց .
Եւ փափկութեան դրախտին միջոց ,
Երկիրս նորոգ տեղի վերջնոց :
Եւ զորմանցն յագարակին ,
Զոր 'ի վերայ ցանեալ չարին ,
Ի հընձողաց խըրձունք կապին ,
Եւ ընդ ցանօղն 'ի հուր մատնին :

Յանժամ արդարքն արեգական
Փայլեն ծագման լուսոյն նըման ·
Որք 'ի յորումն ոչ փոխեցան ,
Այլ Աստուծոյ մնացին ցորեան :
Նա և ըղձալըն մանանխոյ ,
Որ փոքր է նա սերմըն խոտոյ ,
Աճէ լինի ծառ մեծարգոյ ·
Մինչ զի զթըռչունս բառնալ յոստոյ:
Դարձեալ խօսի վասըն խմորոյ ,
Յագարակին գանձ ծածկելոյ ,
Զվաճառականըն մարգըրտոյ ,
Եւ ուռկանին ծովարկելոյ :
Որք և բանիւ զանազանին ,
Իրօք 'ի նոյն միտըս բերին ·
Զարքայութեան որդիս յայտնեն ,
Որ 'ի նուաղից բազումք եղեն :
Եկն 'ի քաղաք իւր Նազարէթ ,
Յօր շաբաթու 'ի ժողովն երթ ·
Զգիրս Եսայեայ , զոր ոչ ուսաւ ,
Ի փորձողաց լուր ընթերցաւ :
Որք նախանձու բորբոքեցան ,
Հանին լերինըն յարաւեւան ·
Գահավիժել զնա կամեցան ,
Որ գնայր ընդ օդըն յանդիման :
Զճրագ օրինայըն Յովհաննէս ,
Որ հրաժարեալ էր յաշխարհէս ,

Ըմբոյց արեամբըն Հերովդէս
Յիւրում ծնընդեանն աւուր հանդէս :
Որ մինչ 'ի բանդն էր՝ առաքէր
Եւ ըղձալոյըն հարցանէր .
Դու 'ի նեղքին բանդըն գայցես ,
Եթէ զայլ ոք առաքեսցես .
Զի աւետիս տամ խընդալով ,
Եւ կարապետ լինիմ յուսով ,
Որպէս յերկրի ձայն բարբառով ,
Նոյն 'ի դժոխս որոտալով :
Զի դու փեսայ ես երկնային ,
Ես հարսնածու մաքուր հարսին .
Դու արեգակն առաւօտին ,
Եւ ես ճրագ գիշերային :
Ում վըկայէ բանիւ յայտնի
Սոյն Յովհաննէս յայլում վայրի .
Եւ դաւանէ ըզսա Որդի
Հօր Աստուծոյ անմեկնելի .
Որ հաւատայ Որդւոյ , ասէ ,
Զյաւիտենից կեանսըն առցէ .
Եւ որ Որդւոյ չհաւատասցէ ,
Ըզբարկութիւն տեառըն կրեսցէ :
Մինչ 'ի քաղաքն անուն Նային
Երբեմն երթայր առաւօտին ,
Ըզմիածին զայրւոյն որդին
Եւես բարձեալ մեռեալ ըզդին :

Ի յարտասուս մօրըն նայէր ,
Արագ ըղձուց սըրտին սփոփէր .
Մանուկ դու , քեզ ասեմ , ձայնէր .
Եւ ընդ բանին յարուցանէր :
Ի նոյն քաղաք մինչդեռ բազմէր ,
Փարիսեցւոյն տունըն ճաշէր ,
Կինըն պոռնիկ համարձակէր ,
Ըզշիշ եղոյն նարդեան բերէր .
Ըզգլուխ բոլոր էիցս օծէր ,
Առ ոտս անկեալ առատն արտասուէր :
Զոր հաւատով տէրըն կանգնէր ,
Թողեալ լիցին քեզ մեղք , ասէր :
Որ կերակրէ զաշխարհ ամէն ,
Նա քաղցելոց հաց դարեղէն .
Եւ ՚ի հընգից նըկանակէն
Յաւել նըշխար հինգ հազարէն :
Եւ որ գընէ յամէս ըզգընաց ,
Մինչ անմարմին էր , բան տայց ,
Նոյն և մարմնով թեթեւ գընաց
Ի վերայ ջուրցըն կոհակաց .
Ըզպետրոսի ձեռըն կալաւ ,
Մինչ ՚ի ծովուն ընկըղմեցաւ .
Առեօք մըրրիկ զեղումն ՚ի նաւ ,
Հողմոյն սաստեալ , հանդարտեցաւ :
Քահանուհւոյն լըւաւ ձայնի ,
Վասըն դըստերն այսահարի .

Առեալ զմանկանցն անարժանի
Ըզհացն՝ եւ շան ախտաւորի:
Զկինըն կապեալ դիւին կարկամ
Անկեալ յերկիր ութուտասն ամ,
Կանգնեաց յախտէն առողջանդամ
Կենդանարար բանիւն յայնժամ:
Սովեցելոց դարձեալ շնորհէ
Լի կերակուր յանապատէ.
Քանզի յեւթանց նըկանակէն
Ըզչորս հազարսըն կերակրէ:
Խօսի բանիւ նա հարցական
Ընդ աշակերտան երկոտասան
Վասըն կարծեացըն հրէական,
Թէ ո՞ւմ ասեն զինէն նըման:
Ոմն ասելով թէ Եղիայ,
Եւ միւսն ասէ զԵրեմիայ.
ԸզՅովհաննէս ասեն նոքա,
Եւ կամ ըզմի նըման սոցա:
Որք ոչ լըւան ձայնին յամպոյ
Ի Յորդանան վըկայելոյ,
Լուարուք Որդւոյ իմ սիրելւոյ,
Որ է կամաց իմոց հաճոյ:
Իսկ որ լըւաւ զձայնըն Հոգւով,
Ներկեաց ընդ միսս անեղ գունով,
Աղաղակեաց դաւանելով,
Դու ես Որդի Հօր, ասելով:

Որով լուեր զպատասխանին
Ի բերանոյն սուրբ զերանին .
Եւ զեւրակեան անուն վիմին
Շնորհէր նըմա զանշարժելին :
Յետ վեց աւուր ընդ Մատթէին ,
Եւ ութօրեայ ընդ Ղուկային ,
Որ մին զաւուրան եցոյց միջին ,
Միւսըն զնախանին եւ ըզվերջին ,
Հանէ 'ի լեառըն առանձին
Զնա եւ զորդիսըն Զեբեդին .
Յայտնէր ըզփառսըն հայրենին ,
Եւ ճըշմարտէր զբանըս նորին :
ԶՄովսէս բերեալ 'ի մեռելոց ,
Եւ զԵղիաս 'ի յանմարմնոց ,
Ցուցեալ թէ չէ ոմն 'ի յայլոց ,
Այլ տէր բոլոր արարածոց :
Զի տակին վասըն նորուն
Լուծիչ գըրոյն եւ շաբաթուն ,
Զօրէնադիրն եբեր նոցուն
Եւ որ վառեալն էր նախանձուն :
Եւ զի յերկուց բան հաստատի ,
Մինչեւ յերիւն օրէնադրի ,
Երկուս 'ի հնոցն ածեալ լինի ,
Երեւք նորոկըս վըկայի :
Ի յայս խորհուրդ վերիս միայն
Արար գիտող այս խորհըրդեան .

Եւ զի Յուդա անմիաբան ,
Չէր արժանի այնմիկ տեսլեան ։
Ամպ հովանի նոցա լինէր ,
Եւ Հայր յամպոյն աղաղակէր ․
Դա է Որդի իմ վերկայէր ,
Եւ զակերտսեան բան հաստատէր ․
Ոչ եթէ Բանն 'ի դմա բնակեալ ,
Այլ որ յերկուցըն միացեալ ․
Ոչ որոշեալ ոչ բաժանեալ ,
Որպէս Նեստոր յերկուս հատեալ ։
Ի գոչմանէ ահեղ ձայնին ,
Ի ծագմանէ լուսոյ արփին ,
Սարսեալ յերկիր անկանէին ,
Եւ 'ի ծածկելըն կանգնէին ։
Պետրոս յահէն գոլ զարհուրած ,
Խօսէր զերից տաղաւարաց ․
Անգիտանայր թէ զինչ ասաց ,
Հոգին յայանէր զերրեակ անձանց ։
Եւ պատուիրէր զայս ոչ պատմել ,
Մինչեւ 'ի մեռ. ելոցն յառնել ․
Զնշխայէ սկըսաւ խօսել ,
Զերկրորդ գալուստն իւր յորդորել ։
Եւ 'ի լերինն օթագայեալ ,
Առաւօտուն վաղիւն իջեալ ,
Ըզլուսնական այսըն մերժեալ ,
Եւ ըզմանուկըն բըժըշկեալ ։

Բայց անդրանիկն արարածոց ,
Նոյն անդրանիկ և մեռելոց .
Պաշտանքի հարկս 'ի ստեղծուածոց
Ընդ անդրանկաց երբայեցոց :
Զոր Պետրոսի տալ հրամայէ ,
Ոչ յարծաթոյ որ 'ի յերկրէ ,
Այլ արկանել կարթ 'ի ծովու ,
Զստատերն առնուլ 'ի ձըկանէ :
Ի յօրինակ բնութեան մարդկան
Տասըն բորոտըքըն սըրբեցան .
Իննունքըն տալ փառս ոչ գըտան ,
Բայց 'ի միայն օտարական :
Թըքով լուսոյ կենարարին ,
Լոյս շնորհեցաւ 'ի ծնէ կուրին .
Ձեռն որ եստեղծ զմարդն առաջին ,
Ի նոյն նիւթոյ լոյս ետ նըմին :
Առ Ղազարու բարեկամին
Զինքն 'ի յերկուց յայտնեաց Բանին .
Մի էութիւն , գործըք կըրկին ,
Աստուածային և մարդկային :
Արտասուելովն ըզախրելին
Եւ ո՞ւր եդիքն ասել զմարմին ,
Այսու զընութիւնըս մարդկային
Ցուցանելով ըզհաստատին :
Իսկ 'ի կոչել զանուն նորին
Ի գըժոխոց գըրանց բանտորին ,

Լըսել հոտեալն 'ի տապանին
Եւ գալ արտաքըս զոյգ ձայնին ,
Այսու զբնութիւնն տատրակային
Եցոյց խառնեալ հողեղինին :
Քանզի ձայնն ոչ էր անմարմին ,
Այլ 'ի մարմնոյ խառն ընդ Բանին .
Ոչ 'ի յերկուս բաժանելով ,
Եւ երկակի կիրըս կրելով .
Ոչ ըստ մերումս արտասուելով ,
Ոչ ըզմեռեալըն կոչելով ,
Այլ 'ի յերկուց միացելում
Անճառաբար մի եղելում
Կըրկին կըրից ներգործելով
Ախորժաբար կամաց միում :
Ընդ յարութիւնըն Ղազարու
Հըրեայք լըցան չար նախանձու .
Ի յԵփրայիմ քաղաքն այնու
Գընաց յայն կոյս Յորդանանու :
Եւ յԵրիքով քաղաք դարձեալ ,
Զանէծս Յեսուայ անդուստ բարձեալ .
Ի տուն Զակքեայ սիրով մըտեալ ,
Եւ զըրկողաց օրէնս եդեալ :
Առ Ճանապարհն Երիքովի
Լըսաւ կուրացն աղաղակի .
Խոնարհաբար տուեալ զանեղն ,
Լոյսըն շնորհեաց պարգեւ լուսոյ :

Մերձեալ զատկին հրէականի,
Բեթանիա եկաւորի.
Ընդ Ղազարու յընթրիս բազմի,
Ի Մարեմայ նարդեամբ օծի:
Որոյ Քրովբէք աթոռ փառաց,
Նըստաւ յանարգ յիւր արարած.
Եւ զոր օրհնեն դասք հրեշտակաց,
Գովեն մանկունք ըստընդիաց:
Նշն օրինակ Հրէից ազգաց,
Եւ յուռանակն հեթանոսաց.
Ոմն օրհնօքն ըզգօնացած,
Ոմըն տըրմուղ ըզհետ կամաց.
Յորըս բազմի Բանն Աստուած,
Մաքուր յոգիս երկուց ազանց,
Որպէս ըղձէմ անկեան քարանց
Մխացուցիչ կըրկին կողմանց:
Ոստ 'ի ծառոց առեալ ծերոց
Ի ձիթենեաց պարարելոց,
Իմաստութեան նըմանելոց,
Ողորմութեան տիպ ցուցելոց:
Արմաւենիս բերեալ տղայոց,
Ի բարձրութեան ձեւ արդարոց,
'Ի առաջ խաղան ձայնիւ երգոց
Սուրբ արարչին արարածոց:
Յանպարտութեան դէմս Հրէից,
Կամ 'ի մեղաց պըտղոյն բերից,

Առ թըզենին ձգեալ անիծից ,
Եղեւ ցամաք փոյթ 'ի հիւթից :
Ի ձիթենեաց լերին 'նըստէր
Եւ աշակերտան ուսուցանէր .
Զապագայից իրըս պատմէր
Եւ ըզգալըստեան երկրորդ յայտնէր :
Տալըն կուսից այն առակաւ ,
Հինգն իմաստուն ըն լապտերաւ ,
Հինգըն յիմար յորոց չառաւ
Ողորմութեան եւղ անձնաւ :
Եւ ծառայից այն տաղանդօք ,
Մինւմըն հինգ մեծաց շնորհօք ,
Միւսումն երկու միջակ բարեօք ,
Այլումըն մի փոքումբք գործօք :
Յորժամ փառօքըն հայրական ,
Եւ հրեշտակօքըն անմարմնական
Գայ 'ի դատել զըլըս ստեղծան
Զբանականաց ազգ ամէնայն ,
Զբարիսն յանձառ կեանըս կոչէ ,
Որ ստա բարւոյն հետեւող է .
Զչարըն բանիւ անիծանէ ,
Եւ ընդ չարին 'ի հուր մատնէ :
Յայնժամ մի ումն յաշակերտաց ,
Յուդա անուն Սկարիովտաց ,
Գալով 'ի հրէից ժողով դընաց ,
Մատնել 'ի մահ զտէրըն կենաց :

Ընդ երեսնից թիւ արծաթին
Ծախէր զորդին մերոյ ծնողին .
Մատնատուր դաւ եղկելին ,
Կորոյս ըզշահն ընդ վաճառին ։
Յերեկոյի հինգշաբաթի
Անհաս վերնոյին խոնարհի .
Նշոյլն ամպածու զինջեալ կառուի ,
Զոտսն լուանայր հողեղինի .
Եկեր ըզգառըն հին զատկի ,
Եւ ըզխորհուրդն ընդ եղեգի ։
Ելից զօրէնսն Մովսէսի ,
Ճշմարտութեամբն օրինակի .
Ըզհինն ՚ի նորըս փոխելով ,
Ըզստուերն ՚ի լոյս ճշմարտելով ,
փոխան զատկին հրէին գոլով ,
Գառն Աստուծոյ ՚նուիրելով ։
Ընդ բաղարջին հաց անխմոր
Եւ ըզմարմինն իւր զերկնաւոր ,
Ըզկուսածին անսերմնաւոր ,
Եւ ոչ յախտից դաւ երկրաւոր ։
Եւ ընդ գառին արեան ուխտին
Զարիւնն իւր ետ մեզ ուխտ կըրկին ,
Եւ եղեգան դառնութենին
փոխան ըզլոյս աստուածային ։
Առեալ զպատառըն Յուդայի ,
Եւ ել արտաքս ՚ի գիշերի ։

Պետրոս խօսէր խըրախուսելի ,
Եւ կըշտամբիւր հաստիօսն ։
Ըզմեսաստանըն յորդորէր ,
Ոչ երկընչել բանջալերէր ·
Զխուր յաշխարհէն փախիլըն ասէր ,
Եւ ըղձալուս Հօգւոյն պատմէր ։
Ի վերնատանըն խորհըրդոյ
Եւ կեդրոնեան յայն կոյս ձորոյ ·
Եմաւս պարտէզ ընդ պարտիզոյ ,
Եմոյծ զԱդամ՝ դրախտին նըքոյ ։
Երկուքըն եղեալ առանձնաբար ,
Հոգւոյն ըղկիցըն տըրամաբար ·
Փըրկել զաշխարհ հօգիս յօժար ,
Բայց է ըմպելին մարմնոյս տըկար ։
Ոչ ոմն ուժեղ և զօրաւոր ,
Եւ ոմն անզօր վըտանգաւոր ,
Այլ մի և նոյն գոլ միաւոր ,
Կըրէր ըղկէկոյն կամաւոր ։
Ծունըր դընէր խոնարհական ,
Որում կըրկնի ծունր անձնոյն ·
Բանըս խօսէր աղօթական
Վասն իմ՝ ընդ Հօր իւր էական ·
Եթէ փըրկել մարդկան հնար է
Նաանց մահու իմ՝ որ գըրեալ է ,
Բաժակ մահուս յինէն անցցէ ,
Ոչ իմ՝ կամաւ՝ այլ քոյդ անցցէ ։

Այս Հօր կամաց չէ հակառակ,
Որպէս կարծեն ոմք են ներհակ.
Այլ համատար յայս և միակ
Ցուցնէ զերկուսն անընդդիմակ։
Առ յերկնեղէն փրկութեան հասեալ,
Երանաձեւ կացեալ միջեալ.
Ի զօրանալ հրեշտակ մերձեալ,
Զօրինակին գիրքն լցեալ։
Զի կատարեալ էառ բնութիւն
Աստուածըն Բան ընդգրկութիւն,
Պարտ էր զերկիւղ և զարդարութիւն
Ծիրանաքն կրել անօրէնութիւն։
Իհաւ Յուդաս, որ մատնեցայ,
Հանդերձ դասուք ուրացեցայ.
Անկան ներքեւ տարածանեցայ,
Որք յաւիտեան չէին կանգնեցայ։
Յուդաս մերձեալ համբուրելով,
Անիծ մահու նշան տալով.
Փոխան սիրոյ զնա մատնելով,
Զար ընդ բարւոյ վրէժարելով։
Պետրոս առ դուռ ջերմին սիրոյ
Ըզծառայքն չարարարոյ
Իհաւ սուսերբ զականջն աջոյ,
Որ ոչ լուաւ ձեռացն խրոյ։
Իսկ աներքն մեր արարածս
Յանկերն մերձեալ ըղձկեալս,

Առողջացոյց աստուածայնէս ,
Զոր ոչ տեսին կուրայն հանդէս ։
Կալան կամաւ զանկապելին ,
Կապեալ ըղձիւս արձակողին ,
Ի յապարանսն ատենին
Կայիափայ և Աննային ։
Ալ աշակերտքն ցրուէին ,
Պետրոս ըղձէր երթայր ՚նմին .
Ի յաղջկանէ շարժեալ ՚ի խիղճն ,
Թողոյր երիցս ըզդաղձանին ։
Զի տեսոյր բնութիւնըս մարդկային
Առ Աստուծոյ մի՛ արածեալին ,
Ընդդիմանալ հնարից չարին
Առանց նորին հզօր ձեռին ։
՚Նըշանակեալ հաւըն խօսէր ,
Առ ՚ի Պետրոս տէրն ակնարկէր .
Զբանըն յիշեալ դառն արտասուէր ,
Ի գըլորմանէն դարձեալ կանգնէր ։
Ծառայն զերես տեառն ապտակէր ,
Յորմէ Սերովբէն թեւաքօղէր ։
Քանդըն վկայս շարեաց բերէր ,
Օրինազանց դատապարտէր ։
Պիղծ բերանով թըքանէին
Յայն՝ որ թըքով լոյս ետ կուրին ։
Զդէմըն լուսոյ ապտակէին ,
Զայն որ փայլեաց լոյս ՚ի լերին ։

Ի յուրբաթու տատասկին
Նստուն յատեան Պիղատոսին .
Ծառայն յաթոռ դատաւորանին ,
Տէրն 'ի դատել կայր առաջին ։
Ի հարցանել Պիղատոսի ,
Տէրն ոչ ատէր պատասխանի .
Զի կանխասաց գիրքն լցցի ,
Եղէ ես մարդ որ ոչ խօսի ։
Զոր ես տանել առ հերովդէս ,
Առ 'ի նորին դատել հանդէս .
Եւ հերովդի անգոսնելով ,
Արհամարհեաց նշանաւորես ։
Բայց որ զբլուխ եղեւ անկեան ,
Միջնորդ գոլով հօր և մարդկան ,
Սոքա նոքա նախ հաշտեցան ,
Ապա բնութիւն բոլոր մարդկան ։
Որոյ ըզգեստ է լոյս փառաց ,
Արկին հանդերձ նախատանաց .
Նախ ըմպխանակ հասարակաց ,
Ապա քղամիդ կարմիր ներկած .
Զի որ զգեցեալն էր , էր կրկին ,
Աստուած և մարդ մի երկուքին .
Սպիտակն 'ի լոյս՝ աստուածային ,
Կարմիրն 'ի գոյն արեան՝ մարմին ։
Ի յընդունութիւն կամաց նոցա ,
Խընդրել զՅիսուս թէ զԲարաբբա ,

Աղաղակէին խաչել ըզնա ,
Զգողն արձակել փոխան նորա :
Պիղատոսի զձեռսն լուացեալ ,
Ի յարենէն անպարտ եղեալ ,
Ի գլուխ իւրեանց , ասեն , բարձեալ
Եւ 'ի նոցունց որդւոց ծննեալ :
Այս 'ի մահ դատապարտեալ ,
Զմահապարտաց զանըն հարեալ ,
Ի զինուորաց ձեռըս տուեալ ,
Որք յապարանն ըզնա տարեալ .
Ի հանդերձէն մերկանալով ,
Եւ զգեցուցին կարմիր գունով .
Պսակ 'ի փշոց նախատելով ,
Եւ եղեգան գաւազանով ,
Ի ծունր իջեալ կատակէին ,
Զգլուխն եղեգամբ հարկանէին
Զփուշ անիծիցըն բարձողին ,
Եւ առ 'ի կեանս ըղձեղ գրողին :
Յետ այնր 'ի խաչըն տանէին .
Բառնայր ուսով ըզփայտ խաչին
Մինչ 'ի տեղի Գողգոթային ,
Ուր էր եդեալ մարդն առաջին :
Ետուն ըմպել գինի զմռսեալ ,
Եւ կերակուր լեղեաւ խառնեալ .
Զոր ըստ մահուն չափ ճաշակեալ ,
Եւ զկամնդակին այն ոչ արբեալ .

Զի ըղձեալին իւր առեղծուածոյն
Զառ 'ի մեղաց ճաշակ մահուն,
Փոփոխեաց ըղդառնագոյնն
Ի համ կենացըն քաղցրագոյն :
Մերկացուցին զերկրորդն Ադամ,
Զի զգեցուսցէ ըղհինն Ադամ.
Զհանդերձն յինքեանս բաժանեցան,
Պատմուճանին վիճակ արկան.
Ըղձեռսն և զոտսըն ծակեցին
Ըստ յայտնապէս դաւթեան ձայնին,
Ընդ փայտ խաչին բեւեռեցին
Զմատունսն որ գրեաց 'ի տախտակին:
Ձեռք ընդ ձեռին տարածելոյ ,
Ոտք ընդ ոտին ընթանալոյ .
Փայտ ընդ փայտին գառըն սըրբոյ ,
Կեանք ընդ մահուն փոխարկելոյ :
Ի մէջ երկուց անօրինաց
Կայր մերկացեալ տուօղն օրինաց .
Զոր ոչ տեսին ազգըն կուրաց ,
Բայց 'ի միոյն յաւազակաց :
Ետես խաչեալ և հաւատաց ,
Թէ է մահու տէր և կենաց :
Յիշեա զիս , տէր , աղաղակեաց .
Ընդ իս լիցես , պատասխանեաց :
Վասն այսորիկ արեգական
Ըղլոյսն արար գիշերանման ,

Ծածկեալ ըղձըցըն զգայական
Վայրն լուսոյն արփիական .
Ըղձաւորըն քող արկ մերկութեան ,
Զի մի՛ տեսցէ ակն անարժան .
Եւ զի լուսոյն մեծի ծագմամբ
Ճաճանչ փոքունց խաւարեցան :
Ի մէջօրեայն նըսեմացաւ ,
Յորժամ Ադամ մեղօք մեռաւ .
Ի յիններորդն 'ի լոյս դարձաւ ,
Յորում մահուամբ մահըն լուծաւ :
Քացախ ետուն 'ի ծարաւի
Այնմ որ բըղխեաց դետ յԱդենի ,
Եւ 'ի վիմէն յանապատի
Երկոտասան վըտակ բարի :
Յերրորդ ժամու պատրեալ օձին
Զմիտըս նախնոյ մօրն Եւային ,
Ի վեցն անկեալ մարդն առաջին
Հաւանական բանիւ նորին .
Ի սոյն ժամու տէրն 'ի խաչին ,
Զի.քաւեսցէ զմեղըս նոցին .
Եւ յորժամ եւ Ադամըն հին ,
Նմոյծ ըղգոյն 'ի մէջ դրախտին :
Էլի էլի , աղաղակեաց ,
Խնդիր ընդ իմ զՀայր աղաչէր .
Նոցա չյիշել զմեղս աղօթէր ,
Եւ ըզմեղս ոչ թողուլ հայցէր :

Դարձեալ ձայնիւ աղաղակեաց ,
Զհոգին կամաւ հօր աւանդեաց .
Եւ ընդ ինքեան վերաթեւեաց
Զհոգիս մարդկան հօր ընծայեաց :
Ոչ ըստ մերումս արտաշընչէ ,
Այլ աստուածոյ մերոյս գործէ .
Զի մերձ ՚ի մահ ձայն մեր լռէ ,
Իսկ նա հընչմամբ մեծաւ գոչէ :
Թէ ոչ այլուստ՝ աստ իմանի ,
Եթէ կամաւ նա մեռանի .
Որպէս ասաց զինքըն նախկի ,
Դընող առնող անձին յայտնի :
Նոյն Բանն, որ էր ծընունդ նա հօր ,
Եղեւ մարմին յորովայն մօր .
Ճըշմարտապէս մեռաւ մարմնով ,
Զի փրկեսցուք մեք Աստուծով :
Անմահ բնութիւնն աստուածային
Մեռաւ բնութեամբ մահկանացուին ,
Եւ մահացուն խառնեալ ՚ի նմին
Եղեւ անմահ ընդ անմահին :
Ոչ ոմն անմահ այլն մեռեալ ,
Զի այս երկուք են բաժանեալ .
Այլ որ անմահ , նոյն և մեռեալ .
Եւ որ մեռեալ , նոյն և միացեալ :
Որպէս ծընունդըն սքանչելի ,
Նոյնպէս և մահըն հրաշալի .

Եւ երկուքեան անքըննելի ,
Զի Աստուծոյ է արարչի ։
Զի անդ որ էր դարձեալ լինի ,
Եւ էութիւնն ոչ կորընչի ․
Եւ սոս անմահըն մեռանի ,
Եւ 'ի մահուն էր կենդանի ։
Որպէս և հուր ընդ երկաթոյ
Տանջի ուռամբ հարկանելոյ ․
Թէ և նըման չէ այս ազգոյ ․
Զի երկոքեանն են 'ի նիւթոյ ․
Այլ գուցընաքեայ նըմանելով ,
Հոգւի կրակից մարմնոյ գոլով ։
Բայց չէ և այս ճըշմարտելով ,
Զի բաժանի մեռանելով ․
Իսկ էութիւնն աստուածական
Յաւէտ բնութիւնըս նիւթական
Անքակտելի է միական
Յորովայնէն մինչ յաւիտեան ։
Ուստի հոգւի իւր մարդկայնի ,
Զոր աւանդեաց առ Հայր յերկնի ,
Հանդերձ բնութեն աստուածայնի
Էջ 'ի հոգխն որ 'ի բանդին ։
Էր բովանդակ և 'ի մարմնի ,
Մինչ բաժանեալ եղեւ հոգին ․
Եւ ոչ թափուր ծոց հայրենին ,
Եւ ընդհանուր էից բնութիւն ։

Եւ զի Աստուած էր որ մեռաւ ,
Յայտնեն զարմանքն որ գործեցան .
Երկիր հիմամբք սասանեցաւ ,
Եւ վայրագոյր ընդ մէջ հերձաւ .
Վէմք 'ի յինքեանց պատառեցան ,
Եւ գերեզմանք մահու բացան .
Մարմինք սըրբոց բազմաց յարեան ,
Ի հաւատալ մեզ յարութեան :
Եւ զի մեռեալն էր կենդանի ,
Թէպէտ և մահն էր հաւաստի ,
Յայտնէ կողին խոցուած տեղի ,
Կայլակ աղբերցըն կենսականի .
Ջուրն 'ի լուանալ մեղուցելոց
Ի մահ նորա մըկըրտելոց ,
Արիւնն 'ի սնունդ մաքուր հոգւոց
Առ 'ի Քրիստոս աղաչացելոց :
Կողին խոցմամբն , որ պատառեցաւ ,
Ըզկողածնին մեղըս ջընջեաց .
Ջեկեղեցի այնու շինեաց ,
Եւ ընդ դրախտին մեզ պարգեւեաց :
Որ եղելոցըս շնորհ բաշխէ ,
Ըզնա պարգեւս Յովսէփ հայցէ .
Եւ զոր փառաց լոյսըն ծածկէ ,
Մաքուր կտաւօք ըզնա պատէ :
Բանն որ ըզլրանըս սահըմանէ ,
Ի բարբառոյ բանից լըռէ .

Որ շունչ բոլոր զգայնոց շնորհէ ,
Հաստատելոցն ոչ տարբերէ :
Զաչս որ զանդունդըս նըկատէ ,
Յոխակի ձեռօք կափուցանէ .
Զունկն որ լըսեալ շըրթանց լսէ ,
Գիպուած մահուն խըփուցանէ :
Զձեռսն որ զերկինըս հաստատէ ,
Երիզապինդ պարանդէ .
Զոտս որ ընդ օդ վերաթեւէ ,
Տըկար բնութիւն կապուոյ կայէ :
Խունկ և զըմուռ նըշան թաղման
Մարմնոյն բերին անապական .
Որոյ եթերն է օթարան ,
Մարմնով եդաւ 'ի նոր տապան :
Վիմաւն ընդդէմ եդեալ դըրան
Զվէմն արդելլին ըզգլուխ անկեան .
Եւ զարեգակն անստուերական
Ի գուբ ծածկեն նըսեմական :
Անքուն էիցըս պահապան
Ննջէ մահուամբ 'ի գերեզման .
Եւ յոր երկինք չեն բաւական ,
Կընքի յայրին պարագրական :
Ողով մեռեալք համանգամայն
Յառնեն ձայնիւ կենդանական ,
Ինքըն մեռեալ անօրինական
Կայր 'ի բանդին դըժոխական :

Յորժամ տարածն զօրքըն վերին ,
Զինուք սրահեն ազգ երկրածին .
Եւ արրատութեան մեր բարձողին
Կանգնըն որով եւ զըս բերին ։
Նընջէր առիւծն 'ի խոր բանդին ,
Արտընչելով չար գազանին ,
Այն որ ըղձնունդս ապատեցին
Կըրեաւ սրահէր յորովայնին ։
Մինչեւ ժայթքեալ զամենեսին ,
Զինքըն կորցս գլուխ 'նորին ։
Զատարն առեալ ըղդերորդին ,
Դարձոյց անդրէն առ հայրենին ։
Ոչ արդեւեալ մեծին երկրաւոր
Յեղեց ըղմեծին հողեւոր ,
Այլ յառաւօտն երրորդ աւուր
Ծագեաց յերկրէ լոյս երկնաւոր ։
Ի կոյս մօրէ ծընեալ մարմնով ,
Ըզկուսութիւն ոչ խախտելով .
Ի կոյս երկրէ նոյն յառնելով ,
Եւ զկնիքըն ամբողջ խակ սրահելով ։
Մի զօրական զնորա անեալ
Դասք զինուորացն , եղեն մեռեալ .
Ըզկարգարեւ վէմն բարձեալ ,
Ահեղ լուսով վերանորոգեալ ,
Զայն ուեռեալ կանանցն երգեր ,
Նըման փողոյն հրեշտակն գոչեր .

Յարեաւ խաչեալըն զոր խնդրէք ·
Մի զարհուրէք, այլ խընդացէք ·
Աշակերտացըն պատմեցէք,
Եւ զՆուայն պատուէրըն լըցէք ·
Ի Գալիլեա երթայք անդէք,
Եւ աշխարհի քարոզեցէք ։

Այլոցն երթեալ վաղվաղակի,
Բայց Մարիամ կայր յարտասուի ·
Նոցա 'ի գնալըն պատահի,
Յողջոյն տուեցն երկրպագել ։
Մարիամու Մագդաղենի
Ցուցաւ Նըմին պարտախրդանին ։
Կարծէր ըզնա այգեպանն,
Բարձող մարմնոյն տիրականին ։
Ծանօթըս առայ ըզնա ձայնով
Ի յանուանէ զնա կոչելով ·
Զոր Մարիամ բաղձանօք սիրով
Հըպել 'ի Նա փափաքելով,
Տէրն արգելու զնա ասելով,
Մի մերձենար զգալի զըթով ·
Զի չեմ ելեալ առ Հայր անդրով,
Աստուածային զգեցեալ մարմնով ։
Եւ յերկնային ծառըս կենաց
'Նախ ապաւինեալքն են մերձակաց,
Եւ ոչ Եւայ հըպմամբ ձեռաց,
Որ հան զԱդամ յանմահ փառաց ։

Այլ գլխաւորութեան պատուիս առաջին
Պարտ է նուիրել Հօրըն վերին ,
Որ իւր բնութեամբ է Հայր յերկին ,
Եւ ձեր շնորհօք աւազանին :
Աստուած կոչի իւր ըստ մարմնոյ ,
Զի է սա մասն արարածոյ .
Եւ ձեր Աստուած բնութեամբ բարւոյ
Տէր և ստեղծիչ գոլ յանգոյոյ :
Ընդ հակառակս ընթանալով
Պետրոս և Յովհաննէս սիրով ,
Զպատանւոյն լոկ տեսանելով
Եւ զվարշամակն ուրոյն գտնելով ,
Ի հրեշտակաց ծաղեալ գոլով
Առ 'ի պատիւ մեծ խորհրդով ,
Զինքըն գըլուխ մեր պատմելով
Եւ զմեզ անդամըք յօդելով :
Բայց զինուորացն անդէն դարձեալ ,
Հրէից պատմեն զհրաշքըն տեսեալ .
Զորս արծաթով կուրացուցեալ ,
Ցիւրոցն ասեն զնա գողացեալ :
Ի նմին աւուր յայլում գիւղից
Յայտնի երկուցըն Կղէովպայնից .
Ըզվիճմանէ նոցա եհարց ,
Իւր ըզտորդեալս կըշտամբեաց :
Ի Մովսիսէ կարգաւ պատմեաց
Զոր վասն ինքեան նա գուշակեաց .

Ի բեկանել հացին յայտնեաց ,
Եւ նոյնժամայն զինքըն ծածկեաց :
Եւ մինչ դարձան և պատմէին
Առաքելոց մետասանին ,
Միաշաբաթն երեկոյին
Եմուտ փակեալ դրամբք առ նոսին .
Շնորհեաց նոցա փըչմամբ զՀոգին ,
Զայն որ կորոյս մարդն առաջին .
Իշխան արար յերկրէ յերկին
Թողուլ ըզմեղըս մարդկային :
Յորում Թովմաս անդ ոչ գոլով,
Յաւել նոցա չհաւատալով,
Յետ ութ աւուր դարձեալ գալով,
Յոր հաւատոց շօշափելով,
Զխոցուած ակդին ձեռամբ տեսեալ
Ի նոյն մարմինն որ յարուցեալ,
Տէր և Աստուած խոստովանեալ
Զայն որ 'ի խաչըն բեւեռեալ :
Ոչ յարութեամբն այլափոխէր ,
Կամ 'ի նուաստից փառաւորէր .
Որպէս և չար ոմըն կարծէր ,
Անապական նա ոչ ասէր :
Վըկայէ բանն ընդդէմ չարաց ,
Զոր յարուցեալ վասն իւր ասաց ,
Թէ նոյն մարմին եմ յասկերաց ,
Եւ 'ի յառնելս ոչ փոփոխած :

Բայց աշակերտք նորա գնացին
Ի ժամադրեալ նոցա տեղին,
Այլակերպեալ զտէրըն տեսին
Որպէս երբեմն 'ի սուրբ լերինն:
Ութն 'ի նոսա յերկուանային,
Բայց 'ի յերկիցն՝ որ նախ տեսին:
Տէրըն խօսէր մետասանին,
Եւ առաքէր յերկիր զնոսին.
Ըզհեթանոս աշակերտել,
Երրորդութեամբըն մըկրտել.
Ըզպատուիրանն ուսուցանել,
Ինքըն յաւէտ ընդ մեզ լինել:
Դարձեալ յայտնի այլանըման
Առ ծովակին տիբերական,
Ցուցեալ գործովքըն հրաշական
Զինքն 'ի բնութիւն արարչական:
Զըկանց ծովուն հրամայելով,
Յուռկանս նոցա ըմբըռնելով,
Եւ նորաստեղծ հաց առնելով,
Զուկն 'ի կրակին խորովելով.
Եւ ընդ նոսին ճաշակելով,
Զիւր զյարութիւնըն ստուգելով:
ԶՊետրոս երից հարցանելով,
Զուրացութիւնըն քաւելով.
Եւ զկընի իւր հրաւիրելով,
Զարչարանօք խաչակցելով:

Եւ զՅոհաննէս յաւէտ սիրով
Ասաց պահել բանիւն իւրով։
Եւ 'ի յաւուրըս քառասուն
Զինքըն յայտնէր ամենեցուն.
Խօսէր ըզբանն ոգւոցն արթուն,
Արքայութեանն առնէր գիտուն։
Եւ 'ի լընուլ քառասնեկին,
Ըզկերակուր խընդրէր վերջին,
Զմասըն ձըկան խորովածին
Եւ ըզխորիսխ քաղցըր մեղուին։
Հանէ զնոսա Բեթանիա,
Իբր ըզՄովսէս լեառըն Սինեայ.
Եդ 'ի վերայ գըլխոց Նոցա
Զձեռն իւր յօրհնել բանիւ զնոսա.
Եւ զաւետիսըն հայրական,
Որ է Հոգին սուրբ մաքրական,
Ասէր ինքեամբ առաքական,
Որպէս մի տէր և համակամ։
Եւ 'ի յերկինըս վերացեալ,
Վերայ Թեւոց հողմոց ելեալ.
Նովին մարմնովըն համբարձեալ,
Որով մեռաւն և յարուցեալ։
Նըստոյց յաջմէ Հօրըն փառաց
Զբնութիւնս անկեալ կոխան դիւաց.
Երկըրպագեալ 'ի հրեշտակաց
Եւ յամենայն երկնաւորաց.

Մինչեւ ներքոյ գարշապարաց
Նորա գլխին հոյլք թշնամեաց
Աներեւոյթ հակառակաց
Ի երեւելի մարդկան չարաց :
Յորժամ փառօք Հօր եկեսցէ
Նովին մարմնովն որ 'ի կուսէ ,
Զքնութիւն մարդկան յարուցանէ ,
Եւ ըստ գործոց հատուցանէ :
Զարդարն ըղձալ վարձիւ հասցէ ,
Յաւիտենից հրովըն տանջէ .
Իսկ որ բարիքն են՝ սրբակէ ,
Ընծայ փառօք փառաւորէ :
Զեկեղեցի հարսնացուցէ ,
Եւ ընդ իւրեան միաւորէ .
Որպէս անգամ 'ի գլուխ յօդէ ,
Եւ ժառանգորդ Հօր իւր առնէ :
Ի հրեշտակաց դասըս կարգէ ,
Զի զանկելոց թիւըն լցցէ .
Զանձառ խնամսըն ծանուցէ ,
Բանըն բանիւ վարդապետէ .
Մինչեւ նըման իւրեան գործէ ,
Որպէս խոստումըն անսուտ է .
Զի տեսանի 'ի նոցանէ
Իբրեւ ըղձայր և 'ի Հօրէ :
Բայց վայելումըն թէ զինչ է ,
Եւ ոչ մտօք ոք հասանէ .

Անմահութիւն բանըս գիտէ ,
Խանախտութիւն միայն թէ է ․
Ըղձարանեաց անուն բերէ ,
Զոր Միածնին Հայր իւր առնէ ․
Եւ ինք փեսայ անվախճան է ,
Եւ յաւիտեան թագաւորէ ։

Արդ որ այսպէս հաւատացէ ,
Որպէս և գրեալքս 'ի սկզբանէ ,
Զոր ծանուցաք փոքր 'ի շատէ
Յուղղափառաց հարցն աւանդէ ,
Զարքայութիւնըն ժառանգէ ,
Յանբաւ բարիսըն վայելէ ։
Եթէ գործովք հաւատարէ ,
Եւ ոչ նովին մեռուցանէ ։

Բայց որ արդէն չհաւատացէ ,
Այլ ընդդիմակ և ներհակ է ,
Յորժամ յերկնից եկեալ տեսցէ ,
Յակամայ կամս երկըրպագէ ․
Թէպէտ և ոչ օգուտ բերէ ,
Այլ անձամբ զանձըն կոծեսցէ ։
Զորս գեհենիւ դատապարտէ
Զչհաւատացեալն 'ի նոցանէ ։
Իսկ մեք հանցուք փառս ընդ նըմին
Հօր և Հոգւոյն միշտ յարակայ ,
Յանցեալն յայժմուս և յապագայ ,
Երրորդութեանըն մըշտակայ ։

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ԵՐԳՈՂԻՆ

ՄԱՍՆ Աստուծոյ խօսել զայս բան
Ինձ ոչ էր անկ և ոչ ներման.
Զի սիրտ յիմար անձն անարժան
Ոչ է տեղի իմաստութեան:
Պարտ է սրբոյն սուրբ բնակարան,
Եւ մաքրելոյն մաքուր կայեան.
Ապա լինել աստուածարան,
Եւ անճառելին վկայարան:
Բայց փափաքումն ոգւոյս բնական
Ստիպեաց քան զոյժըս գերական,
Եւ զգթութիւնքն հայրական
Համարձակել ետ ինձ այսքան,
Ի գրել բանիւ աստուածական
Ոտիւք չափել ներբողական
Վասն էութեանն անհասական
Եւ Բանին Հօր մարդեղութեան.
Ոչ նորաձեւ և անիրչան
Յինէն շինած տանից հիման,

Այլ՛ ի վերայ անշարժական
Վիմին եղեալ սա կեփայեան :
Եւ զի տուրք է պարգեւական ,
Եւ ոչ բանիւ անչափական ,
Մի՛ յոյս լեզուաւ պարսաւական
Բարբառեսցի անփակ բերան :
Քանզի բազումք նախ վարեցան
Այսպէս յիմաստս աստուածական ,
Զի արարչին բանի բնութեան
Տացեն այսու բան գովութեան :
Որպէս դաւթեան սաղմոսարան ,
Եւ Սողոմոն առակարան .
Մեծըն Գրիգոր աստուածաբան ,
Եւ սուրբ Եփրեմ ասորական :
Նոցին և մերս հետեւանան
Բան դուզնաքեայ համանըման .
Ոչ մի տառիւ վերջ յանգական ,
Զի մի՛ ծուլից լուր ծանրանան ,
Այլ խրատարար փոփոխական ,
Զի ընթերցողք ոչ ձանձրանան :
Թէ արժանի առնէք յիշման
Զիս ըղձներսէս անձն անարժան :
Ի թիւ եւթանց տանց հարիւրոց
Կատարեցաւ բանս հաւատոց .
Ի վեց հարեւր թուական Հայոց ,
Յիսնըն հարեւր չորք Հռոմոց :

Ի տկարանալ հռովմայեցւոց
Եւ զօրանալ հագարացւոց ,
Ընդ բորբոքել մեղաց մերոց
Յոյժ բարձրագոյն քաղդէացւոց ,
Մասուտ Սուլտան յիկոնացւոց
Եկեալ յաշխարհ գերմանացւոց ,
Առեալ զաւանս քաղաքայնոց
Մինչ 'ի կողմանս եփրատացւոց ։
Իսկ հայրապետ հանուրց Հայոց ,
Անուն զուարթուն Գրիգորիս ,
Ժառանգ նախնոյն սուրբ աթոռոյ ,
Անուանակիր սեռ ազգայնոց ,
Ի Ծովանուն դղեկէն ելեալ ,
Զոր սեփհական ինքեան շինեալ ,
Ի յանառիկս ամրոց հասեալ ,
Հռոմայական կլայ յորջորջեալ ·
Յորմէ նախնի տերանցն ելեալ ,
Յահէ նեղչացըն փախուցեալ ,
Ըզսա կամաւ սըմին տըւեալ ,
Լինել յաւէտ սեփհականեալ ։
Արդ յայսպիսում ժամանակի
Դառն և դըժնեայ և անբարի ,
Յորում բնակեմք յայսմ ամրոցի
Ի գետապատ քարանձաւի ,
Ի յԵփրատայ պարագրելի ,
Որ յԱգենայ քառորդ հոսի ,

Յելից կուսէ հեղին չարժի ,
Ի մեւս փոքուէ մըտիւք պատի ·
Ինքս ամբարձեալ լեր ըզկըղզի ,
Յալեաց ծովուց ոչ երկընչի ·
Ի մարդկանէ ոչ պարհուրի ,
Զի է հնարից անյաղթելի ։
Զոր տնօրինիչն ամենայնի
Տեղ պատրաստեաց ապաւինի
Սուրբ աթոռոյս ըսքանչելի
Ի բարկութեան ժամանակի ·
Յորում նեղիմք յանօրինաց
Ի յարտաքին չար գազանաց ,
Եւ ոչ նըւաղ ՚ի դըրժանաց
Ի սուտանուն քրիստոնէաց ։
Յորոց փըրկիչըն մեր կենաց
Մինչեւ ցայսօր ամբողջ պահեաց ,
Որք և յապայն ժամանակաց
Յանձն եղիցուք նորին կամաց ։
Ի սմա գրեցի զբանս հաւատոյ ,
Ոտանաւոր տաղիւ չափոյ ,
Ես անարժան գոլով բարւոյ ,
Ներսէս եղբայր տեառնըս մերոյ ։
Ոչ ՚ի յինէն բան ըստ մարմնոյ ,
Զի իմաստ ոչ է յիս մարդոյ ·
Այլ ՚ի տառից սըրբոց նիւթոյ ,
Որք խօսեցան բըխմամբ Հոգւոյ ։

Փոքըր բանիւ կարճ 'ի կարճոյ
Միայն ըղձխտաըն ցուցելոյ ,
Ընթերցողաց վերծանելոյ
Արագ մըտացըն հասելոյ ·
Հակառակաց պապանձելոյ ,
Որք ընդդիմակք են հաւատոյ ·
Եւ ճըշմարտից հաստատելոյ
Մանկանց սըրբոյ եկեղեցւոյ ։
Ի յիշատակ բարեաց հոգւոյ
Բարեպարիշտ ծնողաց մերոյ ,
Յազգէն գոլով Պահլաւունոյ
Համատոհմից արշակունւոյ ,
Եւ հարազատ եղբարց մերոյ ·
Նախ վեհագոյն տեառնըս իմոյ ,
Որ է յաթոռ սուրբ Գրիգորոյ ,
Գոլ հօմանուն համանմանոյ ։
Եւ երկոցունց աշխարհայնոյ ,
Գերփառունակ պատուեցելոյ ·
Վասիլ անուն ըստ արքունոյ ,
Եւ զօրավար կոչեցելոյ ·
Եւ Մարեմայ քեռ ընտրելոյ ,
Ի յայրութեան բարի անելոյ ·
Որ յետ մանկանց՝ որ ըստ մարմնոյ ,
Ստանայր մանկունս ըստ Աստուծոյ ։
Եւ համօրէն նոցին ծնընդոյ
Յոգնաշաւիղ բարեզարմոյ ,

Որք կենդանիք յաստիս լուսոյ ,
Եւ որք ննջեն առ Աստուծոյ ։
Զոմանց հայցել միշտ պահելոյ
Խաղաղական կենօք բարոյ ·
Զոմանց խնդրել ժամանելոյ
Ընծառ կենացն հանդերձելոյ ։
Եւ խնդրողին զբանըս գրոյ ,
Երիցագոյն եղբօրորդոյ ,
Որ Ափրատ յորջորջելոյ
Ըստ նախնեաց հարցն անուանելոյ ,
Սա եղիցի պատճառ բարւոյ
Յիմաստութիւն կրթել հոգւոյ ,
Ի սորինայնոցս ամբառնալոյ ,
Եւ յերկնայինսըն հըպելոյ ։
Եւ բոլորից հնազանդելոյ
Այամ աւանդից աստուածայնոյ
Տացէ Յիսուս պարգեւ բարոյ
Այժմ և յաւուրն իւրում վերջնոյ ·
Ի փառըս Հօր , պատիւ Որդւոյ ,
Ի գոհութիւն տուողին Հոգւոյ ,
Որ միշտ երգի յարարածոյ
Յիմանալեացն և 'ի զգալոյ ։

# ՆԵՐԲՈՂԵԱՆ

ԿԵՆՍԱՏՈՒ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

ԱՌ Ի ՍՐԲՈՑ

ՀՕՐԷՆ ՄԵՐՄԷ

ԴԱՒԹԷ

ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԷ

ԱՍԱՑԱՒ

ՈՏԱՆԱՒՈՐ ՉԱՓՈՎ

ԱՍՏԱՆՕՐ

ԵԴԱՒ



Ոչ հատուցիր մարդ եղանիր
Աստուած Հայր.

Rosardini des. G. Bozza inc.

# ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ
# ՆԵՐԲՈՂԵԱՆ
# ԿԵՆՍԱՏՈՒ ՍՈՒՐԲ
# ԽԱՉԻՆ

ԲԱՐՁՐԱՑՈՒՑԷՔ ԶՏԷՐ
*Աստուած մեր միաբան,*
*Մարգարէ՛ն յառաջ ձայնեաւ առ*
*ձեզ հրամա՛ն.*
*Երկիր պագէք պատուանդանին ոտ-*
*քու՛նական,*
*Աստուածաբարձ սրբոյ խաչիս մեր*
*փրկութեա՛ն:*

Պատմեմ և ես ըզնոյն ազգումն բարձրանոյն ,
Յայտնել ըզխորըս նախանձաւըն քըննութեան ։
Զի օրինակըն թէ Սիոն ճըշմար-տութեան
Յիշոյելէ զայս պահանջէր պա-տիւ արժան ,
Ի յապացոյցն որ էր միայն ըստու-գութեան՝
Երկըրպագել Տեառն Աստուծոյ տալով հրաման ,
Ես՝ որ յայտնի եղէ տեսող Աստուա-ծութեան՝
Պարտիմ տանել զայս հասարակ ո-րոց աստ կան ։
Զի զոր տեսէք դուք, ժողովուրդ հանդիսական ,
Ոչ յարացոյց որպէս Սինէն տեղ գիտութեան ,
Այլ այս նըշանըս քառաձև տէ-րունական
Տաճար սեղան է և աթոռ աստուա-ծական .
Նա՛ և լեառն իմանալի անհասա-կան ,

Ուր յորդորեմք երկրպագել ձեզ
միայն ։
Դուք · որդիք նոր Սիոնի նորոյ
ծննդեան ,
Օրհներգութեամբ պատուել զնա
էք պարտականք ։
Եռափափուք գերապատուադ է
այս նշան ,
Աստուածայինք · յերկիր մածեր
իւր յանդիման ․
Զի սա 'ի կեանս է փոխադրեալ որ-
դւոց մարդկան ,
Որ հրեշտակաց և երկնայնոց է սփի-
հական ,
Ի հեշտութեանց գոլով այն զէն
արիութեան ,
Եւ յաշխարհէս ըղձից՝ հոգւոց վեր-
ածական ։
Արդ սրբանեաց մեծաց բարեաց
եղեալ պաշտպան ,
Իւր գոհութիւն մատուցանել մեզ
է արժան ․
Եւ գովասան երգոյս եղեալ կեցու-
ցական ,
Մինչ 'ի խոնարհ երկիր պագէք ա-
մենեքեան ։

Այլ և ըղձանք և ըղձըլուծ կիրս
մարմնական
Եդեալ 'ի բաց , Թողցուք այսօր
յերկնից կայան :
Քանզի ոչ նայիմք 'ի սուտ փայտ
եղական ,
Այլ որ 'ի սա է Բանն անեղ մեզ
յանդիմանն :
Ոչ է ատաղձ միայն յերկրէ տունկ
նիւթական ,
Ուր զօրութիւն է կատարեալ Էիցս
համայն .
Այլ որ հրակեալ եմք կարօտ բուն
մաքրութեան ,
Մարմին գոլով ախտից անդի ներ-
գործութեան :
Քանզի նորին մաքուր երամ սրով-
բէական
Թևօք ծածկեալ թերևս մատչէր
'ի պաշտաման ,
Հողոյս ապա մտքեան պիտոյ զգու-
շութեան՝
Յոլժոյն մատչել աննիւթ հրոյ տա-
տուածութեան :
Ո՛վ սրխրալի մեծ խորհրդոյս
յայտնութեան ,

Ցորժամ քրիստնեայք ըղձալըմանուն
խաչիս նշան ·
Որոյ բնութիւն է փայտ եկեղս միա-
բան ,
Եւ սեռըն մի յորոյ յերկրէ ծառք
զանազան ·
Իսկ ձեւըն խաչ, որ է յայտնի գոր-
ծի ապանման ,
Բայց իմանի խաչ Աստուծոյ կեն-
դանական :
Ո՞վ յառաջեալս ոչ հիացի լը-
ւեալ զայս բան ,
Զգործի ազատման եղեալ կենաց
ներգործական :
Տեսակ սորա է գուժարկու մեռե-
լութեան ,
Եւ զօրութիւնն արագ առ կեանս
վերածական :
Բնութիւն ունի մահու ընկոյն
համանըման ,
Եւ զօրութեամբ եղեւ բաշխօղ ան-
մահութեան ·
Զի Ճըշմարիտ ալուող կենաց Աս-
տուածըն Բան ,
Առ հանգուցեալ՝ յեղաշըրջեաց
գըլխոյ նըման :

Յիսուս որ կեանս մահճուամբ բաշ-
խեաց անապականն ,
Եւ խաւարաւ լոյս տարածեաց ի-
մացականն ,
Նովաւ և սա ցուցաւ մեզ խաչ սա-
տուածականն ,
Զոր և առեալ մի՛ ոք կալցի պատկա-
ռականն :
Զի է պարծանք ընտրեալ և Թագ
արքունականն ,
Որպէս գրէ Պաւղոս անօԹն այն
ընտրութեան .
Տիմոթէոս որդեակ , լիցիս 'ի խրա-
խութեան ,
Անամօթ .քարոզ խաչին վըկայու-
թեան .
Կըցորդ ունիս ըղզօրութիւնն ան-
պարտականն ,
Որով Աստուած արարածոցս եղեւ
պաշտպան .
Զոր 'ի Ճառելըն կորուսեալքն յի-
մարանան ,
Այլ փրկելոցս է զօրութիւն աս-
տուածականն .
Նովաւ և եմ ես յերաշխէպս յու-
րախութեան ,

Որ ոչ ունիմ՝ անօթ ըղձալըն փըր-
կական ։
Ապա մահու այս գուժարկու-
սուրբըս ՚նըշան ,
Ու պատկառանք՝ այլ պարծանաց է
պարծական .
Վայրըն զի մահ եղեւ 'ի սոյն ոչ
տըրտմական ,
Այլ որում Աստուած մարմնով
մարդկան փոխան ։
Որոյ զուարթուն գերեզմանին այն
պահապան ,
Քաղցրիկ հընչէր տըրտմեցելոցն ա-
ւետեաց բան .
Զ Յիսուս խնդրէք ըղձաչելեալ
տէրըն իմ 'ի ձայն .
Յարեաւ կանխաւ , մի՛ այլ ողբայք
զանմահըն Բան ։
Ուսի՛ր , Եկեղեցի , զխաչիս անու-
նըս թէ ո՞րքան ,
Ի սուրբըն հրեշտակաց տեսանելն
խըրեանց արուեալ նըշան ։
Է սա նըշան աստուածային սիրոյն
մարդկան
Սեան անապակ և անսայթաք հաս-
տատութեան .

Զի մերկ յայտնեաց զայն միածին
Որդին և Բան ,
Որ մերկացաւ աստ 'ի խաչին մեղաց
փոխան ·
Տըւեալ յայտնի հօրըն գըթոյ մեզ
զըրաւական ,
Որք ապրեցաք , լինել 'ի նա միշտ
ապաստան :
Նոյն և որ զիւր եցոյց ըզվէրն
անզուգական ,
Բարեկամաց ես մեռանիմ ինոց փո-
խան :
Արդ 'ի մահուն եղեալ 'ի յայս սե-
ղան զենման
Պատարագին ախեղերացըս հաշտու-
թեան ,
Եւ տակաւին աստ տեսանի 'ի տա-
րածման ,
Անմեկնելի միշտ միացեալ մինչ յա-
ւիտեան :
Բարձաւ միայն ըստ մարմնական
անօրէնութեան ,
Եւ զօրութեամբ նըստի 'ի աեղըս
հաճութեան ·
Ցընցուղ արեանն 'ի բեւեռացն է
յայտնաբան ,

Որ կայ մածեալ դեռ 'ի յանդիման
անապական ։

Արդ, ժողովուրդ, սարսափեսցես
լսելով զայս բան ,
Ոչ մերձենալ սմա իբր 'ի լոկ փայտ
նիւթական .
Այլ համբուրիւ հըպեալ 'ի խաչս
ոք սիրական ,
Յինքն ընդգրկէ ահեղ ըզփառս աս-
տուածութեան ։
Տէրն իմ Յիսուս սմա կայ բաղ-
մեալ մեզ յանդիման ,
Ընդէ՞ր հեղգամք ողջագուրել զսու-
րբն արժան ։
Զի թէ հանգչէր նա 'ի խորանն օ-
րինական ,
Յիւր զենարանս որչափ լիցի մեծ
անվախճան ։

Լեառն Աստուծոյ պարարտ է
խաչըս պատուական ,
Ուր հաճեցաւ լինել 'ի սպառ ան-
զրաւական ։
Այլև կամք սա անուանի իւր սեփ-
հական ,
Յորում հեծեալ դարձոյց զերեալ
ազգըս մարդկան ։

Զորէքդիմի կառացըն տիպ է և
նըման,
Քառառաջեայ կառըք խաչիս և
բազմական ·
Ուր բարձրացաւ Էմմանուէլն յար-
քայութեան,
Ցաղթահարեալ ըզթըշնամին մինչ
'ի վախճան :
Ահա ցուցաւ դու ճըշմարիտ կառք
տիրական,
Զարքայն տեսցուք բազմեալ յա-
թոռս անհասական ·
Որք ճաշակէք ըզնա այսօր և յա-
ւիտեան,
Հաւատացէք զայս զենարանս իւր
բնակարան :
Նա և ըզտեղն ուր այն բեւեռքն
'ի խոց հարան,
Տեսէք ահա ոչ կըցեցաւ, դեռ կայ
նըշան :
Առ որ հարցեալ մարգարէին Նախ
տեսութեան,
Որ հիանայր ընդ սոսկալին անօրէ-
նութեան ·
Տէր իմ, ընդէ՞ր վէրք 'ի քո ձեռս
անպարտական,

Որ պատուեաց ըզգաստակնիքըն
մարդկութեան ։
Պատասխանէ. Ցիմ սիրելեացն 'ի
հրէաստան
Ես ընկալայ, և զայս պահեմ 'ի յա-
պագայն ։
Այս հաստատէ մեզ ըզղենումն
անմահըն Բան ,
Որ յարակայ պատարագի դեղ քաւ-
ութեան ։
Զի անմահըն մեռանի աստ մեր փո-
խան ,
Եւ նոյն մընայ յանմահութիւնն ան-
ճառական .
Ստուգապէս միշտ ճենճերի զոհ
փրկութեան ,
Եւ մընայ դարձեալ 'ի կեանս իւր
սեփհական ։
Գոլով Աստուած 'ի ծոցըն Հօր ան-
տեսական ,
Եւ 'ի յերկրի մարդ համագոյ հո-
ղոյս բնութեան .
Նոյն և Աստուած այսպէս ընդ
Հօրն իւր էական ,
Յոր ճըշմարիտ մեք հաւատամք ան-
կարծական ։

Անպարագիրն Աստուած Հիցս ան-
հասըն Բան
Պարագրեցաւ մարմնով յարգան-
դըն կուսական.
Եւ ծընաւ յօգմամբ մարմնոյ անյօ-
դական,
Աստուածածին եղեալ ծընօղն աս-
տուածական:
Որ մտանեցաւ 'ի սպանդ խաչի ան-
պարտական,
Մըկըրտեաւ Աստուած 'ի մահըն
մարմնական:
Ուստի և խաչըս կընքեցաւ խաչ
տիրական,
Զոր ողջունեալ՝ ելից շնորհօք Աս-
տուածութեան:
Նոյն ինքըն նա, յոր հաղորդիմք
ամենեքեան,
Պատարագի 'ի սմա պըտուղ նորո-
գութեան:
Արդ լըւարուք ամենեքեան ձայն
ցընծութեան,
Հաւատացեալ ուղիղ բանիս դաւ-
անութեան.
Եւ ըղհոգւոյ աչըս վըճիտ և հրա-
շաղան,

Տուք լըծակից մարմնոյ աչացըս տե-
սութեան ։

Որպէս և սա հայի 'ի խաչըս սգայ-
ական ,

Տեսցէ մըտօք ըզՄիածինն 'ի տա-
րածման ,

Եւ տակաւին զկըրկին ցընցուղ
ջրոյ և արեան

Ի կենարար կողէն կայլակ՝ մեղաց
ջընջման ,

Առողջանող և բուսուցիչ սուրբըն
սերման ,

Որ բեղնաւոր ծընաւ հասակըս զա-
նազան ։

Ունայնութեան իւրում փառացն
առեալ փոխան ,

Զերկըրպագուս ընդ տիեզերս որ
նոր ծընան ,

Ուր բարձրացաւ խաչըն պարծանք
և ապաստան ,

Եւ նա օրհնի 'ի ձեռս նըշանըն լի
բերան ։

Քանզի ուր խաչ , անդ և խաչեալն
է յանդիման ․

Խաչելութիւն աստ հաստատեալ
կըրկին անդամ ։

Զի հաւատոց Պաւղոս ասաց զայս
ստուգաբան ,
Գաղատացւոցն յորժամ գրերայ
մեղադրական :
Այսա ուր խաչս խոկ է մրկայ հաս-
տատութեան ,
Խոստովանիմք լինել տեսող խաչե-
լութեան :
Արդ որք տօնէք խաչիս հանդէս
քրիստոսական ,
Ի Գողգոթա տեսէք ըղձեղ 'ի սպաս-
տամամն .
Անդ՝ ուր շիրիմն էր նախահօրըն
հանդըստեան ,
Որ կանգնեցաւ՝ [illegible] ըղխաչս իւր
գաւազան :
Քանզի փայտիւ մխրաւորեալ հինն
այն Ադամ,
Անկեալ դընէր 'ի յայն խորշոյն
տարտամութեան .
Առ որ հասեալ որ սրբացաւ յերկ-
նիցն Ադամ,
Գըլթայր 'ի նա իբր 'ի սպանկեր իւր
և նըմման .
Եւ երեւեալ որդի Նախնոյն հօր
ներական ,

Արդարութեամբ անմեղ մեռանըն-
մին նըման .
Զըգեաց 'ի վեր զթաղեալըն 'ի տիղ-
մըն Գաղաթան ,
Յերկնից երկինս 'նըստոյց յաթոռըն
հայրական .
Կախեալ 'ի փայտն , որ անեղծ էր
ութական ,
Յեղաշըրջեալ՝ արար սըրբոցըն սըր-
բարան :
Այլ և ըզտեղն , ուր նախահայրն
էր 'ի թաղման ,
Արար որդւոցըս ցընծութեն խրախ-
ճանարան :
Նա և եդաւ 'ի գանձարան 'ի հան-
դըստեան ,
Եւ զայն շնորհեաց մեր յաղու-
թեանըն գլխաւական :
Արքայ զօրեղ տէր և յաղթող
անպարտական ,
Որ պարտութեամբ կանգնեաց ըն-
շանըս յաղթական .
Եւ զայս գործի այնքան շընորհայըն
բաշխական ,
Սոսցաւ աթոռ՝ բնակել յաւս և
անվախճան :

Արդ որ կամի զխակըն խաչիս մեծ-
անձնութեան ,
Ի հանդերձեալն ակըն կալցի ստոյգ-
գիտութեան :
Թէպէտ բազումք բարեպաշտել
աստ կամեցան ,
Եւ ցուցանել ըզսա ահեղ յաչըս
մարդկան ,
Ոսկի՛ ձոյլըս կռեցին խաչանըշ-
ման ,
Յակո՛նցըն շափեղից ցուցեալ ըզնա
զարմանազան ,
Ոչ թէ այսու փառացն հասին որ-
քանութեան ,
Այլ ըզողըզայ բարըս մարդկան ձըր-
գեալ միայն 'ի փափագման :
Այլ սա էանց գեր երկնայնոցն
իմացութեանց ,
Յերկնից երկրին անյարացոյցն ե-
լեալ սահման :
Նըստի 'ի փառսն ուր Սրովբէիցն է
պար շըրջան ,
Որ միշտ օրհնեն ըզսէրն խուրեանց
աստ զանազան .
Որպէս լըւաք մարգարէիցն , որոց
տեսան

Ըզքերովբէսըն բազմաչեայ և ըզ-
Սրովբէսըն վեցթեւեան .
Զեռաձեւակ երկքերրեանըն յա-
րաձայն ,
Երգարանին տեառն որ 'ի խաչս 'ի
մի բերան :
Որում ցուցաւ նախ յարացոյց
ազդեցութեան ,
Յօրինական խորան սեղանըն քաւ-
ութեան ,
Յորոյ անկիւնսն եդեալ անբան ա-
րեան նըշան ,
Լինէր կընիք ժողովրդեանըն հաշ-
տութեան .
Զի Քերովբէք անդ տարածեալ
էին շըրջան ,
Հովանացեալ ծածուկ տեղւոյն այն
սըրբութեան :
Խաչիս պատկեր էր քառաթեւ
սուրբըն սեղան ,
Գառն Աստուծոյ եբարձ 'ի սա զմե-
ղըս մարդկան :
Ի փորուածոյ ձեռացն ոտուքն ի-
ջեալ արեան ,
Յայթեալ ներկեաց զեղջերըք սորա
կարմրանըման .

Եւ Սերովբէքն ճըշմարտութեան հրաբերան ,
Ետուն յայնժամ նըմա ըզփառս երեքսրբեան .
Օրհնեալ է փառք տեառն ՚ի տեղւոջս արքունական ,
Աղաղակեն չորքՔերովբէքն բազմաչեան :

Եկեղեցի , եկ և ուսիր զայս ձայն արժան ,
Եւ լեր կըցորդ մաքուր հոգւոյն օրհներգութեան .
Փոխ հատուցուք դեսպէս ըզբանըս գովստան ,
Աստուածազօր սըրբոյ խաչին փառաւորութեան :

Օրհնեալես փայտ բըխատուական
Աստուածապարգ սուրբըդ ՚նըշան ,
Որ դու միայն երանութեան
Ցեիցս հասեր գերքան ըզբան .
Եւ պաշտնես պատիւ արժան
Ի մարդկայինս ազգէ համայն :
Երկրպագեմք ամենեքեան
Քեզ , փրկութեան մեր զէնարան :

Օրհնեալ ես , փայտ ոչ աղտակեալ ,
Յորում Քրիստոս է թագ եղեալ .

Որ 'ի տորին վայրս բուսեալ,
Ծայր քո յերկինս եղեւ հասեալ:
Տերեւախիտ կանաչացեալ,
Ցիրայեալ աղին ծաղկեալ.
Պտղովդ անձն եղերս լցեալ,
Որք յաշխարհի՝ քեւ յագեցեալ:
Օրհնեալ ես, փայտ ու զարդարեալ,
Որ յԱստուծոյ ես պաճուճեալ.
Ադին որնկայն գերհրաշացեալ,
Այնմ որ Քրովբէքն են շուրջ եդեալ:
Ի քեզ դիւրաւ մեր մերձեցեալ,
Ի մահուանէ դժոխոց զերծեալ:
Զերի շնորհաց այգոյ ծաղկեալ,
Փայտ դու կենաց ես Ճշմարտեալ:
Օրհնեալ ես, փայտ սուրբ բարեբար,
Քան զգեղեցիկն այն մահաբեր.
Զի նա պտղովքն ցանկաբար
Պատրեաց ըզկինն դիւրաբար.
Իսկ դու զորդի կուսին բարձար՝
Որ տարածեալն էր կամակար,
Եւ ճաշակեալ զկեղին յօժար՝
Զկեանըս մարդկան աղխաբար:
Օրհնեալ ես, փայտ սուրբ տէրունի,
Ցուպ՝ յոր անկեալն Ադամ հասանի.
Զոր նախ խնդրէր յոյժ բաղձալի,
Այսօր 'ի ձեռս առեալ կանգնի.

Գոհաբանօղ ձայնիւ լինի
Գաւազանիդ մխիթարի ։
Կենաց ես ծառ յոյժ բաղձալի,
Փայտդ՝ որ ըղձիւք միշտ պտղալի ։
Օրհնեալ ես, փայտ, կենաց տապան
Յիմանալի ծովու ծըփման,
Օժանդակող ոգւոց մարդկան,
Եւ մերձ յերկին վերածական.
Դուռն 'ի կողման քում՝ վերնատան,
Սուրբ տէրունի կողին բերան.
Ուստի հոգին ներմարդական
Արձակեցաւ հօր բարձրաձայն ։
Օրհնեալ ես, փայտ գերապարդեալ,
Տունկ Սաբեկայ տատ Ճըշմարտեալ.
Յոր Աստուծոյ գառնըն կախեալ,
Զմեղս աշխարհի անմեղ բարձեալ ։
Ոչ զԻսահակ միայն փըրկեալ,
Որպէս ըստուերն եղեւ գըծեալ,
ԱՅԼ զհամօրէն ազգըս գերեալ,
Մաքուր և սուրբ արեամբ գընեալ ։
Օրհնեալ ես, փայտ անդուխք կենաց
Յերկինս 'ի վեր Ճանապարհաց.
Նըշանեալ 'ի քեզ տէր հրեշտակաց,
Պաշտօն էառ 'ի հրեղինաց ։
Զոր 'ի բացուստ տեսեալ, տաւց
Դուռըն Յակոբ երկնից 'ի բաց.

Հրաշանալով դէմ քո վայրայ ,
Տուն Աստուծոյ զԲեթէլ կոչեաց :
Օրհնեալ ես, փայտ սուրբ և մաքրած ,
Ի յեգիպտոս նախ նըկարած .
Արեամբ սեւոյն անդըր կընքած
Ի սատակչէն եղէն զերծած .
Որպէս 'ի քեզ գառնըն մածած
Փըրկեաց զԱդամըն մահացած .
Եւ ըզմարդկան ոգիս էած ,
Յերկնից երկին լուսով կազմած :
Օրհնեալ ես, փայտ սուրբ դեռակոյ ,
Որոյ խորհուրդն յառաջ խաղայ :
Ծովուն հրաման Մովսէս քեւ տայ .
Ըզվէմն հարեալ, աղբիւր խաղայ :
Բայց տէրըն քեւ խրախոյս մեզ տայ ,
Զմիտըս պընդեալ առ ինք բառնայ .
Բազուկն 'ի քեզ ձըգեալ նորա ,
Պարտիչ եղեւ Ամաղեկայ :
Օրհնեալ ես, փայտ սուրբ, ամպեղէն
Գոլով և սիւն լուսոյ հրեղէն .
Կըրող ըզտապը աստուածեղէն ,
Զայն որ մեռաւ մեզ փոխարէն :
Յառաջընթաց մարդկան յԷէն
Յերկիրն՝ ուր կեանքն է հոգեղէն .
Յուսըս բարձեալ նըշան և զէն ,
Որ պատառես զյանկըն հրեղէն :

Օրհնեալ ես, փայտ սուրբ պատուարիչ,
Դու դառնութեան մեր անուշիչ.
Ի հաստատուն կեանըս մըտիչ,
Քաղցր և ախորժ ըմպոյն գործիչ:
Ի Մեռային նախ ջուրն աղդիչ,
Այս խորհըրդոյ կանխաւ գըծիչ.
Փայտ սուրբ, ջըրոյս մեր անուշիչ,
Եւ խմաստից մարդկան ուղղիչ:

Օրհնեալ ես, փայտ սուրբ Միածնին,
Նոյն տապանակ Հօրըն Բանին:
Սափոր յերկնից մանանային,
Եւ գաւազան շուշան ծաղկին.
Զի զերկոսին զմիտս և զմարմին
Պարախառնեալ ընդ Հօր Բանին
Կրեցեր 'ի քեզ 'ի հանդիսին,
Ներքոյ երկնիցըն խորանին:

Օրհնեալ ես, փայտ, վէմ խմացեալ,
Նոր քառանգիւն տախտակ գըծեալ,
Յորում Աստուած սոյդ ծանուցեալ
Մարմին և գիծ Բանըն ձեւեալ:
Ոչ 'ի Սինա օրէնս տըւեալ,
Այլ 'ի Սիոնի 'ի քեզ բաշխեալ.
Որոյ շնորհաց ըզգիլիկ ըմփեալ,
Աշխարհ ամէն յինք ժողովեալ:

Օրհնեալ ես, փայտըդ տէրական,
Իմանալի սուրբ գաւազան.

Որ, մինչ ցամաք անապատական,
Նաւուր զկաղնին արքայական,
Զայն ծոցածին Որդին և զԲան,
Սաղարթ փըթթեալ կանաչութեան.
Նա և 'ի քէն ջրոյն և արեան
Ծով ծաւալեալ ծիծաղական:
Օրհնեալ ես, փայտ սուրբ, դայխան՝
Զոր նոր Յիսուս յաւուրն բարձաւ.
Ընդդէմ մահու խրախուսեցաւ,
Եւ պատուելոյն վերայ ելաւ:
Զթագաւորեալ մեղուն կալաւ,
Արեգական ընդդէմ հարաւ.
Ըզքէն կախեալ զնոյն զօրացաւ,
Եւ սոյդ փրկիչ մարդկան ցուցաւ:
Օրհնեա՛լ ես, փայտ սուրբ Քրիստոսի,
Այնմ՝ որ Կուսին ծընաւ որդի.
Նա առ ըզքեզ ընդ Յայելի,
Եւ հար 'ի խորոխայն ծամելի:
Զճաշակ մահու իւր ըղձալի,
Արար նըմին դառն և լեղի.
Եւ ըզգետնեալ զչարըն յերկրի,
Ի սպառ մեռոյց անկանգնելի:
Օրհնեալ ես, փայտ ամէնօրհնեալ,
Ի շըրջանակ ծովուս ձըգեալ.
Կարթ վերածող մարդկան նըկեալ,
Որ ծանրութեամբն էր կորացեալ.

Բայց միշտային, որ անդ բուռնեալ,
Կարթ լարանով 'ի ջրեան արկեր.
Որ երբր ձագ մի ջրէ կապեալ,
Նոր Իսրայէլ եղեւ զերծեալ։
Օրհնեալ ես, փայտ, սուրբ աշտանակ
Ոսկեձոյլ ականակապ.
Գնդին լուսոյ ներպարունակ,
Ուստի ծագեալ լոյսն անքանակ.
Նշոյլ իւթն Հօրին էակ,
Նման յաշխարհս է հեղինակ.
Կնիք և շնորհ սուրբ անապակ,
Յորմէ ձըգեւք լոյս համարձակ։
Օրհնեալ ես, փայտ սուրբ փրկչական
Հրեղէն հայլին գոլով սեղան.
Զոր Սերովբէք յորժամ բարձեն,
Սուրբ ունելեաց կարօտացան։
Բայց դու, տեղի և բնակարան
Անանջրպետ նմին արժան,
Կրեցեր ըղձուքն Աստուած և Բան,
Նա ոչ կիզար նիւթ տարրական։
Օրհնեալ ես, փայտ փառաւորեալ,
Նոր մարմնի սառէն ծաղկեալ.
Կուսին սրբոյ հանդունակեալ,
Աստուածածնին ափոյ բաղդատեալ։
Բայց նա, որ հիւթ կանաչացեալ՝
Մարմին հողւոյ կենդանացեալ,

Ի հրոյն Թեւեւոր զարհուրեալ՝
Յարմամբ ՚ի ծոյն արտաքսեալ։
Քանզի մարմին ներբնաւորեալ,
Հողոյ զանգուած սուրբ եւ մաքրեալ,
Ուստի խորշէր յինքն հնացեալ,
Ի յանէծքին ապականեցեալ.
Զխորդ լեցի, պատասխանեալ,
Ինձ ՚ի յայն հուրին մերձենալ,
Որոյ պատգամ ես դու իջեալ,
Ահեղակերպ գեղերդ ծագեալ։
Իսկ դու, ցամաք փայտ մի գտեալ,
Յոյժ դիւրակէզ զինք ցուցեալ,
Զայն աստուածէն բոցին առեալ՝
Փայլակնացայտ ընդ քեզ հարեալ.
Ուստի եռանդն արեանն իջեալ
Առ քեզ հրեղէն դէտ խաղացեալ.
Սակայն ցամաք փայտդ ոչ կիզեալ,
Այլ համարձակ նորա ձուլեալ,
Առաւե՛լ դոս հրաշացեալ
Եւ իմաստից վերոյ դասեալ։
Սուրբ եւ ահեղ խաչըդ պատուեալ,
Յերկնից երկնիս պայծառացեալ,
Որում եւ Կոյսն աստուածարեալ
Յոյժ կամօք երկրպագեալ,
Արեամբ որդւոյն զփայտդ ներկեալ
Խանդաղանօք ողջագուրեալ։

Իքէն աշեղ հուրըդ նայէր ,
Եւ զաստեղաց սարըն կընքէր ·
Զտարերք էիցըս շարժըլէր ,
Եւ խռովութեան գոյժ արկանէր ։
Երկիր իւրովքըս տատանէր ,
Եւ զլուծանելն հիմանց խընդրէր ,
Թէ ոչ այդ հուրըդ պահպանէր ,
Եւ հրամանաւ անդէն պընդէր ։
Նա և երկին յոյժ տագնապէր ,
Զիւր լուսաւորսըն պարփակէր ,
Առեալ՚ի սուգ նոքօք նըստէր ,
Զաչերն իւր ՚ի խաչ նայել չկարէր ։
Եւ սորակայ լուսինն որ էր ,
Զոխս պատկերին յարիւն փոխէր ·
Ինքըն յինքեան յոյժ պատկառէր ,
Յոչէութիւն դառնալ հայցէր ։
Իսկ զանօրակն որ նըկատէր ,
Զհուր և ըզլոյս իւր ոչ բերէր ։
Այլ քօղ ըզգատուերն նըմին ձըգէր ,
Խաւար լուսոյ փոխան շնորհէր ։
Զի Ճըշմարիտ արքայն յայտնէր ,
Տարրըն տեղի տայր և լըռէր ·
Որ իբր Աստուած երկըրպագէր ,
Ի յարարչին աչէ թաքչէր ։
Ո՜վ հրաշալի փոյթ դու չընչին ,
Ոստ մի ցամաք Լիբանանին ,

Զխորդ տարար զանտանելին
Հուր և ըղլյս 'ի միասին ,
Եւ նոյն ընութիւնքն ոչ փոխին
Որպէս տարերքս՝ որ երերին .
Զի ես դարձեալ փայտ դու կըրկին ,
Թէ և օծար արեամբ Նորին :
Ո՜վ հրաշալի գործս՝ որ ցուցաւ ,
Ցեղաշըրջումն էից եղաւ ,
Անհիւթն 'ի գոյն մարմնոյ դարձաւ ,
Լուսինն յարեան երանգ ներկաւ :
Իսկ խաչըս նիւթ որ կառուցաւ ,
Ընդ հուր և լոյսըն խառնեցաւ .
Զայն փոփոխիչն յինքեան տարաւ ,
Եւ նոյն մնացեալ ոչ ծախեցաւ :
Ո՜վ այս հրաշիցս անճառութեան ,
Որ յայտնեցաւ դէմ յանդիման :
Հուր երկնայինքն՝ որ նայեցան ,
Յառ քեզ բոցոյդ արագ չիջան .
Իսկ դու ցամաք փայտ մարմնական ,
Տարար ըղնոյն անկիզական .
Եւ սըրբեցար , գեր քան ըղըան ,
Էին աթոռ և բնակարան :
Ո՜վ հրաշալի Ճառիս ընթաց ,
Զոր կարգ բանիս բացայայտեաց :
Ի հրոյ Նիգ երկիր գոլոց ,
Եւ զապառաժըս պատառեաց .

Բայց զայդ ուղէշ փոքր յանտառաց
Եւ զծիղ խոտոյդ 'ի յեղեգանց
Անպախ շընորհ նորին պահեաց,
Յոյժ բարձրագոյն ըսքանչելեաց :
Օրհնեալ ես, փայտ շնորհօք լցեալ.
Սուրբ ողկուզին հընձան եղեալ.
Յորում ըղտուղ կուսին ճըմլեալ,
Մարդուակեալքս եղեաք բերկրեալ:
Նա զթըշնամին 'ի քեզ կոխեալ,
Խայտառակեաց նըշաւակեալ.
Ըզմահաձըն դառըն մըթերեալ
Յայտ համարձակ յերկիր հեղեալ:
Օրհնեալ ես, փայտ լուսով մածած,
Իմանալի կամուրջ ձըգած.
Մեղաց ծովուն վերայ կապած,
Ուղիղ հեռոց շաւիղ տըւած :
Դու, զորս 'ի քեզ ապաստանած,
Փըրկես յալեացըն մըրըրկած.
Ի մահուանէ ածես զերծած,
Հանգուցանես առ տէր Աստուած :
Օրհնեալ ես, փայտ սուրբ պանծալի,
Իմանալի տառ քարտոխի.
Ուր մեր անջինջ կըտակ գըրի,
Տեառն Աստուծոյ մարդիկ որդի.
Ոչ մելանաւ՝ որ եղծանի,
Կամ հին տախտակ քառանկիւնի,

Այլ սուրբ արեամբըն Յիսուսի ,
Որ անդրանիկն է ամենի :
Օրհնեալ ես, փայտ սուրբ, գաւազան
Դու քաջ հովուին ցուպ տածութեան.
Որով գառինքն որոշեցան ,
Յեկեղեցիս ամուր փական .
Եւ զքո նըշանըդ փըրկական
Կնիք 'ի ճակատս առեալ, ցընծան .
Յառաջագային օրըն պանծան ,
Ի սատակչէն որք քեւ զերծան :
Օրհնեալ ես, փայտ սուրբ փըրկական,
Մխիթար բարեխօս բարառնական :
Դու հրեշտակացըն ցուցական
Տեառնըն իւրեանց փառք սըրբութե՛ :
Եկեղեցւոյ փառք պերճութեան ,
Առաքելոց պարծանք նըշան ,
Մարգարէից հանդիսարան ,
Մարտիրոսաց պըսակ օծման ,
Քահանայից շնորհ բաշխական ,
Վարդապետաց քանուն ուսման ,
Թագաւորաց զէն յաղթութեան ,
Եւ իշխանաց յոյժ քաջութեան ,
Զօրաց նոցին միշտ պահապան ,
Ախոյանաց քաջ օգնական ,
Նահատակաց վիգ և վահան ,
Վըտանգելոց օժընդական ,

Պարտեցելոց մեծ տապաստան ․
Նոյն նեղելոցըն բաւական ,
Հալածելոց տէր և պաշտպան ,
Փախուցելոց պատսպարան ,
Հարթուցելոց խաղաղական ,
Վըշտաց հընար ըսփոփութեան ,
Ցընծացելոց դու գոհարան
Եւ մեծատանց ըզգուշական ,
Գանձ աղքատաց անդըրժական ,
Անըզգամաց ես զգօնարան ․
Ըստահակաց խըրատ գիտութեան ,
Վայրապարաց լուծ նըհանջման ,
Թագ կուսանաց վայելչութեան ,
Կնիք ամուսնաց պարկեշտութեան ,
Տըղայոց յաւէտ ես պահապան ․
Դաստիարակ իմաստութեան ,
Ծերոց 'ի մի ժողովարան ,
Ի ճանապարհս մեզ օգնական ,
Աշխատելոց հանգըստարան
Եւ նաւելոց տեղ դադարման ,
Մոլորելոց դարձ ուղղութեան ,
Տառապելոց յարկ տապաստան ,
Այրեաց պաշտպան անխնածութեան ,
Որբոց խընամ 'ի նեղութեան ,
Մենացելոց պար շըրջական ,
Ճըգնաւորաց ժոյժ զօրութեան ,

Աշխատողացըն ցանկական ,
Ախտացելոց դեղ ողջութեան ։
Դիւաց ընդդէմ ահ պարտութեան ,
Խաչ մեզ ես զէն պատերազմական ։
Մեղուցելոց սուրբ քաւարան ,
Եւ անմեղաց յար պահապան .
Նիշ կենդանեացըս փրկութեան ,
Ցոյս մեռելոցըն յարութեան ։
Արդ յամենայն իր զօրացեալ,
Եւ յամենից բերան գովեալ,
Օրհնեալ ես , փայտ երկրպագեալ,
Սիւն յոր 'դ հանուրըս հաստատեալ ։
Դու յապաւանին փրկիչ ծագեալ,
Յորժամ 'ի հուր լինիք փոխեալ ։
Յահեղ այն օրն համառօտեալ,
Որ օրն է մեծ և բարձրացեալ,
Յառաջ 'նշան տեառն երեւիս ,
Յերկնից յերկիր փայլեալ Թափիս .
Մեծ կարապետ որոց սիրիս ,
Եւ հրաւիրակ տալ դատեալս ։
Ոչ , որպէս այժմ , անդ տեսանիս .
Այլ խնացման զոյգ զարդարիս ։
Լուսով փայլակըն բորբոքիս ,
Ի չորս անկիւնս տարածփայլիս ։
Զանսանելի փառըս տացես ,
Նախ հաւատոց պանծանք յայտնիս .

Անհաւատից ընդդէմ զլինիս ,
Յանդիմանեալ զչարըն կարծիս :
Յարուցելոց Ճառագայթիս ,
Լոյս 'ի յաշխարհս ամէն սփռիս .
Լուսաւորաց կընիք լինիս ,
Զնոսա ծածկեալ՝ գերափայլիս :
Յայնժամ սըրտակ փառաց բաշխես ,
Զորըս յարեան սուրբք՝ պաՃուՃես .
Երկնաթըռիչ թեւըս շնորհես ,
Սուրբ փեսային ընդդէմ հանես :
Իսկ զանհաւատս դատապարտես ,
Ծուլից ըղհուրըն ցուցանես .
Եւ դու 'ի մէջ կաս որոշես ,
Զայն և զահեակ բացայայտես :
Յորժամ մաքուր կարգըն դասի ,
Ակումբըն 'ի գըլուխն յարախառնի ,
Եւ քում կարօտ ձեռին լինի ,
Ար յայս այսօր ոչ յոյս ունի ,
Որդին ապա Հօր հնազանդի ,
Զի լի զհատակ մարմնոյն ունի .
ԱնՃառ խորոց ծով ծաւալի ,
Աստուած լինի յամենայնի :
Յորժամ մարդկան գործ վըՃարի
Եւ փոխարէնք նոցին բաշխի ,
Ապա բերան ամէն խօսի ,
Միայն ըղմիդ տիպ պաշտելի :

Որ ես անօթ փառօք 'ի լի ,
Ցերկնից ցուցեալ լոյս աշխարհի ·
Պարծանք ամէն քրիստոնէի ,
Փառըք փրկչին մեր Քրիստոսի :
Աստանօր բանըս հանգիցէ ,
Խրատակս ըղկայ տացէ ·
Զի անդ ժըպիրհն ոք ձեռնարկէ ,
Որ 'ի մարմին դեռ կապեալ է :
Եկեղեցի այսօր պարէ ,
Զպայծառ նըշանս ձայնիւ պատուէ ,
ԶՅիսուս 'ի սմա փառաւորէ
Այժմ և յապայն որ գալոց է :

# ՏԵԱՌՆ

# ՆԵՐՍԻՍԻ

## ՉԱՓԱԲԵՐԱԿԱՆ ԲԱՆԻՒ

## ՄԱՂԹԱՆՔ

ԱՌ ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿՍՆ

ԵՒ

ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏՍՆ

ՄԻՔԱՅԷԼ ԵՒ ԳԱԲՐԻԷԼ.

ԵՒ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ

ՀՐԱԲՈՒՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ

ՍՈՒՐԲ

ԶՕՐՈՒԹԻՒՆՍՆ

# ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ

## ՄԱՂԹԱՆՔ

## ԱՌ ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿՍՆ

* ԱՅԼ պաղատիմք առ Հոգեղէնսըդ
Մեք տըկարքս և հողեղէնքս ,
Որք մերձաւորք էք Աստուծոյ
Մաքուր բնութեամբ և կայանիւ .
Սուրբ պաշտօնեայք և սպասաւորք ,
Հըզօր բանին իւր կատարողք ,
Երիցս երիս՝ իններակ դասուք ,
Երրեակ և մի Աստուածութեանն :

* Այս տաղ մահէտ է ըստ Ներբողենին Հրեշտակաց, զոր սորին Երանելւոյ շարագրեալ է :

Որդւոց մարդկան նախախնամողք ,
Եւ յերկնայինսն վերբերողք ·
Մանաւանդ մեզ ծանուցեալք
Եւ երկրայնոցըս մերձաւորք ,
Սուրբ Գաբրիէլ և Միքայէլ
Հրեշտակապետք Բարձրելոյն ,
Որ Աստուծոյ կայք առաջի ,
Մաղթել ըզմերըն փրկութիւն :
Ընկալարուք վեհք 'ի տնանկաց
Զընծայս բանի աղքատանաց ,
Իբրը ծովու կաթիլ մի ջրոյ
Կամ եթերին նըշոյլ ինչ հրոյ ·
Զոր անմահիցդ ընծայ տօնի
Մահկանացուքս ընծայեցաք ,
Անմարմնական հոգեղինացըդ
Մարմնաւորքս և հողեղէնքս ,
Բարեբախտիցդ և երջանկաց
Թըշուառականքս և թարմատարք ·
Բարձրագունիցդ և երկնայնոց
Խոնարհ բնութիւնս և երկրաւորք ·
Եւ յաննիաղ ձերում բարեաց
Փոխատրեցէք մեզ ըզպիտոյս ,
Զաստուածայինն և զհոգեւոր
Զառ 'ի վերուստ շնորհաց զեղումն ·
Մաղթել ընդ մեր բարերարին ,
Զոր և առնէքն 'ի սկըզբանէ ·

Զգործըս ձեռաց քոց , տեսլով ,
Անտես 'ի քէն մի՛ առնիցես ։
Զնոյն պաղատանս 'ի յայսմ աւուր
Խընդրեմք 'ի ձէնջ առաւելուլ
Յաղագըս մերս եկեղեցւոյ
Եւ ընդհանուր սուրբ հաւատոյ ,
Երկըրպագուաց ընդ ձեզ հոգւով
Ամենասուրբ Երրորդութեանն ,
Խաղաղական շնորհել ըզկեանս
Ի կըրկնակի մեր Ներհակաց ։
Նա և ըզմերս անարժանից
Ըզպաղատանս այս աղօթից
Ձեր բուրվառօք խմանալեօք
Խընկարկեսջիք մեծ արքային ։
Ուստի զըղորումըն մաղթանաց
Յառատաձիր պարգեւուցն
Ձեր ընկալեալ մեծաւ սիրով ,
Մեզ 'ի վերուստ առաքերելով ։
Եկեղեցւոյ տալով գըլխոց
Առաջնորդել մարդկան հոգւոց ։
Վերաբերել զամենեսին
Ընդ ձեզ յերկնից արքայութիւնն ,
Արժանանալ բանիւ առ տէր
Ասել . ահա ես և մանկունք ,
Յորմէ լըսել զբարին անուն ,
Եւ զանթառամն առնուլ պըսակ ։

Քահանայից կատարելոց
Ընծայ զենման պատարագին ,
Սուրբ Հոգւով յորդորեցէք
Սպասաւորել հրեղէն հացին ։
Ծընդաւորաց , որք 'ի մարմնի ,
Եղբարք նպաստք և ջանակիցք ․
Առանց մեղաց պահել զնոսին
Ի թշնամեացն գաղտնի նետից ։
Թագաւորաց բարեպաշտից
Եւ իշխանաց քրիստոնէից ,
Հայցեմք լինել նիզակակից
Ի ճակատուն բարբարոսաց ։
Եւ համօրէն ժողովրդեանն ,
Որ ըստ ազգի և հասակի ,
Յիւրաքանչիւրքն վտանգից
Փրկօղ լինել 'ի փորձութեանց ։
Անմեղ ազգաց գոլ պաշտպան
Ի յարկածիցն դիւական ,
Եւ մանկական տիոց նոցին
Պատսպարանք խնամութեան ։
Զերախտաւորդս մաղթելով
Յառաջ խորհուրդս և 'ի մաքուրս ,
Եւ զկատարօղս հասարակ
Խրատել յիմաստս կատարեալս ։
Զանեւորեալն 'ի գոյն ամխառկ
Ծածկել Հոգւով որպէս հերովք ․

Զծերս 'ի հրահանգըս հանճարոյ
Վերելս 'ի սիրոյս գընելով ։
Կուսից մաքուր լինել ողրոխ ,
Ի բնակութիւն սուրբ փեսային ·
Կանանց ողջախոհ խոնարհութեամբ
Եւ բարեզարդ ըզգաստութեամբ ։
Զամուսնացեալն ըստ աշխարհի
Աստուածային սուրբ օրինօք ,
Յորդորելով 'ի սրբութիւն
Եւ 'ի սիրոյ կատարելութիւն ։
Ուղեւորաց ճանապարհի
Լերուք 'ի նոյն ընթացակից ·
Եւ նաւելոց , որք 'ի ծովու ,
Ըղեկավարք և նաւաստիք ։
Եւ 'ի բնաւից պատահարաց ,
Յերեւելեաց և յանյայտից ,
Ըզպահպանիլըն 'ի ձէնջ հայցեմք
Եւ ըզփըրկիլըն պաղատիմք ։
Ի գիտական բըռնութենէ
Եւ 'ի պատիրըն խաբմանէ ,
Ի մարդկային յայտնի չարէ
Եւ 'ի ծածուկ նենգութենէ ։
Որք 'ի մեղաց անկեալ ըղղմի՝
Ի քուն մահու են յարթմընի ,
Ձեռըն նոցին կարկառեցէք ·
Եւ 'ի խորոցըն վերբերէք ։

Տանջեցելոցն առ 'ի դիւաց
Կամ 'ի յախտից մարմնականաց,
Լերուք ցաւոցն ապաքինիչ,
Եւ չար այսոցն հալածիչ։
Որք 'ի բանդի՝ արձակեցէք,
Եւ զկապելոց կապանս լուծէք։
Զգերեալսն 'ի յարկսն դարձուցէք,
Եւ ըղձաւորսն ազատեցէք.
Զտարակուսեալսն փրկեցէք,
Եւ նեղելոց անդորրեցէք։
Տուք մեծատանց ըզգուշութիւն,
Եւ աղքատաց յուսադրութիւն։
Եւ ըզհոգիս ամենեցուն
Ի սէր բարեաց յորդորեցէք։
Առնել զաշխարհ աշխարհայնովք,
Սիրել զԱստուած աստուածայնովք.
Յաղօթըս առըրըս միշտ կանխել,
Ջերմ արտասուս յանցանց բըխել.
Յաղանց մեղաց լուանալ զոգիս,
Եւ լուսաւոր առնել ըզմիտս.
Պահովք զմարմինըս մեր ճըշնել,
Հոգեւորօքըն կերակրել.
Ողորմութեամբ կարօտելոց
Զարքայութիւնն երկնից գնել.
Ըզգաստութիւն մարմնոյ ստանձել,
Ըզսէր հոգւոյն 'ի մեզ շարժել.

Զատելութիւն 'ի մէնջ հերքել,
Եւ սուրբ սիրով ընդ մեզ կապել.
Ըզկեղծաւոր վարըս մերժել,
Ըզճըշմարիտըն հաստատել.
Զագահութիւնըն հալածել,
Ըզզուարթարար բարըս տընկել.
Ի բարկութեանց 'ի բաց լինել,
Ըզհեզութիւն յանձինս ունել.
Ի տրտմական կըրից մեկնել,
Ցնծանք բարւոյն ուրախ առնել.
Ըզհեղգութեան արմատն այրել,
Զարիութիւնըն բորբոքել.
Զհըպարտութեան խորհուրդ վանել,
Զխոնարհութիւնն ուսուցանել:
Այլ և տարերց բարեխառնիւք
Տուք ըզպըտղոց առատութիւն.
Ի ցամաքէ զպահպանութիւն,
Որք առ 'ի խըռով գան 'ի վերուստ:
Տուք խռովութեանց խաղաղութիւն,
Եւ յերկիւղից անհոգութիւն.
Ի տրտմութեանց զուարթութիւն,
Եւ 'ի վըշտաց ըմփոփութիւն.
Ըզտարաժամ մահուց բարձումն,
Զանպարտ արեանցըն զադարումն.
Եւ յանձնոյն կեանս ըստ մարմնոյ,
Լերուք պաշտպանն մեզ և հօտիս:

Խակ 'ի մանկուն տւոց մերոյ ,
Բնութեանս կամացըն լուծելոյ ,
Մինչ բարեկամըքդ գայք մեզ հետ
Ի հեռաւորաց երկնից ուղւոյն ,
Թէ 'ի գործոցըն կերակրոց
Անձնանցեալըք լինիցիմք ,
Զերկս միայն ըզընկանակս
Ընկալարուք ըզհաւատոյն :
Եւ ըզփրկչութիւն աստուածային
Եւ ըզպատկեր տէրականին
Եւ զբանականըս մեր հոգի ,
Ըզհամագգիս ձերոյ բնութեան ,
Հեշտալի՛ս ու անդէպցէք ,
Եւ քաղցրութեամբ ըզձեզ ցուցէք :
Եւ 'ի յայսոյն օգնականաց
Անխռովաբար զմեզ անցուցէք ·
Եւ ընդ հոգւոց սուրբ անդրանկաց ,
Որք 'ի վերինն Երուսաղէմ ,
Դասաւորեալ անդ հանգուսջիք ·
Մինչ 'ի շարժել պահապանացն :
Յորժամ արծուիքըն սըլանան ,
Ընդ գէշ մարմնոյն գան միանան ·
Փողով մեծաւ ձեր ժողովին
Առ աթոռով դատաւորին ,
Յայնժամ լերուք մեզ օգնականք ,
Ո՛վ Ճըշմարիտ մեր բարեկամք ·

Զի դասեցուք յաջակողմեան ,
Լսել ըզձայնն երանական .
Լինել ժառանգ արքայութեանն ,
Եւ երկնայինն ուրախութեան .
Լընուլ զտեղի անկեալ դասին ,
Ըստ խոստացեալ անսուտ բանին .
Պարակցելով իննեակ դասուդ ,
Ի հարսանիս Հօր Միածնին ,
Նորոգութեանն երգել ըզփառս
Ընդ ձեզ յաւէտ միշտ յաւիտեանս :

## ՏՈՒՆՔ ՀԱՐԻՒՐ
## ԸՍՏ
## ՀԱՐԻՒՐՈՑ ՈՉԽԱՐԱՑՆ

Օ անձին բարեաց ծընօղ բանիս
Մի՛ մոռանայք տօնողք վեհիցս ,
Զներբողս եղբայր Հայրապետիս ,
Որոյ անուն տէր Գրիգորիս :
Յորմէ խընդրոյ զիջեալ , ըստ իս
Յարմարեցաւ շինուած Ճառիս ,
Եւ եղանակք շարականիս
Առ ՚ի պատիւ մեծի տօնիս :
Արդ յիշեսջիք ընդ Տեառն և զիս ,
Լըսօղք վերնոցըն գովեստիս .
Եւ դուք յիշեալ առ տէրունիս
Լինիք յերկնից նորայն բարիս :

ԱՍԱՑԱՒ ԵՒ ԳՐԵՑԱՒ

Ի ՆԵՐՍԻՍԷ

ԵՊԻՍԿՈՊՈՍԷ

ՅԵՂԲՕՐԷ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ

ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ

Ի ԿԼԱՅՍ

ՀՌՈՎՄԱՅԱԿԱՆ

Ի ԹՈՒԻՆ ՈԺԱ.

# ՏԵԱՌՆ

# ՆԵՐՍԻՍԻ

ՅԱՂԱԳՍ

ԵՐԿՆԻՑ ԵՒ ԶԱՐԴՈՒՑ ՆՈՐԱ

ԲԱՐԱՌՆԱԲԱՐ

Ի ԴԻՄԱՑ ՆՈՐԻՆ

Ի ՉԱՓ ԵՐԿՈՏԱՍԱՆԻՑՆ

ՊԱՐԶԵԱԼ ՈՏԻՑ

Ի ԽՆԴՐՈՅ

ԱՌՆ ԲԺՇԿԱՊԵՏԻ

ԵՒ

ԱՍՏԵՂԱԳԻՏԻ

ՄԽԻԹԱՐԱՅ

### ՏԵԱՌՆ

# ՆԵՐՍԻՍԻ

## ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻՑ

## ԵՒ

## ԶԱՐԴՈՒՑ ՆՈՐԱ

---

*Ի՛Մ եղական գոլով բնութիւն և*
*սկզբնական ,*
*Ցանեղէ՛ն հրգեղ կամաւ անզու-*
*գական ,*
*Անջրպետեամ ջրուրըն վերին և*
*ներքնական ,*
*Որպէս պատմէ զինէն Մովսէս աս-*
*տուածաբան ։*
*Ես եմ միջոց ընդ անմարմնոյն և*
*մարմնական ,*

Ունիմ՝ առ իս յերկուց բնութեան-
ցըն յատկական ․
Ըստ անմարմնոյ՝ զոչ 'ի ձեռաց շօ-
շափական,
Եւ ըստ մարմնոյ՝ գոլով աչաց տե-
սողական ։
Միատարր եմ միագոյն համանը-
ման ․
Հինգերորդ, ծածկոյթ քառից՝ ո-
րոց ծընեան ։
Անքանակ եմ և չափից անչափա-
կան ․
Այլ և թըզաւ միով չափիմ, թէ
ոչ մարդկան ։
Պարունակող եմ անզգայնոց և
զգայական,
Պարունակիմ յայլմէ վեհէ անտե-
սական ․
Բոլորակ եմ կիսագունդ որպէս
խորան,
Բնութեամբ կայուն, անձամբ շար-
ժուն անկայական ։
Հինն և աւարտ եմ գոյութեանցս
այս նիւթական ․
Անդունդք 'ի խոր, բարձունք 'ի
վեր, մինչ վերանամ ։

Ոչ ոմն անդունդք, ոմըն բարձունք
 անփոփոխական․
Զի չեմ կայուն ես միշտ 'ի նոյն,
 այլ շրջական:
Այլ որ անդունդք, նոյն և բար-
 ձունք են վերնական․
Եւ որ բարձունք, նոյն և անդունդք
 են ստորնական:
Շարժիմ յաւէտ, թռուչիմ արագ
 անհատական․
Ի շարժմանէ թարթել ական մի
 չկայանամ:
Ցանն եմ մեծի ձեղուն յարկին
 պարաձգական․
Ոչ յեցեալ յինչ, ոչ սիւնք նեցուկ
 պարապառնան:
Քանզի ձգեաց զիս և պարզեաց
 որպէս վրան,
Ոչ սլընդելով բարից հնարիւք, այլ
 միայն բան:
Ժամանակաց երկարութեամբ ես
 ոչ հնանամ,
Եւ 'ի գունոյ պայծառութեան չաղ-
 գեղանամ:
Գոյն իմ աչաց տեսողութեան բաղ-
 դատական,

Մի՛շտ հայելով ոչ վտանգի՛ն կամ
ձանձրանան ։
Զողմոյ հրճուանօք ոչ տատանիմ,
այլ կանգուն կամ ·
Ցորտամանէ ոչ սասանիմ, այլ զօ-
րանամ ։
Քանզի ՚ի ծոց իմ են սոքա իլլու-
ծընան ·
Նա ըստ կամաց իմոց շարժին, չեն
ապըստամբ ։
Նա եմ պատճառ երից սեռից
կենդանութեան ·
Օդականաց, երկրաւորաց, եւ ծո-
վական ։
Նոյն մահու դարձեալ լինիմ ես
գերեզման,
Նա յարութեան միոյ բնութեան որ
բանական ։
Փարթամութեան ամենայնի եմ պա-
հարան,
Որ պատուականք եւ պանծալիք են
առ մարդկան ։
Ժամանակաց ամենեցուն բաշխո-
ղական,
Ոմանց բազում ոմանց նուազ աւ-
ուրս տամ ։

Ոչ 'ի յինէն այլ 'ի վերուստ բաժանեցան ,
Այն՝ որ գիտէ զօգուտըն տալ որդւոց մարդկան ։
Ունիմ՛ առ իս՝ պայծառատիպ մի կարկեհան ,
Եդեալ 'ի լանջս ըստ վակասին ահարոնեան .
Փեսայօրէն ջերմամբ սիրոյ յոյժ ըղձական
Գիրկս արկանէ հարսին լուսոյ խոնաւութեան ։
Իսկ առ գիշեր՝ ախտակամույլ բիւրեղանման ,
Որ միշտ աճէ և նըւազէ հընդկաստան .
Զարփէ ըզթիւ ժամանակաց աւուրց մարդկան ,
Զոր և քընարըն տասնաղի երգէ դաւթեան ։
Բնաւորելով գիջին խոնաւ և հիւթական ,
Մխաւորեալ յամուսնութիւն կիզողական .
Ցորոց խառնից գոլ համայնից ծընընդական ,

Բուսոց , տնկոց , և ըղձայնոց՝ որք
շնչական .
Յես ընդ սոսա կանթեղըս եւթն
են 'ի վառման ,
Որք մոլորեալ՝ տան անմոլար իմաստ
մարդկան .
Ունին յինքեանս ըղթիւ աւուրց ա-
րարչութեան ,
Եւ ըզխորհուրդ եւթանց դարու-
ցըն կատարման :
Է և քաղաք յիս պանծալի պա-
րագրական ,
Յոր աշտարակք՝ կենդանատիպք եր-
կոտասան .
Որք են եւթնից մոլորակացըս կայ-
արան ,
Յորս 'ի մըտեալն՝ ազդեն կանուխ
ըզվաղորդայն :
Ոմանց բարի աւետն գիտողք և խա-
տանան ,
Այլոց ըզչար թէ լինիցի խօսին ըղ-
բան :
Է զի լինի և կատարի , զոր խօսե-
ցան ,
Է զի սխալող և ընդունայն բար-
բառեցան .

Եւ այր իրի պատճառ է յայժ խոր-
հրդական ,
Զոր տասցուք փորձ 'ի շատէ լըսող
ունկան :
Զի թէպէտ են յանկենդանեաց
նոքա ուամբան ,
Սակայն շարժմանք անձանց ունին
ինչ ազդական .
Ոչ 'ի յինքեանց ըղձայութեանց զօ-
դուարըն տան ,
Այլ 'ի բանէն՝ որով երկինք հաս-
տատեցան :
Եւ չեն զարմանք ըմբռնչելեաց՝ ովք
յայս փութան ,
Թէ 'ի շարժմանց սոցա լինին նախ
գիտական .
Զի թէ անբանք յայս խակալես
բնաւորեցան ,
Եւ յարմարոց լինի ազդումըն գի-
տութեան ,
Ի կերպարանս ազգի ազգի տալով
նըշան ,
Ծանուցանեն բանաւորաց զառա-
ջինկայն :
'Նա և ջըրոյ բնութիւն կըրկին
ոստականան ,

Արբուցանել և ողողել բնաւորե-
ցան .
Ըզնոյն և հուր ներհակաբար բերէ
յինքեան ,
Լուսաւորել և հըրդեհել իւր զօ-
րութեան :
Միով բարի և օգտակար ներգոր-
ծեցան ,
Միասմըն չար ուապականիչ ու-
նակացան .
Ու թէ ինքեանք յոր և կամին փո-
փոխեն յայն ,
Զի անըզգայք չունին բնութիւն
փոփոխական .
Այլ որ ստեղծ , եդ 'ի նոսա զայս
բընական .
Եւ չէ հընար լուծանելոյ , բայց իւր
հրամանն :
Արդ թէ փորձունք 'ի յեղելոց
հաւատացան ,
Զի նախադէտ լինել յինէն պատ-
րաստեցան ,
Չէ անտեղի զայս իմանալ թէ կար-
գեցան
Զորդ իմ պայծառ ունել խոր-
հուրդս իմացական :

Բայց որ միայն կըրթին ուսմամբ
սովորական ,
Եւ ըզգնութիւն մըտացն ունին ան֊
մաքրական ,
Աղօտագոյն նըրբից շարժմանց ոչ
հըմտանան .
Վասն այնորիկ խօսին յոգունըս
սխալական :
Եթէ ըզմէգ ծածկոյթ լուսոյ մը֊
տաց տեսլեան ,
Որ են մեղաց հոյլք և զբաղմունըք
նանրութեան ,
Հողմով հոգւոյն զայն առնէին հա֊
լածական ,
Եւ ըզհոգիսն հոգւոյն մաքուր
սուրբ բնակարան ,
Կորովագոյն աչս ունելով տեսողա֊
կան ,
Տեսանէին զխոր շարժմունսն ան֊
վրիպական :
Որպէս նախնիքն , այնք՝ որ հա֊
սին այս գիտութեան ,
Ի հեշտութեանց մարմնոյ 'ի բաց
որոշեցան .
Կէաքն 'ի կարաս մըտանէին առանձ֊
նական ,

Աչք յանապատըս բնակէին Ճըգ-
նողական .
Եւ 'ի տուողէն ամենեցուն ողոր-
մութեան
Պաղատէին բանալ զմըտացըն զդա-
ռան .
Որոց շնորհէր զիմաստութիւնըն
զվերական ,
Խառնեալ ծածուկ ընդ կըրթու-
թիւն նոցին և ջան :
Դարձեալ է այլ պատճառ լինե-
լըն սխալական ,
Ի թոյլ տալոյն բարի կամացն ա-
րարչութեան ,
Զի մի' զսոսա կարծեն տըւող այս
գիտութեան ,
Եւ յարարչէն իւրեանց լինին մո-
լորական :
Նա՛ իմաստնոց մըտաց և այս է
քըննական ,
Թէ է՞ր տըւաւ տէքօք իմաստ այս
խոհական :
Քանզի յորժամ աստուածաստեղ-
ծըն մարդ Ադամ
Կորոյս մեղօք ըզշնորհսըն ձրի և տի-
րական ,

Ողորմելի որդւոց նորա Թըշուա-
ռական

Ի յարարչէն նըւաղ իմաստ այս
շնորհեցան.

Նախադուշակ լինել մարդկան չար
պատահման,

Զի աղօթիւքն առ Նա՝ փրկին 'ի
փորձութեան:

Որպէս Նոքա որ արուեստիւ այս
հըմտացան,

Ըստ այս բանի՝ յայտնի լինին զայս
խոստովան,

Թէ չէք հընար, 'ի փորձանաց՝ որ
մարդոյ գան՝

Փրկիլ ումեք, քան աղօթիւքըն
մաքրական:

Որպէս երազք, որ 'ի յանուրջ զար-
հուրական,

Պաղատանօք առ 'ի բարիս փոփո-
խեցան:

Ծանիր և զայս, ով իմաստուն և
խոհական,

Զի այս արուեստ հուպ էր 'ի տունն
աբրահամեան.

Նա՝ և Մովսէս և այլ ընտրեալք
յայս վարժեցան,

Զգործըս քննել ամէնիմաստն ա-
րարչութեան ։
Բայց ոչ մոլար առասպելօք խաբո-
ղական ,
Այլ ճշմարիտ յըստակ մըտօք և
մաքրական ․
Որպէս Պաւղոս գըրէ 'ի Թուղթ
հռոմայական ,
Թէ զարարիչն արարածովք մարդիկ
ծանեան ։
Այլ հեթանոսք 'ի յԱստուծոյ մո-
լորեցան ,
Եւ յարարչէն զգործս իւր մերժել
ժըպըրհեցան ․
Վասն այսորիկ լուսոյ մըտաց խաւ-
արեցան ,
Եւ յաղճատանըս պատուանաց գը-
լով անկան ։
Թողից աւել զխմարն հոգւոյ որք
խաբեցան ,
Եւ զոր սկըսայ՝ դարձայց յիմըս
գովասան ։
Են և ակունք յիս պատուականք
և բազմազան ․
Ոմանք նըւազ , այլըք պայծառ բա-
ցանըման ։

Ցաչըս մարդկան են յոգնակի և
անթուական ,
Իսկ յարարչէն 'ի թիւ անկեալ ա-
նուանեցան :
Որք օրինակք են արդարոց 'ի յա-
րութեան .
Զի կէսք նըւաղ՝ այլք առաւել-
պայծառանան :
Կայ այլ իմաստ ծածկեալ աչքօք
խորհրդական ,
Որ իմաստնոց է լըսելեաց հաւա-
նական :
Զի եօթնից թիւ աստեղաց մոլո-
րական
Է օրինակ այսմ աշխարհի , որ ան-
ցական .
Եօթն անգամ շրջապատեալ նոյն
հազար ամ ,
Անխուն 'ի գուբն ընկըղմելով յետ
կատարման :
Իսկ բազմութիւն անմոլարից, որ
անշարժ կան ,
Ութերորդի անթիւ դարուն՝ որ յա-
ւիտեան .
Ցորում ոչ ամք և ոչ ամիսք են
թըւական ,

Ոչ ժամանակք և ոչ մասունք ժա-
մանակեան․
Ոչ հազարաց շրջապատումն բեւր
անգամ,
Եւ ոչ բիւրուց բիւրապատիկ բեւր
հազարեան․
Զի մի է օրն այն աներեկ և ան-
վախճան,
Համապայծառ և անըստուեր ար-
փիական։
Ոչ կարօտի աշխարհ առ տիւ ա-
րեգական,
Եւ կամ լուսին ուաստեղք 'ի լոյս
գիշերական․
Զի լուսաւորքս յիւրեանց լուսոյն
խաւարանան,
Յորժամ ծագէ լոյսն անմատոյց աս-
տուածութեան։
Եւ փոփոխի այս աշխարհի կարգ
ամենայն
Ի հնութենէ նորոգելով, որպէս
գրեցան։
Եւ գալարիմ որպէս կոնդակ կը-
տակագրեան,
Կամ մագաղաթ յորժամ 'ի հրոյ
հոտ մերձենան․

Զի փառադիր եմ աթոռոյն արքու-
նական,
Որքան ծածուկ է յաշխարհէ այս
նիւթական.
Եւ մինչ կամի յայտնել ծածկեալ
լոյսն էական,
Բառնան 'ի բաց զիս սպասաւորքն
աննիւթական:
Գայ իջանէ մեծ Թագաւորն ա-
հեղական.
Յայտնի անեղն էից հանուրց՝ որ ե-
ղական:
Յարուցանէ որք են մեռեալ 'ի գե-
րեզման,
Նըստի յաթոռ աստուածային դա-
տողական,
Տալով բարեացն անճառ բարիս յար-
քայութեան,
Չարացն ըզչար հուր գեհենին միշտ
յաւիտեան:
Յայնժամ և զիս նոր զարդարէ
զարմանազան,
Եւ զլուսաւորս իմ պանծալի յոյժ
հրաշական:
Ոչ 'ի պիտոյս շըրջագայից, որպէս
և այժմ.

Զի անդ մի տխուր, ոչ դոյ գիշեր հա-
տանող զայն ,
Նորոյ երկնից նորոյ երկրի , որք նո-
րանան ․
Տարերց քառից , ուորք ընդ նոքօք
պարագրեցան ։
Զի ակն ունին որք ընդ գըլխոյն
ծառայեցան ,
Յազատանալ գըլխոյն ինքեանց ա-
զատութեան ։
Արդ , ըստ բանի սուրբ Սաղմո-
սաց երգոյ դաւթեան ,
Զգործս արարչին իմ խօսեցայ եմ
որ անբան ․
Երկինք պատմեն զփառս Աստու-
ծոյ յոյժ լըռելեայն ,
Եւ զարարածս հաստատութիւնս
անձայնական ։
Ընդ որս և ես , որ սպասաւորս
եմ բանական ,
Որ 'ի դիմաց երկնից գրեցի սակաւ
զայս բան ,
Նայիմ յերկինս և նըկատեմ զայս
ամենայն ,
Եւ փառըս տամ անեղ բնութեան
արարչական ։

ՆՈՐԻՆ

ԱՅԼԱԶԱՓ ՏԱՂՔ

Ի ԽՆԴՐՈՅ ԱՆՈՒԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՏԱՌԻՑ ՏԱՆՑ

---

# ՅՈՐԴՈՐԱԿ

ՄԻՇՏ էիդ անեղ բնութիւն
բնաւորեցան,
Անեղիդ անմահութիւն հեռաւ֊
եցան.
Խորին խորհուրդ անծին անուն
պարփակեցան,
Եւ Որդւոյ ծննդութիւն ոչ ճա֊
ռեցան:

Ի Հօրէ բըղխումն Հոգւոյդ ոչ քըն-
նեցան ,
Եւ հասման յՈրդւոյ առումն ոչ
պատմեցան :
Թէ զիարդ երրեակ և մի գոլ, ծա-
նուցան .
Բայց թէ զինչ է քո բնութիւն ,
ոչ յայտնեցան :
Արարածք պատմեն ըզփառս , որ
էացան .
Անմարմինք և մարմնականք՝ որ
գոյացան :
Րոպէից քառից տարերք՝ որ տար-
րացան ,
Սիրելիք և հակառակք՝ որ միա-
ցան :
Բարձրագոյն հոյլք անմահից՝ որ
բոց հրացան ,
Հրեշտակաց դասք իններեակ հա-
գիացան :
Ժամուց մեր ունող յինքեանս լոյսք
այլ ցուցան ,
Եօթնեակ մոլորակաց՝ որ կար-
գեցան :
Իսկ վերինք որ անմոլար զարդ կա-
ռուցան ,

Կենդանիք երկոտասանք անուանեցան :

Շարունակք անշարժ շարժումն շաւղագրեցան ,

Ցոլ մոլորք ոչ մոլորեալք մոլորեցան :

Կառուցեալք անշարժ բնութեամբ, բայց շարժեցան ·

Շարժելոցս ազդեն շարժումն՝ յոր փոխեցան :

Ընդ նոսին ստորակայիցս հաստատեցան

Սեռք և ազգ, եւ տարրոհիւ որոշեցան :

Նոյնք 'ի յօդս օդապարիկք որ պարեցան ,

Երկրաւորք և ծովայինք բաժանեցան :

Կենդանիք ամենեքեան որք սերեցան ,

Քում ահեղդ հրամանաւ ներգործեցան :

Ադամեան սեռ մարդկային որ ստեղծեցան ,

Ի պատկեր աննմանութեան յօրինեցան .

Լուսաւորեալ զարմանալեան նըկարեցան ,
Երկնաւորն և երկրայինըս զուգեցան :
Ի գրախտի անմահութեանըն տընկեցան .
Ի մահու պըտղոյն կերան և մերկացան :
Նոր Ադամ հնոյն Ադամայ որդիացաւ .
Ի կուսէ Աստուած և մարդ նոր խառնեցաւ .
Երկակին անճառապէս յոյժ միացաւ .
Եւ բնութիւն երկաքանչիւրն ոչ շփոթեցաւ .
Բաժանեալքն 'ի մի լըութիւն բնութեան չբաժանեցան .
Է յերկուց , և միութիւնն ոչ քակտեցաւ :
Սա Աստուած , նոյն է և մարդ , որ մեզ ցուցաւ .
Ի յերկրի 'ի մէջ մարդկան մարդ շըրջեցաւ :
Էջ յաշխարհ , և 'ի Հօրէ ոչ մեկնեցաւ .

Եւ տու Հայր, և յաշխարհէ ոչ
հեռացար :
Մա 'ի խաչ վասն Ադամայ բևե-
ռեցար ,
Ճաշակեաց ըղձմահ մարմնով զոր
ըղձեցար :
Էր Աստուած, նոյն էր և մարդ, որ
խաչեցար .
Դրնօղն 'ի կենաց եղեալ 'ի մահ,
կամաւ տըւար :
Զի անմահ բնութեամբն իւրով ոչ
մահացար ,
Այլ իմով մեռաւ մարմնով մահ-
կանացուաւ :
Աղխեալ դուռըն դըժոխոց խոր-
տակեցար ,
Յորժամ էջ 'ի նոր տապան և
թաղեցար :
Յարուցեալ յերրորդ աւուր, որ-
պէս գրեցար ,
Մետասան առաքելոցն իւր յայտ-
նեցար .
Սոյն յերկինս, որպէս և էջըն, վե-
րացար .
Ընդ աջմէ ծնողին իւրոյ նոյն
բազմեցար :

Բայց գայցէ դարձեալ փառօք, որ-
պէս ցուցաւ
Ի յերկուցըն հրեշտակաց՝ մինչ
համբարձաւ :
Ազդէ փող մեզ յարութեան, զերդ
խոստացաւ ,
Դատաստան յաւիտենից՝ որ ծա-
նուցաւ .
Նըմա փառք յայս յաւիտեան, ւոր
ընթացաւ ,
Եւ յանկէս յաւիտենին՝ որ կայ-
ացաւ :

# ՏԵԱՌՆ

# ՆԵՐՍԻՍԻ

## ԳՐԵԱԼ

## ԱՌ ԵՂԲՕՐՈՐԴԻՆ ԻՒՐ

# ԱՊԻՐԱՏՆ

## Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՐԵԳԱԿԱՆ լուսոյ ծագման՝
Սէր քո առ իս համանըման․
Ուետոլն քաղցու ըղձըղձական,
Յագեցուցիչ՝ որ քեզ բաղձան։
Ապիրատիդ գրեմ զայս բան,
Եղբօրորդւոյդ իմ ըղձական․
Պանծացելումդ արիական
Զխաղարժից ներհըմտական,

Ի տեղ նիզակ չարժողական
  Որպէս ծըղօտ մի եղէգան .
Բամեալ յաճեակ կըրող վահան ,
  Իբըր սանձով անշեղական :
Արիութեանց պարառական ,
  Նախնեաց քաջացըն գոլ նըման :
Տիրականին ընդ-հանրական ,
  Որպէս լըսեմ, դու պատուական :
Նա և միասում սեռ արքունեան
  ՅԱնդրոնիկեայ սիրալըրական ,
Իսկ առ 'ի մէնջ հրաժարական
  Ի սիրելեացըս քո բնական :
Տենչամք սիրոյդ սըրտի տարփմամբ ,
  Մինչ զի կիզուլ տեսոյդ յիշմամբ :
Էից վե՛հ երանական
  Զքոյդ տեսութիւն քոյքըս փարկան .
Բաւել 'ի յայս վայր ամրական ,
  Գալով քոյին ընդ բիւրական ,
Ներածութեամբ արքունական
  Առ սկիւթականս ահեղ գոչման ,
Երանութեանց արժանանան
  Որք տեսանեն զայս եղական :
Բարունաբար գրաւորական
  Ծանո թէ է բաստուգական .
Սըրտից մերոց նըւաղական
  Լինել յուսով զըւարթական :

Ինձ դու յաւէտ կաց խնդական ,
Մարմնով առողջ և հոգեկան ։
Սիրոյ մի՛ տար աշխարհական
Զհոգիդ գերել անմարմնական .
Էին սիրոյ անզուգական
Ջանա լինել ասպընջական ։
Բայց մի՛ բարուր պատճառական
Դընէր զհասակըդ մանկական .
Այլ քեզ առցես տիպ ցուցական
Զբաղում մանկունս ծծական .
Նախ ընդ Յովսէփ եգիպտական ,
Ապա զյոգունս որք 'ի գրի կան ։
Զարեացըն մի՛ լինիր նըման ,
Որ զմանկութիւնն աշխարհի տան .
Այլ որ ախտիցըն յաղթական
Եղեն մարմնով այս հիւթական ,
Փայլեն 'ի դաս հրեշտակական ,
Խառնին 'ի գունդըն սրովբէեան ։
Որով ընդ քեզ մարթէ իմ բան ,
Լինել նոցա նըմանական ,
Վայելելով առատ յերկար ամ
Եւ անդ ընդ կեանն որ անվախճան ։
Սակաւ բանիցըս խրատական
Լեր ամրագոյն դու պահապան .
Այլ և զհաւատդ , որ յաւազան ,
Անշարժ պահեա միշտ յաւիտեան ։

Ըստ ըն ամաց քոց երեմնից ,
Գրեցան և տունքըս գովեստից ,
Ի հիւանդոտ և ցաւալից
Անձնէ՝ յաւուրըս քառասնից ։
Զոր մերձ մահու հասեալ մըտից ,
Դարձոյց այսրէն տէրն ամենից .
Որպէս լինիս տեղեակ կըրից ,
Ի յեկեղեցըդ բընաւից ։

ՆՈՐԻՆ

ԹՈՒՂԹ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ

ԱՌ ՈՄՆ

ԻՇԽԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՎԱՍՆ

ՈՐԴԻՈՑ ԻՒՐՈՑ

ՏԱՐԱԺԱՄ ՄԵՌԵԼՈՑ

---

ԸՆՏԵՍ է լոյսն աստուածային,
'Ըստ Առաքելոյ անսուտ բանին .
Բայց որք բանան զաչըս սըրտին ,
Այնք հաւատով 'ի նա հային :
Գանձեն զաննիւթ գանձն 'ի հոգին ,
Եւ ոչ ցանկան նիւթականին ,
Գիտեն զաշխարհըն զայն վերին ,
Ուր ոչ է սուգ ւոչ տըրտմութիւն :

Եւ դու թէ զմեզ մեղաց մըթին ,
  Մաքրես յոգւոյդ յաչաց բըբին .
Զմանուկ տըղայդ քո զբաղձալին
  Այլ ոչ ողբաս կըսկըծագին ։
Երանելեացըն քաղաքին
  Զնա բնակակից նայիս նոցին .
Ընդ հրեշտակացն իննեակ դասին ,
  Եւ անդրանկաց գրելոց յերկին ։
Թագաւորմից լուսերամին
  Համապայծառ է պանծալին .
Ժառանգ վերինըն Սիոնին ,
  Ժառանգակից որդւոց նորին ։
Ի գիրկըս Հօրն է գըգուելին ,
  Յոյժ գերագոյն անառակին .
Լոյս աշխարհի Հօր Միածնին
  Յեղբայրութիւն հրաւիրելին ։
Խընդա մեծաւ այսու յուսով ,
  Սթափեա 'ի սգոյդ ըսփոփելով .
Ծանիր զբնութիւնըս մեր մարմնով
  Մահկանացու անդարձ վըճռով ։
Կայ 'ի կանգուն օրինակով՝
  Զոր մեզ ետուն հարքըն գըրով .
Հայեաց յԱբէլ արեամբ մահով
  Հօրն առաջի մեռանելով ։
Զեղ զԱբրահամ տխպ առնելով ,
  Զորդին տուողին նըւիրելով ։

Դամբար մանկանց ողջակիզով,
  Զմինն ընդ երից ընծայելով։
Ծոխացելոց խորին թըռով
  Մանկանց եւթեանց նըմանելով.
Մակաբեանց մօրըն Շամունով,
  Զորս Աստուծոյ տայր ցընծալով։
Յիշեա և զկեանքըն տապանով
  Ըզմարդկան մահ մեռանելով.
Նոյն 'ի յերիր օր յառնելով,
  Եւ մեզ ետ յոյս նըմանելով։
Շինէ զքակեալս նորոգելով,
  Ցանմահ բնութիւն փոփոխելով
Որք հինգ տաղանդ պատուիրանով
  Շահին ըզգործըն հաւատով։
Ձայնք որ չարեացն են գործական,
  Յառնեն 'ի մահն անմահական.
Պատին բոցոյն անշիջական,
  Ուտին յորդանցն՝ որ անվախճան։
Ջերմ արտասուաց կարօտանան,
  Որ անօգուտ է յետ մահուան.
Ուա՜մ վարուց հետեւեցան,
  Վասն այնորիկ անդադար լան։
Սուրբ տըղայն ոչ լալոյ ձայն,
  Այլ երգ խընդման վայելչական.
Վասն որոյ զգոյն ըղոլխրական
  Սեաւ ըզգեստիդ 'ի յանձնէդ հան.

Տըրտմական կըրքն առցեն վախճան ,
  Դառն արտասուք ձեր և կական ։
Բառնա զերկունըս թախծական ,
  Զոր մահ մանկանըն ձեզ ծընան ․
Ցոյց զակամոյդ կամոյական ,
  Տալ ստեղծողին յօժարական ։
Իւծեալ մարմնոյն՝ որ 'ի տապան ,
  Ծանիր զհոգին յերկնից խորան ․
Փառօք փայլէ յարքայութեան ,
  Ծագէ նըման արեգական ։
Քեզ մըխիթար սակաւ այս բան
  Չափով տառիցըս հայկական ։
Նայեաց զոր ետ քեզ թագնաբար
  Հայրըն գըթած և բարերար ․
Եհան զորդին քո յերկրէ չար
  Ի հրեշտակաց բիւրոցըն պար ։
Բենական լուսոյն անձառ ,
  Հուպ և տեսող ըզնա արար ․
Սըրբոցն որ անդ համագումար ,
  Եւ ընտրելոցըն հաւատար ։
Եթէ յայս յոյս ունիս հանճար ,
  Լինիս հոգւով դու անմոլար ․
Սըրտիդ կըրակն որ կայ 'ի վառ ,
  Փոխէ 'ի ցօղ զըւարթարար ։
Ի բաց դիր այժմ ըզսգոյդ խաւար ,
  Որ անյուսիցն է տըրտմարար ․

Եւ դու ընկալ զայն անվըթար ,
Զյուսացելոցըն զուարճարար :
Կենդանի՛ն և կենարար ,
Այն որ ձայնիւ կոչեաց զՂազար ,
Առ քեզ գոչէ աստուածաբար ,
Լուծցէ ըզսուգ քոյ և զաշխար :
Թագաւո՛րըն կամարար ,
Որ զՄարեմման ուրախ արար ,
Ողորմութիւն քեզ անվըճար
Պարգեւեսցէ աստուածաբար :
Ղօղիչ զարտօսրըն զայն յերկար
Արտասուելովըն մարդկաբար ,
Ի քէն բարձցէ զորդւոյդ խաւար ,
Նովին բանիւ կենդանարար :
Կաւոց մաշուն մարմնապատար ,
Վարշամակին այն մահարար ,
Որ քոյ յուսոյն անյուսարար ,
Եւ հաւատոյդ ծածկոյթ արկար ,
Սատնեա նոցին և փանիւ հար ,
Զի փախիցեն ծառայաբար :
Ի քէն մերկեա զգեստ տըրտմարար ,
Զերդ ըզպատան մահուն Ղազար :
Հայեաց 'ի կի՛նըն Կղոպատար ,
Որ վասն որդւոյն անմըխիթար ,
Աչօքն ետես լուսապայծառ
Թագիւ պըճնեալ արքայաբար :

Որոց Յիսուս ձեզ տիրաբար
Յաւուր մեծին երկնագումար
Ցուցէ զորդին ձեր գերափառ ,
Օրհնէք նովաւ զտէրն անդադար ։

# ԲԱՆ ՀԱՒԱՏՈՅ
# ՎԱՍՆ
# ԱՆԵՂԻՆ ԵՒ ԵՂԵԼՈՅ
# ԲԱՐԱՌՆԱԲԱՐ
# Ի ԴԻՄԱՑ
# ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՌԻՑ
# ՁԱՓԱԲԵՐՄԱՄԲ ՈԳԵԱԼ
# Ի ՆԵՐՍԻՍԷ

ՀԱՅՐՆ
—— *անըսկիզբն ասէ զԱստուած ,*
*Անեղ բնութիւն՝ ոչ արարած .*
*Ցերիս անձինըս բաժանած ,*
*Ի մի բնութիւն միաւորած :*

ԲԵՆԵՐՆ

—— ընաւից առէ անձառ,
Համան մըտաց գոլ անհընար
Զորդւոյ ծընունդն անեղաբար,
Զհոգւոյ բըղխումն անհատաբար:

ԳԻՄՆ

Գըրէ ինքեամբ 'ի նիւթ էի
Զաննիւթականն իմաստ բանի՝
Թէ Աստուած էր միշտ կենդանի,
Եւ է յայժմուս, և եղիցի:

ԴԻԱՅՆ

—— դաւանէ զԵրրորդութիւնն,
Երեք անձինք և մի բնութիւն.
Ոչ միութեամբ 'ի խառնութիւն,
Ոչ բաժանմամբն յօտարութիւն:

ԵՉՆ

Երրեակ անձամբ թիւ կատարեալ
ԶԵրրորդութիւնըն ծանուցեալ.
Ոչ քան զերիսն առաւելեալ,
Եւ ոչ երկուս կամ մին եղեալ:

ՁԱՅՆ

Զայս թիւ առեալ ըստ Եսայեայ
Ի Սրովբէից, որպէս և նայ.

Երկչըս սուրբ սան՛ նըմին ,
Եւ միանգամ տէր գերակոյ :

ԷՆ
—— Լապէս մեզ քարոզէ
ԶՈրդէնն , ուսեալ 'ի Մովսէսէ .
Թէ Աստուած էր 'ի սկըզբանէ ,
Եւ ոչ եղեալ 'ի յումեքէ :

ԸԹՆ
—— ընդ Էլին Հօր զուգակցան
ԶՈրդի ասէ համաբնական .
Ի Յովհաննէ ուսեալ զայս բան ,
Որ որոտայ յԱւետարան :

ԹՈՅՆ
—— Թարգմանէ մեզ ախրաբար
ԶՀոգւոյն բըղխումն անքննաբար .
Թէ 'ի Հօրէ է յատկաբար ,
Առնու յՈրդւոյ անճառաբար :

ԺԷՆ
Ժամանակի պարունակող
Ասէ զԱստուած գոլ ըստեղծող .
Ոչ ժամանակ առ նա հասող ,
Եւ ոչ աւուրց ըղնա չափող :

ԻՆՆ

—— խնկաւէս , ասէ , Բանին
Ի յոչընչէ ստեղծեալ զերկին .
Հաղորդ ընդ Հօր է և Հոգին ,
Որով եղեալքս ամէն լինին :

ԼԻՒՆՆ

Լոյսն՝ որ անեղ և գերազանց՝
Լուսոյ սկըսաւ, ասէ, ստեղծուած .
Նախ առաջին ըզհրեշտակաց ,
Երկրորդ զզգալի համատարած :

ԽԷՆ

Խաւար մածեալ 'ի յանդընդոց ,
Ասէ , փոխեալ լուսովն 'ի բոց .
Որով եղեւ տիւըն գործոց ,
Գիշեր հանգիստ քընոյ արթնոց :

ԾԱՅՆ

Ծիլն երկնային յերկրորդ աւուր
Մեկնեաց , ասէ , ըզջուրն երկնաւոր .
Եւ յերրորդին տունկք բուսաւոր ,
Յորում և դրախտըն լուսաւոր :

ԿԵՆՆ

Կազմեաց , ասէ , զանկապն ըզլոյս
Ի չորրորդին՝ յանօթ նիւթոյս ,

Զարեգակնէ և ըղըւմնոյս ,
Եւ զաստեղաց պարուն յօդոյս :

ՀՈՅՆ

Հրամանին , ասէ , արարչական
Հան 'ի ծոցէ կըրկին կենդան .
Զայնս՝ որ 'ի յօդս են թեւական ,
Եւ որ 'ի ջուրսըն լեղական :

ՁԱՅՆ

Ձայն տիրական , ասէ , եհաս
Առ 'ի սորին հողանիւթեայս .
Բըղխել յերկրէ չորքոտանեայս ,
Զանազանից կենդանեաց դաս :

ՂԱՏՆ

Ղօղեալ խորհուրդ , ասէ , թաքուն
Երրորդութեանըն միաբուն
Վասն 'ի հողոյ ստեղծեալ մարդոյն ,
Առնել պատկեր նըման նորուն :

ՃԷՆ

—— Ճառագայթ , ասէ , փառաց
Զգեցոյց մարդոյն զանմահ կենաց .
Զկինն 'ի կողէն արար հատուած ,
Օրէնս եդիր պատուիրանաց :

**ՄԵ՛Ն**

Մախաղ, ասէ, առ ’ի չարէն
Ընդ մեր պատուի՛ն՝ որ յարարչէն,
Եհա՛ն խաբմամբ առ ’ի դրախտէն,
Նած յերկիր յայս փշեղէն ։

**ՅԻ՛Ն**

Յայ՛նքան մեղաց, ասէ, չարիս
Արկ ըզբ՛նութիւ՛ն հողեղինիս,
Մի՛նչ սահմանաց բանալ երկնից,
Ծածկել ջրով զօրս ’ի յերկրիս ։

**՛ՆՈԻ՛Ն**

Նո՛յ յաղէլ անդ, ասէ, ընտրեալ
Միայ՛ն գըտաւ խուրալքն ապրեալ
Ի տապանի՛ն՝ զոր էր գործեալ,
Յորմէ կըրկի՛ն զերկիր լցեալ ։

**ՇԱՅ՛Ն**

Շի՛նուած, ասէ, զաշտարակի՛ն
Յետ այ՛նորիկ յանդըգ՛նէի՛ն.
Յոր խառ՛նակեալ լեզուք ՛նոցի՛ն,
Ձեռամբ խուբեա՛նց զայ՛ն քակէի՛ն ։

**ՈՅ՛Ն**

Ուսուցա՛նէ Աբրահամու
Թէ հաւատոյ տա՛ն հիմն եդաւ .

Ուստի Աստուած կերակրեցաւ ,
Եւ աւետեաց որդին տըւաւ :

ՉԱՅՆ

Չարեօք , ասէ , մարդկան որդոց
Լըցաւ աշխարհ պաշտմամբ կռուոց.
Բայց Յակովբայն այն ծընընդոց ,
Որ յերկաթին մոխին հընոց :

ՊԷՆ

Պըրտուեայ տապանին, ասէ, զՄովսէս
Եւ Յակովբայ զարմին հանդէս .
Փըրկել զնոսա աստուածապէս
Յեգիպտոսէ սքանչելապէս :

ՋԷՆ

Ջանաց , ասէ , առ ինք ձըգել
Տէրըն զորդիս մարդկան փըրկել.
Մատամբն իւրով օրէնք գըրել ,
Եւ մարգարէս սուրբ առաքել :

ՌԱՅՆ

Ռամիկ , ասէ , զազգըս մարդկան ,
Զի ոչ այսու առ՚նա դարձան .
Մեծագունի կարօտացան
Հնարից դեղոց բըժըշկական :

### ՍԷՆ

Սիրով, ասէ, Հայր առաքեաց,
ԶԲանն ընդ մարմին միաւորեաց.
Զոր և մաքուր Կոյսըն կրեաց,
Ծընաւ մարմնով որով փրկեաց:

### ՎԵՒՆ

Վերնոյըն լոյս, ասէ, մաքրից
Ծագեաց յաշխարհ այս ըստուերից.
Եւ հալածեաց զխաւարն յէից,
Ոգւոց փայլեաց լոյս ամենից:

### ՏԻՒՆ

—— տայ ասել բան ծայրագոյն
Վասըն Բանին իմանալոյն,
Տեառըն փառաց խոնարհելոյն,
Մինչև խաչի համբերելոյն:

### ՐԷՆ

Րամուեալեաց ձայնիւ լինի,
Թէ և բնութիւն ձայնի չունի,
Թէ որ ննջեացն 'ի տապանի,
Նոյն ազատեաց զորս 'ի բանդի:

### ՑՈՅՆ

—— ցընծութիւն մեզ քարոզէ
Զմիշտ կենդանւոյն յարութենէ,

Եւ դյուրութիւն մեր հաստատէ
՚Նըմին նըման՝ յորժամ գայցէ ։

ԽԻԽՆՆ

Խըսաէ ըղձեղ ընդ նոյն սիրով ,
Յօդեալ ՚ի գլուխն ամբառնալով ,
Յայն՝ որ նըստի ընութեամբ մերով
Հօր ընդ աջմէ բազմեալ մարմնով ։

ՓԻԽՐՆ

Փառաց անճառ լինի գուշակ ,
Որոց զԱստուած սիրեն յըստակ ,
Յորժամ մարմնովըն մերունակ
Ծագի յերկնից որպէս փայլակ ։

ՔԷՆ

—— Քրիստոսի՝ ձեռօքն իւրով
Զմեզ յորդորէ խաչակցելով ,
Զի և փառաց նորա յուսով
Հաղորդ լիցուք մաքրեալ հոգւով ։

ՙԼՈՐՈԳ., մանկունք իմաստութեան,
Տըւաք զայս բան ձեզ խրախութեան .
Երկնաւորացըն գիտութեան
Եւ համայնից եղելութեան ,
Բանկերտ Էին արարչութեան ,
Եւ փըրկական տնօրէնութեան ։

Սիրողք բանի խոհեմութեան ,
Զմիտս սրտին տուք քննութեան.
Եւ ճաշակեք համ բարութեան
Քան ըզմեղու յոյժ քաղցրութեան:
Սակաւ է սա քանակութեամբ ,
Եւ յոգնախումբ ունակութեամբ,
Ի յիմաստնոց ծանօթութեան
Որք միտ դնեն վերծանութեան :
Լցին Բանի բան գոհութեան
Մատուցանեմք փառաւորութի̃ :
Զներսէս յիշել մի դանդաղէք ,
Որ զուարճանայքըդ յայսոսիկ .
Տուք փոխարէն՝ զոր և պարտիք ,
Զաղօթըս սուրբս , որ պաղատիք :

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ
ԱՍԱՑԵԱԼ
ԲԱՆ ՄԱՂԹԱՆԱՑ

ԱՍՏՈՒԱԾ անեղ անհասական ,
Հայր գթութեանց , ինձ ողորմեա ։
Բանդ 'ի Հօրէ անճառ ծընունդ ,
Որ մարմնացար , 'ի յիս գթեա ։
Գոլեալ Հոգիդ սուրբ Աստուծոյ ,
Որ նորոգօղդ ես , ողորմեա ։
Դաւանողիս աստուածութեանդ ,
Երրորդութիւն սուրբ , յիս գթեա ։
Երկնաւորաց և անմահից
Բանիւ ստեղծող , ինձ ողորմեա ։
Զազգիս մարդկան յօրինեցեր
Ձեռամբ պատկերքո , յիս գթեա ։
Էրանուհւոյ Աստուածածնին
Սուրբ ծննդեամբն ինձ ողորմեա ։
Ընտրեալ մեծի կարապետին
Մկըրտութեամբն 'ի յիս գթեա ։
Թագաւորացն ընդ քեզ յերկինս
Առաքելոցն , ինձ ողորմեա ։
Քառանգողացն ըզկեանսդ անճառ
Աղաչանօքն 'ի յիս գթեա ։

Իւրաքանչիւր քոց սիրողաց
 Մաքուր հայցմանցն ինձ ողորմեա :
Լուսապայծառ քոց վկայից
 Հեղմամբ արեանցըն յիս գըթա :
Խաչակցելոցն ընդ քեզ հոգւով
 Պաղատանօքն ինձ ողորմեա :
Ծարաւելոցն յաղբեւր սիրոյդ
 Արբո և զիս, և յիս գըթա :
Կենարարիդ չարչարանօքն
 Որ յաղագս իմ, ինձ ողորմեա :
Հարմամբ ծնօտի քո ապտակին
 Ի ծառայէն՝ և յիս գըթա :
Ձաղանօքն 'ի զինուորաց
 Եւ եղեգամբն՝ ինձ ողորմեա :
Ղօղանջմանօքն հայհոյութեան
 Եւ վասըն թքոյն՝ 'ի յիս գըթա :
Ճըշմարտապէս խաչելութեամբդ ,
 Անապարտականդ , ինձ ողորմեա :
Մածմամբ մարմնոյդ 'ի փայտ խաչին
 Սուրբ բեւեռօքն , 'ի յիս գըթա :
Յանապարտական կողէդ հոսման
 Արեամբ և ջրովըն զիս լուա ,
Նորոգելով 'ի հնութենէ
 Կողիւ պարտեալ հինն Ադամայ :
Շարժմամբ ահիւ երկրի հիմանց
 Անշընչութեամբ քո , ողորմեա :

Որ զմարդկային հոգիդ յաւանդ
Ետուր առ Հայր քո, յիս գըթա։
Զարչարանօքն անարգաբար
Համբերելով, ինձ ողորմեա։
Պսակաւ փշոցն ըղփուշ մեղաց
Բարձեր 'ի մէնջ, և յիս գըթա։
Ջամբեալ վասն իմ 'ի ծարաւին
Զդառըն լեղին, ինձ ողորմեա։
Ոեալն քաղցու մեզ արբուցեր
Մարմնով ուրեամբըդ, յիս գըթա։
Սիրով եդար և արտասուօք
Ի տապանին, ինձ ողորմեա։
Վերաբերեր քո յարութեամբդ
Զմարդիկ 'ի կեանս, և յիս գըթա։
Տէր, ըզբնութիւնս արձակեցեր
Եւ արձակես այժմ, ողորմեա։
Բռնեա զմարմինս իմ ընդ հոգւոյս
Ի գալըստեան քո, յիս գըթա։
Ցընծացո՛յ բերկրեալ յուսով
Քոյին ծնընդեամբդ, ինձ ողորմեա։
Իւսմանք փառաց սըղսակելոց
Աղաչանօքն 'ի յիս գըթա։
Փրկիչ, յորժամ գայցես փառօք,
Զիս նորոգեա և ողորմեա։
Քեզ գոհութիւն երգեմք ընդ Հօր
Եւ ընդ Հոգւոյդ՝ այժմ յարակայ։

# ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ
# ԲԱՆ ՆԵՐՏԱՂԱԿԱՆ
# Ի ԽՐԱՏ
# ՈԳԻՈՑ ՀԱՄԱՅՆԻՑ
# Ի ԴԻՄԱՑ
# ՄԵՐՈՅՆ ՏԱՌԻՑ
# ՏԱՆՑ
# ՅԻՒՐԱՔԱՆՉԻՒՐՍՆ
# ՔԱՌԻՑ

## ԱՅԲՆ

— *Աստուծոյ զքեզ մերձակայ*
*Խոստաց լինել, թէ հաւատաս.*
*Տեսօղ գործոց ըզնա իմա,*
*Լըսօղ բանից ծանիր ըզնա ։*

Գաղանիք սըրտից յաչաց նորա
Չէն 'ի ծածուկ, այլ յայտնի կայ.
Թէ այս մըտօք նայիս 'ի նա,
Անմեղ մընաս միշտ յարակայ:

## ԲԵՆԸՆ

—— բանից, ասէ, չարաց
Սանձեա զլեզուդ վասն ընկերաց.
Ի բերանոյ քո հան 'ի բաց
Զխօսս աղտեղիս նախատանաց:
Նա և 'ի բան բամբասանաց՝
Գիր պահապան քոյոց շըրթանց,
Զի ապրեսցիս դու 'ի մեղաց
Եւ յանաչառ դատաստանաց:

## ԳԻՄԸՆ

—— գըրովք աստուածային
Ուսուցանէ խրատել լեզուին.
Բանք քո նոքօք յարդարեսցին,
Գործքըդ նոցին հետևեսցին:
Եւ մի ընդդէմ կալ հրամանին,
Այլ հնազանդեաց պատուիրանին.
Եւ ոտք քո ոչ մոլորին
Ի ճըշմարիտ ճանապարհին:

## ԴԱՅՆ

—— դատողին երկնաւորի
Խրատէ ըզքեզ սպասել յերկրի.

Եւ 'ի մարմնոյ քո վախճանի ,
Հոգւոյդ կոչմանըն աներունի
Մնալով լինել յանկարծակի ,
Նըման գողոյ 'ի գիշերի ·
Զի որ ասցին ակըն կալցի ,
Նա 'ի մեղաց ոչ յաղթեսցի ։

ԵՉՆ

Երգէ զայս միշտ յականջըս քոյ ,
Տուր ըղձամար պարտուցըն քոյ ·
Որպէս մանկունք ուսման գըրոյ ,
Ըզտախտակին համար տալոյ ·
Կամ որք վէհից արնտեսք գործոյ ,
Ա՛ռ 'ի ըշհամար պահանջելոյ ·
Քանզի արնտես ես քո հոգւոյ ,
Եւ պարգեւացն աստուածայնոյ ։

ՁԱՅՆ

—— զուգակից ըմբին ծանիր ,
Որ միշտ ասէ՝ թէ զօրացիր ·
Ի խորքընոյ մաշու զարթիր ,
Եւ 'ի յանձին քում զգաստացիր ։
Յանցաւորացըս մի՛ խաբիր ,
Յանանց կենացըն մի՛ զըրկիր ·
Զարդարութիւն այժմ ըզգեցիր ,
Եւ անդ փառօք պայծառացիր ։

Է՞Ն

Էնց լուսոյն հանուրց ծագող
Խրատէ լինել միշտ հայեցող.
Ըզմեղս, ասէ, ատեա և թող,
Եւ սրբութեանցըն լեր սիրող։
Զի որպէս չէ խաւար կըրող
Պայծառ լուսոյ և 'նըմանող,
Այսպէս հոգի՝ չարեաց գործող՝
Մաքուր լուսոյն չէ ընդունող։

ԸԹ՞Ն

——— ընկերի քո պատահել
Բարեաց իրաց ինչ յաջողել,
Խրատէ ըզքեզ՝ մի՛ յաչաղել,
Մի՛ մախանօք ըզքեզ այրել.
Այլ թէ կամիս, ասէ, հանգչել
Եւ Աստուծոյ հաճոյ լինել,
Դու գոհութիւն տուողին յաւել,
Այնմ՝ որ գիտէ հաւատարել։

ԹՈՅ՞Ն

——— թագ, ասէ, արքունական
Կամ պետութիւն իշխանական
Թէ ընկալցիս դու ըզմարդկան,
Մի՛ համարիր քեզ սեփհական.
Այլ ըստ հարանց քոց, որ անցան,
Ծանիր ըզքեզ ծաղկի նըման.

Եւ մի՛ լինիր ամբարտաւան ,
Այլ քաղցր և հեզ խոնարհական ։

ԺԷ՛Ն

Ժամանակեայ զկեանքս անցաւոր
Կարծել չըլայ քեզ փառաւոր .
Զի թէ 'ի կառս ես թագաւոր
Եւ կամ իշխան յոյժ զօրաւոր ,
Հողոյ ծընունդ ես հիւթաւոր ,
Յոր դառնալոց ես բնակաւոր .
Այլում գործոյ կաս գործաւոր ,
Յորմէ փոխիս ոչ կամաւոր ։

Ի՛Ն՛Ն

Ի ցասմանէ դու 'ի բաց լեր ,
Եւ մի՛ ըղձքեղ, ասէ, այրեր .
Եւ մի՛ ըղձանըս թունաւորեր
Առ 'ի սըրտէդ յառաջ բերեր ։
Մի՛ անողորմըն զքեզ տանջեր ,
Մի՛ անիրաւ իրըս գործեր ,
Զի մի՛ կրեսցես զոր տայց տէր ,
Զտանջելըն 'ի հուրըն մահաբեր ։

ԼԻՒ՛ՆԸ՛Ն

—— լըռել վարդապետէ ,
Ի ցաւագին բարկութենէն ,
Եւ յանհանգիստ սըրտմտութենէ
Հանգչել , ասէ , 'ի չար ախտէն ։

Ընկալ ըզգոյն և 'ի տեսանեն ,
Ցերանութեանց հեզոց բանեն .
Ծանիր թէ մերձ է որ գասէն ,
Հաստացանել քեզ փոխարէն ։

ԽԷՆ

Խորհրդակից բարի եղեալ ,
Մերժէ զխորհուրդ խորամանգեալ·
Լիցի 'ի քէն նա հեռացեալ ,
Որ յԱստուծոյ է ատեցեալ ։
Ճշմարտութեան լեր հետևեալ ,
Ուղիղ խօսից սիրող գտեալ ,
Մինչ զի և բան լոկ ասացեալ՝
Լինել երդման գերազանցեալ ։

ԾԱՅՆ

Ծանուցանէ յոյժ ծանրագոյն
Ըզբան երդման ուրանալոյն .
Զի թէ փակեաց ակն 'ի յայոյն ,
Եւ 'ի չարէն ասաց ըզգոյն ,
Զինչ ատենիցեն 'ի յերդնըլոյն
Մինչ 'ի յանուն տեառն Աստուծոյն
Եւ այն ստութեամբ յոլովագոյն ,
Որոյ մեղաց չիք վերագոյն ։

ԿԵՆԸՆ

—— կենաց զանցաւորէ
Կըրկին գըլամբք քաղաք ասէ .

Ընդ մի՛ն մըտեր մերկ յարգանդէ ,
Ընդ մեւմն ելցես մերկ յաշխարհէ :
Արդ զի՞նչ օգտիս դու 'ի շահէ
Ի քաղաքիս այս վաճառէ ,
Յորժամ 'ի դրունալըն կողոպտէ
Մահն , որ կենաց թըշնամին է :

ՀՈՅՆ

Հայեաց , ասէ , յոյժ այս բանիս ,
Եւ մի՛ սրտալիր միշտ 'ի մնալիս .
Մի՛ յապաղեր դու 'ի չարիս ,
Այլ փոփոխեա փոյթ 'ի բարիս :
Զի յորժամ ոչ գիտես , կոչիս
Եւ ըստ գործոց քոց պահանջիս .
Եւ թէ չունիս պատասխանիս ,
Յանկըյս խաւար բանդ արկանիս :

ՁԱՅՆ

Ձի՞ոյ ըղքեղ օրինակով
Զմարմինդ 'ի կառըս լըծելով ,
Եւ կառավար ուղղիչ սանձով
Զհոգիդ , ասէ , անդ նըստելով .
Թէ անմոլար ճանապարհով
Գընաս յօրէնս տեառնըն սիրով ,
Յայնժամ յառնելըն քո մարմնով
'Ի առաջ նորա թըռչիս ամպով :

ՊՂԱՏ՛Ն

—— ղեկ առնուլ քեզէն ճարտար
Նաւել յայս ծով տայ հրմտաբար.
Աւէ, յուզել ալեացն յերկար՝
Ընդդէմ կայցես հըզօրաբար։
Վարեա զհոգւոյդ նաւ անդադար,
Հոգւոյն թեւովք առ ՚ի հանճար.
Զի հաստուցես անդորրաբար
Յանքոյթ տեղին խաղաղաբար։

ԾԷ՛Ն

—— Ճառագայթ առ ՚ի սրբաէդ,
Աւէ, ծաղեա լուսոյ հանդէս.
Զբանըս բարիս հեղ ՚ի լեզուէդ,
Զողորմութիւն ՚ի ձեռանէդ։
Բայց յարարչէն քեզ պարգեւէդ
Մի վատթարաց վաներ յանդէս.
Թէ ոչ, վըճար տաս ՚ի յանձնէդ,
Յորժամ խընդրէ ՚ի յառողէդ։

Մ՝ԵՆ՛Ն

Մերժել ՚ի բաց, ասէ, ՚ի քէն
Զախտըս մեղաց՝ որ ՚ի չարէն.
Զպոռնըկականն և զայլն ամէն,
Որով գաղտնի նետիւք խոցէն։
Յայլ կապարճաց առնու իւր զէն,
Ի գեղեցիկ տեսեալ դիմէն.

Եւ հարկանէ զաչըս քեզէն ,
Ի չարաչար հայեցմանէն :

ՅԻ՛Ն

Ցինէն , տաէ , մանուկ , ընկալ
Զայս բան խըրատ՝ յաշխարհի սգալ.
Ունայնութեանց ըղքեղ մի՛ տալ ,
Մնաւ խաղօք անմըտանալ .
Ալլ յիմաստնոց դըրունըս գնալ ,
Եւ յուսմանէ ոչ ձանձրանալ ,
Զի մի՛ անձին տաս զըղջանալ ,
Յորժամ հընար չէ յետ դառնալ :

՛ՆՈՒ՛Ն

՛Նորոգ , տաէ , երիտասարդ ,
Զիմաստութիւն զգեցիր քեզ զարդ .
Մի՛ զպատմուճանըս բազմազարդ ,
Որ ըղտըղայս տանէ զըւարթ .
Ալլ ըղհանճար ծերոց և զխրատ ,
Որով յայտնի ճանաչիս մարդ .
Քանզի յիմարն է հասեալ յարդ ,
Իսկ իմաստունն որպէս ըղվարդ :

ՇԱՅ՛Ն

——— շատ , տաէ , ով ծերունիդ
Հնացեալ ալեօք , կալ յաշխարհիդ .
Ժամ է դառնալ այժմ 'ի հողիդ ,
Մինչ դեռ 'ի ձեռս է քեզ բարիդ :

Ծառայեցեր մարմնոյ գերիդ ,
Մինչեւ 'ի յափըն տապանիդ .
Տուր 'ի մնացեալ ժամանակիդ ,
Մասն ինչ հոգւոյ բանականիդ ։

ՈՅՆ

Ուսուցանէ զքեզ դիւրութեամբ՝
Եւ սաստ և անդ լի բարութեամբ ,
Սիրել զԱստուած ճշմարտութե̃ .
Եւ զքո ընկերըն ստուգութեամբ ։
Մերժել ըզչարըն ատելութեամբ ,
Գըրկել զբարին սիրելութեամբ .
Պահել զհոգի քո սըրբութեամբ
Եւ անհըպարտ խոնարհութեամբ ։

ՁԱՅՆ

—— չար ասէ զագահութիւն ,
Զի շատ մեղաց է ծնելութիւն .
Զի 'ի նմանէ է սպանութիւն ,
Նա է աւար և գերութիւն .
Անտի սկըսեալ է գողութիւն
Եւ անիրաւ դատողութիւն .
Ի յայնմանէ վաշխառութիւն
Եւ ըզմիմեանս ատելութիւն ։

ՊԷՆ

—— պատուիրէ՝ կալ անբամբաս
Ի յայս չարեաց, յորում թէ կաս .

Զի մի՛ հոգւոյդ առնես վնաս
Ի ձախակողմըն կալով դաս.
Եւ մի՛ նախատ ՚ի կենդրս յոյս,
Յորում զարժանն ումեք ոչ տաս։
Տուր զանցաւորդ՝ զոր ըստանաս,
Եւ առ զանանցըն՝ յոր դընաս։

ՋԷ՛Ն

Զընջել զհոգիդ, ասէ, ջերմեք
Յախտից մեղաց՝ ջերմ արտասուօք.
Զի լաւ է լալ աստէն կամօք
Եւ անդ ցընծալ մեծաւ փառօք,
Քան աստ խընդալ ախտալէս մեղօք
Եւ անդ կըրճտել խիստ ատամօք.
Եւ այս առկաւ ժամանակօք,
Եւ այն յաւէտ անթիւ ամօք։

ՌԱՅ՛Ն

—— ըռամիկ արանց հանուրց
Ոչ նախանձել, խրատէ, վարուց.
Եւ զինարբուաց երգոց պարուց
Մի՛ հաղորդել լըկտի բարուց։
Զի փոխանակ աստէն ծաղուց,
Կոծումն և լաց է անդ նոցունց
Ընդ մեծատանն այնմիկ դասուց,
Որ փափաքէր կաթիլ մի ջուրց։

ՄԷ՛Ն

Մէր աշխարհիս այս ախտաշարժ
Ատել խրատէ զաղտեղի դարշ·
Եւ թէ մեղաց մի՛ լինիր բաժ ,
Ախտից տռուամբ ձգելով՝ի քարշ:
Զի թէ մարմինդ ստասցէ վաշ ,
Հոգիդ հիւանդ լինի և հաշ·
Թէ այժմ ուրախ առնէ և հրաշ ,
Ապա յետոյ տայ քեզ մահու ճաշ:

ՎԵԻ՛Ն

—— վարք , սաէ , պիղծ անաւակ
Տեառըն կամացն է յոյժ ներհակ·
Եւ որ 'ի յայս սէր է համակ ,
Ի Աստուծոյ սիրոյն դխմակ:
Արդ մի՛ ըմբեր խիստ տխորժակ
Զանցաւորիս սիրոյ բաժակ·
Այլ փոփոխեա զմըրըրատեսակ
Յանապական սէրըն յըստակ:

ՏԻԻ՛ՆԸ՛Ն

—— տերանց և իշխանաց
Խրատ ընծայէ իմաստութեանց՝
Թէ մի՛ սիրէք ժողովել գանձ ,
Այլ ըղձողով բարի տրանց·
Ըզմըտերիմըն տէրութեանց
Եւ զհետեւողըն քաջութեանց·

Որք վաղըն ձեր 'ի մահ անձանց
Կամաւ դիմեն որպէս 'ի գանձ ։

## ՐԷՆ

—— տառ չէ՞ բանի սկըսուած ,
Այլ ակամայ բըռնադըօսած .
Բայց դու զակամըն առ ընթերցուած,
Թէ զի՞նչ խօսի՝ ըզմըտաւ ած ։
Սիրեա բոլոր սըրտիւ զԱստուած,
Եւ օրինաց նորա խնամ՛ ած .
Զհոգիդ պահեա յախտից մաքրած,
Եւ 'ի մեղաց միշտ լըւացած ։

## ՑՈՅՆ

—— ցուցանէ մեւս բան խըրատ ,
Որ 'ի չարեաց առնէ ազատ .
Մի՛ նախանձիր բըռնաւ ընդ մարդ ,
Եւ մի՛ նենգեր զընկեր քո գաղտ ։
Զի Աստուծոյ ծածկեալն է յայտ,
Եւ հատուցէ փոխան քեզ դատ ,
Կամ 'ի յաստի կեանքս անընդհատ,
Կամ 'ի վերջին օրըն հաստատ ։

## ԽԻԽՆՆ

—— յօդական միայն է տառ ,
Բայց զոր յօդէ քեզ խըրատ առ .
Յորժամ մեղաց դաւըն պատառ
× Քեզ երեւի քաղցր և դիւրառ ,

Նախ քան զուռել նորա 'ի սպառ՝
Յիշեա զամօթն և ըզպատկառ ,
Եւ չիջանի բոցն՝ որ 'ի վառ ,
Եւ զգօնանոյ միտքըդ յամառ :

ՓՈՒՐԸ՛Ն

——— փառաց է քեզ քարոզ ,
Այս խրատական բանից տաղիս ․
Ում թէ սրբուն լինիս 'ի յուղ
Եւ տաս աճել խրբեւ ըղձոյս ,
Զհոգիդ մաքուր պահէ և լոյս
Ի յաշխարհիս խաւարեցոյս ․
Եւ համբերձեալ կենաց տայ յոյս ,
Պըսակ անուն քեզ ընդ հաճոյս :

ԳԷ՛Ն

Քեզ կատարումըն յայս տաղից՝
Տայ ակն ունել աւուրն ելից ․
Ոչ ընդ սիրոյ տարակայից
Մինչ բեւեռիլ անլոյծ կապից ,
Այլ պատուիլ յայժմուս ախտից ,
Ընդ Քրիստոսի գոլ խաչակից ․
Լինել սրբոց քաղաքակից ,
Եւ անմարմնոցըն ձայնակից :

՚ՆՈՐՈԳ բանիս այսմիկ հանդէս ,
Գումարելոց աստ տիրապէս ,
Երգել տաղիւ համերապէս ,
Խառնեալ 'ի հիւթս հոգեպէս :
Բամեալ 'ի քերթս տարրապէս ,
Զանազանեալ տառիւ յանդէս .
Սա ոչ գիտնոց՝ այլ տղայապէս
Մանկանց որսաւ նուսխայապէս .
Է թագուցեալ ընդ մարմնապէս
Երից յանից խորհրդապէս
Սուրբ հոգեւոր բանիս պէսպէս ,
Որոց նըրպատ եղեւ Ներսէս :

# ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ

# ԽՐԱՏ

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԱՑ ՄԱՆԿԱՆՑ

# Ի ԴԻՄԱՑ

# ԱՅՐԵՆԻՐԵՆԻՑ ՏԱՌԻՑ

# ՈՏԱՆԱՒՈՐ ՏԱՂԻՒ

# ՉԱՓՈՑ

ԱՅԲՆ

*——— առաջին ըղձեղ , ողջայ ,*
*Հանէ յիմաստըն գերակայ .*
*Երրորդութեանըն մերձակայ*
*Լինիս երկուք առեղամբք նորա :*

ԲԵՆՆ

*Բնութիւն բանի 'ի քեզ բղխէ ,*
*կայծն իմաստից որրուցանէ .*

Ձեւոյն խորով վարդապետէ ,
Ըղձանարհեկըն Որդւոյ պատմէ ։

## ԳԻՄԸՆ

——— զանձէ քեզ բեւր բարի ,
Գրելով զիմաստս ՚ի տախտակի .
Զ՛նա արկ ՚ի քոյդ պարանոցի ,
Որ պատուական է քան զոսկի ։

## ԴԱՅՆ

Դուռըն բանայ քեզ գիտութեան
Աստուածային իմաստութեան .
Բախեա և մուտ արիութեամբ ,
Մի՛ արտաքոյ մնար հեղգութեամբ ։

## ԵՉՆ

Երկնաւորացըն տայ ցանկալ ,
Ի յերկրայնոցս ՚ի բաց դառնալ ,
Ուսմամբ գըրոց զըւարճանալ ,
Իմաստութեամբ ուրախանալ ։

## ԶԱՅՆ

Զարթուցանէ ըզքեզ , մանուկ ,
Ձայնիւ հընչմամբ որպէս թըմբուկ .
Մի՛ յուսմանէ լինիր տաղտուկ ,
Զի մի՛ տաս վայ անձինդ յատուկ ։

Է՛Ն
Էրանութեանց նախնի գոլով՝
Զքեզ հրաւիրէ դաւթեան երգով,
Առ 'ի չարեաց հեռանալով
Խորհել յօրէնս տեառըն սիրով։

Ը՛Թ՛Ն
Ընդ քեզ խօսի զայս բան խըրատ,
Ի յանխրատիցըն կալ 'ի զատ,
Զի մի՛ ընկէն զինքեանցն արատ
Ի սըրտի քում որպէս զարմատ։

ԹՈՅ՛Ն
Թէ միտ դընես, ասէ, բանին
Իմաստութեան Սողոմոնին,
Ոչ կարօտիս իմում խըրատին,
Քանզի նովաւ խօսի Հոգին։

ԺԷ՛Ն
Ժուժկալ լինել, ասէ, յուսումն,
Թէ և ապտակ առնուս յարբումն.
Հայեաց յակին՝ որ 'ի քրայումն,
Զի ծեծելով առնու զմաքրումն։

Ի՛ՆՆ
Ի նանրութեանց, ասէ, դարձիր
Եւ սուտ խաղօք մի՛ ըզբաղիր.

'Ի անմիտ մանկանց մի՛ նախանձիր,
Այլ իմաստնոց նըմանեցիր :

## ԼԻԻՆ

——— լուր, ասէ, հօր քո խրատու,
Լեր օրինաց մօր քո հըլու :
Վարդապետին հնազանդ կաց դու,
Յորմէ շահիս բան լուսատու :

## ԽԷՆ

Խրատէ խաղալ ընդ սուրբ դըրոց,
Մի՛ ընդ անմտըն տըղայոց ·
Եւ ընդ բանից մեծ իմաստնոց,
Փոխան վիժմանցն ըզչար ճիշոց :

## ԾԱՅՆ

Ծովու նըման, ասէ, գիմաստ,
Որ 'ի յերկնից իջեալ է աստ ·
Բաց ըզհոգւոյ քո առագաստ,
Ծըծել մըտօքըդ լեր պատրաստ :

## ԿԵՆՆ

Կաթիլ միայն թէ առնուցուս
Ի ջրոյն կենաց որպէս մեղուս,
Ոչ ծարաւիս, ասէ, յայժմուս ·
Այլ և գետոց բըխես առուս :

ՀՈՅ՛Ն

Հայեաց, աստ, մանուկ, և տես
Զինչ 'ի տախտակըդ գըծագրես.
Զի Մովսէսի դու նըմանես,
Զգիրս Աստուծոյ կըրկին գըրես:

ՁԱՅ՛Ն

Ձայնէ առ քեզ, մանուկ ուշիմ,
Թէ ականջօք լուր ըզբանս իմ.
Ուսման գըրոց լեր մըտերիմ,
Եւ բարձրանաս դու 'ի յերկին:

ՂԱՏ՛Ն

Ղամբար վառէ քեզ լուսաւոր,
Եթէ լիցես մարդ մըտաւոր.
Կըրթեա յիմաստըս հոգևոր,
Որով լինիս դու երկնաւոր:

ՃԷ՛Ն

—— Ճանաչել տայ ըզհանճար,
Ըստ Առակաց բանին յարմար.
Որով խրատիս լինել արդար
Եւ Աստուծոյ հաճոյարար:

ՄԵՆ՛Ն

Մատուցանէ քեզ օրինակ
Զորս 'ի մանկանց բարեաց ունակ,

ԸզԴանիէլ մանուկ յըստակ ,
Որ և ցանկայր նըմա հրեշտակ :

ՅԻՆ

Յիշեա , ասէ , զմանկութեան երխ ,
Զաշակերտեալս Դանիէլիս .
Զի թէ սոցա նըման մաքրիս ,
Ի հրոյ մեղաց ոչ այրեսցիս :

ՆՈՒՆ

Նայեաց և տես , ասէ , զՅովսէփ
Ըզհրեշտակաց նըմանն 'ի դէպ .
Պահեա և դու զքեզ անվըրէպ ,
Յեգիպտուհւոյն ախտից հանդէպ :

ՇԱՅՆ

Շնորհաց թէ ես , ասէ , սիրող ,
Դու իմաստնոց լեր հետեւող .
Որք առ իմաստըն փափագող ,
Մինչեւ 'ի մահ եղեն ճգնող :

ՈՅՆ

Ո՛վ դու , ասէ , մանուկդ 'ի բոյս ,
Նըման առ քեզ զԵղիսէոս ,
Որ 'ի մաշկեակըն հըպելոյս ,
Եթող ըղձէր բատորնայնոյս :

ՉԱՅՆ

*Չարչարանաց, ասէ, համբեր.*
*Պանդըխտութե՛ ժուժկալ դու լեր։*
*Թէ հարկանիս՝ մի՛ երկմըտեր*
*Վասն խըմաստիցըն շահաբեր։*

ՊԷՆ

*—— պատուիրէ պարկեշտ լինել,*
*Մի՛ զըրուցընդ խըճողել,*
*Մի՛ ըզգեննի բընաւ սիրել,*
*Մի՛ տարաժամ զբերանդ յածել։*

ՋԷՆ

*Ջանիւ հայցես, ասէ, շնորհաց.*
*Մի՛ ծոյլ կենար և դեգերած.*
*Մի՛ սիրեր զքուն դանդաղանաց,*
*Մի՛ արթնութիւն ըզգաղանաց։*

ՌԱՅՆ

*Ռահիւ համէ զքեզ 'ի բարձունս,*
*Գընալ հոգւով ընդ իմաստունս.*
*Թէ զանձըն քո տաս 'ի ճըգունս,*
*Եղցես յիմաստըս գերաբունս։*

ՍԷՆ

*Սիրել խրատէ ըղնիւթ ուսման,*
*Զխոհեմութիւն ասեմ և զջան,*

Այլ և զխորհուրդըս մաքրական,
Որով հոգիքըն զօրանան ։

ՎԵՒՆ

Վարք զաշխարհիս այս ծանուցեալ,
Թէ է 'ներհակ ուսման եղեալ․
Զի որ ախտիւ զհոգին զանգեալ,
Նա 'ի շնորհաց Հոգւոյն զատեալ։

ՏԻՒՆ

Տայ քեզ խըրատ բան հոգեւոր,
Պահել զհոգիդ քո զգուշաւոր․
Մի՛ յոք հըպել արատաւոր,
Եւ մի՛ ունել չար մերձաւոր ։

ՐԷՆ

Րաբունաբար վարդապետէ,
Քեզ ըզբարիս ուսուցանէ․
Հնազանդ լինել ծերոց, ասէ,
Որպէս օրէնըն պահանջէ ։

ՑՈՅՆ

Ցածուն, ասէ, խոնարհամիտ
Լեր առ ընկերն և բարեմիտ․
Եւ ոչ հըպարտ բարուք և բըրտ,
Թէ և շընորհ ունիս յոգիդ ։

ԽԻ՛Ն
Խուսէ ընդ այս բանըս՝ յարմար ,
Մի՛ շատ խօսել և վայրապար ,
Մի՛ ծիծաղել անկարգաբար ,
Մի՛ վիճաբան լինել և չար ։

ՓԻՒՐ՛Ն
Փութա , աղէ , վարժել անդուլ,
Եւ 'ի շնորհաց չլինիս ամուլ.
Եւ թէ մըտօք ես բութ և գուլ,
Ջանիւ զուսումըն կեր և կուլ ։

ՔԷ՛Ն
Քեզ համարել տայ բարեկամ,
Որք վասն ուսման հարուն քեզ գան.
Քանզի ապտակ և գաւազան
Յետոյ բազում փառըս քեզ տան ։

ՄԱԽԱՆՁԵԼԻ մարդկան լինիս ,
Թէ զվերադրեալդ 'ի միտ ունիս .
Եկ բեր , մանուկ , զունկըն քո յիս ,
Լուր և անսա խրատում բանիս ։
Բարուն լինիմ բըղխմամբ սըրտիս ,
Ուսուցանել քեզ ըզբարիս .
Սիրեա զուսումն՝ որով պատուիս
Ի յերկնայնոցն և 'ի յերկրիս ։

Երանելի և մեծ լինիս ,
   Եթէ զերկեւղ տեառն ունիս :
Սիրով 'ի բաց լեր աշխարհիս ,
   Եւ յԱստուածոյ սէրըն վառիս :
Ինձ լուր, որդեակ, հօր քո խրատիս,
   Եւ յուսմանէ մի՛ ծուլանայցիս .
Եթէ 'ի յայս սէր բորբոքիս ,
   Անանց կենաց ժառանգ լինիս :

## ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ

## Ի ՍՈՂՈՄՈՆ ԱՐՔԱՅՆ

ՍԱ մարգարէ աստուածաբան,
  Եւ իմաստուն յոյժ խոհական.
Սա օրինակ է աննըման
  Սողոմոնին Ճըշմարտութեան.
Սա 'ի հօրէն իւր սեփհական
  Առնու ըզթագն և զգաւազան.
Սապէս և տէրն յիւր հայրական
  Նըստեալ յաթոռ աստուածական:
Ունի լինել այն թագաւոր
  Երկուց կանանց 'նախ դատաւոր,
Որ վըճըռաւ վաղակաւոր
  Եցոյց զորեանըն մերձաւոր.
Որպէս և տէրն իմ' դատաւոր
  Խաչիւ զիշխանըն բըռնաւոր.
Որով կըրկին գայ ահաւոր
  Դատել ըզսեռըս բանաւոր:
Ղամբարափայլ շինեաց տաճար
  Այս Սողոմոն խորանայար.
Լուր երկաթոյ չհընչեալ 'ի քար,
  Լոյս օրինացն 'ի նմա բնաբար:

Լուսագոյն յոյժ քան զայս տաճար
Զոր 'ի կուսէն մարմին առար ·
Լերանց նման անշարժաբար
Զեկեղեցւոյ կանգնեալ կամար ։
Ունել ունէր սա սըլօրալի
Խաղաղութեան անուն բարի ,
Որով յաղթող բազմեալ նըստի
Յերուսաղէմ՝ որ յաշխարհի ։
Ուստի և տէրըն մեր լինի
Խաղաղութիւն որոց յերկրի ·
Ոչ մարմնական՝ որպէս սաի ,
Այլ անմարմնոց ուրք 'ի մարմնի ։
Մեծափափաք տենչմամբ լըցաւ
Սովաւ դըշխոյն՝ որ 'ի հարաւ ·
Մինչ զի ծագաց յերկրէ չոգաւ
Յիմաստութեան սորա համբաւ ։
Մեծ քան ըզսա տէրն ասացաւ ,
Որով զհըրեայըն դատեցաւ .
Միոյն փոխան ժողովս անբաւ
Առ տէրըն մեր հաւաքեցաւ ։
Ոչ համեմատ երկրածընաց
Բանն Աստուծոյ ըզնա ասաց ,
Ոչ 'ի նախնեաց թագաւորաց
Իոչ յապագայց բըռնաւորաց ,
Ոչ մարմնական միայն փառաց
Կամ հեշտութեանց անցաւորաց ։

Ունի զիմաստըս գերապանծ՝
Զոր վերագոյն ծանեաք բազմաց ։
Նոյն ինձ ըղձանն Աստուած իմս
Անզուգական գոլով սըմա ․
Նա 'ի յերկրէս էր աստրակայ ,
Տէրն 'ի յերկնից իջեալ արքայ ․
Նըմա զիմաստըն չափով տայ ,
Զօրն իւր ունի ինքն անխընայ ․
Նա կորուսեալ զոր ես նըմայ ,
Սա շնորհըս տայ որք յԱդամայ ։

## ՆՈՐԻՆ

## Ի ԺՈՂՈՎՈՂ ԱՆՈՒՆՆ

ՆԸՄԱՆԱԲԱՐ *խորհուրդ խորին*
*Յայտնէ և միւս անուն նորին .*
*Եկայք տեսցուք զիմաստ բանին ,*
*Ըզմիտս անուան ժողովողին :*
*Բամէ զհանճարըս սա 'ի մին*
*Զիմաստութեանց ըզպիտանին ,*
*Սիրով զորդիսն Իսրայէլին*
*Ժողովելով զամենեսին :*
*Ի տեսանել զայս առ փրկչին ,*
*Ճըշմարտապէս Ժողովողին .*
*Սարտուցելոցս ազդմամբ չարին*
*Բերող զորդիսն 'ի միասին .*
*Ի խորանէ սաս ըստորին*
*ՅԵրուսաղէմ հանէ վերին :*
*Բայց և ըզշնորհս աստուածային ,*
*Զոր բաժանէ մասունս հոգին ,*
*Աշակերտաց շնորհէ Բանին ,*
*Նոքօք ծնընդոց աւազանին :*
*Ներսէս ծառայ տեառնըդ վերջին ,*
*Հայցեմ յասսա շնորհէդ կըրկին*

Սրբել զհոգիս յախտից չարին,
Տաճար առնել քեզ վերըստին,
Նիգ մուժ, երբեակ անձին,
Երգել միշտ փառս ընդ Սրովբէին ։

# ՆՈՐԻՆ
# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԱՌԱԿԱՑ
# ՍՈՂՈՄՈՆԻ

ԱՍՏՈՒԱԾԵՂԷՆ հոգւովն 'ի մաԱ
Խաղաղութիւն անուն արքա
Բարբառեցաւ իմաստութեամԲ,
Զորգլխ խրատեաց ըզգօնութեամբ:
Գեղեցկագիր բանիւն 'ի կարԳ
Գըրիչ եղեւ Հոգւոյն արագ.
Դաւթի որդի վէհ քան ըզմարԴ
Մարգարէին աստուածաշարդ:
Երրեակ տաղիւ վերաբերԵ
Զմարդիկ յերկինըս մակագրէ:
Զգեստ արկանէ ալւայոց բեհեԶ
Զհնազանդ լինելըն հօր և հեզ.
Էին շնորհօք պըսակ կայլԷ,
Մանեակ ոսկի զպարանոցէ.
Ըստ մանկական տիոց նոցաԸ,
Նոյն և խոստումըն յարակայ:
Թըմբրեալ զհոգիս առնէ զըւարԹ,
Յայս չանկանել դառն որոգայթ.
Ժամանակեայ զկենցաղըս յոյԺ.
Աւէ, զանկեալըն 'ի սմա անրոյժ.

Իբրեւ երազ խոր գիշերի,
Կամ պըղպըջակ ինչ կաթուածի։
Լայն Ճանապարհըն հետեւեԼ
Տանի 'ի գուբ խորին ուանել։
Խորասուզեալ մանկանցն 'ի յուԽ
Խրատ ընծայէ սա հոգեբուխ,
Ծածուկ բարեաւ խորհըրդագծաԾ,
Մինչ 'ի յոգւոջ ունել զԱստուած։
Կենարարին սպասել համաԿ,
Ոչ մոռանալ սուրբ զյիշատակ.
Հայել վերջին օրն և 'ի մաՀ,
Ու ի սպառնալեացն երկեւղ և ահ.
Ձայնըն հաւուն յոյժ գերապանՁ,
Որով գայցեն մեռեալքն 'ի դարձ։
Ղօղեալ սարսեն դըսաւերքն 'ի խաՂ,
Ողբան ոըկար ձայնիւ նըւաղ։
Ճառագայթից լուսոյն ՃաՃանՃ,
Լուսին ուստեղք Ճեմել զըւարՃ,
Մեծին ծագմամբ չփայլեն այլուՄ,
Մինչ փայլակէ լոյսն անպատում։
Յանժամ թըռչին 'ի կառս ամպոՅ
Արդարքն նըման խիտ մարախոյ։
Նըշին ծաղկէ գուշակ գարնաՆ,
Գունով պըՃնին վըկայքն արեան։
Շըրջին կոծով գնացողքըն գարՇ,
Կապար մեղացն անկցին 'ի քարշ։

Որք 'ի բարձունս հայլին լուսՈ ,
Աղբին գողան յանհեղեղոցս :
Զէ ախտանի արծաթըն ցինԶ ,
Եւ ոչ ոսկւոյն գեղ զարդարիչ·
Պարօղն անուշ հոտոյ 'ի վըէՊ ,
Պատկեր եւԹանց գարունցս 'ի դէպ·
Ջըրոյն կենաց սափորն 'ի մէնՋ ,
Այն խորանկի յաղբերըն մէջ:
Ոտաշեալ սըբոցըն լուսավաՈ ,
գնացեն յերկինս 'ի տունն անձառ:
Սա միջակին է խրատ մարդոյՍ ,
Յորժամ շարժի ախտիցըն բոյս:
Վերադառնայ ներհուն բանովՎ ,
Երգէ զխմաստս երրորդ տառով:
Տիրականի մանինս ապաՏ ,
Որ յերկրայնոց կըրեցս 'ի զատ·
Րաբունական սիրոյն ախպաՐ
կացուցանէ անմիջաբար :
Ցընծալ բերկրիլ ընդ հրեշտակաՑ
Ի յառագաստն օրիորդաց·
Իփսակ հարսին սիրով կիզոՒ ,
Մարգըրտայեա եւ լուսատու :
Փեսայն իջման ցօղատարաՓ
Համբուրէ զոխպըն լուսոյ արփ՝
Քոյր կոչելով, աստուածականՔ
Յաննիւթական տարեալ քաղաք:

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ

ՏԱՌԻՑ

ՅԻՇԱՏԱԿԻ

ՔԱՂՑՐԱԳՈՅՆԻՍ այս բաղձանօք
Լցեալ հոգիս մեռեալ մեղօք,
Փափաքեցի սրբատառորոփ
Ես որ ընաւից բարեաց ամփոփ:
Իւրաքանչիւր բան կենսատուի
Պէսպէս ցաւոց իմ լուսատու.
Ցընծամ հոգւով մինչ կարդացիՅ,
Թէպէտ սուրբ ոչ եմ 'ի յախտից:
Րոսէ զմարմինս հոգեւոր,
Ջմեռս գործէ բանից աղբեւր.
Տանել զանուան ամենադէՏ,
Հայել յաննիւթ լոյսն որպէս դէտ:
Վասն այսորիկ տաժանելով,
Ձեռամբ ըղսա գըծագրելով,
Ստացուած բարեաց երեւելոյՍ,
Եւ յետ մահու յիշումն եւ յոյս:
Ուոին քաղցու կենաց բարբառՈ
Պարզաբերէ անմահ այս ծառ.
Ջերմ արտասուօք ջուր կաթուածոՋ
Ի լռաղաց հոսէ յոդւոջ:

Պատան վիրաց լինի և կաՊ
Թէ որ սրտին լինի պարապ ։
Չէ նախանձոտ սա ուսուցիՉ ,
Քանզի ձըրի է պարգևուիչ·
Որ ոք մըտաց ըղբերանՈ
Դուռըն բանայ այս հանճարո ,
Շնորհէ յառատ գանձուցն իւր ուՇ,
Իւղով մարդէ 'ի հոտ անուշ ։
Նարդոսաքըլըքում զմուռ ընդ հալուէՆ
Կազմէ քաւխէք զաւաքինին ·
Յանդատասանէ բերեալ խընդոՅ
Մեռելութիւն ախտից մարմնոյ ,
Մերժէ 'ի բաց զախտըս տարտամՄ ,
Գործով բարեաց առնէ փարթամ։
Ճառից սորա լըսել պատշաՃ ,
Կենդանի ձայն հընչէ յականՃ ։
Ղամբար լուսոյ մըտաց նըւաՂ ;
Նեխեալ հոգւոց լինելով աղ ։
Ձիոց նըման մեծատանց սանՁ ,
Եւ աղքատից յիմաստից՝ գանձ ։
Հաց հանճարոյ սորա անմահ ·
Եկայք կերայք , սովեալք 'ի մահ ։
Կացցէ 'ի սիրտըս ձեր յըստաԿ
Խառնարանին անմահ բաժակ ։
Ծարաւեցայ բանից անբիԾ ,
Եւ տարփացայ դըրօշմել 'ի գիծ ·

Խանդակաթեալ սաստ միջամտուխ ,
Հասի յաւարտ վախճան կանուխ ։
Լըցի զըղջումն իմ անձկացեալ ,
Ի սոյն ժամու վարժմամբ կըրթեալ ։
Ի ժամանակ յոյժ անբարի ,
Մինչ գերմանիկն առեալ լինի ,
Ժամանեցին աշխարհի գոյժ ,
Քրիստոնէից գոլով անոյժ ։
Թուական Հայոց հինգ հարեւր ւութ
Նա և ութսուն երկուք և ութ ։
Ընթերեալ գըլուխ գոյր հայկազնինԸ
Գրիգորիոս պալհաւունինը ·
Էր 'ի յաթոռ լոյս ընդ լուսէ ,
Շնորհօք լըցեալ 'ի Քրիստոսէ ։
Զարմ և ժառանգ հօրն ամնխաՂ ,
Համանըման և ոչ նըւազ ·
Եղբայր երէց գոլ յարգանդէ
Իմ Ներսէսի՝ որ զայս ոգէ ։
Դարձեալ եղբարց երկուց ծընուՆԴ ,
Ըստ աշխարհի գոլ բարեմնունդ ·
Գոլեալ Վասիլ իշխան առոյԳ ,
Եւ զօրավար ընտրեալ 'ի կարգ ։
Բայց և ծնողաց մեր հանդերձ քերբ ,
Լիցի յիշումն յաւուրն աներբ ։
Աւարտ բանիս , տէր , ողորմեԱ
Առ հասարակ մեզ և նոցա ։

# ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ
## ՈՐԴԻ ԻՄԱՍՏՈՒՆ ԳԼԽՈՅՆ

ՙՆՈՐՈԳ ծընունդ, որ յերկիր գաս
Եւ յերկրաւեալ կենօք մընաս,
Եթէ 'ի խըստ բանից սորայս
Յօժարութեամբ սըրտի կենաս,
Բաւանաբար իմաստնանաս,
Եւ հանճարով փարթամանաս:
Սէր զանցաւոր մերժեա 'ի բաց,
Որով խրատուս բանիւք սորայս:
Լեր սիրոյ եթէ բաղձաս,
Եւ 'ի հրամանս նորա դու կաս,
Սըրտիւ ընդ նոյն իսկ միանաս,
Եւ յետ ատեացս առ նա դընաս:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

## ՓԱՌՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԳԼԽՈՅՆ

ՔԱՆԻԴ ընդ Հօր էականի
Եւ Ճշմարիտ Սողոմոնին
Աղերսական բան ընծայի
Մատուցանեմ քեզ փարելի ։
Նոյն ըղծածուկ զիմ լըսելի ,
Զլըսօղ անյայտ հոգւոց ձայնի ,
Նոր նորոգեա 'ի նոյն հոգի ,
Լըսել խրատու այսըր տառի ,
Եւ կատարել գործով բարի ,
Որով լինիմ երանելի ։
Բենական լոյս բաղձալի
Եւ Ճառագայթ իմանալի ,
Սիրով քո հեղ յիմըս հոգի
Ըզգեր բանին պատուիրանի ,
Երեւելով քան ըզմեղուն
Ի քիմս իմ քաղցր և բաղձալի ։
Սատեա յոքունց որ յիս ախտի ,
Եւ մըթութեանցըն խաւարի ․
Ինձ ողորմեա քում ծառայի ,
Տալից գրողի տէր Ներսիսի ։

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ
## ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳԼԽՈՑՆ

ՍՈՐՈԳԵԼՈՑՍ ՚ի քէն, Յիսուս,
  Եւ ՚ի մեղաց խաւարելոյս,
Երբեմըն քեզ հարմնացելոյս
  Եւ այժմ ՚ի քէն այլացելոյս,
Բարունաբար ծագեա յիս լոյս
  Եւ անձեզս զլարեացըն բոյս,
Սիրել զփեսայդ իմոյ հոգւոյս
  Ըստ պատրագրեալ տառիս Երգոյս:
Երանուհի հարսին լուսոյս
  Լինել նըման սուրբ աղաւնոյս,
Սըրբել մաքուր ըստ նըմանոյս
  Ի կրից մեղաց ախտացելոյս:
Ի քեզ հըպել ինձ մեռելոյս,
  Եւ կեանս առնուլ տարագրելոյս.
Երեւելի յայս կենցաղոյս
  Յիմանալիդ փոխել ՚ի լոյս:

TԵԱՌՆ

# ՆԵՐՍԷՍԻ

## ՏԱՂՔ

---

### ԱՒԵՏԵԱՑ

ՌԱՐԲԱՌ աւետեաց ձայնիւ
Գաբրիէլ գոչէր սըրբուհւոյն ·
Առ քեզ առաքիմ, մաքուր,
Պատրաստել տեղի տէրունւոյն ։
Նըւագ ցընծութեան երգեմք ·
Ուրախ լեր, բերկրեալդ, տէր ընդ
քեզ ։
Նորոգի երկիրս այսօր
Յառաջին մեղաց հնութենէն,
Երկինք երկնայնովք հանդերձ
Ընդ մարդկան տան փառք 'ի բար-
ձունս ·
Բաժեալ միանան սիրով
Հաշտութեան Հօր ընդ արարածս ։
Սարսեալ յողջունէն սուրբ կոյսն՝
Հաստատէր բանիւ հրեշտակին,

Ի տուն Զաքարեայ երթայր
Ի յողջոյն Եղիսաբեթին ։
Սիրով զուր բանին լըսեալ,
Եւ խայտայր ձայնին յորովայնին.
Ի բերան ծերոյ ամլոյն
Օրհնութիւն տայր պըտղոյ կուսին։
Երգեմք ընդ մեծին 'ի ծնունդս
Փըրկողին փառք և զօրութիւն ։

## Ի ՆՈՑՆ

ՆՈՐ երկինք յերկրի, արփւոյն պա-
րունողն, ծագողին ծագող,
Երրակի ունող աւետեաց՝ ձայնիւ ան-
մահից սերաֆին,
Բողերգըն տիպ՝ համայնից հոգւոց գո-
ղով արեւեալք ,
Սըրով մաքրելոյ զթափանցեն լուսոյն
ծագելով 'նըշոյլ ։
Էջին անխուլթի հիւթ պարունակեալ
նիւթեալ առ 'ի քէն ,
Սիրատունն ծառայն աստարթից բող-
բոջ 'ի քէն ընծիւղեալ ։
Ի բարձունս առ նոյն լեր բարեխօս ,
սուրբ կոյս Մարիամ ։

## Ի ՆՈՅՆ

ՄԱՅՐ Աստուծոյ Մարիամ,
Դուստրդ դաւթեան թագաւորամ․
Ծնինդ մարմնով զնորն Ադամ,
Որ նորոգեաց զհին Ադամ։
Աստուածածին դաւանեմք,
Ըզծնեալդ Աստուած քարոզեմք․
Ընդ հրեշտակին քեզ գոչեմք,
Զուրախութիւն աւետեմք։
Խնդա, խորանդ լուսոյ․
Բերկրեա, տաճարդ արեւու․
Ցնծա, աթոռ Աստուծոյ,
Բարձող Բանին բարձրելոյ։
Երկինք երկնից վեհագոյն,
Քերովբէից գերագոյն,
Ի Սրովբէիցըն թեւոյն
Ծածկեալ խորհուրդ ծնիցելոյն։
Անստանելոյն կայարան,
Արեգականն օթարան,
Ահեղ բոցոյն բնակարան,
Աննիւթ Բանին մարմնարան։
Զքեզ տեսանողքն տեսին․
Մովսէս՝ մորենի ոչ կիզեալ,

Եսայիաս՝ կոյս յղացեալ,
Եզեկիէլ՝ դուռն աղխեալ ։
Լեառն վիմածին՝ Դանիէլ ·
Բլուր կընդրըկի՝ Սողոմոն ,
Աղբեւր կնքեալ պահողին ,
Պարտէզ փակեալ տընկողին ։
Նըման գեղման՝ Գեդէոն ,
Դաւիթ՝ նըման անձրեւոյն ,
Եւ Միքիաս՝ ըղտեղւոյն
Ի Բեթղեհէմ ծնանելոյն ։
Նոյեան տապան կենարար ,
Աբրահամեան տաղաւար ,
Կտակագրին տապանակ ,
Անձառ լուսոյն աշտանակ ։
Դրախտ Աստուծոյ ծաղկալի ,
Նարդոս բուրեալ 'ի հոգի ,
Հովիտ պայծառ շուշանի ,
Աղբեւր գետոց քառակի ։
Բուրվառ խընկոց անուշից ,
Քառաարուրեանըն խառնից ,
Զոր ծերունեացըն խըմբից ,
Զաղօթս խընդեն քոց բանից ։
Ի քէն հայցեմք , մայր կենաց ,
Մաքրել ըզմեզ 'ի մեղաց ·
Հայցմամբ առ տէրն աշխարհաց ,
Որում պատիւ սըրբասաց ։

## ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ԾՆՆԴԵԱՆ

ԱՅՍՕՐ աւետեաց Գաբրիէլն
լուսին
Եղանի առ Կոյս Մարիամ :
Այսօր աներբին խնամածուն անձամբ
Առընցեալ յարգանդի Կուսին :
Այսօր գայ Յովսէփ 'ի քաղաքն Դաւթի
Ընդ Կուսին յայրն իջեւանի :
Այսօր երկնային արքայն մըտանէ
'Ի երկրաւոր արքայի գըրոյ :
Այսօր ազգ մարդկան վերագրին
Աշխարհագրաւն այն յաշխարհըն վե-
րին :
Այսօր 'ի հօրէ անմարմին
Ծընեալ որդի, նոյն մարմնով ծընանի :
Այսօր Բանն աննիւթ թանձրացեալ
Հիւթական մարմնով յայտնեալ ե-
րեւի :
Այսօր լուծանի երկունք անիծից
Նախահօրն ծնընդեամբ սուրբ Կուսին :
Այսօր մեզ Դաւիթ տաանաղեաւըն
տայ
Նըշան , գըրոյ յԵփրաթայ :

Այսօր ընդ Մելքեայ Բեթղեհէմ ցընծայ
Տուն եղեալ երկնաւոր հացին ։
Այսօր 'ստ Եսայեայ Կոյսըն մայր լինի
Սքանչելեօք Էմմանուելի ·
Այսօր հողեղէնք տան որդւոց մարդ-
կան
Աւետիս, ծընաւ մեզ փրկիչ ·
Այսօր ընդ հովիւսն երգս առեալ
գոչեմք ,
Ասելով ըզփառս 'ի բարձունս ։

## ՅՈՐԴՈՐԱԿ

Նոր ծաղիկ բըղխէ այսօր յարմա-
տոյն Յեսսեայ ·
Եւ որդի Դաւթի ծնանի Որդին Աս-
տուծոյ ։
Բովէից Տէրըն օծանի արքայ Նոր Իս-
րայելի ·
Սրովբէից անտես բնութիւնն տեսա-
նի մարմնով ։
Ի լոյս անմատոյց բնակեալն խանձա-
րօք պատի ·
Սա անմայր յառաջ ծընեալ, անհայր
ծընանի ։

Ի բարձունս անբաւ լերնոյն, յայրըն
պարագրի․
Էջեալ տղայ ծերունին, մանուկ հին-
աւուրցն ։
Անեղն եղանի այսօր մարդ ճշմար-
տապէս,
Ցիւր պատկերըն գայ կամաւ կերպա-
րանըն Հօր ։
Սիրով խոնարհի առ մեզ բարձրեալ
Թագաւորն ։
Եկայք զնախատօն ծննդեանս վերա-
պատուեսցուք,
Բամեալ մաքրութեամբ հաղորդս լի-
ցուք ծնիցելոյն ․
Գոհութիւնս տացուք նըմին ընդ Հօր
և Հոգւոյն,
Սուրբ Երրորդութեանըն փառք յա-
ւիտեանս, ամէն ։

## Ի ԾՆՈՒՆԴՆ ՏԵԱՌՆ

ՆՈՐ Եդեմ բանաւոր տընկոյն,
Նոր Ադամն 'ի քէն հընոյն նորոգօղ։
Երկակի գլխաւորից առիթ,
Անքակ միութեամբ Ի՛ն ընդեղուն։

Բնական արփիւ առըլցեալ,
Զմիւռն մարմնապէս ծընար վերըս-
տին։
Միրամարդ ամփոփեալ նըկար յոգի,
Տարրակ ողջախոհ մաքուր աղաւնի։
Էրեւեալ ծաղիկ գարնայնոյ
Վարդ մանիշակ քըրքում շուշան վայ-
ելուչ։
Սարդիոն յակինթ դահանակ,
Ցասպիս, կարկեհան, զմրուխտ, շա-
փիղայ,
Ի տիպ վակասի յեւեալ
Կայծ և տապազիոն նորին Ահարոնի։

## Ի ՆՈՑՆ

Տէր փառաց անճառ ծընեալ յառաջ-
քան զյաւիտեանս,
Նոյն ծընաւ այսօր 'ի Բեթղահեմ
քաղաք Դաւթի։
Բարուն երկնային խնամատութիւն Հօր
անեղին
Ցանբանից մըսուր 'ի խանձարուրս
պատեալ դընի.

Նստեալն 'ի Քրովբէս յաթոռ փա-
ռացն հինաւուրցն
Ի գիրկս կուսին աղքատակէս բա-
նի մնաւ:
Երկնաւոր զօրացն թագաւոր մեծ
և յաղթող
Յամիկ թեթևանըստ 'ի յԵգիպտոս
փախչի կամաւ:
Բանից համայնից ստեղծող և տէր,
մանուկ մերնոց.
Ցերկրի երևի և ընդ որդւոց մարդ-
կան շրջի:
Արամբէից թևօք պարածածկեալ 'ի
սուրբ սրբոցն,
Խոնարհեալ հայցէ 'ի ծառայէն իւր
մկրտիլ:
Եկեալ հուրն Աստուած Յորդանանու
յորձանսն իջեալ,
Ջրով կիզու զմեղս ադամայինն
բնութեան մարդկան:
Սարսեալ ամբողջոյն 'ի կիզանող յա-
հեղ բոցոյն,
Հրաժարէր մերձիլ 'ի Ճառագայթն
անճառ փառաց:
Ի բարձանց Հօրն աղաւնակերպ էջ
աւ Նըմա,

Մատամբ ցուցանէ զծածկեալ մար-
մնով ընութեամբն Աստուած :
Երկնից դրունք բացան , այն զոր փա-
կեաց մեղօք Ադամ,
Հօր բարբառ հընչեաց . Դա իմ Որ-
դի , դմա լուարուք :
Սուրբ Երրորդութեանն երից անձանց
խորհուրդ յայտնեալ ,
Զոր փառաւորեմք անլռելի ձայնիւ
երգով .
Այժմ և հանապազ ընդ Հօր զՈրդի
գովեմք Հոգւով ,
Մի աստուածութեան տացուք ըղ-
փառս միշտ յաւիտեան :

## Ի ՆՈՅՆ

ԱՐԴ Նոր աւետեաց բարբառ այսօր
մեզ հընչեաց .
Բարուն երկնային դասուց զօրքն
յայլըն իջեալ .
Գոչէր Գաբրիէլ հովուացն այսօր՝ ցըն-
ծացէք ,
Նոր ծընեալ փրկիչ օծեալ 'ի քաղաք
Դաւթի .

Երկինք երկնայնոց տօնեն ըզծընունդ
փըրկչին :
Բոցեղէն քառից կուսից լոյս ծաւա-
լեցաւ .
Սոսկացեալ խըմբից մօգուցն ընդ փայ-
լումն աստեղն ,
Ի յերկըրպագել ծնելոյն եկեալ ըն-
ծայիւք :
Մարսեալ Հերովդէս դողայր ընդ լուր
արքային ,
Ի խընդիր մահու շարժեալ կենաց կեն-
սատուին :
Արեամբ անմեղաց մանկանց լընոյր
զԲեթղահէմ ,
Յառաջեալ ողըջոյք վըկայք ողըջա-
ցելոյն :
Սոցին համաձայն լերուք , մանկունք
Սիոնի ,
Ն՛ին ծնիցելոյ Բանին տուք միշտ օրհ-
նութիւն :

## Ի ՆՈՅՆ

ՆՈՐԱՀՐԱՇ ծնընդեան քո , տէր , ընդ մոգուցն երկիր պագանեմք :

Երկնաւոր հովուիդ երգեմք զերդ հո-
վուացն ըղձանօք 'ի բարձունս:
Բարունոյդ աշակերտեալքս ընդ հրեշ-
տակս այսօր պարեսցուք:
Արովբէից համաձայնեալ, յայտնու-
թեամբ քո, տէր, ցնծասցուք:
Երեւելոյդ 'ի փրկել՝ քեւ փրկեալ-
քըս պաղատեսցուք.
Սրբեա ըզմեզ 'ի մեղաց կենդանա-
րար քո սուրբ ծննդեամբ.
Ի փառս վերաբերեա մաղթանօք
սուրբ աստուածածնին.
Ընկեալ նորոգօղ փրկիչ, նորոգեալքս
երգեմք միշտ ըղձանս:

## ԻՆՈՅՆ

ՆՈՐ Թագաւորին անժամանակ Հօր
Միածնին
Եկայք երկիր պագցուք, և ընդ մո-
գուցն ընծայեսցուք.
Բամեալ զհոգի զմարմին զմիտըս տա-
ցուք երրեակ անձին:
Սիրով խոնարհելոյն մաքուր հոգւով
տաճարասցուք,

Ի սիրտըս գըրգուեսցուք որպէս 'ի գիր-
կըս Սիմէոն ։
Մատուսցուք տեղ օրինակ զանարատ
կուսն ըզՄարիամ.
Ի նոյն նըմին նըման տաճար լինել
Երրորդութեան ։
Երգովք համաձայնեալք հոգեղի-
նացն, որպէս հովիւքն,
Բարեհնարար զխնամատութն
Հօր ընծայեալ,
Գըրխոյն եկեղեցւոյ յօդեալքս 'ի նոյն
տացուք ըզփառս ։

## Ի ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ

ԼՈՅՆ ինքն անդրանիկըն Հօր յա-
ռաջ քան զարեւ,
Եղեւ անդրանիկ այսօր կուսական
ծնընդեամբն.
Բոպէից քաւից ստեղծողն 'ի նոյն
խոնարհեալ,
Սըրբել զԱդամայ զյանցանս 'ի գետն
Յորդանան.

Եկեալ հուրն Աստուած մարմնով
մկրտիլ 'ի ջուր ,
Սարսեալ Յորդանանէս տեսլեամբն ոչ
իշխէր մերձիլ .
Ի վերուստ իջեալ Հոգին նման ա-
ղաւնոյ ,
Երկնիցըն բացման դըրունք Հայր յայտ-
նեալ ցուցաւ .
Աղաղակելով գոչէր . Դա է իմ Որդի
Յինէն առաքեալ յերկիր, դըմա լըւա-
րուք :
Սա տօնից մեզ տօն , եղբարք , ժողո-
վոց ժողով .
Բոլորից փրկիչն այսօր Յիսուս կո-
չեցաւ :
Արդ յաւուր տօնիս այս Տեառն ա-
նուանադրութեան ,
Նուագ ցընծութեան երգեմք ըղփառս
'ի բարձունս :

# Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՂԱԶԱՐՈՒ

ՆՈՐ աւետեաց լուր այսօր մեզ հըն-
չեաց ,
Երկնային ձայնիւն Որդին որոտման :
Բոլէիցըն Տէրն ստեղծօղն Ադամայ,
Նա այսօր եկեալ 'ի Բեթանիա .
Ի յարուցանել ըզչորեքօրեայն ,
Սաստեաց հրամանաւ մահու բըռնու-
թեան ,
Ի կեանըս դարձոյց վերըստին զՂա-
զար ,
Եւ նովին ձայնիւ զմեզ անմահացոյց :
Բարուն իմաստունք սպասեալ յարու-
թեան ,
Գոչեսցուք և մեք փառս կենարարին :

## ԾԱՂԿԱԶԱՐԴԻՆ

ՏԻՐԱԿԱՆ տօնիւս այսօր եկայք
ցընծասցուք ·
Բախճանայ այսօր երկինք անմարմնա-
կանօք :
Նորոգի երկիրս այսօր գալըստեամբ
փըրկչին ·
Երգս առեալ մանկանց ստովք՝ ով-
սաննա օրհնեալ :
Բարունին էից այսօր եկեալ 'ի Սիոն,
Սիոնի ցընծան մանկունք ելեալ ընդ-
առաջ :
Երգս երգէ Զաքարիաս դըստեր Սիո-
նի ,
Սիրով խոնարհեալ նըստի նոր յաւա-
նակի ·
Ի ծերոց ընծայ բանիւ 'ի տղայոց ձայ-
նիւ ·
Երգեմք ընդ նոսին ըղձիւս գալըս-
տեան փըրկչին :

## ՄԵԾԻ
## ՈՒՐԲԱԹՈՒՆ

ՆՆՋԵՑ Որդին Հօր Միածին բաղխատարած
Այսօր եկաց 'ի յատենին մեղաւորաց :
Բարձեալ մարմնով 'ի խաչն անճառ խոնարհութեամբ ,
Բերեալ բաղխաւ զհեռացեալ ազգս որդւոց մարդկան :
Գառն անարատ. 'ի սպանդ ածեալ պատարագի ,
Գայ հաշտութեամբ Հօր 'ի բառնալ զմեղս աշխարհի :
Դատապետ եղեն դըպիրքն առ Պիղատոս ,
Դատաստանաւ բառնալ 'ի խաչ բողոքէին :
Եկն եհաս վախճան մահու նախաստեղծին ,
Եւ ցուրտ և պարզ օր մի յայտնի տեառն Աստուծոյ :

Զէլի էլին հօր գըթութեանց տայր
'ի խաչին ,

Զ հաշտութիւն հօր խաչահա-
նուացն աղօթելով :

Էնն էից անպարագիրն յաւիտենից
Երեւեցաւ մեզ 'ի վախճան ժամա-
նակիս .

Ընդ մեզ Աստուած յայտնեալ՝ բար-
ձեալ մարմնով 'ի խաչ ,

Ընդդէմ լուսոյ արեգականըն կըն-
քելով :

Թողեալ ըքաւ լոյսն 'ի ծոցոյ արե-
գականն ,

Թագոյց յինքեան ըղձառագայթս
'ի մէջօրեայն :

Ժամն ոչ տիւ էր և ոչ գիշեր 'ստ մար-
գարէին .

Ժամանեալ գայ տէր զօրութեանց
'ի պատերազմ :

Իշխանութեամբ զհոգին առ հայր
աւանդելով ,

Ինքն 'ի հանդէս մարտի իջեալ ընդ-
դէմ մահու :

Լըւան իշխանք չարին, պակեան ահիւ
մեծաւ .

Լըւեալ մահու և դըժոխոց սատա-
նեցան ։
Խորխաւարին աստանէր Յիսուս լուսով
խաչին,
Խընդիր առնէր իւր ծառայից անդ-
գերելոց ․
Ծանեաւ Ադամ զնըշան զալըյն
տեառն 'ի դըժոխս,
Ծանր ամօթով կայր հիացեալ եր-
կիւղագին ։
Կարկառ նըմա Յիսուս ըզձեռս իւր
բեւեռեալ ․
Կոչէ ձեռամբ, քաջալերէր ․ մի՛
երկընչիր,
Հայեաց 'ի ձեռս յոտս և 'ի կողս՝ որ
վասըն քո,
Հայեաց 'ի գլուխս բարձեալ զա-
նէծս 'ի փըշոց երկրէ ․
Ձաղկ եղեգան հարին 'ի գլուխ իմ
մեղաւորք,
Ձաղեալ ապտակ և թուք 'ի ծնօտս
ինձ մատուցին,
Ղեղի ետուն ինձ կերակուր ընդ քա-
ցախոյ,
Ղեղույ մեղաց քոց փոխանակ որ 'ի
դրախտին ։

Ճանապարհաւ մահու ընդ քեզ հե-
տեւեցի,
Ճանապարհին կենաց ընդ իս եկ
յարութեամբ:
Մաքուր հոգիք սրբոց, և ձեզ մեծ
աւետիս.
Մատիք տեսէք մարմնովեկեալ ում
ցանկայիք.
Յառաջագոյն գուշակելով զիմ ընդգա-
լուստ
Յայս աշխարհին խոր խաւարին՝ ուր
էք կապեալ:
Նովին մարմնով, զոր 'ի Կուսէն եմ
ըզգեցեալ,
Նախ 'ի դժոխս իջի փրկել ըզկո-
րուսեալդ:

## ՅՈՐԴՈՐԱԿ

ՇՆՈՐՀՕՔ սրբոյ Հոգւոյն լըցեալ
եղէն սուրբ մարգարէքն,
Շարժեալ 'ի Նմին ժամու մեծ գո-
հութիւն մատուցանէն.
Որ ընդ Հօր ես յէութեան և 'ի յա-
թոռ փառաց Նըստիս,

Որ իջեր զմեզ փրկեցեր առաքելա-
 կան քո զօրութեամբդ ․
Զիջանելն հայել 'ի քեզ հրեղէն երամիցն
 Սրովբէից ․
 Զարաչար նախատանօք լլկեալ ե-
 ղեր 'ի յատենի ․
Պատանեց եղեալ մեռելոյն , գոչեա-
 ցուք արտասուելով ․
 Պատուական արեամբդ քո փրր-
 կեա զեկեղեցիս քո 'ի թշնամեացն ․
Տէրդ կենաց փառաւորեցար , ընդ մեզ
 արար ընծայեալ քո ․
 Տէրդ յարուցեալ , որ 'ի կեանս ,
 ընդ մեզ եկեալ 'ի հնութենէ ․

* * * * * * * * * * * * *

* Գրչագիրք մինչեւ ցայս վայր ունին ըն-
 թաց ․

## Ի ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆՆ ՏԵԱՌՆ

ԾԱՐԱՒԵՑԱՒ տէրն ՚ի խաչին որպէս ըղմարդ ,
Այն որ արար զՈվկիանոս ծով գե-ղեցիկ :
Սամարացւոյն ջուր խնդրելով աղ-բեւրըն տէրն ,
Այն որ արբոյց ոխեղերաց զանմա-հութիւն :
Լեղի խառնեալ ընդ քացախոյ զնմա-ւորին ,
Արբուցանէր այն երկնաւոր Թագա-ւորին :
Արեգակն խաւար դարձաւ մէջօրէին,
Նըմանեցաւ ընդ անարգանս անմահ Բանին :
Բարձրագոչ ձայնիւ գոչէր տէրն ՚ի խաչին
Զէլէլին , և աւանդէր առ Հայր զհոգին .
Եւ վարագոյր հին օրինին աւրբ տա-ճարին

Ընդ չարչարանս կենարարին պատա_
ռէին .
Երկիր հիմամբ 'ի յանդընդոց սասա_
նէին ,
Վէմք պատառեալ և գերեզմանք
բանային .
Դըժոխք սարսեալ ասասանեցաւ բանդն
ահագին .
Եւ արձակեաց զկապեալ հոգիսն՝ որ
անդ էին :
Յաշեղ ձայնէ կենդանատու տեառն
Յիսուսին
Աւետեցան կապեալ հոգիքն որ 'ի
բանդին :
Յորժամ էջ մեր կենսատուն անդ 'ի
'ի սորին ,
Լուսաւորեաց զորս 'ի խաւար անդ
նըստէին ,
Եւ վերածեաց անտի զնոսին յերկինս
վերին ,
Եւ դասեցոյց ընդ անմարմին զօրսն
երկնային .
Արժանացոյց պայծառ լուսոյ առա_
գաստին
Արքայութեանըն հարսանեաց սուրբ
փեսային .

Որ անդրանիկ ողջերքըն մօր սուրբ Սիոնին
Աբրահամու գոգոյն ժառանգ հօրըն վերին .
Որ արդարոց դասք ամենայն սուրբ երամին
Ուրախանան յաջմէ փառաց սուրբ փեսային ։
Նըմայ երգեմք և մեք ընդ հօր և սուրբ հոգւոյն ,
փառք յաւիտեանս խաչեցելոյ անմահ Բանին ։

## Ի ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՏԵԱՌՆ

ՆՈՐ ինն աւետեաց բարբառ նորազուարճ ձայնիւ
Այսօր գոչէր Գաբրիէլ իւղաբեր կանանցն ։
Եգին զերկու անկեան ըզվէմն 'ի նոր տապանին ,
Որ ոչ արգել մատանին զանպարագրելին ։

Բանից անմահիցըն պետ փողէր սուրբ
կանանցն ,
Յարեաւ խաչեցեալն Յիսուս զի՞
ըսյք զկենդանին :
Ակրով խընկաբեր կանայքն առաւօտ
տային
Դասուն պետրոսեան դընդլին , յա-
րեաւ կենդանին :
Երեւեալ ունայն բանիցն ոչ հաւա-
տացին ,
Պետրոս առ անձուկ սըրտին եկն
՚ի տապանին :
Աէրըն սիրեցւոյն յայտնեալ նախ եւ
առաջին ,
Յետ տեսանելոյ կտաւին եւ վարշա-
մակին :
Ի դաս անդամոց դարձեալ գլուխ փո-
քու հօտին ,
Պատմէր զյարութիւն փըրկչին զՅի-
սուս միածնին :
Ընկայք ընդ նոսին եւ մէք հոգւով ցըն-
ծացուք ,
Փըրկողին տացուք ըզփառս այժմ
եւ յաւիտեանս :

## ՅՈՐԴՈՐԱԿ

ՏԷՐ կամաւ իջեալ Որդին, մարմին
ըղձեցաւ ·
Արեամբ և մահուամբն իւր գնեաց
զորդիսն Ադամայ :
Յարեաւ յարութիւնն և կեանքն,
յարոյց ըզբնութիւնս :
Որով պարակից եղեալ վերին զուարթ-
նոցն ,
Ցնծալով տօնեմք այսօր, և առ նոյն
պաղատիմք ·
Կենարար անուանն քո, Տէր, ընդ
մեռասանիցն
Արժանաւորեա ըզմեզ յերկրորդ
գալըստեանդ :
Թագաւոր փառաց Քրիստոս, յոր-
ժամ գաս փառօք ·
Որով զհոգացեալ բնութիւնս հրեղէն
նորոգես ,
Պայծառափայլեալ փառօք շնորհեա
մեզ յառնել,
Ի դաս աջակողմ օդեացըն կացո և
զմեզ :

Կենդանի բարբառ քո , տէր , ըղձեղ
կոչեցէ ,
Որպէս զորդւորդս երամս ընդ քեզ
վերանալ
Արամթռիչ լուսափայլ անմկամք յերկ-
նային խորանաց ,
Ի նոյն միանալ սիրով ընդ սուրբ փե-
սայիդ ,
Նոյին համաձայն օրհնել սուրբ զԵր-
րորդութիւնդ ։

Ի ՆՈՅՆ

ԼՈՐ ձայն աւետեաց հրեշտակա-
պետին այսօր
փողէր խընկաբեր կանանցն 'ի վե-
րայ վիմին ․
Խաչեցելոյն յարեաւ , ձեզ մեծ ա-
ւետիս ։
Երթեալ խընդութեամբ աշակեր-
տեալ կանանցն ,
Պատմէին դասուց ընտրեալ սուրբ
մետասանիցն ․
Ցընծացէք , յարեաւ տէրն 'ի մե-
ռելոց ։

Րաբունւոյն էից աշակերտեալ խըմ-
բից
Պետրոս Յոհաննու հանդերձ արագ-
ընթացեալ
Տեսին զգերեզմանն ունայն 'ի
մարմնոյն ։
Սէրըն տարփողին օտարանայր յաչաց,
Գոչէր Մարիամ առ նա . պարտիզ-
պան , ցոյց ինձ
Թէ բարձեր զիմ տէրն , և ես առից
ըզնա ։
Նըրեւեալ անդրէն քաղցրիկ հընչէր
բարբառ
Ցընծա , Մարիամ , յարեայ . մի՛
լար զիս մեռեալ
Րաբունին ձայնէր առ նա . . . ։
Սըրտիւ անձկալեաւ առ բաղձալին
դիմեալ .
Մի՛ յիս մերձենար , ասէ , չեմ ե-
լեալ առ Հայր ,
Զպըտուղն առաջին տալ նըւէր նը-
մին ։

## ՅՈՐԴՈՐԱԿ

ԿԱՆԱՅՔՆ արտասուօք լային զբար-
ձօղն արտասուաց
Զմեռելոց կենդանատուն որպէս
ըղձեւեալ :
Անմահ եւ թափեալ անուան զեւղս
անոյշ բերին ,
Կընդրուկ և զմուռ հալուէս կեն-
սատու փրկչին :
Թաղեալըն մարմնով յերկրի զմահ
մեռուցանէ ,
Զապաժեան մեռեալ բնութիւնըս
կենագործէ :
Ուսափ և զուարթութիւնք իջեալ լուսա-
փայլ ծագմամբ ,
Խընդութեամբ տային մարդկան
զաւետիս կենաց :
Ղամբար լուսափայլ վառեալ 'ի վե-
րայ վիմին ,
Մեռօրէն պակեան յահէն դաւք
պահապանաց :
Ի բաց մերկացեալ զերկեւղն խընկա-
բեր կանանցն ,

Աւետեաց քարոզք եղեն սուրբ աշակերտացն :
Կարօտ անձկալի սիրով Պետրոս յարուցեալ,
Սիրեցելոյն Յովհաննէս արագ ընթացեալ:
Ունայն 'ի մարմնոյն տեսին ըզսուրբ գերեզմանն ,
Հիացեալ անդրէն դարձան առ համադասիցն :
Սրտիւ անձկալեաւ վառեալ 'ի հուր սիրելոյն ,
Զըղձալին տեսեալ աչօք և ոչ ծանուցեալ :
Ի գերեզմանէն զմարմինն , ո՜վ պարտիզպան ,
Եթէ դու բարձեր , ասա զի ես առնուցում :
Հայցելին առ նա ձայնէր · ո՜վ դու Մարիամ ,
Զիս՝ որ յարութիւն և կեանք՝ զի ողբաս մեռեալ :
Արդ մի՛ մերձենար դու յիս , անկատար գոլով ,
Որպէս մայրըն քո Եւայ 'ի ծառ գիտութեան :

Յորժամ առ ընութեանս իմ հայր և
 ձեր ըստ շնորհի
Ես Աստուած մարմնոյս իմոյ ես
 ելանիցեմ,
Որոտմամբ հոգւին իջեալ՝ ըղձեղ նո-
 րոգէ.
Արժանաւորք յայնժամ առ իս
 մերձենալ:
Ցնծասցուք և մեք յուսով զուար-
 ճասցուք մարմնով.
Զ յարուցեալն 'ի մեռելոց զՔրիս-
 տոս օրհնեսցուք:

## Ի ՆՈՅՆ

ՙՆՍՏԵԱԼ կանայքն ողբային
 Առ գերեզման անմահին.
Երեւելով հրեշտակին,
 Ձայն աւետեաց լուսէին:
Բամից սըրբոց ըղձալին,
 Զոր տապանաւ ծածկէին,
Սիրով յարեաւ սիրելին,
 Զ ընութիւնս յարոյց զմարդկային:
Երկեղալից լինէին
 Պահապանացըն դասին.

Սատառնացեալ Ներոնէն
Հոլաթեւէր 'ի վիմին ։
Ի բաց լինել երկեղին ,
փողէր կանանց տարփալին ․
Երթեալ պատմել զաւետիսն
Գովեալ զընդլին Պետրոսին ,
Բարունից վարդապետն
Այսօր յարեաւ բաղձալին ․
Գոչեմք և մեք ընդ նոսին ,
Փառք յարութեան փրկողին ։

## ՑՈՐԴՈՐԱԿ

ՍԵԱՆՔՆ ընդ հօրանման մարմնով
տէր յարեաւ
Ի գերեզմանէն ․
Առաւօտ լուսոյ ծագեալ մեզ այսօր
Ի գրոյ խաւարէ ։
Թագաւորն իջեալ ստորին վայր մա-
հու ,
Փրկեաց ըզգերեալսն ․
Որով մահ մեռաւ մահուամբ կեն-
դանույն
Կեանք Թագաւորեաց ։

Ղամբար բոցեղէն փայլեալ յարփեն-
ւոյն
Որք 'ի խաւարի ․
Ի կեանս վերածեալ անմահըն մահ-
ուամբ
Ըզմեռեալ բնութիւնս ։
Կամաւ վասն մեր զանձն իւր եդ 'ի
մահ ,
Կամաւ յարուցեալ ։
Ողբայլին կանայքն ողբովն Արտասուօք
Զբարձօղն արտասուաց ։
Սոսկալին փայլակնանման երեւեալ
Լուսափայլ կերպիւ
Ի ձայն ցընծութեան փողէր զաւետիս
Սուրբ խընկաբերիցն ։
Հայեցեալ տեսէք զտեղին անմահին
Ունայն 'ի մարմնոյն ։
Ա՛յսօր աէրըն մեր յարեաւ , ցընծա-
ցէք ,
Դըստերք Սիոնի ․
Ցնծայի մօր ըլուելիս ձայնեցէք ,
Թ՛օձըն պարտեցաւ
Ուրախ լեր Ադամ՝ այսօր որդին քո
Ըզքեզ նորոգեաց
Ցընծալով մեք երգեսցուք փըրկողին
Ըզփառս յաւիտեան ։

## Ի՛ ՆՈՅՆ

ՙՆՈՐ ծաղիկ պայծառ ցուցաւ
Այսօր 'ի նոր գերեզմանէն .
Երփնազարդ հոգւոցըն տունկք
Կանաչացան կենդանութեամբ .
Րենական լուսոյ սաղարթք
Ի հոգեւոր գարնան փըթթեալք :
Սիրով մեռեալըն վասն մեր
Յարոյց ընդ իւր զանկեալ բնութի՛ւ,
Երեւեալ լոյս յարութեան
Ի խաւարի ստուերաց մահու :
Սատանացեալ Սերովբէն
Նըստէր փայլմամբ վերայ վիմին .
Ի ձայն քաղցր փողէր կանանց ,
Յարեաւ խաչեալն Յ՟ Աստուած .
Եկայք տեսէք ըզգերեզմանն
Յաստուածային մարմնոյն ունայն :

## Ի ՆՈՅՆ

ՙՆՈՅՆԱԳՈՅ ընդ Հօր Բանն Աս-
տուած ,
Ի սկըզբանն առ Աստուած միշտ էն ,

Էն անմարմին անյեղ յեղեալ,
Եւ բնակեաց 'ի մեզ բանօրէն.
Բամից տէրն յանձն առեալ ընդ մեր,
Մեռանել մարմնով սիրաբար,
Սէր անուն գընխուր 'ի տապան.
Սիրով ողբային եղաբերքն.
Եղաբեր կանանցն արտասուք
Դադարեաց տեսլեամբ սիրելոյն,
Սիրեցեալն տարփմամբ անձկալոյն
Բարբառէր՝ մի՛ յիս մերձենար:
Ի մերձենալ զուարթնոյն առ վիմն
Փողէր խընդաբերիցն ասելով,
Զեզ աւետիք:

## ՅՈՐԴՈՐԱԿ

ՅԱՐԵԱՒ փառաց Թագաւորն,
աւետիք,
Զի՞ խնդրէք զանմահն ընդ մեռեալս,
մեծ աւետիք:
Յարոյց զբնութիւնս Ադամայ, աւե-
տիք.
Կանգնեաց զգլորեալ նախամայրն,
մեծ աւետիք:

Պատմեցէք դասուց պետրոսեան, աւետիք ․

Յովհաննու սուրբ սիրելւոյն, մեծ աւետիք :

Փ․ Քրիստոս յարեաւ ընդ նմա արիք, աւետիք ․

Որդիք մարդկան այսօր ցընծացէք, մեծ աւետիք :

Քրիստոս 'ի վեր, ելէք ընդ նմա, աւետիք ․

Երկրաւորք, լերուք երկնային, մեծ աւետիք :

Այսօր դըրունք բացան դըժոխոց, աւետիք ․

Ելին կապեալ հոգիքն՝ որ 'ի նմա, մեծ աւետիք :

Այսօր մահ մեռաւ 'ի կենաց, աւետիք ․

Խաւար լուծաւ, լոյս հաստատեցաւ, մեծ աւետիք :

Այսօր նոր արարածք եղեալք 'ի Քրիստոս,

Նորոգողըն երգեմք ընդ հրեշտակս փառք 'ի բարձունս :

## Ի ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆՆ

ՆԵՐՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ ինննեակ դա-
սուց կայք մի առ մի ձայնիւ
Երգս առեալ գոչէն երրակի անձանց
միոյ տէրութեանն .
Բախացեալ և մեք համաձայնելով
ընդ Սրոբէից խումբս ,
Սուրբ սուրբ սուրբ մի տէր Հայր յա-
ւէտ և միշտ Որդի և Հոգի ,
Երրորդութիւն սուրբ , մի աստուա-
ծութիւն անբաժանելի ,
Սուրբ եկեղեցի երգէ ընդ հրեշտակս
յաւէտ քեզ ըզփառս :

## ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

Տէր փառաց այսօր յայտնեալ'ի Թա-
բօր զփառս իւր ,
Բախացեալ տեսլեամբ լուսոյն դաս
Առաքելոցն :

Նոյն ինքըն ածեալ զՄովսէս ըզմեծն
Հեղխաս .
Երրեակ տապաւոր շինեալ վէմըն
հաւատոյ .
Բարունուոյն էից յերկնից Հայր վե-
կայեալ,
Միակըն Որդի դա իմ, գըրոյ լըսա-
րուք :
Երեւեալ Հոգւին 'ի տիպ լուսափայլ
ամպոյ ,
Մինա նոր եղեւ Թաբօր և էջք Աս-
տուծոյ .
Ի նոյն մեք ելցուք հոգւով լեառն ի-
մանալի ,
Նշական լուսոյն նըւէր մատուցուք
ըզփառս :

### ՅՈՐԴՈՐԱԿ

ԸՍՏԱՆՕՐ տեսիլ ահեղ 'ի լեա-
ռըն Թաբօր ,
ԶՈրդին Աստուծոյ տեսեալ 'ի նմա
խոնարհեալ :
Երիցս երանեալ արամբք հինգ գըլ-
խաւորօք ,

Ընդ վէմն հաւատոյ Պետրոս , զՈրդիսն որոտման :
Զտուօղն օրինաց Մովսէս ընդ մեծն Հեղիաս ,
Զմարգարէսն ՚ի մէջ ածեալ պատմիչ խորհրդոյ :
Դաւիթ վաղընջուց ձայնէր զայր աւուր խորհրդոյ ,
Նախագուշակեալ անէր զցընծութիւն աւուրս :
Ցընծալով ցընծա , Թաբոր , համդերձ Հերմոնիւ ,
Զոր աւեալ ՚ի քեզ փայլեալ փառօք Հայրենի :
Հայր վկայելով յամպոյն Դա է իմ Որդի ,
Դմա լըւարուք , ասէ , ընդ որ հաճեցայ :
Մի ոք կարծեսցէ զդա նըման Մովսէսի ,
Եղիա զդա մի ասէք զուէրդ Եղիայի :
Յովհաննու դա չէ համդոյն , անուս ՚ի մերնոցս .
Իմ է սիրելի Որդի Հօրս երկնաւորի :

Զտօն Վարդավառին այսօր եկայք տօ-
նեսցուք ,
Մեզ ողորմութիւն հայցել տօնիս տօ-
նողաց :

## Ի ՆՈՅՆ

ՆԵՐՊԱՐՈՒՆԱԿԵԱԼ խորհուրդ
լուսոյն 'ի հրեղինաց
Այսօր 'ի յերկրի յայտնեալ ցու-
ցաւ հողեղինացս
Նշական Բանին բնութիւն մարմնով
պարածածկեալ
Այսօր 'ի Թաբօր արտափայլեալ
պայծառ ծագմամբ ,
Րաբունիցըն պետք երից ընտրեալ ա-
շակերտացն.
Անգեալ դողային յահեղ լուսոյն
ոչ հանդուրժեալ :
Սոսկալի հրամանին ածեալ զՄովսէս
'ի մեռելոց ,
Ըզմեծն Հեղիաս 'ի կենդանեաց
վայրաբերեալ :

Լն Աստուածըն Հայր յերկնից ձայ-
նիւ աղաղակէր ·
Դա է իմ Որդի · դըմա լուարուք ,
որդիք մարդկան ։
Սուրբ Հոգին ընդ Հօր հովանացեալ
իւր էակցին ,
Ի Նըմանութիւն լուսափայլեալ
պայծառ ամբոց ։
Ի Թաբօր լերինն յայտնեալ խորհուրդ
Երրորդութեան ,
Զոր և Պետրոսի երիւք աղդեալ տա-
ղաւարօք ։
Երգս առեալ Դաւիթ յառաջագոյն
նախաձայնէր ·
Թաբօր և Հերմոն , ասէ , յանուն
քո ցընծասցեն ։
Բողէից հանուրց այսօր ծագեաց լոյսն
երկնային ,
Եւ պայծառայոյց զեկեղեցիս հե-
թանոսաց ։
Գոչեմք 'ի տեառնըն այսօր ըղղոյն
անճառելի՝
փառս ծագողին այժմ և յաւէտ
միշտ յաւիտեանս ։

## ՑՈՐԴՈՐԱԿ

* * * * * * * * * * * * * *

*Հանել ընդ նոսին ըզմեզ լեառն իմա-
նալի,
Ի մեծի ծագման քո, տէր, հայրական
փառօք:
Արժանաւորեա տեսլեան փառացքոյ,
Քրիստոս,
Ցորժամ արդարոցըն դասք ընդ քեզ
ծագեսցին.
Լուսաւորեսցես ըզմեզ լուսով քո,
փրկիչ,
Երգակից լինել վերնոցն 'ի յարքայ-
ութեանդ.
Անդադար ձայնիւ օրհնել սուրբ զԵր-
րորդութիւնդ
Ըզհայր և զՈրդի հոգւով յաւի-
տեանս. ամէն:*

* Պակասէ յօրինակին ակեղծն յարդարակին:

# Ի ՓՈԽՈՒՄՆ ԿՈՒՍԻՆ

ԱՅՍՕՐ Գաբրիէլ հրեշտակապետն եկեալ,
Բերեալ զդրախտին ոստակ յաղթող կուսին ։
Այսօր կոչելով առ բոլորիցըն ակրն
Զատաձար բարձրելոյն եւ զբնակարան Բանին ։
Այսօր հրաւիրմամբ Հոգւոյն ժողովեցան
Դասք Առաքելոցն եւ իմաստուն կուսից .
Այսօր խոնարհեալ անմարմնական դասուք
Միածին Որդին առ կուսութեանցըն մայրն ։
Այսօր աւանդեալ ըզմաքրական հոգին
Փայլականնրման վերամբարձեալ վեհից ։
Այսօր ամփոփեալ ըզըրբեանեալ մարմինն ,

Ծածկելով յերկրի զանապական ըզ-
գանձն ։
Այսօր երկնայնոց խըմբիցըն պար ա-
ռեալ
Եղանակէին շուրջ ըզգերեզմանաւն։
Այսօր երգակցեալ նոցին Առաքելոցն,
Եւ դասք կուսանաց գովէին ըզմայր
կուսիցն ։
Այսօր փոխադրեալ ՚ի զգայական
բնութեանց
Զմարմինըն մաքուր յիմանալեաց կայ-
եանն ։
Այսօր ցընծութիւն երկնաւորաց դա-
սուցն
Համամայրենի կուսին երթալն յեր-
կինս ։
Այսօր շնորհեցաւ բըժշկութեանց
պարգեւ
Պատկեր ախտամօրն լուսազարդեալ
յերկնից ։
Այսօր երգս առեալ գոչեմք և մեք
ձայնիւ
Կուսական ածնիւս Երրորդութեանն
ըզփառս ։

## ՅՈՐԴՈՐԱԿ

ԱՆԱՄԱՏ տաճար և առագաստ լուսոյ,
Մայր անհարսնացեալ Աստուածածին միշտ կոյս,
Զքեզ նախատեսացըն գուշակեալ ցուցին
Ծառ կենաց 'ի մէջ աստուածատունկ դրախտին:
Զքոյդ Աբրահամու 'ի խորանին ընդունեալ
Զաւետեաց ծընունդ 'ի ծնիցելոյ Բանէն:
Զքեզ Մովսէս անկէզ 'ի մորենին տեսեալ,
Եւ սափոր ոսկի մանանայիւ լըցեալ:
Գեղմն Գեդէոն քաղցր ցօղով լըցեալ,
Եւ աղբեւր կընքեալ Սողոմոնի տեսեալ:
Զքեզ Եսայիաս ծանոյց կոյս յղացեալ,
Տաճար անքընին և ամպ թեթեւագին:

Դուռն ախեալ փակեալ Եզեկիէլ ե-
ցոյց ·
Լեառըն վիմածին զքեզ Դանիէլ ե-
տես :

Քեզ Գաբրիէլ 'ի կատարումն եկեալ
Աւետեաց ձայնիւ զուրախութիւն գո-
չէր :

Դու զանտանելին յորովայնի տարար,
Եւ ծընար մարմնով զառ 'ի Հօրէ
ծընեալն :

Դուռն արեւելեան Ադին դրախտին
բացող,
Եւ արեգականն արդարութեան ծա-
գող :

Զքեզ այսօր, որդին քո միածին ե-
կեալ,
Փոխեաց 'ի յերկրէ 'ի յերկնային խո-
րանն :

Հիացեալ տեսին իմանալեացըն դասք,
Մարմին հողեղէն վերացեալ յեր-
կինս :

Քեզ՝ առ 'ի պատիւ ընթանային յա-
ռաջ,
Գունդք Սերովբէից՝ թեւաքօղեալ
գլխօք :

Զքեւ քառակերպեցըն հոյլքն ա-
կումբ առեալ,
Սպասաւորէին հրեշտակական երամքն։
Դու 'ի յերկնաձեմ յաստուածակերպ
խորանն
Զանազան փառօք պայծառացեալ
մնայր։
Զքեզ Առաքելոցըն գովէին գումարք,
Եւ դասք կուսանացն հրճուողական
ձայնիւ։
Քեզ այսօր տօնեն եկեղեցւոյ ման-
կունք,
Եւ խոստովանին Աստուածածին միշտ
կոյս։
Լուր պաղատանաց յուսացելոցս 'ի
քեզ,
Եւ լեր բարեխօս առ միածին Որդին։
Ծունր առ 'ի խոնարհ ընդ հաշտու-
թեան մերոյ
Կրկնեա, մայր կենաց, կամեցողին
բարեաց։
Աղբերս արտասուաց ընդ փրկու-
թեան մերոյ
Բղխեա յորդառատ, մարդասիրին
ծընօղ։

Սուրբ զեկեղեցիս անշարժ պահել
  յաւէժ ,
Եւ զհաւատացեալս անփորձ մընալ
  'ի սմա ։
Եւ 'ի գալըստեան մեծի ծագման լու-
  սոյն
Մըտցուք յառագաստ ընդ իմաստուն
  կուսիդ ։
Արժանաւորել ընդ անմարմնոց դա-
  սուցն ,
Փառս վերահընչել Երրորդութեա-
  նըն միշտ ։

## ԽԱՉԻ

ՆՈՐ դրախտին Եկեղեցւոյ
  Ծառ կենաց տընկեալ 'ի մէջ ,
  Զոր ոչ Քրովբէիւք պահեալ՝
  Այլ դիւրահուպ 'ի մէնջ ։
Երկակի ներհակաց ոխպ ,
  Մահաբերին տընկոյն ձեւով.
  Եւ կենարարան 'ի քէն
  Պըտուղ կենաց մարդկան
Րոպէից բանաւորաց
  Բանալի եղեր դրախտին ,

Մըտից վերըստին 'ի Նոյն
Անփոփոխելի կայիւք ։
Սեռն անապակ սիրոյ Էին
Ծածկելոյն առ Հօր յայտնիչ,
Զորդին իւր տալ վասն իմ
Ի մահ մարմնով 'ի քեզ ։
Իմանալի տապան Նոյեան
Զօժանդակեալքս 'ի քեզ պահեա,
Ի հեղձմանէ մեղաց ծովէս
Եւ 'ի հրեղէն գետոց ։
Սաբեկայ ծառոյն Նըման
Ոչ խոյ յողջակէզ կախեալ,
Այլ գառն Աստուծոյ զենեալ
Մեզ հաշտութեան Նըւէր ։
Ի Գողգոթա կանգնեալ սանդուխք
Տեսլեամբ Յակոբայ ցուցեալ.
Հրեշտակաց իջման յերկիր,
Մարդկան ելից յերկինս ։

## ՅՈՐԴՈՐԱԿ

ՍԵՆԱՑ փայտ տընկեալ ըղ քեզ տըն-
կողին զԵդեմ,
Զտընկագործն էից 'ի քեզ պըտ-
ղաբերեցեր ։

Անհասին Սերովբէից բոցեղէն Թե_
ւոց ,
Հողեղէն բնութեանս եղեր դիւրա_
հաս պատճառ :
Թագաւորն երկնից 'ի քեզ տարած_
մամբ ձեռաց ,
Ժողովեաց ըզհեռացեալսն ընդ Թե_
ւօքն իւրովք :
Որ ըզկապ մահու ելոյծ կապելովն 'ի
քեզ,
Ի կապից մեղաց ըզմեզ արձակել
հայցեա :
Ղեղւոյն դառնութեան փոխան , զոր
վասն իմ էարբ,
Դառնաբեր վիժանք հոգւոյս քաղ_
ցունք բըղխեսցեն :
Ի քեզ բեւեռմամբ ձեռացըն զիմս
արձակեա ,
Հեղուսեալ ոտիւքն ուղղեա ըզ_
գնացս իմ յերկինս :
Կենդանւոյն մահուամբ մարմնով
զհոգիս իմ կեցո .
Խոնարհեալ գըլխոյն ընդ իմ, զի_
մըս բարձրացո :
Որ խոցմամբ կողին տիգաւ վասըն կո_
ղածնին՝

Մաքրեցար հրահոս բղխմամբ կըր-
կին վըտակացն ,
Սըրբեա ջրովն այնու զմարմնոյս յան-
ցանս արտասուօք ,
Եւ զհոգւոյս մեղանս մաքրեա ա-
րեան վըտակաւն :
Ի դըժոխս իջմամբըն քեւ ազատեաց
զգերեալն .
Ազատել մաղթեա և զիս 'ի բանդէ
մեղաց :
Հոսեալ հրեղինաց դասուցն առ գե-
րեզմանին ,
Զքոյդ նախապատիւ անուն վե-
րաձայնէին :
Առ խընկաբերիցըն դաս փողէր զը-
ւարթունն .
Զխաչեալն, ասէ, խնդրէք, չէ
աստ այլ յարեաւ :
Յորժամ լուսափայլ ծագիս 'ի յարեւ-
ելից
Զմեզ լուսաւորեա փառօք, նըշան
տէրունեան .
Որով զուարճացեալ ցընծան դասք
խաչակրօնից,
Զուարճակից լինել նոցին զմեզ ար-
ժանացո :

Ցանկալի վերնոց դասուցըն համա֊
դասեա ,
ընդ նոսին Երրորդութեանդ եր֊
գել միշտ ըզփառս ։

## Ի ՆՈՅՆ

ՐՒԱՐՈՒՆԱԿ բերող ուրախարար
պտղոյն ,
ընչուիմն ողկուզի ճըշմարտութեան
որթոյն ·
Սեղան հոգեւոր յերկնից իջեալ հա֊
ցին ,
Խառնարան անոյշ երկնավըտակ աղ֊
բերն ։
Խորհուրդըն ծածկեալ 'ի սկըզբանէ
յազգաց ,
Քեւ յայտնեալ ցուցաւ Բանն 'ի Հօ֊
րէ ծընունդ ։
Զլոյս փառաց արկօղն որպէս զօթոց
ծածկոյթ
Մերկ կրեցեր մարմնով ընդ մերկու֊
թեան մերոյ ։
Արեամբ Աստուծոյ հոսեալ 'ի քեզ
ներկար ,

Եւ յահեղ բոցոյն ոչ տապացեալ կի-
զար ։

Աթոռ անեղին քառակերպեան գը-
տար ,

Եւ կառք հըզօրին հեծելութեան
մարտի ։

Որով 'ի դըժոխսն իջեալ փըրկեաց
զգերեալսն ,

Եւ քեւ պըսակեաց զեկեղեցի իւր
սուրբ ։

Պահեա 'ի հաւատըս ճըշմարիտս ըզսա,

Ի սմա և զմանկունըս հաւատոյ ան-
շարժ ։

Զգիր պարտեաց մերոց լուասցես
Ջըրոյն բըղխմամբ ,

Ի կեանըս գրեսցես արեամբ 'ի քեզ
մածեալ ։

Եւ յորժամ ծագիս յարեւելից նըշան,

Շնորհեա մեզ դասիլ խաչակրօնից
դասուցն ․

Ընդ նոսին երգել միշտ օրհնութիւն
յաւէտ

Սուրբ Երրորդութեանն փառք յաւի-
տենիս ․ ամէն ։

# ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐԱՑ

ՄԻԱԶԻՆ լոյս երրեակ և մի Աս-
տուածութիւն
Բանիւ յանէից զերկրորդ լուսոյ
ստեղծ նախ քան զգոյս ։
Գերագոյն գոլով հուպ լուսական
փառաց տեսօղք
Դասք Սերոբէից, և Քերոբէք, հզօրք
Աթոռոցն ։
Երկրորդ պարունակ պարագրելոց
ազգումք վէհից,
Զօրութեանցն խումբք Իշխանու-
թեանց, և Տէրութեանց ։
Երրորդ հասակ յետոյ պետականացն
Պետութիւնք,
Ընդ Հրեշտակապետսն և Հրեշտա-
կացն բազմութիւնք ։
Թագաւորք յաւէտք և քահանայք
մշտանուէրք,
Ժառանգորդք երկնից արքայութեանն
'ի սկզբանէ ։

Ի Հօրէ՛ն լուսոյ լոյս գիտութեան
միշտ ընկալեալք ․
Լոյս իմաստութեան որդւոց մարդկան
վերաբերողք ։
Խոնարհագունիցն 'ի վեհագոյն դա-
սուցն առեալ
Ծագումն իմաստից լուսապայծառ
հեղումն յարփւոյն ։
Կամաւոր բարիք 'ի յաղբերէն բար-
ւոյ հոսեալք ,
Հոգիք հարկաւորք վեհին կամացն
սպասաւորք ,
Զեւանան տեսլեամբ ձիւնանըման
պատմուճանաւ ։
Ղամբար բոցափայլ վառեալք 'ի տեսլ
ըզգայական ,
Ճառագայթ փառաց գերապայծառք
և պանծալիք ,
Մերձ յանհըպելին լոյսըն մաքուր
աստուածութեանն ։
Յիննեակ թիւ դասուց ըստ խորհըր-
դեան գրամից տասանց ,
Նոյն և հարիւրոց 'ի յանապատ յեր-
կինս հօտից ,
Շարժեալ միակին նըւաղեցոյց ըզկա-
տարեալն ․

Որում՝ի խնդիր էջ այցելուն մոլո-
րելոց ,
Զորին պատճառաւ յերկնից ան-
կեալ Արուսեկին ,
Պատուեալ պատկերին անպատուելի
Թաղեալ ախտիւք .
Ջնջէր խաւարութիւնն՝ որ յաղագս
այսըր մարդկութեանս :
Ուահ գործեալ յերկնից իջանէին
ընդ Միածնին .
Սուրբըն Գաբրիէլ նախ աւետէր Մա-
րիամու ,
Վասըն խորհրդեան անօրէնութեան
անճառելոյ :
Տիրական ծնընդեանըն սպասաւորք
դասըք վերնոցն ,
Բամեալ ընդ հովուացն տան Աստու-
ծոյ փառք 'ի բարձունս :
Ցընծութիւն տայլին նոյն աւետիս
եղաբերիցն ,
Լուծեալ մեռօրէն տագնապէին ըղ-
պահապանն :
Փառըք քեզ , Յիսուս , արարող այսըր
հաշտութեան ,
Քեզ , համաձայնեալ ընդ երկնայնոցն ,
երգեմք ըղփառս :

## ՅՈՐԴՈՐԱԿ

*ՆՈՐ տօնիւս երկնաւորաց հրեշտա-
կական դասուց ,
Եկայք ցնծասցուք , նոր ժողո-
վուրդք , այսօր :
Երջանիկ զուարճացելոցն այսօր յա-
ւէտ հոգւոց ,
Հաղորդք եղիցուք ուրախութեամբ
երգով :
Բարունեացն իմանալեաց հողեղինացս
ազանց ,
Մատուսցուք բանիւ աղերսական
նուէր :
Սրբազանք և երկնայինք աստուա-
ծամերձ հոգիք ,
Քահանայապետք մշտապաշտօն
բուրմամբ :
Նախկին բարուոյն պաղատեցէք յաւէժ
Վասն եկեղեցւոյ մանկանց պահել
անփորձ :
Առաքելք յերկրաքանչիւր մեզ օգնե-
ցէք աւուր ,
Բարեկամք բարեք և մարդասէր
հոգիք .*

Ի մարմնոյս լուծանելոյ հոգւոյս կա-
պից ժամու,
Եւ 'ի վերըստին անլոյծ կապէն
անմահ,
Երեւեալ բարեկամացըդ զուարթա-
գին տեսլեամբ,
Աւանդել զհոգիս մեր յարդարոց
կայանս:

Անդ 'ի յարութեան, յորժամ փո-
ղով մեծաւ,
Ժողովէք զընտրեալսն առ 'ի չորից
հողմոց,
Յամպըս լուսաւորս ընկալարուք ըզ-
մեզ,
Ընդ առաջ փըրկչէն վերաբերել
յերկինս:

Սըրբասաց ձայնիւ վերագոչել ընդ
ձեզ,
Սուրբ հրեշտակապետք, զերեքսըր-
բեան Նըւագս:

Բարեխօս և 'ի յայժմուս կենդա-
նութեան լերուք,
Փըրկել յանցանաց պատուհասից
զանձինս:

Այսօր խոնարհեալ, ո՛վ Միքայէլ
յաղթող,

Մեծըդ Գաբրիէլ, մեզ տօնակից
լերուք ։
Նոյնք և պահապանք յելս և 'ի մուտս
եղեալք ,
Ի յորոգայթից չար Թըշնամւոյն
փըրկէլ ։
Սուրբ Երրորդութեանըն միշտ եր-
գել ըզփառս ,
Այժմ և հանապազ 'ի յաւի-
տեանս , ամէն ։

# Ի ՍՈՒՐԲ

# ԱՌԱՔԵԱԼՍՆ

ԱՌԱՔԵԱԼՔ Աստուածորդւոյն
ի ծոցոյ Հօր առաքելոյն ,
Բանաւոր հօտից հովիւք ,
Բանին կենաց պայծառ քարոզք ։
Գեղեցիկ ոտք ընԹացեալք ,
Աւետաւորք խաղաղուԹեան ․
Դիտաւորք Խորայէլի ,
ԱԹոռակիցք Հօր անդրանկին ։
Երկնաւոր Թագաւորին
Կարգեալ իշխանք ․ խեղճերաց ․

Զինուորեալք արիաբար
Ընդդէմ մահու չար իշխանին ։
Նշկատամբք նախակարգեալք ,
Եւթանասուն թիւ կատարեալք ։
Ընտրեալ յառաջ 'ի սկզբանէ ,
Սուրբ և մաքուրք յորովայնէ ։
Թագաւորըք գումարեալք ,
Յերկնաւորէն 'ի մարտ խըմբեալք ·
Քուժկալեալք 'ի պատերազմ ,
Զհոգիս մարդկան գերի առեալ ։
Ի Սաղիմ քաղաք վեհին
Զինափայլեալ սպախակցացք ,
Լեզուօք հրեղէն լուսաւորեալք ,
Ի վերնատանն հոգիացեալք ։
Խորհըրդոցն աստուածայնոց
Առատաբաշխ հաղորդակեալք ·
Ծընօղք որբոց աւազանաւն
Զորդիս մարդկան յորդիս լուսոյ ։
Կըրկնատեսամբ կաթին արբուցէք
Տղայացելոցն առ 'ի Քրիստոս ·
Հացիւ կենաց յերկնից իջեալ
Կերակրեցէք ըղկարօտեալս ։
Զայնեցէք առ յիմարեալըն
Բարձրագոչ ձայնիւ մեծաւ ,
Ղամբարմամբ լուսոյ բանին
Գալ 'ի յարբումն խմաստութեան ։

Ճըշմարիտ որթոյն ստեղունք
Եւ բարունակք ողկուզաբերք ,
Մըշակին երկնաւորի
Յօտմամբ խնամոց պտղաբերեալք :
Յորդահոս գետոց գնացիւք
Քառավըտակ 'ի յԱդենայ ,
Նորակերտ քաղաքըն սուրբ
Առոգելով ուրախանայ :
Շնորհատուք հոգեղինաց
Ձըրի պարգեւըս հրեղինաց :
Ունելով իշխանութիւն՝
Թողուլ ըզմեղս երկրաւորաց :
Զոր վիրաց աղ մորմոքիչ
Մաքուր հոգւոց լուսաւորիչք :
Պարագլուխք պարուն վեհից
Ի Միածնէն Հօր հարսանիս :
Ջուր կենդանի ըղխմամբ Հոգւոյն
Ի ծարաւի մեզ արբուցէք .
Ունանիւ քաղցու բըժըշկական
Զհիւանդութիւնս ողջացուցէք :
Սուրբ Հոգւոյն տաճարք մաքրեալք ,
Իմաստութեամբ նորին լցեալք :
Վարդապետք 'ի ձըկնորսաց ,
Եւ հանճարեղք 'ի տըգիտաց :
Տանն Աստուծոյ որմնաքարք բարձք ,
Վէմք պատուականք նոր Սիոնի :

Բարունք հրճուալք վարդաւետաց ,
Նու ուսուցիչք հանճարեղաց .
Ցօղով արևամբ ձերով յերկրի
Պտտակեցէք զեկեղեցի ։
Խնամամբ լուսոյ այսօր տօնէ
Սուրբ զվիճակն ձեր պանծալի ։
Փառօք ըղձեղ պսակողին
Փառք և պատիւ մատուցանեմք .
Քաւութիւն մեզ հայցեցէք
Յառաջաձիր պարգևողէն ։

## ՑՈՐԴՈՐԱԿ

ԵԿԱՑՔ զուարճացեալ պայծառացեալք տօնիւս ,
Բարունեաց մերոց աշակերտեալ մանկունք ,
Գովասանական քաղցր ձայնիւ երգով
Սուրբ Երրորդութեանն մատուցուք նուէր ։
Աղերս մաղթանաց յիշատակի սոցա
Ցուսոյն բոլորից տեառն առաջի արկցուք .

Այգին պտղատուանք, որ վառին մեր առ-
քեզ,
Եղիցին հաճոյ կամեցողիդ բարեաց ·
Նորոգեա ըզմեզ 'ի հնութենէ մե-
ղաց ·
Երկնայնոյն ցօղովդ ըղձարաւելս արբո·
Բանակս միաբան 'առ Առաքելոյ դա-
սուն
Սրբութեանն սիրով որպէս 'ի վեր-
նատանն :
Ի յահեղ աւուր քում գալըստեան
մեծի
Սրբոց ընտրելոց արժանացուք խըմ-
բից ·
Ի ձայն ցընծութեան ընդ անդրանկաց
գրելոց
Փառս վերառաքել Երրորդութեանըն
միշտ :

# Ի ՍՈՒՐԲ ՄԱՐԳԱՐԷՍ

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ խորոցն անճառ
  խորհրդակցի՛, սուրբ մարգարէք,
Բանին պատմողք յառաջագոյն
  Ապագայիցն եղելութեան.
Գաղտնի գործոց աստուածորդւոյն
  Տնօրինական սուրբ խորհրդոյն
Դաւանողք ամենեքեան
  Բազմապատիկ օրինակօք ։
Երեւեալ 'ի ջրոյն Մովսէս,
  Գաւազանաւ զջուրսն հերձող,
Ըզծնունդն ետես ըզկուսական
  Ի մորենին անկիզական ։
Նախածին արքայ Դաւիթ,
  Հայր ըստ մարմնոյ Հօր Միածնին,
Ըզցօղ հոսեալ վերայ գեղման
  Տըպաւորեալ Որդւոյ իջման ։
Թագաւորաց օծողն իւղով.
  Սամուէլ պտուղ ամլոյն գոլով.
Ժառանգ եղեալ նոր օրինաց,
  Փոխան Հեղեայ հնին օրինաց ։

Խաչիւս տայ մեզ նշան
  Ծնանել կուսին առանց սերման .
Լըսող ձայնի սրովբէական ,
  Տեսող փառաց աստուածութեան։
Խըստամբերողըն Հեղիաս ,
  Երկնից փակօղն և արձակօղն .
Ծայրագոյն յերկրի ճըգնեալ ,
  Հրեղէն կառօք յերկինս ելեալ ։
Կըրկին հոգւոյ նորա ստացողն
  Եղիսէոս սուրբ տեսանողն ,
Համանըման վարդապետին ,
  Զորդի այրւոյն յարուցանող։
Ձայնիւ պատմողն Եզեկիէլ
  Զքառակերպեանըն Սրոբէից
Ղօղեալ խորհուրդ բացայայտէ ,
  Զաւետարանըն քարոզէ ։
Ճըշմարիտն 'ի յարգանդէ
  Երեմիաս կոյս մարգարէ ,
Մեզ երեւաց հոգի ասէ
  Զլոյսըն Քրիստոս որ 'ի Հօրէ ։
Յայտնիկ յեւեալ խըմբից
  Երկոտասան մարգարէից ,
Նոյնաբար քարոզեցին
  Առ 'ի յերկիր գըալուստ Բանին ։
Շնորհատու շնորհաց Հոգին
  Գործի ստանայր զլեզուս նոցին ,

Ուսուցանէր նոքօք մարդկան
Զանճառ խորհուրդըն տէրունեան։
Զորրորդ գալուն սկիզըն արարեալ
Յաբրահամուն սուրբ աւետեացն,
Պարաւաբար պարագրելով,
Ի վեցերորդն աւարտելով։
Ջնջէր նոքօք զխաւար հոգւոյ
Յիսրայէլեան ժողովըրդոց։
Ուահ գործէր 'ի յօրինացն
Յաւետարանըն Քրիստոսի։
Սոփոնիա և Անգէաս,
Ովսէ Ամովս և Միքիաս,
Վեհագունին տեսլըն Յովնան,
Յովէլ քարոզն և Աբդիաս,
Տեսանողն Զաքարիաս,
Աւետաւորըն Սիոնի,
Բարերարեալ մեծն Ամբակում,
Նաւում, հրեշտակ Մաղաքիաս։
Ցանկալին Գաբրիէլի,
Հրաշից տեսողըն Դանիէլ.
Իմաստեալ նորին վարուց մանկունքըն,
Յորոց և հուրըն պատկառեաց։
Փառք են սոքա ազգի մարդկան
Եւ լուսատուք տիեզերաց.
Քրիստոսի նախաքարոզք,
Որում պատիւ երգ սրբասաց։

## Ի ՆՈՅՆ

ՆՈՐԱՀՐԱՇ տօնիւս տեսանողացըն
ցընծացէք ·
Ունակաց Հոգւոյն յիշատակաւ
պայծառասցուք :
Երրաբուն էին ծովածաւալ շնորհին
հոսման
Զհոգիս յարդարեալ ըստ ծարա-
ւուտ երկրի յորդումն :
Րաբունւոյն էից Հոգւոյն սրբոյ աշա-
կերտեալք
Ընտրեալք 'ի հովուաց, հովուէր
նոքօք զհինն Իսրայէլ :
Սրբեալ մաքրութեամբ իշխանական
հոգւոյն իմաստ ,
Տպաւորեալ 'ի սմա սոքօք ըղձման
արփիական :
Էին անեղին անձառ խորհրդոց խոր-
հրդապետք
Տեսլեամբ անմարմնոցըն հրեղինաց
լուսաւորեալք :
Սոսկալի անհաս գոյին գոլով տեսողք
նոցա ,

Զուարճացան աչք գերաղանց
ունկն 'ի լսել:
Ի ներկայ ժամու զապագայից ու֊
սեալ զխորհուրդ,
Հոգւոյն ծանուցեալ զանեղականն
իբրեւ եղեալ:
Երկնաւորք յերկրի անճառելեացն
մեզ պատմողք,
Ամպոյ նման հոսեալ զանձրեւ կե֊
նաց առ ծարաւիս.
Բամբաւք 'ի Սիոն եկեղեցիք հեթա֊
նոսաց,
Տօնեմք զաղբերաց Իսրայէլի ըղձի֊
շատակս:
Գոչեմք մաղթանաց մեղաւորացս
թողութիւն
Հայցեմք 'ի տեառնէ. որում պա֊
տիւ և գոհութիւն:

# ՍՐԲՈՑ
# ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ

ԱՅՍՕՐ մայր Սիոն ցնծայ տօնե-
լով,
Բանայ զառագաստ, զարդարի փառօք.
Գոչէ խնդութեամբ յորս յիշատակի
Դասուց ընտրելոց սուրբ հայրապե-
տացն,
Երջանիկ խմբից սուրբ վարդապե-
տաց:
Զօրք երկնից ընդ մեզ տօնակից լինին.
Երկիրս երեւի երկնից վեհագոյն,
Ընդ իննեակ պարուց սոսա պարա-
գայից:
Թագաւորն երկնից փոխան իւր կար-
գեաց
Ժառանգ աթոռոյ զքահանայա-
պետսն:
Ի հոգւոյն լցեալ սրբոյ գիտու-
թեամբ,
Լուսաւորեցին սուրբ զեկեղեցի:
Խորհրդով ծանեան ըզխորս Աստու-
ծոյ,
Ծանուցին բանիւ բանաւոր հօտից:

Կենացըն հացի քաղցելոց բաշխօղք ,
Համեղաճաշակ գինւոյն մատռու-
ակք ,
Զայնիւ կոչեցին առ 'ի ճաշակել ։
Ղօղեալ յաշխարհէ զմեզ ուրախու-
թեանն ,
Ճառագայթ լուսոյ յերկնից ծագե-
ցան .
Միածնին քաղաղք ճշմարիտ բա-
նիւք ,
Յանմահ աղբերէն ըզմեզ արբուցին ,
Նոր նորոգելով հոգւով փրկու-
թեամբ ։
Շարժեալ վէմայիցն 'ի յորդայնէ ,
Ուրախ արարին զքաղաքս Աստուծոյ ։
Զարին արմատոց տապալիչ տա-
պալք ,
Պարուց ոչխարաց հովիւք և տածողք ,
Ջրով կենդանարար սնուցանողք գա-
ռանց ,
Ռահիւք 'ի յերկինս առաջնորդեցին ,
Սրբելով զհոգիս սուրբ աւազանաւն ։
Վարդապետք բարիք բանիւք և գոր-
ծովք ,
Տանս եկեղեցւոյ տնտեսք իմաս-
տունք .

Բարունք կատարեալք տղայոցս 'ի
Քրիստոս ,
Ցօղեցէք ըզկաթն խառնեալ ընդ մե-
ղու ,
Խնդիւ սուրբ Հոգւոյն ըզհինն և
ըզնորս :
Փութացեալ եկէք առ հովիւըն քաջ,
Քաւիչ մեր լերուք բարեխօսելով :

## ՅՈՐԴՈՐԱԿ

ՆՈՐ դրախտի քո , տէր , զոր տըն-
կեցեր յերկրի ,
Վարդ անուշահոտ և մանուշակ քըր-
քում
Առեալ ընծայեմք քեզ Թագաւոր
փառաց ,
Գերապանծ ըզվարս աստուածայնոյն
արանց :
Բանաւոր ծառոց զերախայրեաց պը-
տուղ ,
Անցեալ ընդ երկինս քահանայիդ
նուիրեմք .
Նոյն խունկ բուրվառօք զաղօթըս
սուրբ սոցա

Ի հոտ անուշից մատուցանեմք քեզ, տէր ։

Սոյլին մաղթանօք և մաքրական վարուք

Նորոգեա ըզմեզ 'ի հնութենէ մեղաց։

Երանականաց արժանացո դասուց,

Բամեա ընդ նոսին զմեզ 'ի լուսոյ խորանդ ։

Սրբեա զխաւարին 'ի մէնջ զխորհուրդմոլորաց,

Եւ լուսաւորեա խընդըրուածօք սոցա,

Սոյլին հետևել լուսաշաւիղ գնացից,

Ի յանճառելւոյդ արփիանալ լուսով,

Երգել ընդ նոսին Երրորդութեանդ ըզփառս

Ցայժմուս յաւիտեան և անզըրաւյաւէտ ։

## Ի ՆՈՑՆ

ՙՆՈՐՈՑ գինւոյն իմաստութեան
Ցօղիս նորոգ արկօղն Յիսուս ,
Երրախումբ միակին խորհուրդ
Ի հնումն անհաս նորոց պարգեւ .
Բնական լոյս յարփոյն ծագեալ
Ի բաբունից փայլեալ յաշխարհս ,
Այպէս ծով ուերկեր լըրեւ
Ողքջք լըցեալ գիտութեամբ տեառն.
Երգէ Դաւիթ գետք Աստուծոյ
Ջրովք պարարին բըղխմամբ հո-
գւոյն .
Արմին նըման համբարձան գետք
Ի ջուրց բազմաց ձայն քարոզչաց .
Իմանալի գետոցս այս գնացք
Ուրախ առնեն զքաղաքըն սուրբ .
Եկայք տածեալք 'ի ջրոյն կենաց
Տընկեալք 'ի գաւիթս Աստուծոյ.
Բամեալք 'ի մի զմեզ ընկողացս
Զտօն կատարեմք 'ի տանըն տեառն
Գովեմք , ընդ հարցն համաձայնեալ ,
Զփառս համագոյ Երրորդութեան:

## Ի ՍՈՒՐԲ ՎԿԱՅՍ

ԱՐԵԳԱԿՆ արդար ըղձուր սիրոյ ծագեալ,
Զանհաւատութեան սառըն մեղաց հալեալ,
Բանաւոր ծառոց երեւեցան ծաղիկք
Երփնազարդ գունով, անուշահոտ բուրմամբ ։
Գարուն հոգեւոր դալարացոյց զհոգիս.
Գօսացեալ տնկոց կանաչացան տաղարթք ։
Դրախտին Ադենայ ծառք բազմացան յերկրիս,
Ի տանն Աստուծոյ արմատենիք ընկեալք ։
Երկնից լուսաւորք իջեալ շըրջին ընդմեզ,
Եւ աստեղք սոյծառք համաբնակից մարդկան ։
Զօրք անմարմնականք զուարճացեալ տօնեն ,

Մարմնաւոր զօրաց համադասել նոցունց ։
Էջեալ սրբոյն 'ի հանդխի Ճըգունս
Զօրացուցանել 'ի հոգեւոր մարտին ։
Ըղձրաւէրն եռուն 'ի հարսանիսն երկնից ,
Ընդ որս և մտին արեաներանգ զգեստուք ։
Թագաւորն անմահ 'ի յաշխարհէ մահու
Առեալ խր զինուորս , անմահացոյց բնութեամբ ։
Ժողովլ զինուորաց Թագաւորին երկնից
Գրեցան , ժառանգել զերուսաղէմ վերինն ։
Ի յերկրի Ճըգնեալ չարչարանօք մարմնոյ ,
Ի յերկինս ելին գերապայծառ հոգւով ։
Լըւան զկենարար հոլովակեալն բարբառ ,
Ընթացեալ 'ի յաղըն բանաւոր զենմունք ։

Խաչիւ մահու ճանապարհի հովուին
Եղէն հետեւեալք ողջակիզեալ
գառինքն ։
Ծընեան վերըստին աւազանաւ նորով.
Մըկըրտեալ արեամբ զբաժակ մա-
հու արբին ։
Կոյսք իմաստութեամբ զլապտեր հո-
գւոյ լուցեալք ,
Կանացի բնութեամբ մահու եղէն
յաղթողք ։
Հուր սիրոյ ինքեան սուրբ փեսային
վառեալ ,
Զհուր մեղաց բոցոյն զայն շիջու-
ցին արեամբ ։
Ձիւնափայլ զոգւոյ ըզպատմուճանս
լուացեալ ,
Գոյն արեան մարմնոյ պըսակ փա-
ռաց ներկեալ ։
Ղամբարմամբ լուսոյ 'ի յառագաստ
մըտին .
Մաքուր հարսանեօք ուրախանան
յաւէժ ։
Ճըշմարիտ վկայք Աստուածորդւոյն
եղէք ,
Վըկայեցելոյն հօր կամաւոր մա-
հուամբ ։

Միածնի Բանին մարմնով վասն իմ մահու
Մահակից գոլով չարչարանաց կըցորդ,
Յամենայն ազանց ընծայեցայք պըտուղ
Մեծ քահանային երախայրեաց նըւէր :
Նըռնենեաց նըման յետ գարնայնոյ ծաղկեալ,
Ծաղկեալ նըշենեաց 'ի յերկրորդին սկըզբան :
Շարագրին շինուածք անդամոց ձեր հատեալ
Աստիճանք ելից յերկրէ յերկինս մեզ :
Որոց ձեր հատմամբ մեզ ուղղեցէք շաւիղս,
Ի յերկրէ յերկինս վերափոխել առնէր :
Զարաչար կիզմամբ ողջակիզեալ մարմնոց
Ըզմեզ փըրկեցէք 'ի կիզանող բոցոյն :
Պատուական անդամք յօդեալք 'ի գլուխն Յիսուս .

Ըզմեզ յօդեցէք ընդ նոյն հիւսմամբ սիրոյ :

Ջախմամբ անդամոց ձեր ընդ սիրոյ նորին՝
Զհոգիս մեր յախտից բըժըշկեցէք ցաւոց :

Ռահիւք յաշխարհէ հալածանօքն ըզձեզ
Յաշխարհըն վերին բարձրացուցէք ըզմեզ :

Սոսկալի ճըգնամբք սուրբ վըկայից քոց, տէր,
Ի հնութեանց մեղաց վերանորոգեա զմեզ :

Վէրաց քերանաց և գաղանաց քանցիւք
Ի թունից վէրաց չար վիշապին փըրկեա :

Տարախիղ ունկամբք և կուրութեամբ աչացն
Լոյս ծագեա յոգիս և զըգսեալս մաքրեա :

Րախճանից ազանց տըրտմականաց կըրիւք՝
Զմեզ 'ի սգոյ մեղաց յուրախութիւն դարձո :

Ցաւալից կենօքն և խաւարին բան-
տիւքն՝
Ի լոյսն ընդ նոսին շնորհեա և մեզ
լինել։
Իւխծմամբ անդամոցն 'ի կիզանող
տապակս՝
Զքոյ տապոյ մեղաց չիջո յոգւոյս
մասանց։
Փառացն անձառելոյ ընդ երջանիկ
վըկայսն
Հաղորդս զմեզ ընկալ աղաչանօք
սոցա։
Քեզ ընդ երանեալ մարտիրոսաց դա-
սուցն,
Փառաց Թագաւոր, մատուցանեմք
ըզփառս։

## ՅՈՐԴՈՐԱԿ

ԻՇԱՆԻՒ աւետաւոր
Բարառնաբար բարբառեսցուք
Առ քեզ, եկեղեցի,
Դուստրըդ վերինըդ Սիոնի։
Այտեղս անԹիւ ծընար
Գերապայծառ և երկնաձեմս,

Զադս աղաւնակերպս բերեալ
Թաթաւելով արեամբն իւրեանց :
Նըստիս յաւագաստի
Սպիտակափայլ բոցանըման ,
Զոր կազմեն որդիք քո քեզ
Չարչարանօք և սուրբ արեամբ :
Ի պարզ ւ՚ի գերազանց
Բնակես ՚ի լոյս դու անմատոյց ,
Փոխանակ խաւարային
Բանտից նոցա և կապանաց :
Վանել զքոյդ զօրութիւն
Ոչ կարացին դրունք դժոխոց ,
Զի փեսայն խաչեալ ընդ քո
Եւ հարսն որդիք քո խողխողեալ :
Կենացըն կերակրովն
Եւ բաժակաւըն զուարճանաս ,
Փոխան ժուժկալութեան
Նոցին քաղցի և ծարաւոյ :
Անմահ ունիս փեսայ
Թէ և սիրով քոյին մեռաւ .
Ի կեանս են և որդիք
Թէպէտ ետուր գերեզմանի :
Յանեղծ յաւիտենին
Բերկրեալ խընդաս երբեմն ամուլ ,
Յորժամ բնակես ՚ի տան
Մայր՝ քո որդւովք ուրախամիտ :

Սիրով անճառ կապիս
Ի սէր անմահ քո փեսային,
Եւ զորդիս քո ընդգրկես
Խանդակաթ սուրբ համբուրիւք:
Նորոգ նորափետուր
Լուսապայծառ յորժամ ծագիս,
Արեգական նըման
Յարքայութեան ըստ հրամանին,
Ի մի յարմարութիւն
Զօգիս ընտրեալ քոց անդրանկաց
Ժողովեալ բարեխօսեա
Ընդ կենդանեացըս փրկութեան:
Նոյնաբար որպէս ծընար
Լուսազարդեալ աւազանաւն,
Վերըստին զմեզ նորոգեալ
Ի հնութենէ մեղաց մերոց:
Երրեակ յաւիտենիւք
Շնորհեալ առատ ողորմութիւն,
Յայժմուս և յապագայն
Ի յանըսպառ յաւիտենին:
Բամեալ՚ի մի լրութիւն
Կաթողիկէ վերին Սիոն,
Ըզմեզ զամենեսեան
Ընդ երանեալ սուրբ վըկայիցն:
Սըրբել սպիտակափայլ
Ըզպատմուճան հոգւոց մերոց,

Արեան նոցա հեղմամբ
Եւ հատմանցն պատարագօք ։
Ի գլուխըն վերըստին
Ըղձեղ սիրով նորին յօդել,
Զայրի եղեալ հոգիս
Ընդ փեսային միաւորեալ ։
Սրբել զաղբիւն դառանցս
Եւ սուրբ զաճիւն ողջակիզացս ,
Երկրորդ տալ աւազան
Ի մաքրութիւն մեղաւորաց ։
Էին երրեակ միոյ
Պըսակելոց պըսակողին ,
Որդւոյ ընդ Հօր Հոգւով
փառք 'ի յաւիտեանս և յաւիտեան ։

## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ

Անմարմնոցըն հրեղինաց
Մարմնով հաղորդ սուրբ Յովհաննէս.
Բանին Հօր բանիւ քարոզ ,
Մեծի լուսոյն նախատեսող .
Գարնան գուշակ երկրի մերում,
Քաղցրախօսիկ ձայն տատրակի ։
Դրախտին հոգւոց աստուածատունկ

Առոգանող ջուր մաքրութեան։
Երկնաւորին ճանապարհի
Ցառաջընթաց աւետաւոր.
Զօրական թագաւորին
Նախամարտիկ յաղթարխին։
Էրեւման Գաբրիէլի
Զաքարիա 'ի տաճարին
Ընկալաւ ծնունդ աւետեաց
Անուանագրեալ 'ի տախտակին։
Թափեցելոյն յանճառ փառաց,
Պարագրելոյն յարգանդ Կուսին,
Քամանեցեր յողջոյն կենաց
Ցամուլ ծերոյն յորովայնէ։
Ի բերանոյ բարբառելով
Զօրհներգութիւն ալլոցոյ Կուսին,
Լցար Հոգւով սուրբ անդրանին,
Ըստ աւետեացըն հրեշտակին։
Խայտալով յարգանդ՝ ծընար,
Կաքաւելով կատարեցար։
Ծագեցար նախ, արուսեակ
Արեգական արդարութեան,
Կարապետ թագաւորին
Եւ փեսաւէր սուրբ փեսային.
Հրաւիրակ առագաստին
Մաքուր զարդուք ըղձնեալ հար-
սին։

Զայն բարբառոյ յանապատէ,
Ի գաղափարել մարգարէիցն։
Ղեւտական քահանայիցն
Լրրումն եղեր սաւտերականին։
Ծրագ օրինացըն Յովհաննէս,
Նըսեմացեալն խարայէլի․
Մարգարէ և Առաքեալ,
Եւ մեծ 'ի ծնունդըս վըկայեալ։
Յանապատի վայրաբնակեալ,
Անմարմնական վարուք ծըզնեալ․
Նոր հեղխաս հոգւով լըցեալ,
Կըրկին ազանց արժան կանգնեալ։
Շնորհաց նորոյս 'ի քէն սկըսեալ,
Հին օրինաց քեւ կատարեալ։
Որ ոչ լուծեր ըզխըրացս ոտին
Տնօրէնութեան սուրբ Միածնին։
Զընաշխարհիկ մարդկան ցուցար,
Կոչմամբ հոգւոյն երեւեցար։
Պապանծեալ լեզուին լուծող,
Եւ ամլութեան մօրն արձակող։
Ձայնըն լուսոյ յերկնից ծագեալ,
Երեւնամեայ յերկրի շըրջեալ։
Ուսհ գործեալ 'ի Յորդանան՝
Ի քէն հայցեր ջուր մաքրութեան,
Սուսկալըն հողեղինաց
Հուրն 'ի հողոյդ մաքուր ձեռաց։

Վըկայելով Բանին կենաց
Լըւար ձայնին Հօր 'ի բարձանց ·
Տեսեր զՀոգին աղաւնակերպ
Ցերկնից իջեալ առ փառակիցն ։
Բարունւոյն աւանդեցեր
Վարդապետել զաշակերտեալսն ։
Ցընծայ այսօր եկեղեցի
Ցիշատակաւ քո պանծալի ,
Ի լուսէ պըսակ զարմանալի
Յօդնանըկար քում գըլխոյ ։
Փառք ամենայն առաքինեաց ,
Նախամարտիկ մարտիրոսաց ·
Քահանայդ ինքնանըւէր ,
Քաւիչ մեր լեր հայցմամբ առ տէր ։

## ՈՐԴԻՈՑՆ ՈՐՈՏՄԱՆ

Որդիքն որոտման որք 'ի վերուստ որոտացին ·
Ցամպոց հրեղինաց հողմով Հոգւոյն հընչեալ յաշխարհս ։
Յաշխարհս ծարաւուտ զանձրեւ կենաց հոսեալ յերկնից ,
Զերկիր բանաւոր առոգելով առատապէս ։

Առատավըտակ գետոց բղխումն 'ի
յԱդինայ ,
Չորրորդն Եփրատէս նշանակէր ըզ-
Յովհաննէս :
Յովհաննէս սիրող սիրեցելոյն առ 'ի
Հօրէ ,
Անկեալ ըզլանջօքն և ոչ կիզու յա-
հեղ բոցոյն :
Բոցով բորբոքեալ անձկակարօտ
տարփմամբ սիրոյ ,
Ճեպէր փոյթընթաց 'ի գերեզման
յարուցելոյն :
Յարուցեալն յայտնիւր առ ծովակին
տիբերականն ,
Ծանեաւ սիրեցեալն աղաղակեաց թէ
այն է տէրն :
Տէրըն հրաւիրէր զՊետրոս ընկնել իւր
հետեւել ․
ԶՅովհաննու ասէր , զի թէ կամիմ՝
կեցցէ 'ի սպառ :
Ի սպառ սիրեաց զտէրն և սիրեցաւ
անզուգապէս :
Մըկըրտեալ արեամբն Յակոբ ընտ-
րեալ մաքուր անձամբ ․
Յանձն առին ըմպել զբաժակ մահու
կենարարին ,

Մըկըրտեալ արեամբ՝ զոր ընկալաւ
տէրն 'ի խաչին :
Ի խաչին ըզմայըրն սիրելոյն իւր
աւանդէր ,
Շնորհիւ դաւանէր որդի ընդ սըրբոյ
կուսին :
Զկոյսըն Մարիամ առեալ յինքեան
սպասաւորէր ,
Մինչեւ 'ի փոխումն յիմանալեացըն
կայարանս :
Կացեալ յաշխարհի քարոզ բանին
ճշմարտութեան ,
Աւետեաց ձայնիւ յերկնից հընչեաց
կենդանի Բանն .
Բանն որ էր Աստուած 'ի սկըզբանէ
առ Աստուած Բանն ,
Ծընունդ միշտ Էին որով եղեն գոյքս
յանգոյից :
Գոչումն որոտման յետ հասելոյ զանձ-
րեւ կենաց ,
Անփոփեալ յերկինս առ առաքօղն
անդրէն դարձան :
Յակոբոս վըկայ վաղահասուկ ըն-
կոյն պըտուղ ,
Ի հերովդէից զբաժակն արեան մա-
հու արբեալ :

Արք և Յովհաննէս՝ թէ ոչ զարեան,
այլ ըզսիրոյ ·
Որով հետեւեալ իշխանաբար առ ըզ-
ձայլն :
Ի բաղձալին լոյս արփիական փափա-
քեցին,
Զոր տեսին աչօք թաբօրական 'ի
սուրբ լերինն :
Ի լեառըն Սիոն վերասլացեալ ելին
փառօք,
Յանդրանկաց կայեանս՝ ուր անդրա-
նիկն է մեռելոց :
Մեռելոց լինել և կենդանեաց միշտ
բարեխօս,
Տալ ըզքաւութիւն և ըզպարգեւս
ողորմութեան :

## ՅՈՐԴՈՐԱԿ

Նոր լոյս յարփենւոյն վառեալ Որ-
դիքն որոտման,
Որդւոց Սիոնի ծագեն աւետարա-
նաւն :
Եդեմեան վըտակ բըղխեն յերկիր ծա-
րաւուտ,

Ծաղկըն տեառն ըմպեն յամպոյն
   զանձրեւըն կենաց ։
Բաբուննն երկնաւոր ծաղկեալ զոր-
   Թըն հոգեւոր ,
Զուռ սիրոյն յօտեալ սըրբեաց լի-
   նել սըրտաբեր ։
Սիրելեք զսիրոյն բաժակն ըմպել խոս-
   տացան ,
Մըկըրտել արեամբ ընդ նոյն կա-
   մաւ յանձն առին ։
Էն միշտ 'ի յԷէն ծընեալ մարմնով
   ծընանի ,
Զոր քարոզք Բանին տեսին և շօ-
   շափեցին ։
Սիրատարփ զյանջքն անկեալ զկիզա-
   նող բոցոյն ,
Զոր և 'ի լերինն Թաբօր տեսեալ
   Թըմբրեցան ։
Ի մակադրական անուանց վերապա-
   տուեցան ,
Յորդւոց Զեբեդեայ փոխեալ յՈր-
   դիան որոտման ։
Եւս 'ի բարձրադոյն ելեալ որդի կու-
   սական ,
ԻուԹեան բանին պատմող գոլ աս-
   տուածաբան ։

Բնական լուսով լցեալ զաշխարհս ա-
մենայն,
Անձկալի սիրով առ նոյն մերձաւո-
րեցան ։
Գովել ըղձաբղձօղն էին զԲանն ծա-
նուցին,
Որում և տացուք ըղձմաս ընդ Հօր
և Հոգւոյն ։

## Ի ՆԱԽԱՎԿԱՅՆ

Ի խաչին տնկեալ որթոյն
Ողկոյզ փողահատ խայծեալ,
Քարամբքն ձգմեալ գինի
Ուրախարար սիրով ։
Սէր սիրոյ սերման ծննդ.
Սկզբնաւորողն լուսոյ ծաղիկ,
Պտուղ քաղցրահամ ճաշակ
Հրեշտակաւորաց տեսիլ ։
Տեսանող էին լուսոյ
Անձամբն Հօր 'ի բարձունս,
Աջմ և ծագածին Բանին
Անեղին եղեալ երբեմն ։
Երբեմն անեղին առեալ
Սկիզբն եղականին բնութեան

Զոր և տեսեալ վկայն
Յերկինըս բացեալ փառօք ։
Փառաց Թագաւորն երկնից
Յայտնեալ զինուորին յերկրի ,
Ի յաստապարխիտ վասն իմ
Դու մի՛ երկընչիր , ասէր ։
Ասէր աղաղակելով
Առ տիրասպանիցն հանդէս ,
Ահա տեսանեմ զՅիսուս
Իւր Հօրն ընդ աջմէ՛ նըստեալ ։
Նըստեալն յառնէր ցուցանել
Վերին հրեղինաց դասուցն ,
Տեսէք զհողեղէն բնութիւնն
Վասն իմ չարչարեալ նըման ։
Նըման խաչելոյն հայցէր
Ըզթողութիւն սպանողացն ,
Որ և կոչեցաւ Սաւղոս
Նորին հետեւեալ ոտից ։
Ոտիւք սլացեալ յերկինս
Եւ 'ի ձեռըս քո՝ ասէր ,
Յիսուս , աւանդեմ զհոգիս
Մինչեւ 'ի գալուստ քո սուր ։
Սուրբ Ըստեփաննոս պըսակ
Եւ նախամարտիկ վըկայ ,
Վասըն ատենողացըս քո
Դու լեր բարեխօս առ տէր ։

## ՑՈՐԴՈՐԱԿ

Ի ԳԱՒԱԶԱՆԷՆ Յեսսեայ սեռ-
նեալ Ստեփաննոս,
Առաջին որդւոց ծառոյն՝ որ 'ի
Գողգոթա։
Նարդոս և քրքում, զմուռս, ծաղիկ
ծովային,
Մանուշակ, շուշան, վարդից կար-
մրերփեան որդակ։
Երփնազարդ պճնեալ գեղով նըման
հրեշտակի,
Բուրուառ ոսկեղէն խնկոց զհոտ
անոյշ բուրեալ։
Բարուն պանծալի բանիւ վարդապետ
բարի,
Իմաստուք լցեալ Հոգւոյն աս-
տուածաբանէր։
Սիրով անձկալեաւ վառեալ 'ի հուր
սիրելոյն,
Ի մէջ ջուրց բազմաց պահեալ ան-
շիջանելի։
Ի բարձունս երկնից դիտեալ սրտիւ
մաքրութեամբ,

Անտեսին փառաց տեսող հօր իւր
ընդ այժմ ։
Սրբացեալ Թեւօք հոգւոյն երկնա֊
ձեւմ գոլով,
Սկզբնատպին տըւեալ յաւանդ
զիւրական պատկերին ։
Էլից աստիճան գործեալ զհարկանող
քարինն ,
Ընդ ինքեան հանեալ զըաղըւամ
յերկնային խորանին ,
Կենդանի վիմյ մանհուածք կենդան֊
ւոյն յաւէտ ,
Ըզմաղթանըս մեր մատո որպէս
խունկ անոյշ ։
Արքային երկնից զինուոր արի 'ի
մարտի ,
Տուր մեզ օգնութիւն հայցեաց ընդ֊
դէմ Թըշնամւոյն ։
Թագիւ անթառամ Յիսուս պըսա֊
կեալ ըզքեզ ,
Հաղորդ քոյդ փառաց խընդրեա
լինել տօնողացս ։
Որ յուրախութիւն անձառ տեսոյըն
քո մտեր ,
Պաղատեա և մեզ 'ի նոյն մտանել
ընդ քեզ ։

Վէկօք հաւատոյ անցեր ընդ ծով աշխարհիս ,
Վերածել ըզմեզ հայցեա 'ի մեղաց ծովէս :
Ի քեզ համբառնամք ըզմիտըս , Քրիստոս Աստուած ,
Նախավըկային հայցմամբ և մեզ ողորմեա :
Կերպարանըդ հօր զգեցեալ ըզկերպ Ադամայ ,
Վասըն քո մերկացելոյն մեզ լոյս ըզգեցո :
Որ բուրուառ ծերոյն յերկինս դառեցեր զմանուկն ,
Զաղօթս մեր նուէր ընկալ 'ի հոտ անուշից :
Սրբութիւն սրբոց սրբեա ըզմիտս և զխորհուրդս
Տեսանել ըզքեզ հոգւով ընդ Ստեփանոսի :
Երեւեալդ ընդ աջմէ հօր , տեսողին հայցմամբ
Զերդաբանս և ըզտօնողս ընդ նըմին դասեա :

## Ի ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ

ՍՐՈՎԲԷԻՑ ձայնիւ եղանակեմք
այսօր,
Ի յիշատակի հօր րաբունւոյս մե-
րոյ ·
Րաբունիցըն սեան 'ի խաւարէ ծա-
գեաց
Լոյս հայաստանեայց իմաստու-
թեան Բանին ։
Բանն որ 'ի Հօրէ իջեալ փրկեաց
զաշխարհս ,
Նոյն սովաւ զանկեալքս վերաբե-
րեալ ուղղեաց ։
Ուղղութեամբ հաւատոյ տեսանողին գը-
տեալ ,
Ի փշաբեր աստոց ծաղիկ վարդից
յեռեալ ։
Ցնծեալ խուռներամ բարեբաստիկ
իմաստ ,
Մանկական տիոց վերելս 'ի սկրա
նորուն ։

Նորուն փրկութեան համասեռից
պատճառ ,
Կարթ վերաբերող ծովու մեղաց
գոլով :
Գոլով յասենի ճշմարտութեան վը-
կայն ,
Որպէս և Յիսուս պիղատոսեան
բամիցն :
Բապէտ արքայն հարցափորձեալ
Տըրդատ ,
Թաւ սատովք ընծայ ուրուականաց
մնոտեաց :
Ի մնոտեաց 'ի բաց զանձն իւր եդեալ
խարմամբ ,
Ճուժկալեալ տեւէր չարչարանաց
գանից :
Գանըս մահաբերս իբր անմարմին
մարմնով
Թիւ երկոտասան կըրէր յանձն իւր
ուրախ :
Ուրախ լինելով երկնադումար վե-
հիցն ,
Սարփիջեալ 'ի նոյն զարմանայլն
բամեալք :
Բամիցն անարգոց մարմնոյ սըրբոյն
սկըսեալ

Նախկի տանջանաց՝ աղ ըստանձնել
յանձին ։
Ի յանձին նախատ՝ ջուր վայրարկուն
հեղեալ,
Եւ ըզգարշապարըն հեղուսեալ
յերկաթս ։
Երկաթի ըլնգամբք քերեալ կողից
սըրբոյն ,
Եւ աչաց սըրբոյն բախեալ ըրա-
բունւոյն ։
Բարունւոյն ծընկանց սատակ հա-
րեալ ուռամբք ,
Եւ կարթիցն արկեալ ոլորանաց
գելոյ ։
Գել ընդ քաղցր օդոյ աձիւն հնոցի
շընչոյ ։
Փոխան ջրոյ արբեալ քացախ ընդ
աեառն լւրոյ ։
Իւր վերապարզեալ տատանակաց սըեալ
սայրից
Արեան վըտակօք ներկանելով նո-
րուն ։
Նորուն բերանոյ , ուստի բըղխեալ
բարի ,
Եռացեալ կապար արկանէին եր-
կամբք ։

Երկանց տանջանացն ոչ շատացեալ
  այնու ,
Այլ ընդ կապելոյն կախեալ յո֊
  տից րաբունն :
Րաբունին բարի , նըման բնութեամբ
  բարւոյն ,
Մաղթէր թողութիւն չարչարո֊
  ղացն 'ի սպառ :
Սպառուած մահաբեր չարչարանացն
  ածեալ,
Վիրաւն ահագին արկանելով 'ի
  նոյն :
Ի նոյն գուբ աղւոյ՝ թունաւորացն
  օձիցն
Ըզթիւնան ամփոփեալ, զոտիւք փա֊
  րեալ սիրով :
Տէր՝ որ առ Աստուած՝ իջուցանէր
  զբարձրեալն ,
Գուբն անդընդային հրեղէն եղեալ
  երկին :
Երկնից թագաւորն հրեշտակական
  դասուք ,
Ամ հընդետասան գոլով ընդ ծա֊
  ռայի :

# ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐ և առաջին լոյս ծագեալ հայրըն
    լուսոյ
Երկրորդ զնոյն վառեալ լոյս շառա֊
    ւիղըն լուսոյ .
Բարունն այն գործով բան , գետն ա֊
    նուն յորդառատ
Սիրոյ զընձիւղեալ բոյսն զուարթա֊
    ցոյց ոռոգմամբ .
Էջ աննիւթ աղաւնին ծանոյց զըն֊
    րեալն 'ի բիւրուց ,
Սըրբեալ տաճարացոյց զմաքրեալն
    'ի սկըզբանէ :
Ի մի յայնմ աղբիւրէ բաղում բըղ֊
    խեալ վտակ ,
Նոյն խընդաբեր ծառք արբեալ
    դրախտին Աստուծոյ .
Վարդից բուրելով հոտ և շուշանաց
    անուշից .
Արքայն անխմանա արբ և ոչ խմաստ֊
    նացաւ ,

Սմին՝ փոխանակ կենաց՝ մահու ար֊
բոյց բաժակ ։
Տըւողին աւանդեաց ըզհամանմանին իւր
պատկեր ,
Ի կեանս վերափոխեալ՚ի մէջ կեն֊
դանւոյն փառս ։

## Ի ՍՈՒՐԲ

## ՔԱՌԱՍՈՒՆՍՆ

Նոր լուր է հընչիւն ընթերակաց Եր֊
գոյս ,
Երգ ներաշխարհական յոգնատեղեան
Րաբխան .
Րաբխան պանծալի բազմերանեան
քառասնաթիւ Սրբոց ։
Սրբոց վկայից ըզնաւորաց Թագա֊
ւորին Երկնից
Ի յերկնականացս ապարշական բանին
վառեալ Սիրոյ ,
Սիրով հրաշալւոյն զնիւթ հողեղէն յե֊
ղափոխեալ ի լոյս .
Ի լոյս գերագունից գեր՚ի վերոյ քան
ըղձութիւն Եղեալ ,

Եղեւ յայս նշան տարրինեաց ան-
ձանց ինքեամբ Բարուն ։
Բարուն համաձայրոյ սրբազանից յոգ-
նեբամեան Գընդից ,
Գընդին միայնոյ թիւ քառասաջ ըստ
եղանակացն ի սմա .
Ի սմա տեսանի խորհուրդ սրբեալ
ուսուրց տասանց Քանից .
Քառասանից սրբոց գունդ գումարի
Այսօր ,
Այսօր վիմարկի դէմ՝ բնէար Բռա-
մին ։
Բռամին անմարրից մարտնոց սրբոց
երկք յաղթախեալ Աստուսա ,
Աստուսա պարարկին 'ի ծով ըղՃին
սառնասառույց Սուզմամբ .
Սուզմամբ ծովայնոյ օդ դառնաչունչ
հեւսխայինն Որոտ .
Որոտ տարափման յանդիպական վայ-
րին անձկով Խիծեալ ։
Խիծեալք 'ի յարեանց կապուստա-
տիպ ծովն 'ի կարմիր Ներկեալ ,
Ներկեալ վարդագոյն Թաթաւելոյ
յարեան մարտնոյ Վըկայք ։
Վըկայք խաչելոյն միաբանեալ յու-
սով առ նոյն կայլին .

Կայծն աննըւազ բայց 'ի միոյ եղելա-
կան Անձին ։

Անձինն եղկելոյ տարամերժեալ 'ի
բաղանիս Ցընծայս ,

Ցընծայըս գնացիւք օտարացեալ 'ի
ժողովոց Սրբոց ։

Սրբոց վկայից սուգ յաճախեալ առ-
կորըստեան Նորուն ,

Նորուն խնկապէս վախճան կենաց
մինչեւ հասեալ Առ նոյն ։

Առ նոյն նըւագեալ զերգս օրհնու-
թեան մարգարէին Սրբոյ ·

Սուրբըդ Սրոբէից , մի՛ բարկացիր՝
ասեն՝ 'ի գետըս , Տէր ·

Տէր փրկուս Հօտի , զմեզ միացո 'ի
միութիւն Որդւոյ ,

Որդւով բեւեռեալ ընդ սրբութեան
սիրոյդ անբաժ Խւսամամբ ։

Իւսեալ 'ի լուսոյ ըստ քանութեան
սըրտակք յերկնաւոր Ծագեալ ։

Ծագեալ 'ի Հօրէ արդարութեան ա-
րեգակն Որդի ,

Որդի անըսկիզըն Հօր էակից և փառա-
կից Ոգւոյն ,

Ոգւոյն զօրութ̃ի փոխադրելով զայըն
տար ա՛նդ Բոռեալ ·

Ըստեալ արշաւմամբ արխանայր 'ի խոր
նիրհեալ Քընոյ ։
Քուն մահու թափեալ, իմանալի գխո-
մամբ դիմեալ ի լոյս ,
Ի լոյս գերունակ զոր նըկատէր առա-
ւելեալ Սոցուն ։
Սոցուն վըկայից միակրօնից միաբա-
նելով Եղեալ ,
Եղեալ 'ի լըծէ սայլիւք զօղեալ ընթա-
նայիւն 'ի Բոց .
Բոցով սիրայնոյ մանգան վառեալ
մայր գերազանց Արանց ,
Արանց վեհագոյն խրախուսելով
սահմանեալ յուսոյն Սիրոյ ,
Սիրոյ նըմանեալ մակարայեան մօր
գերագոյն Տարփմամբ ։
Տարփմամբ արփինւոյն բոցակիզեալք
և տապացեալք ի նոյն .
Ի նոյն հուր սըրբեալք զաղտ՝ որ հող-
ւոյ , մարմնոյ կիզմամբ Աստուսա ։
Աստանօր 'ի դէպ երգաբանի մեզ որ
դաւթեան կացուրդ ,
Կացուրդ հոգեւոր գեղեցկապանծ
աստուածայինն Աւած .
Աւածն , որ երգի , անցաք ընդ հուր
գոլով 'ի ջուր Տարեալք ։

Տարեալ հասէին 'ի ջուրս ըղձոյն բո-
ցակիզեալն Աձիւն ·
Աձիւնքն ոլորոց փայլատակեալ տար-
րանային Բամեալք ·
Բարունւոյ ազդեալ, հաւաքելով գեր-
պարունակն Նաեղ :
Եաեղ մաքրունակ, վայր վայելուչ,
զուարձացեալ Ցընծամք ,
Ցընծամըք տօնիւս քառասնամթիւ
քառասնօրեայ Աւուրցս ·
Աւուր վըկայիցս ընծայեսցուք պըսա-
կողին Նըւէր ,
Նըւէր այս տօնի փառըք պատիւ Եր-
րորդութեանըն միշտ :

## Ի ՍՈՒՐԲ
## ՀՌԻՓՍԻՄԵԱՆՍՆ

ԱՌԱՒՕՏ լուսոյ արեւելեան ա-
զանց
Օրիորդըն սուրբ յարեւմըտից ծա-
գեալ,
Ռահըս լուսափայլ հայաստանեայց
ուղղեաց ,

Նմանել յերկինս 'ի հրեշտակաց
կայեանս :
Հախփախմէ գեղազարդեալ կուսից
պարծանք ,
Երկնից արքային հարսն ընծայեալ
յերկրէ :
Որեալն քաղցրութեան մեղ 'ի շըր-
թանց բըղխեալ
Ձեւղ թափեալ անուշն անուշա-
հոտ բանիւ :
Ի փեսաւերացն առաքելոց դասուց ,
Հաւատոյ վիմէն յեկեղեցւոյ փո-
ղոյն ,
փեսային խւրոյ առաքեցաւ հրաւէր
Ի հայաստանի առագաստի ման-
կունս :
Միրով արքային , յորում ջեռեալ
վառէր ,
Ցաղթեաց բըռնութեանց թագա-
ւորաց երկրի :
Ի ձայն քաղցրութեան բարեկամին
գոչէր .
Արի որ ննջեսդ 'ի գբի ներքնումն
եդեալ .
Մաքուր մեր արեամբ զլինձակըս քո
հերկեալ

Եւ՝ մշտակ հոգւոց, և սերովբէա
բանիւ.
Երկթամք պատրաստել քեզ օթեւանս
յերկինս,
Ընդ քեզ և ծնելոցն քեւ աւազա-
նաւն:
Կենդանի վկայք կոյսք իմաստունք
և սուրբք,
Մարք մեր հոգեւորք ծնօղք յոր-
դիս լուսոյ.
Ողջախոհութեանցդ մայր Գայիանէ,
Եւ սնունդ բարի կուսիդ Հռիփ-
սիմէ:
Յերեսնից եօթանցդ մեծ վկայու-
հեաց
Հայցմամբ պաղատիմք բարեխօսել
ընդ մեր.
Սուրբ Երրորդութեանն ընծայեցէք
մաղթանս,
Շնորհել զթողութիւն մեր յանցա-
նաց բազմաց.
Նոյն վերակոչել 'ի հանդերձեալն
ընդ ձեզ
Ի ժառանգութիւն արքայութեանն
երկնից,

Էին միայնոյ՝ մատուցանել ըզփառս
Ցորագուարճ ձայնիւ 'ի յաւի-
տենանս . ամէն :

## Ի ՆՈՅՆ

ՆՈՐԱԶԱՆԻԿ հոգւահրաշ
Կոյսըն մաքուր սուրբ Հռիփսիմէ
Լոյս ծագեցաւ 'ի Լատինէ
Հայոց մեծաց յարեւմըտէ :
Կուսական փողըն գոչէր ,
Տայր աւետիս սուրբ Գրիգորի .
Փութա եւ 'ի վիրապէդ ,
Լուսաւորիչ Հայաստանի :
Համակամ՝ ընդ Հռիփսիմէ
Վ՛ըկայուհիդ Գայիանէ ,
Մեզ լուսատուք յարեւմըտէ ,
Տանըս Հայոց 'ի Լատինէ :
Ծովային շուշան ծաղիկ
Բուսեալ 'ի տանըս Թորգոմի ,
Առոգեալ արեամբ սըրբոցըն
Պետրոսի եւ Պաւղոսի :
Ի վայելուչ գեղ պատկերին
Ցիմորեցան ազգըն Հայկին ,

Պետրք և իշխանք առ հասարակ
Եկին 'ի դուռըն Հընձանին ։
Ձայն աւետեաց մարմնականին
Նորա տային Հռիփսիմէին ,
Այլ այն բանքն ուրախալին
Կուսին 'ի բօթ համարէին ։
Աւետիս քեզ, կին ազատ ,
Եղեր տիկին Հայոց մեծաց ,
Արքայուհի արեւելեայց ,
Տանս Արամայ դըշխոյ փառաց ։
Արի ել 'ի Հընձանէդ ,
Մուտ 'ի սենեակ արքայական .
Հարսն եղեր արեւելեան ,
Եւ Թագուհի տանս Թորգոմեան ։
Յայնժամ սըրբոյըն Հռիփսիմեանց
Ի ձայնս ողբոց աղաչանաց
Աղբիւրս բըղխեալ յորդ արտասուաց,
Հառաչէին առ տէր Աստուած ։
Տէր Աստուած Իսրայելի ,
Քաղցր և ներող յամենայնի ,
Մաղթանօք առաքելոցըն
Պետրոսի և Պաւղոսի ։
Փութացիր մեզ յօգնութիւն
Տէր ապաւէն և փըրկութիւն ,
Մի թողուր զմեզ 'ի ձեռաց
Յօտար երկիրս խուժաստանեաց ։

Զայն ահեղ հընչեաց յերկնից ,
Բարբառ եղեւ ուրախութեան .
Մի երկընչիք , իմ սիրելիք ,
Զի ես ընդ ձեզ եմ յաւիտեան ։
Զօրացուց կոյսն 'ի ձայնէն ,
Դիմեաց 'ի մայրն պատերազմին .
Եհար վանեաց զհընկայ արքայն ,
Կախեաց զվիշապն անդընդական ։
Ելանէր 'ի դարպասէն
Որպէս փեսայ յառագաստէ ,
Առ հընձանաւն դայր անցանէր ,
Զայն առեալ մատուցանէր ։
Արիք ելէք 'ի Հռոմ քաղաք ,
Տուք աւետիս առաքելոյն .
Հարանիք են ինձ այսօր ,
Եկայք տեսէք զիս հարսնացեալ ։
Փող հարէք , յօրինեցէք ,
Կարմիր արեամբ պըսակեցէք ,
Ի յառագաստ սուրբ հարսանեացն
Զիս տանելով յուղարկեցէք .
Զի անդ երթեալ բարեխօսեմ
Զեզ տանողացս և աղաչեմ .
Զձեզ իմ փառացըն կցորդեմ ,
Եւ հանդըստեանըն հաղորդեմ ։

# Ի ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ ՀՌԻՓՍԻՄԷ

ՀԱՆՃԱՐԵՂ շնորհալիդ ընտ-
րեալ է,
Յարքայից հըզօրաց զարմէ է,
Մեզ պարգեւ 'ի տանէն Լատինէ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:
Ռահահորդ ուղեւոր երկնընթաց,
Օրինաց երկնայնոյն խորագգաց,
Ուրացեալ զանձն եւ զփառս հայրե-
նեաց,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:
Իմաստուն սուրբ կուսան գերյարգոյ,
Հրով Բանին 'ի յերկիր արկելոյ
Վառեցեր ըզլապտեր հաւատոյ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:
Փեսային Քրիստոսի մարմնացեալ,
Անապակ կուսութբ̃ հարսնացեալ,
Յառագաստ անմատոյց բաղձեցեալ
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ:
Սիրանունդ սիրամարգ ոլորալի,
Նըրբափայլ ոսկէթեւ տարփալի,

Նաւապատակ իւղագլուխ ցանկալի ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ ։
Խակաճեմ աղաւնի օդասլաց ,
Նոր Նոյեան տապանն էքոյդ դադար ,
Օձասպան արագիլ դու արդար ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ ։
Մրտաւոր մարտիրոս մրցական ,
Խական Բանին Հօր զօրութեան ,
Լխակոխ քաջութեամբ ըղձընձան ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ ։
Ի դունեղ թաթաւեալ ՚ի բոսոր ,
Սաղարթուն կարմրորակ իբր խըն-
ձոր ,
Հարան ազնիւ դու արեամբ քօղա-
ւոր ,
Հրեշտակ հրաշագեղ Հռիփսիմէ ։

## ՏՐԴԱՏԱՅ
## ԹԱԳԱՒՈՐԻՆ

ԽՈՐԱՀՐԱՇ տեսիլ և գերագոյն
քան ըզընութիւն
Ցուցաւ առ բռնաւոր արքայն
Հայոց մեծաց Տրդատ ։
Երկնից թագաւորին եհար խրատու
գաւազանաւն

Զերկրի ըղձագաւորն, որով ծա-
նոյց զինքըն միայն ։
Րամից հայկազանց երբեմըն տէրն և
Թագաւորն
Յանբանից դարձաւ բնութիւն, փո-
խակերպեալ խոզ անտառի ։
Սաստ բարերարին մեզ փըրկութեան
եղեւ առիթ,
Զի 'ի ձեռըն կապելոյն՝ կապեալք
մեղօք արձակեցաք ։
Եղեալ վիրապէն գերապայծառ այն
արուսեակն,
Ծագեաց խաւարելոց հայաստա-
նեայց լոյս գիտութեան ։
Մէգ հըպարտ արքայն, այն որ յա-
թոռ նըստեալ դատէր
Երբեմն, յայնժամ անկեալ երկըր-
պագէր դատեցելոյն ։
Իսկ երկըրպագեալըն աստուածային
նոր սքանչելեօք,
Փոխէր զվարազակերպն 'ի մարդ-
կային ձեւ և բնութիւն ։
Էին միայնոյ հրաշագործողին զօրու-
թեան,
Տացուք յաւէտ և միշտ փառք 'ի
յայժմուս և յապագայն ։

# ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆԻՆ

## ՅՈՐԴՈՐԱԿ

՛ՆՈՐՈԳՕՂ հնութեան մարդկան,
Զիս նորոգեա 'ի կեանս անմահ.
Երէքսրբեան մի տէրութիւն,
Մաքրեա զհոգիս զմիտս և զմարմինս:
Րոտեա 'ի մի լռութիւն և զիս
Կաթուղիկէ եկեղեցւոյ.
Սրբեա յաղտից մեղաց իմոց
Կենդանարար արեամբդ քո:
Եդեմեան դրախտին դրունք
Բացցին ինձ, Տէր, 'ստ աւազակին.
Սրովբէական սուրըն հրեղէն
Ծառոյն կենաց 'ի բաց դիցին:
Ինձ լսելի արա ըզձայն
Երանական կոչման յերկինս.
Եկայք, օրհնեալք Հօր իմոյ,
Ժառանգեցէք ըզպատրաստեալն.
Րամեալ տեղւոյ անկեալ զօրաց
Իններակ դասուցըն հրեշտակաց,
Գոչել ձայնիւ քերովբէից
Քեզ օրհնութիւն, տէր բոլորից:

# ԳԱՆՁ
## ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՎԱՌԻՆ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ զօրութիւն, աննեղ բնութիւն 'ի վեր քան ըզբան. անսկիզբըն և սկսեալ, և բղխումն անընդհատ. անծին և ծնեալ, և ելումն 'ի յԷէն. է և էակ և էակից նոյնութիւն. լոյս և ծագումն, և աղբեւր բարութեան. անքնին և անճառ, և քննիչ խոկութեան. նախագաղափար և պատկեր, և տիպ անորակ. աստուածութիւն անուանելի, և անուն էութեան անհետազօտելի. անպատճառ էութիւն, և պատճառ գոյից անստուերից և ստուերեղինաց, ստեղծօղ և խնամօղ: Ահա ընկալցիս զայս երգ օրհնութեան 'ի նուէր փայլման քո լուսոյ՝ ընդ հոգեղինացն 'ի հողեղինացս, աղաչեմք:

Երրորդութիւն ծայրագոյն, անորիշ բաժանումն, և անանջրպետ միու-

թիւն. պարզ անզննելի, և թիւ կատարման. 'ի մի պատճառէ երկեակ շարժութիւն կնքեալ 'ի յերկս. խակապէս երկուց ծայրից անհատից ունակ միանջենաւորութիւն. վերին խորոց և ստորնայնոցս շարժումն և կայումն, և միտաշարժ ընութեանց շարժող յանշարժից. անքանակ, աներբ, անուր, անկէտ և անժամանակ: Որ 'ի վախճան դոյացութեան աննիւթիցն և նիւթականացս՝ սահղծեր խորհրդեամբ մի և նոյն կրկին կենդանի 'ի սիպ տիրականդ քո պատկերի, անտեսին տեսիլ, և անձեւիդ կերպարան, լուսով պարագրեալ և անմահական վայրի վիճակեալ. որ հպմամբ անհպելի տընկոյն մերկացաւ զփառս անեղին: Ահա ընկալցիս.

Բարունարար մինդ 'ի յերից, խնամութիւն հօր և բան, խոնարհեալ 'ի ստորինս՝ յորմէ յաւէժ աննուազ, գոլով անթերի 'ի ծոց հայրենի, քոյինատեղծ պատկերին 'ի խնդիր նորոգման. գտեալ 'ի բնակ մաքուր կուսութեան հոգւոյդ տաճարի,

միացար ընդ նոյն խառնութեամբ անյեղապէս և անբաժանելի. և զի ոչ բերիւր յեղելութեան բնութիւնս զանեղին անպարունակ ուսութիւն լուսոյ, ծածկեցեր զԼոյդ անճառափայլ իբրև վարագուրաւ ընդ մարմնոյ՝ շրջեալ ընդ մարդկան մարդկապէս՝ Աստուած բոլորից։ Ահա ընկալցիս.

Տէր, անուն պանծալի և գերազարդ-քոյին կոչմանցդ ամենի. որով եւղ թափեալ փեսայդ երկնաւոր, 'ի գութ խանդակաթ հարսին ըղձաւոր, զպարածածկեալ լոյսն արփիաւոր արտափայլեալ ցուցեր այսօր 'ի Թաբօր, 'ի տեսիլ հրաշից փեսաւերաց Առաքելոց և մարգարէից, 'ի վկայութիւն երկուցն և երից, հնոցն և նորոցս, տէր զքեզ ծանուցեր կենդանեաց և մեռելոց, կոչմամբ Մովսէսի և Եղիայի՝ որք խօսէին զելից քոց յԵրուսաղէմ։ 'Ի փրկագործ կրիցն ադամեանց լուսոյն յայտնեցար Վիմին հաւատոյ, ոչ մի 'ի գոյիցս՝ այլ տէր համայնից. յորմէ պակուցեալ զերից սաղաւարտն

ազդէր զխորհուրդ ։ Այս ընկալցիս․
Լն անեղ բուրեւ, անուն մշտնջենա-
ւոր, անունս տիրապէս յէից, եւ ե-
ղելոց հայր, անձեռագործ տաճա-
րաւ ամփոփ Հոգւոյն երեւեալ
'ի բարձանց՝ դաւանէր զքեզ որդի
ըստ բնութեան, եւ սիրելի համակա-
մութեամբ ընտրեալ ըստ մերումս եւ
հաճեալ ըստ անտեսութեանն ․ ոչ
ոմն եւ ոմն, այլ մի եւ նոյն առեալն
եւ առօղ ։ 'Ի հրաշիցն հնչմանց Վե-
մին սասանեալ եւ Որոտմանցն թըմբ-
րեալ, յանուշից անմահական բուր-
մանցն զմայլեալք, եւ 'ի տիպ տիրա-
կան տեսլեան արքայութեան աւ-
ուր ցնծացեալք, նախահարցն դխո-
մամբ բերկրեալք ․ եւ աստղայիցն
յուսով զուարճացեալք ։ Այս ըն-
կալցիս ․

Մոսկալի աւուրս շնորհիւ եւ խորհըր-
դոյս զօրութեամբ համբարձցես ըզ-
մեզ ընդ լերինն ընտրութեան, 'ի
կայս լերանցն յաւիտենականաց, 'ի
լեառն Աստուծոյ խնամութեան,
'ի լեառն պարարտ օծութեան, 'ի
լեառն մածեալ ընդ քեզ միա-

թեան և հաճոյ 'ի սպառ քեզ 'ի բնակութեան. ցողեա 'ի Հերմովնէդ վերնում զցօղ քաղցրութեան 'ի լերին դասեր Սիովնի: Հաշտեա ընդ մանկունս սորա սարսուցեալս 'ի քոյ բարութեանց. ընդգրկեա զվարատեալքս 'ի գիրկ հայրենիդ գրգանաց. ժողովեա զցրուեալքս և մխիթարեա զլացեալքս. հաստատեա 'ի վէմ ամրութեան զտատանեալքս և զխախտեալքս. հերքեա 'ի քոյոց ծառայից զծառայեալսն մեղաց, և ազատեա զազատեալքս արեամբ քո սրբով: Ահա ընկալցիս.

Ի բարձունս ամբառնամք զձեռս և զմիտս առ մերձդ ամենից. էջ և առ մեզ 'ի յանուն քո ժողովելոցս ողորմութեամբ որպէս էութեամբ: Ընկալ զաղերս աղօթից մերոց յաւուր յորում ծագիս անձառելի փառօք 'ի բարձանց. բարձրացո զեղջեւր եկեղեցւոյ քում սրբոյ. փարատեա զկրկին խաւար մեղաց և նեղչաց, լուսաւորեա լուսով իմաստութեամբ և խաղաղութեամբ:

Պահեա 'ի սմա անստուեր և զսու
'ի քէն զլոյս իմաստից բաշխօղս՝
զհայրապետս մեր զտէր Ա. Ա. ըն-
նախաթոռ հովուացքոց բանաւոր
հօտի, եպիսկոպոսօք, քահանայ-
իւք և վարդապետօք, սարկաւա-
գօք, դպրօք և համօրէն պաշտօ-
նէիւք։ Զօրացո զթագաւորն մեր
Ա. Ա. բարեպաշտութեամբ, հեր-
քեալ զհոյլս ամբարշտութեանն․
զիշխանս իշխեալ հակառակացն ճըշ-
մարտութեան․ զօրականացն տուր
քաջութիւն, և ախոյանիցն յաղ-
թութիւն․ աշխարհայնոցն՝ ամրու-
թիւն շինութիւն և խաղաղութիւն․
առատութիւն պտղոց առօրէից և
յաւիտենականին։ Ահա յիշեցեա
ողորմութեամբ զհոգիս հանգուցե-
լոց մերոց, հաւատով խնդրեմք։

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ
և զգործս բարեաց պարգևեալ մեզ
խնդրեմք։

Բանեա զմեզ 'ի մի լրութիւն կաթու-
ղիկէ, յօդեալ 'ի գլուխ եկեղեցւոյ
խնդրեմք։

Գերագոյն լուսոյդ անեղի զեղակա-

նաց լուսոյ մաղթանս ածեմք առա-
ջի. զհրեղինացն նախ հաստեցելոց և
հուպ եղելոց, զհողեղինաց սեռից
լուսաւորելոց, զանվայրափակ լու-
սոյդ ընդունողի զՄարիամու Աս-
տուածածնի և միշտ կուսի, զՅով-
հաննու կարապետի'ի ծնունդս կա-
նանց մեծի և քում մկրտչի, զա-
ռաքելոց և զմարգարէից, ես և
զարփիական լուսոյդ տեսլեան այժմ
արժանաւորաց, զպսականուն նախ-
կի վկային, և զնովաւ արեամբ մկր-
տելոց ընդ քեզ կամաւոր զենմանց,
զբազմանուէր պատարագի լուսա-
ւորչին մերոյ սրբոյն Գրիգորի, և
զհամօրէն զքեզ սիրողաց Ճգնա-
ւորաց դասուց: Որոց հայցմամբ
պահեսցես զժողովեալքս 'ի կրից
բոլորից փորձանաց, ուղղել զմիտս
բնաւից 'ի շաւիղս արքայութեանդ
երկնից. և 'ի ծագման քո հայրենի
փառօք յաւուրն մեծի, զորոյ ցու-
ցեր այսօր զտիպ լուսոյ աղօտ և չա-
փաւորապէս, ողորմեաց մեզ տէր
Աստուած մեր ըստ մեծի ողորմու-
թեան քում:

# ԳԱՆՁ

## ՓՈԽՄԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

ՆՈՐԱՀՐԱՇ տօնիւս կուսական, արփիականացն համաձայնելով դասուցն, երաժշտական նուէր ներբողից երրակի անձանց միութեան երեքսրբեան հնչմամբ նուագեմք։ Որոյ բնաւ բնութիւն ծայրագոյն հրեղինացն սեռից. Էն յէութեան անեղապէս, որդւոյ պատճառ իւրեւ, անուն հայրական. Բան և ծագումն անսկզբնաբար, յԷէն միշտ էակ 'ի վեր քան զբան. Հոգի հայրաշարժ բղխեալ 'ի Հօրէ, Որդւոյ փառակից և տէր բոլորից։ Ահա ընկալցիս զայս Նոր օրհնութիւն 'ի նուէր աղօթից հայցմամբ ծնօղի Բանիդ և մարմնարանի, աղաչեմք։ Երրաբուն Էին համայն ուանոտեղի և լոյս գերարփի. անեղ յէութեան, բնութիւն անթերի. անկէտ կատարումն և պարզ գերազանց. անուրիշ գոյութիւն, անանջրպետ միու-

թիւն, երկքանձնեան խոկութիւն և մի աստուածութիւն. յորմէ միանոյ առեղծեալքս ամենայն, հրեշտակական հոյլք երամից օրհնաբանից անմահ կենդանիք, առոյին ըղձալի քաւուխք դիմակօք զարմանազան աշխարհ կենդանեաց. 'ի հակառակաց միացեալ ոգւոյ և մարմնոյ զԱդամն առաջին գեղապաճոյճ փառօք զարդարեալ կողածնիւն 'ի դրախտն Եդենայ: Որոյ զխրախականն օրէն մոռացեալ՝ դատապարտին մահու. որովք ոչ եղեն 'ի քէն անտես բարերար: Այժմ ընկալցիս.

Բամեալ միայնոյ երրակին լուսոյ, հայրական բարբառոյ ձայնեալ վերուստ Բանին և Հոգւոյ, առնել ոչ 'ի սպառկեր խոր մարդ որպէս 'ի սկզբանն, այլ ծոցածին փառայն լուսոյ զհօզանիւթ ախտանախանցն զգենուլ ծառայի: Ուստի ընտրեալ 'ի բիւրուց Գաբրիէլ պետ անմարմին զաւարթնոցն, աւետեաց խորանին խորհրդոյ առ նոյն աղդեալ 'ի վերուստ, փութընթաց արագ սլացմամբ ճեպէ 'ի յաշխարհն մահու. բարբառ աւետեաց հնչէ բերկրութեան

տօնակցելոյ դասուցն Նուայի, հրաւի-
րեք լինել տաճար սրբութեան Բա-
նին գալստեան. որով յառաջեալ ան-
քայլ գնացիք առ կոյսն Մարիամ,
ձայն առ նա ցնծալի և լուր քաղց-
րութեան հնչեցեալ, ուրախ լեր
բերկրեալ, սրբութեան բարձող
նախամօրն, Տէր ընդ քեզ յաւի-
տեան և սուրբ Հոգին հովանաւո-
րեալ. զի ծնեալն է 'ի քէն Հօր միա-
ծին և անդրանիկ, փրկիչ աշխար-
հի։ Ահա ընկալցիս.

Սոսկալի զխամամբ պակուցեալ վեհին
անմարմնոցն, զուարթօղիդ նախա-
շաւիղ յորովայնէ Կուսին տեսեալ
զգալուստ, յորում ներգործեալ ան-
սերմն յղութիւն լուծանէր սխրա-
բար զօրէնքս եդեալ. ծնեալ կու-
սութեամբ 'ի վերքան զբան, ան-
մայր 'ի յերկինս, անհայր 'ի յերկ-
րի, կուսական կաթամբ կերակրեալ
լցող ամենից, բարձր 'ի գիրկս
բարձողդ բնաւից, ածեալ յաւ մարմ-
նոյ աճման պատճառ բոլորից, շըր-
ջեալ ընդ մարդկան ստեղծողդ Ադա-
մայ, վերացեալ զցաւս ոգւոց և

մարմնոց ․ եկեալ կամաւ ՚ի չարչարանս խաչի և մահու, անմահդ մահուամբ զմահ մեռուցեր և զմեզ կեցուցեր ․ երեքօրեայ յարուցեալ համբարձար առ Հայր ՚ի յերկինս ․ խոստացար Կուսին տիրուհւոյ ՚ի տիպ համայնիցս գալ վերստին, առնուլ առ քեզ յանճառ բնակութիւնս ։ Ահա ընկալցիս ․

Երեւեալ երբեմն հրեշտակապետին ՚ի լրումն խոստացելոցն, բերեալ բրաբիոն Կուսին՝ նշան յաղթութեան կրից աշխարհի ․ զուրախութեան ձայն առ նոյն հնչեալ զաւետիս ․ Նախկին աւետեաց ընկալ, ասէ, այսօր կատարումն, վերաբերեալ ՚ի ստորնայնոցս յիմանալեացն խորանսն՝ հուպ յանմատոյց լոյս Երրորդութեանն՝ փառաց ՚ի փառս փոխելով։ Որոյ զուարճացեալ, նուէր գոհութեան ընդ մեծին շնորհի քեզ ընծայելով հայցմամբ մաղթանաց, համասեռիցս՝ առ տէր պաղատէր՝ փրկութիւն խնդրելով, մարդասէր։ Ահա ընկալցիս ․

Սաւառնաթեւիցն առաքելոցն հա-

մանմանեալ դասուց, լուսափայլ ամպովք 'ի վերնատունն խորհրդոյ բերեալ հրաշիւք 'ի Հոգւոյն. 'ի գոյժ հրաժարման տիրուհւոյն Թաղծեալ, վեհին գալստեան ծագումն լուսոյ ակնարկեալ, զնոյն յուսապատար բանիւ սփոփեալ, տեսլեամբ փառաց քոց հրեղինաց դասուք ցնծացեալ, յաւանդումն ամենասրբուհւոյ հոգւոյդ սխրացեալ, զմարմին մաքուր ամփոփեալ, կուսանաց խմբիւք պար առեալ, հրեշտակացն օրհնութեամբ ձայնակցեալ, 'ի գերեզման մահու ընդ մահացելոցս իջուցեալ, երեքօրեայ ըստ Միածնի իւրոյ յարուցեալ, անմարմնական զօրօք յերկինս վերացեալ, յանմերձենալի լոյս աստուածութեանն մերձեցեալ: Ահա ընկալցիս.

Ի քեզ վերհամբառնամք զձայն պաղատանաց, աստուածածին և միշտ կոյս Մարիամ, դրախտ աստուածատունկ, և եդեմ վայելուչ. կենսատու տապաննոյեան, և աստուածընկալ խորան աբրահամեան. մո-

բեմի անկեզ, և վէմ աղբիւրահոս. աշտանակ լուսոյ, տապանակ կտակի, սափոր ոսկի և բուրվառ խնկալի. գեղմն ցօղահոս, և լեառն վիմածին. ակն շափիղայ, և մարգարիտ պատուական. քաղաք Աստուծոյ, և տաճար հոգեւոր. պարտէզ փակեալ, և աղբեւր կնքեալ. բլուր կնդրկի, և հովիտ շուշանի. Նարդոս բուրեալ, և քրքում ծաղկեալ. անապատ անկոխ, և երկիր բանաւոր. ամպ Թեթեւ, և աԹոռ քառակերպեան. դուռն աղխեալ, և տումար անլուծանելի. առաւօտ արփւոյ, և արեւելք արեւու. ապաւէն կենաց կենդանեաց, և յոյս յապագային աւուրն ննջեցելոցն։ Ահա յիշեսջիր առաջի միածնի որդւոյ քո զհոգիս ննջեցելոց մերոց, մայր Աստուծոյ աղաչեմք։

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք։

Րոտեա զանձինս մեր 'ի մի միաբանուԹիւն հաւատոյ և սիրոյ, խնդրեմք։

Գանձ պատուական կաԹուղիկէ ե-

կեղեցւոյ յայտնեալ, սուրբ Աստուածածին. որով ճոխացան հարսունք երկնաւորք և օրհորդք ըղձաւորք: Զորոյ գումարեալ ընդ քեզ զխումբս ընտրութեան հայցեմք ընդ մեր մաղթանաց, զդասապետս դասուց իննուց վեհից քեզ այժմ եղելոցս, զձայնն Բանին և զպսակն պսակողին, Առաքելօք և մարգարէիւք, մարտիրոսօք, և որ մերն է լուսոյ ծագողաւ. մաքուր կուսանօք, ճգնաւորօք և համօրէն ընտրելօք, պահել պահողին էից զամենեսեան յապահովս: Զվերակացու և զնախընթաց ոգւոց մերոց զհայրապետն մեր եպիսկոպոսօք և վարդապետօք, քահանայիւք և պաշտօնէիւք, վանականօք և աշխարհայնօք: Զթագաւորս հնազանդելօք, և զիշխանս՝ իշխեցելօք. զզօրականս զօրօք և զժողովս ժողովրդօք: Եւ ամենայն հաւատացելոց շնորհել ողորմութիւն յայժմուս և յաներեակ աւուրն: Եւ այժմ ողորմեաց մեզ, տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում:

# ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ
# ՀՈՄԵՐԱԿԱՆ
# ՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՄԲ

ՍԱԿՍ

ՀԱՅԿԱԶԱՆՑ ՍԵՌԻ

ԵՒ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԶԱՐՄԻ

Ի ՍԿԶԲԱՆՑ

ՄԻՆՉԵՒ Ի ՎԱԽՃԱՆ

ԱՌԱՍԱՑԵԱԼ

ՆԵՐՍԵՍԻ

ԵՂԲՕՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀԱՅՈՑ

ՅԻՒՐԱԿԱՆ ՆԱԽՆԻՍ

Ի ՀԱՄԲԱԿՈՒԹԵԱՆ

ԵԼՈՎ, ՏԻՍ

ՊԱՐՏԱԿԱ՛Ն է հօր որդի
Հատուցանել վարձըս ծնօղի ,
Եւ անդրադարձ փոխարինի
Բազում երկանցըն պատշաճի :
Բայց սակայն ոչ վարկպարագի ,
Այլ զօրութեամբ և ըստ կարգի .
Զի է և այս ըստ օրինի
Նախ ասացեալ Սողոմոնի ,
Ծընընդեա՛ն անըզգամի
Վըճիռ հատեալ՝ թէ կորընչի .
Իսկ հնազանդեալըն զաւակի
Սահման եդեալ նա ըզբարի :
Քանզի երկրորդ յետ արարչի ,
Ծնելոյ ծընօղ պատճառ ասի :
Վասն այսորիկ ոչ յիշեցի
Զանկարութիւնս յամենայնի ,
Զտըգիտութիւնս յիմաստ բանի
Վասն անկատարըս հասակի ,

Զի հրահանգից վարժարանի ,
Չեմ տակաւին ներկուռ բանի :
Յաթենականըն քաղաքի
Զանձն իմաստիւք ոչ կըրթեցի .
Ուր լըսարանըն Պղատոնի ,
Եւ չափ ոտիւք Հոմերոնի .
Ուր ստորոգօղն Արիստոտէլ ,
Տասըն բանիւ գըրօղն էր .
Ուր հոյլք ամէն հըռետորի ,
Ժողովարան Ճարտասանի ,
Ներհըմտութիւն քերականի ,
Բայց քերուածըն քերթողի .
Զորըս գիտել նախ պատշաճի ,
Եւ ասա ապա ձեռնարկելի :
Եւ զի յինէն այս է հեռի ,
Տարաբերիմ յամէնայնի՝
Եթէ զի՞արդ սկըսանիցի
Եւ կամ ո՞րպէս վճարեսցի :
Սակայն եղեալ իմ 'ի մըտի
Զաստուածիրըն սուրբ Հոգի ,
Ըզորուօղըն պարգեւի
Եւ ըզփըրկչեալըն Յիսուսի ,
Զի տացէ՛ արմատ բանի
Ինձ Ներսիսի անարժանի ,
Սկըսանելով յայսըմ տառի
Ի նախահայրան իմ ըստ կարգի .

Թէ ո՛յք էին և կամ ուստի՛ ,
Եւ կամ յորում ժամանակի ։
Եւ մանկագրեալ 'ի քարտէսի
Զառ 'ի նոցայն գործեալ իրի ,
Զոմանց պատմել յոյժ գովելի
Զարիութիւնըն պանծալի .
Զոմանց ճառել զգործս անբարի ,
Եւ զվատ անուանըն յաշխարհի ։
Զի որ բարւոյն է ըղձալի ,
Առ 'ի բարեաց նախանձ շարժի .
Եւ որ չարին խորհամ տանի ,
Յօրինակացըս կըշտամբի ։
Զոր կարճառօտ և ըստ կարգի
Շարադրեցից յայսըմ տառի .
Ըղձերծանօղըդ մաղթելի ,
Գեր քան ըղկարըն չխընդրելի ։

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԻ

ԸՍՏ ՀՈՄԵՐԻ

ՍԿՍԵԱԼ Ի ՎԵՐՈՒՍՏ

ԱՍՏԱՆՕՐ սկըզբնաւորեալ,
Բանիւ ըզԲանն բակլիզըն եդեալ·
Այն որ ընդ Հօրն է էացեալ,
Անյեղապէս գոլով ծընեալ:
Ոչ ժամանակ անդըր մըտեալ,
Եւ ոչ 'ի ծոցոյն իւր բաժանեալ·
Ոչ նախընթական գոյիւ առեղծեալ,
Եւ ոչ պատուականեայց գերազանցեալ:

Այլ միածին որդի ծընեալ,
Լոյս 'ի լուսոյ Հօրէ ծագեալ.
Յորմէ և կեանքն աղբերացեալ,
Ի նոյն Հօրէ Հոգին բըղխեալ:
Երրորդութիւն անձնաւորեալ,
Աստուածութիւն մի հաւաքեալ.
Ըստ երեսաց տարորոշեալ,
Բնութեամբ անքակ յայժ միացեալ:
Ոչ արարած գոյ անդ թըւեալ,
Եւ ոչ կըրսեր ոք ծառայեալ.
Ոչ բարձրութեամբ ոք մեծացեալ,
Ոչ ելեւէջ աստիճանեալ:
Ոչ յիրերաց ոք արարեալ,
Ոչ 'ի փոքունց յառաջացեալ.
Ոչ 'ի միմեանց անընկատեալ,
Այլ հաւասար հաստատուն եղեալ:
Առ 'ի յՈրդւոյ Հայր ծանուցեալ,
ԶՈրդի միայն Հայր գիտացեալ,
Եւ 'ի Հոգւոյն նոքին քըննեալ,
Եւ նոյնք ըղձա հետազօտեալ:
Բայց արարածոց անմոյլ ծածկեալ,
Եւ գիտութեան դրունքըն փակեալ:
Ի Սրովբէից չէ խմացեալ,
Ի Քերովբէից ներհուն չեղեալ.
Ի հրեշտակաց անհըմտացեալ,
Ի աթոռնայնոց անհաս եղեալ:

Աստուածախօսըն վըկայեալ,
Որ 'ի վերուստ որոտացեալ.
Թէ յաստուած չէք ոք նայեցեալ
Եւ ըստ բնութեան ըզնա տեսեալ,
Բայց Միածինըն մեզ պատմեալ,
Այն որ 'ի ծոց Հօր է բնակեալ:
Որով երկինքըն գոյացեալ,
Եւ աշխարհի սիւնք հաստատեալ.
Յորմէ երկրորդ լոյս արարեալ
Ի յառաջնոյն այլերացեալ.
Որք են հոգիք հարկաւորեալ
Եւ 'ի սպասու միշտ առաքեալ.
Որով երրորդ լոյսըն ստեղծեալ
Քաւից տարերցըն բաղկացեալ,
Զոր խորհրդեամբըն պատկերեալ
Եւ իւր ինքեան կերպարանեալ,
Յանմահական դրախտին եդեալ
Ի յԱդենի՝ զոր էր տընկեալ,
Իշխանական կամաւ պատուեալ
Եւ պատուիրան զտունկըն տըւեալ:
Իսկ Արուսեակն առաւօտեալ,
Որ յամբարտաւանըն խաւարեալ,
Ընդ պարգեւին մեր մախացեալ՝
Զոր յարարչէն էր ընկալեալ,
Զհաւանական բան ընծայեալ,
Ի ձեռն օձին զկինըն խաբեալ,

Աստուածական փառօք պատուեալ
Զբանալ աչացըն խոստացեալ։
  Զոր դառնութիւնըն Ճաշակեալ,
Յանմահական կենացն անկեալ.
Նախ Թըզենեաւն այնու սփածեալ,
Ապա զմաշկեակն եղեն զգեցեալ.
Յարփիափայլ վայրէն ելեալ,
Եւ 'ի յերկիր մահու ածեալ։
  Յոր անձեցեալ և յուռթացեալ,
Որդի ըղձայր փոխանակեալ.
Երկիր մարդկան ծնընդեամբ լըցեալ,
Եւ յընդհանուրըս ծաւալեալ։
Որոց 'ի դէպ թէ զըղջացեալ,
Զյանցանըս հօրն ապաշխարեալ,
Եւ թողութեան մեղաց հասեալ,
Եւ 'ի յԱդին դառնալ դարձեալ.
Բայց ցանկական ախտիւ զեղխեալ,
Եւ 'ի մարմին զոգիս փոխեալ,
Մինչեւ եղեն ջուրքըն հեղեալ,
Եւ սահմանաց երկնից բանալ,
Զաշխարհ ամէն խորասուզեալ
Եւ զամպարիշտսըն սատակեալ։
  Այլ տապանին ապրեցուցեալ
Զորս 'ի յինքեան էր ամփոփեալ.
Ըզնոյ որդւովքն իւրովք փըրկեալ,
Որք ոչ զոգիսըն մեռուցեալ։

Որոց եղեալ և տարածեալ,
Եւ վերըստին աշխարհ շինեալ․
Ազգ ըստ ազգի գուլբաժանեալ,
Յորդւոցն իւրոց՝ զոր էր ծընեալ։
Ի Սեմայ Եբեր սերեալ,
Եբրայեցիք են անուանեալ․
Ուստի փըրկիչըն մեր ծընեալ,
Յաբրահամու տոհմէն յայտնեալ։
Եւ 'ի Քամայ Քանան եղեալ,
Եւ զանիծից մասն ընկալեալ․
Յորմէ ծընունդքըն խաւարեալ,
Առ 'ի լուսոյն երկնից ծագեալ։
Իսկ Յաբեթի զմեզ վիճակեալ,
Նախ ըզԳոմեր եղեւ ծընեալ․
Եւ 'ի սմանէ գոլով յայտնեալ
Այն որ Թիրասըն կոչեցեալ,
Ծնընդեամբ անդուստ իսկ յառաջեալ
Եւ Թորգոմայ սա հայր եղեալ․
Յորմէ Մովսէս ազգաբանեալ,
Եւ ստամանօր զմերայըն թողեալ։
Այլ Թորգոմայ զՀայկըն ծընեալ,
Յորմէ և Հայք մեք անուանեալ․
Յաշտարակին մին սա եղեալ
Յեւթանասնիցն՝ որ զնա շինեալ։
Ի տրոհական լեզուայըն լեալ,
Հայք 'ի սորա մասին հասեալ․

Որոյ յաշխարհըս մեր եկեալ,
Եւ ծընընդովք ըղձա լըցեալ,
Արամանեակ անդրանկացեալ,
Որով Արմէնք մեք կոչեցեալ.
Վասնզի յաղթող ազգաց եղեալ,
Եւ քաջութեան անուն առեալ։
Եւ 'ի սմանէ Կադմոս ծընեալ,
Այն որ զԲելայն գալ զեկուցեալ.
Զոր և Հայկին զայն ծանուցեալ,
Արխաբար զգիմի հարեալ,
Ըզլայնալիճըն լի քարշեալ
Եւ շեշտ կըրծիցըն թափ անցեալ,
Այս գովեստի արժանացեալ
Նահապետին նախնի գործեալ։
Արմանեկայ որդի եղեալ,
Որ Արմայիս էր անուանեալ.
ՅԱրմայիսայ գոլով յայտնեալ
Ամասիայն անուանադրեալ.
ՅԱմասիայն եղեւ ծընեալ,
Այն որ Գեղամըն կոչեցեալ.
Ի Գեղամայ Հարմա ելեալ,
Ի Հարմայէ Արամ ծընեալ։
Եւ այլ բազում գոն համարեալ,
Որ 'ի սոսա էն յարմարեալ.
Զոր աւելորդ թըւի վարկեալ,
Ծուլագունից լուր ծանրացեալ։

Բայց այս նոցա անդէտ չեղեալ,
Որ զՔերթողին տառ վերծանեալ․
Քանզի պատմէ Թագաւորեալ
Զանուն Պարոյր նախադասեալ,
Եւ ըզՏիգրան 'ի վերջ յանդեալ․
Զյոքունս 'ի մէջ սոցա կարգեալ,
ԶԱրայն ընութեամբ գեղեցկացեալ
Եւ ըզՀրաչեայն գխօք վառեալ․
Եւ այլ բազումըս շարադրեալ,
Յարշակունիսըն հասուցեալ․
ՅԱրբահամէ աղգաբանեալ,
Յորմէ Քետուրըն եղեւ ծընեալ․
Որ զաւեախըն հաստատեալ,
Ցիւրմէ ազգաց Թագաւորեալ։
Արդ 'ի սորին զարմէ սկըսեալ
Պարթեւական տոհմ անուանեալ,
Ուստի Արշակ Թագաւորեալ,
Արշակունի ազգըն ցեղեալ,
Եւ ըզքաղաքըն Բահլ առեալ,
Բահլաւունիք անդ կոչեցեալ․
Մի՛ ազդ միապետեալ,
Արեւելեան կողմանց տիրեալ․
Զաղէքսանդրեանըն փախուցեալ,
Ի Դարեհի գահուն նըստեալ։
Եւ սորա այս պէսքաջացեալ,
Եւ գերապոյն յոքունց եղեալ,

Զարքայական թագըն առայեալ
Արտաշէսի որդւոյ թողեալ։
 Որոյ փոխան գոլով նըստեալ
Այն որ Արշակ մեծ անուանեալ,
Ըզպատերազմ ազանց վանեալ,
Զընդդիմամարտս յաղթահարեալ.
Նա և եղբօր ձիր պարգևեալ,
Որ Վաղարշակն էր անուանեալ,
Զհայաստանեայց աշխարհ տըւեալ,
Եւ առանձին թագաւորեալ։
Որոյ զօրք բազմօք եկեալ,
Մակեդոնեանց յաղթող գըտեալ,
Զարքայական գահ յօրինեալ,
Եւ նախարարըս հաստատեալ.
Քաղաքական օրէնս եդեալ,
Եւ բարեւք կարգաւորեալ.
Եւ յետ ամաց ինչ վաղճանեալ,
Մերն Արշակայ թագաւորեալ։
 Այն որ զՊոնտոս գոլով գերեալ,
Եւ յաղթութեան նըշան թողեալ.
Զի անարի արձան առեալ,
Ցեղըր ծովուն մեծի կանգնեալ,
Եւ զեռանական արեամբ մըխեալ
Տիգաւն ըզթափ իւր անցուցեալ.
Զոր և Յունացըն զայն առեալ,
Իբր աստուծոյ երկըրպագեալ։

Որք այժմ ըղձեղ գոն ապաստանեալ,
Զանթագաւորքըս պարսաւեալ.
Բայց մեր 'ի յայս ոչ պանծացեալ,
Զի ըստ մարմնոյ գոյ ներգործեալ:
Այլ այս քաջի վախճան հասեալ,
Արտաշէսի մերոյ նշանեալ.
Եւ յերկրորդին դաշն չհաւանեալ,
Ըզխնամականն յափըշտակեալ:
Սա զօրս անթիւըս ժողովեալ,
Եւ զքարադէզըն կարկառեալ.
Եւ յարեւմուտըս խաղացեալ,
Ըզլիւդացւոց արքայն կալեալ.
Զընդհանուր ծովըն հնազանդեալ,
Եւ ըզցամաքըս նուաճեալ:
Քան զԱղէքսանդրըր վեհ եղեալ,
Պոլիկրատայ գովաբանեալ.
Որ նաւածիգ զօրացն եղեալ,
Եւ զմիջօրեայն մըթացուցեալ:
Եւ այլ յոքունս արկացեալ,
Եւ ըզԿրիւսոսըն տապալեալ.
Ցիւրոց զօրաց գոլով խոցեալ,
Յորմէ վախճան մահու առեալ:
Այսպէս Տիգրան թագաւորեալ,
Այն որ միջինըն կոչեցեալ:
Ըզյունական զօրըն հարեալ,
Ի Պաղեստին նա արշաւեալ.

Ըզ Գուրխանըն փախուցեալ,
Եւ զՄիհրդատ յինքըն կալեալ.
Հռոմայեցւոց զօրացն յաղթեալ,
Եւ ըզԿրասոս մահացուցեալ։
Ի Պաղեստին զօր առաքեալ,
Եւ զՀիւրկանոս գերի ածեալ.
Զհռոմայեցիս պարտէ դարձեալ,
Եւ խռովն նա վախճանեալ։
Յորմէ որդին ըզԹագն առեալ,
Որ Արտաւազդ էր անուանեալ.
Որ քաջութեան անուն չառեալ,
Այլ զորովայնըն մեծարեալ.
Մինչ 'ի վաղճան խենեշացեալ,
Եւ նախատինք նախնեացն եղեալ։
Ըզսա Արջամ փոխանակեալ,
Այն որ Արշամըն կոչեցեալ.
Արտաշխի որդի եղեալ,
Եւ Աբգարու հայր անուանեալ։
Որոյ ամաց քանեաց կեցեալ,
Խաղաղական կեանս ըստացեալ.
Եւ բարիք սա վաղճանեալ,
Ըզկնի Աբգար թագաւորեալ։
Յայսմ վայրի իմ նորոգեալ,
Եւ փըրկութիւն ինձ երեւեալ.
Զի Աստուծոյ որդին ծընեալ,
Եւ յանիծիցըն զիս գնեալ։

Բայց Արգարու զԵդես չինեալ,
Եւ անդ զաթոռն իւր հաստատեալ.
Ընդ Հերովդէս խաղմ արարեալ,
Զեղբօրորդին իւր սատակեալ:
Ըզփըրկչական լուրըն լըւեալ,
Եւ ըղձական նամակ գըրեալ,
Ի փոքրադոյն քաղաք իւր գալ
Ի բըժըշկել զինքն ախտացեալ:
Այլ և Աստուած խոստովանեալ,
Եւ անդրանիկ Հօր դաւանեալ:
Որում երթալ ոչ յանձն առեալ,
Բայց անդրադարձ թըղթին յըղեալ.
Երանի այնմիկ, ասացեալ,
Որ հաւատայն յիս՝ ոչ տեսեալ:
Քանզի զինէն գոյ ասացեալ,
Մարգարէիցըն վըկայեալ,
Ի տեսողաց զիս անարգեալ
Եւ յանտեսից երկըրպագեալ:
Արդ հըրճուիմ ես ցընծացեալ,
Թագաւորաս իմ պանծացեալ.
Զի քան զԹովմաս յառաջացեալ,
Զերանութիւն մարդկան բերեալ:
Բայց նախարարքն անդրէն դարձեալ
Եւ ըղնամակն առ նա տարեալ,
Զառհաւատչեայ յոյս խոստացեալ,
Զաշակերտին գալն ասացեալ:

Իսկ տէրըն մեր զխուրսըն լըցեալ,
Եւ զհայրական կամս կատարեալ,
Յեբրայեցւոցըն չարչարեալ
Եւ 'ի խաչըն վասն իմ մեռեալ,
Երեքօրեայ նա յարուցեալ,
Եւ ուստի էջըն՝ անդրէն ելեալ,
Եւ զաւետիս Հօրըն առաքեալ
Առաքելոցն հոգիացեալ:
Որք ըղթադէ առ նա յըղեալ,
Ըստ որում ինքըն էր խոստացեալ:
Որոյ յՈւռհա քաղաքըն եկեալ,
ԶԱբգար յախտից ցաւոց բուժեալ,
Եւ 'ի հաւատըս հաստատեալ
Յառաջադոյնըն դաւանեալ.
Ըզլթագաւորըն մըկըրտեալ,
Զամենեսին լուսաւորեալ:
Ի յարեւելս անդուստ ելեալ,
Եւ անդանօր գոյ կատարեալ:
Այլ Աբգարու նամակ գըրեալ,
Եւ առ Տիբեր կայսր առաքեալ,
Զխաչահանուացն ամբաստանեալ,
Եւ զհաւատալն իւր ծանուցեալ.
Որ և ըզնա իսկ հրաւիրեալ,
Խաչեցելոյն հաւատացեալ:
Ի Բաբիլոն Թուղթ առաքեալ,
Եւ առ Ներսեհ ըզնոյն գըրեալ.

Ի յԱրտաշէս ըղնոյն յղեալ,
Որ էր Պարսից Թագաւորեալ.
Պատասխանիս ոչ ընկալեալ,
Օրհատականըն փութացեալ:
Զոր աշխարհեմ ոչ յերկարեալ,
Զի կանխագոյն էաք դարձեալ:
Այլ 'ի յաթոռ նորին նըստեալ
Իւր Անանուն որդին եղեալ.
Որ բարի հօրն ոչ հետեւեալ
Եւ բարիոք ժառանգ չեղեալ,
Այլըղտամճար դիցըն բացեալ,
Զհաւատացեալըն չարչարեալ:
Եւ բարկութիւն տեառըն հասեալ,
Եւ չարաչար զնա սատակեալ:
Եւ Սանատրուկ Թագաւորեալ,
Քեռն Աբգարու որդի ծընեալ.
Որ զԱռաքեալըն խողխողեալ,
Եւ զօրիորդըն զիւր սպանեալ:
Ըստ արժանւոյն նա վըճարեալ,
Լինէր Երուանդ Թագաւորեալ.
Որ 'ի կնոջէ հերատուսեալ
Ցարշակունւոյ զարմէ սերեալ:
Ականն չարի ունակացեալ,
Որ և զարձանսըն պատառեալ.
Գործըս յոքունըս կատարեալ,
Եւ ձեռակերտըս յօրինեալ:

ՅԱրտաշխէ գոլով սպանեալ,
Ուստի նորա Թագաւորեալ:
Սա զնախնականն իւր յօրինեալ
ԶԱրտաշատին չէն հաստատեալ.
Եւ զԱլանաց զօրսն հարեալ,
Զարքայորդին ձերբակալեալ.
Զչքնաղագեղն կոյս առեալ
ԸզՍաթենիկըն դիցաղնեալ.
Ըզհարազատն իւր արձակեալ,
Եւ անկապուտ ուխտ հաստատեալ:
Սա այլ բազում ճակատ մղեալ
Եւ արհեստից գիւտից հասեալ,
Եւ ըստ բախտին վախճան առեալ,
Արտաւազդայ փոխանակեալ:
'Սա որում և սա սակաւ կեցեալ,
Ի խորափիտ ինչ ընդվըղեալ.
Զոր յառասպելս ումանց առեալ
Եւ այլանդակըս բարբառեալ,
Քաջաց սաէն ըղնա կալեալ,
Յաղատ Մասեաց լերին տարեալ.
Եւ չըղթայիւք պարաւանդեալ,
Մինչ հանապազ գոլով կըրծեալ:
Զոր և զարմանաց աւանդ առեալ,
Նաւասարդոջ ըղսալ հարեալ.
Զի մի զկապանս, ասէ, խըզեալ,
Եւ աշխարհի վախճան ածեալ:

Ըզսա Տիրան փոխանորդեալ,
Որ իւր եղբայր հարազատեալ·
Եւ յաղթական գործ կատարեալ,
Հանդարտութեամբ թագաւորեալ:
Զկենցաղական կեանըս հատեալ,
Ի ձեռն հօտոյ վախճան առեալ:

Զորոյ եղբայրն ըզթագն առեալ,
Այն որ Տիգրան վերջին եղեալ·
Արիութեանց ոչ հետեւեալ,
Ցիշատակի չարժանացեալ·
Սակայն առնոց յորունց կեցեալ,
Խաղաղական մահ ընկալեալ:

Եւ ընդ սորա Վաղարշ նըստեալ,
Որ էր որդի իւր սիրեցեալ:
Ըզբասալայն զօրըն հարեալ,
Եւ քաջապէս անդ վախճանեալ:

Ուստի Խոսրով թագաւորեալ,
Եւ ըզվրէժ հօրըն պահանջեալ·
Զօրըս բազումըս գումարեալ,
Զհիւսիսականըն նըւաճեալ:
Նա և Պարսից յաղթող գըտեալ,
Ամ ըստ ամէ ասպատակեալ·
Եւ զԱրտաշիրն անձկացուցեալ,
Մինչ 'ի հընդիկըս փախուցեալ:
ԶԱրտաւանայ արիւն խընդրեալ,
Զոր սատանեանն էր ըսպանեալ·

Որոյ տոկալ ոչ կարացեալ
Եւ նեղութեանցըն չհանդուրժեալ,
Ըզնախարարս իւր կոչեցեալ
Զպարթեւազունսըն ժողովեալ,
Յոլովակի ձիր խոստացեալ,
Եւ գերագոյն գահ ստացեալ
Զերկրորդականըն բարձ տուեալ,
Նոյն լոկ անուամբ արքայացեալ,
Եթէ դաւել ոք մարթացեալ
Եւ ելս իրաց այնմ արարեալ:
Իսկ անտանօր յառաջ կացեալ
Պարթեւազնին Անակ կոչեալ,
Ըզնենգական դաւն ընկալեալ
Եւ ըզհրամանսըն յանձն առեալ,
Ի հաստուածի պատճառս ելեալ
Եւ առ Խոսրով արքայ եկեալ:
Որ ընդ առաջ սիրով ելեալ,
Իբր ազգային ողջագուրեալ,
Փառօք մեծաւ պատուասիրեալ,
Յերկրորդական գահ նըստուցեալ:
Բայց սըխրալի իմն իր գործեալ
Ի ճանապարհն ասի դիպեալ:
ՅԱռաքելոյն չիրիմ հասեալ,
Հուպ առ հանգիստ սըրբոյն օթեալ.
Ուստի Գրիգորն անդ ընծայեալ,
Լուսաւորիչ Հայոց փայլեալ:

Որ և չնորհօք նորին լցեալ,
Որպէս անդուստ գոլով յայտնեալ.
Զի զհակառակսըն ներգործեալ,
Ի յազգամանէ չարին եղեալ,
Որ 'ի բարին զայն փոփոխեալ,
Ի խաւարի մեղ լոյս ծագեալ:
Արդ մինչ արքայն զուարճացեալ,
Ընդ Անակայ խորհուրդ առեալ,
Եւ զօրս անթիւս գումարեալ,
Ըզվրէժ արեանըն պահանջեալ,
Զպայման նենգող ուխտին յիշեալ,
Եւ զթագաւորըն խողխողեալ.
Եւ ինքն իւրովքն ամէն մեռեալ,
Պատանեկաց երկուց զերծեալ.
Գրիգորիոս միումըն լեալ,
Որ 'ի Կեսարն եղեւ տարեալ.
Աստուածապաշտ առըն դիպեալ,
Զոր քրիստոնեայ կրօնիւք վարժեալ:
Որոյ ամաց ինչ անդ կացեալ,
Ըստ աշխարհի ամուսնացեալ.
Եւ յետ երկուց որդւոց ծընեալ,
Եւ յերկոցունց կամաց մեկնեալ,
Մարիամու զկըրսելըն առեալ
Եւ յանապատըս հետեւեալ:
Իսկ անդրանկանն անդէն մնացեալ,
Կենցաղական վարս ըստացեալ:

Բայց Գրիգորի յուղի անկեալ,
Եւ առ Տըրդատըն հետեւեալ.
Զոր Արտաւազդ ածն էր առեալ,
Եւ 'ի կայսեր դուռըն հասեալ:
Նա Խոսրովու որդի եղեալ,
Առ 'ի քաջաց քաջ երեւեալ,
Եւ յաղթանդամ հըսկայացեալ
Ուժեղ կարող անյաղթ գտեալ:
Արդ նորա անդըր ժամանեալ,
Եւ զհայրական պարտ վըճարեալ,
Ի միասին պանդըխտացեալ,
Յօտարութեան նըշդեհացեալ,
Մինչ դեռ Տըրդատըն զօրացեալ,
Եւ նոր Հերակլ անդ անուանեալ:
Քանզի ցըլուց երկուց կալեալ
Միով ձեռամբ զեղջերս թափեալ.
Քան զհռոդացին մեծ երեւեալ,
Որ ըզվըղէ եւեթ կալեալ.
Եւ քան զԿրատոսն արիացեալ,
Որ ըզկըճղակ եզին կորզեալ:
Ի կըրկէսին մեծի դարձեալ,
Զիընթացիկ կառավարեալ.
Իսկ ներհակին անդ հըմտացեալ,
Եւ Տըրդատայ յերկիր անկեալ,
Արխաքար անդուստ վաղեալ,
Ըզքաջընթաց կառքըն կալեալ:

Եւ ըղքառւից երիվարաց
Զընթացս արգել՝ յետ նահանջեալ:
  Այլ 'ի Պռօպայն պատերազմեալ,
Որ յիւրական զօրաց մեռեալ,
Անդ Տրդատայ ընդդէմ կացեալ,
ԶԼիկխանեան պարեցուցեալ:
Իսկ 'ի մեծի մարտին մրտեալ,
Որ յԵփրատայ յայն կոյս եղեալ,
Ընդ փախըստեայս չաճապարեալ,
Երիվարին վիրաւորեալ.
Այլ զիւրականըն զէն առեալ
Եւ ըղձիոյն կազմած առանձնեալ,
Եւ զանարին զայն գետ հատեալ
Եւ ողջանդամ յայն կոյս անցեալ:
  Մինչ բարբարոս խուժանն եկեալ,
Յաշխարհ Յունացըն բանակեալ,
Գիոկղետեայ հրաման առեալ,
Հռոմայեցւոց զօրաց հասեալ
Ընդ յոքնական խըմբից դասուցն,
Առ որ Տրդատ եղեւ եկեալ,
Բացեալ դըրանցն ոչ ժամանեալ,
Առ պատուարօքն օթագայեալ.
Եւ զի չըգոյր դարման գըտեալ
Երիվարացն՝ որ կերակրեալ,
Գետակն 'ի վեր նոցին կալեալ,
Տեսին անդ խոտ յարաբարդեալ:

Ցորում Տէրդատըն զօրացեալ,
Ի բարձրաբերձըն բարձրացեալ,
Եւ դէպադէզ ըզխոտն հօսեալ,
Զփշեանն ըզկնի 'ի զօրսն արկեալ:
Իսկ բարբարոսըն պանծացեալ,
Մենամարտել յարքայն յըղեալ:
Զոր նա լըւեալ և զարհուրեալ,
Բըւաքատակ արքայն բեկեալ·
Եւ զայս նորա հրատարակեալ
Յամենեցուն յունկըն հընչեալ·
Կայսերակերպ, ասէ, պըճնեալ,
Որ ներհակին դէմ մարտուցեալ:
Լիկիանեան այն մատուցեալ,
Առ որ Տէրդատ պանտըխտացեալ,
Անհոգանալ արքայի լեալ
Ի յայնմ իրի, նա սասցեալ:
Գիցազնական մանկան դիպեալ
Յարշակունեաց զարմէ սերեալ,
Զգործդ այդ դիւրաւ նա վըճարեալ,
Որպէս հօղմոց ըզխուիւ հօսեալ:
Զերեկոյեան գործըն պատմեալ,
Զոր առ նոսա հրաշագործեալ·
Եւ ըզնախկինն արխացեալ,
Զոր իւր ինքեան յատուկ տեսեալ:
Ապա հրաման նըմին հասեալ,
Յարքայակերպ զարդ պաճուճեալ·

Եւ սպաս զինու զիւրեաւ արկեալ,
Յարքունական ձիոյ հեծեալ,
Հանդէպ միմեանց առաճակատեալ,
Մըզրակ 'ի կուշտ աշտանակեալ:
Կայսերակերպըն զօրացեալ,
Բարբարոսաց պետին յաղթեալ.
Զոր քաջալէս ձերբակալեալ
Եւ վերամբարձ ըզնա առեալ,
Եւ առաջի կայսերըն ածեալ,
Խոստացելումըն ժամանեալ:
Արքայական թագին պըճնեալ,
Հռոմայեցի զօր ըստացեալ.
Նըզըզ 'ի մեծըն Հայք եկեալ,
Եւ ըզպարսիկըն հալածեալ:
Այն ինչ նորա ահա եկեալ.
Ընձայաբեր բազմաց եղեալ,
Անահտական դից մատուցեալ
Ըզդարմանայինըն տաղարթեալ.
Յայսմ վայրի սկըզբնաւորեալ,
Որ փըրկութեան մեզ առիթ լեալ:
Քանզի զԳրիգոր յայս ըստիպեալ,
Դից Ոսկիմօրն սոա նուիրեալ.
Զոր և յանձին զայս ոչ առեալ,
Եւ հրամանացն ոչ հնազանդեալ,
Ուստի 'ի հարց փորձ մատուցեալ,
Եւ տանջանաց սկիզբն արարեալ:

Գայլ՚ի բերանըն յայն եղեալ,
Որով Ցխտուս խոստովանեալ։
Աղեայ արձան յողըն բարձեալ,
Այնու հանդերձ վերամբարձեալ.
Նախատանաց ջըրով տանջեալ,
Ընդ վայրարկուն փողով հեղեալ.
Ըզգարշապարըն հեղուսեալ,
Եւ ընդ երկիր յածեցուցեալ.
Նորին կարթիցըն դել արկեալ,
Նա և ըղծունկսըն յօշոտեալ.
Եւ եղընգամբք կողըքըն քերեալ,
Եւ արտասուացն անօթ բախեալ.
Ընդ քաղցր օդոյ աղիւն ծըծեալ,
Փոխան ջըրոյ քացախ արբեալ.
Ի տատասկաց վերայ պարզեալ,
Որակութեամբ արեան ներկեալ.
Դարձեալ կապար եռացուցեալ,
Եւ ընդ հագագըն սորարկեալ։
Եւ այտըքիւք ոչ շատացեալ,
Այլ և զոտին միոյ կախեալ։
Երկոտասան կըրիւք տանջեալ,
Ապա ՚ի խոր վիրայն արկեալ.
Զի չէ, ասէն, պարտ դըմա կեալ,
Մահապարտի որդի եղեալ։
Աստ Սաղմոսին երգ կատարեալ,
Որ վասըն տեառն էր ասացեալ.

Ի գուբ մահու զիս իջուցեալ,
Ի խաւարի նըսեմացեալ:
Արդ յայնմիկ տեղ ՚նա տեւեալ
Հընգետասան ամ համբերեալ,
Ցաստուածական խնամոց պահեալ,
Զխժից քարբից դըլուխ կոխեալ·
Զի հրեշտակաց իւր պատուիրեալ,
Բառնալ ձեռամբ վերամբարձեալ·
Մինչեւ եղեւ լըրումն եկեալ,
Խաւար մեղացըն փարատեալ:
Ցարեւմըտից լոյսըն ծագեալ,
Եւ զարեւելս լուսաւորեալ·
Օրիորդացըն հետեւեալ,
Փեսաւերին Թիկունս հասեալ:
Հռիփսիմէին գեղեցկացեալ,
Որ Քրիստոսի էր հարսնացեալ,
Զայն առ արկեալըն ՚ի գուբըն արկեալ,
Սիրոյ տարփմամբ զայս ասացեալ·
Ըզպատերազմն, ասէ, վանեալ,
Զիշխանն առիթ մահու ընկճեալ,
Զերկիրըս քո խոստանացեալ
Իմ կուսական ճըգամբք հերկեալ·
Ի պետրոսեանցն եմ առաքեալ,
Քարոզակցիդ վըրկանք եղեալ:
Արդ յանձանձանչ վայրէդ ելեալ,
Զբանըն լուսոյ ընդ քեզ առեալ,

Ի յանդաստան քո սերմանեալ՝
Որ անապատ էր ծարաւեալ.
Ցոր շուշանաց վարդից բուսեալ,
Ցօղով արեամբ մեր ոռոգեալ.
Ցորում ըղջօտ քո արածեալ
Անուշահոտ ծաղկօք բուրեալ,
Ի գալարուոջ վայրի բնակեալ
Եւ առ կենացըն ջուր սընեալ:
Արդ մինչ նոցա վախճան առեալ
Ցետ յաղթութեան մարտին եղեալ,
Ի բարկութեանց տեառըն հարեալ
Տըրդատ 'ի խոզ յեղափոխեալ.
Ըստ Բաբելոյն արքայի լեալ,
Անամօթաբար խայտառակեալ.
Ցեղէգնաշամբ վայրին երթեալ,
Ընդ համաձեւս օթագայեալ:
Նա և յոքունց գիւղաբախեալ
Նախարարացըն յիմարեալ,
Քարամբք զանձինըս կոշկոճեալ
Եւ ատամամբքըն պատառեալ:
Ուստի գըթած Հայրն ոչ տեւեալ,
Մինչ բարկութեամբ ըզմեզ խըրատեալ,
Ոչ յաւիտեան ոխըս պահեալ
Եւ ոչ 'ի սպառ նոսա բարկացեալ,
Այլ արքային քեռ երեւեալ,
Խոսրովիդուխտ կոյս անուանեալ.

Եւս ատենից այնմ տուացեալ
Զայն՝ որ 'ի խոր վիրապն արկեալ։
Որոց ատելեանմըն զարհուրեալ,
Եւ զնախարարն Օտա յըղեալ·
Որ յԱրտաշատ քաղաքն երթեալ,
ԶԳրիգոր 'ի խոր գըբէն հանեալ։

Եւ մինչ գալուստ սըրբոյն եղեալ,
Գան ընդ առաջ գլխաբախեալ
Թագաւորըն խոզացեալ
Եւ նախարարքն անըղգայեալ։
Սըրբոյն զաղէտըն զայն տեսեալ
Եւ արտասուաց վըտակ հեղեալ,
Վէր 'ի յերկինըս նայեցեալ,
Գալ 'ի յիմաստ նոցին խընդրեալ։
Եւ 'ի Հընծանան օթագայեալ,
Զմարմին սըրբոցն անդ ամփոփեալ·
Զբանըն կենաց վարդապետեալ,
Կաթըն աղայոցն ոգւով ջամբեալ։

Անդ և տեսիլ աստուածարեալ
Ետես յերկնից լուսածագեալ,
Զապագայիցըն ծանուցեալ
Եւ զներկայիս իմաստ առեալ։
Այլ և զարքայն անասնացեալ
Ի մարդկային բնութիւն փոխեալ·
Զոր Դանիէլ հրաշագործեալ,
Որ յառիւծուց 'ի գբին ապրեալ։

Խորհուրդ կենաց 'ի կիր արկեալ,
Յաստուածայնոցըն հրամայեալ.
Զի հօտապետ հօտիցն օծեալ,
Զայն որ հօտին փրկանք եղեալ:
  Այլ նորաձեւ հոլովին առեալ
Զիւր նախակերտ հօտն և զընտրեալ,
Ի յԵփրատայն յափըն հասեալ
Եւ զանարին գետ դարձուցեալ.
Կարկաջասահ շըրջան առեալ,
Լայնատարած դաշտ ծաւալեալ.
Ըզնորագոյն հօտն անդր ածեալ,
Զօծման Հոգւոյն եւղըն հեղեալ.
Յերկնից լուսոյն սփռն երեւեալ,
Արեգական գերազանցեալ:
Նոր Յորդանան Եփրատ եղեալ,
Զայն հայրական ասա վըկայեալ,
Յորդեգրութիւն վերակոչեալ
Զորդիս մարդկան յԵդեմ դարձեալ:
Զամենեսեան լուսազարդեալ,
Կենաց հացիւըն կերակրեալ.
Զմեհեանըս գիցըն կործանեալ,
Խորանս լուսոյ անթիւ կանգնեալ.
Սեղան գառինըն յօրինեալ,
Ի քաւութիւն պատարագեալ:
  Ըզկոստանդեայ դարձըն լըւեալ,
Որ էր հռովմայ թագաւորեալ,

Յայն Ճանապարհ զօրօք եկեալ
Եւ Թամատուն հաշար ընտրեալ։
ՅԱռաքելոց յաԹոռ հասեալ,
Սուրբ ոսկերացն երկրպագեալ,
Ի յալքայէն պատուասիրեալ.
Հայրապետին սիրով պատուեալ
ԶԳրիգորիոս վերայ եղեալ,
Խոստովանող վերընկալեալ.
Եւ ըզՏըրդատ փառաւորեալ
Որպէս հրաշիւք փոխակերպեալ.
Քրիստոսական կրօնիւք խրատեալ,
Եւ 'ի հաւատըս հաստատեալ.
Ի յուխտ դաշանց միաբանեալ,
Թագաւորացն երկուց եղեալ։
Յակնապատ կառս ամբարձեալ,
Արքունատուր ձըրիւք լցեալ,
Ի մեծըն Հայք անդուստ եկեալ
Ուրախալիր ողջոյն բերկրեալ։
Ի Նիկիայ ժողով դարձեալ
Գրիգորիսըն կոչեցեալ.
ՈրուՄ երԹալ ոչ անսացեալ,
Մե՛ առաւել գոլով պատուեալ,
ԶԱրիստակէս փոխան յըղեալ,
Որ էր որդի համանմանեալ։
Զբան հաւատոյ անդուստ առեալ,
Տանըս Հայոց պարգեւ բերեալ։

Յորոյ հիման մեք հաստատեալ
Անշարժաբար գոլ տրամադրեալ,
Արիոսի չեմք հետեւեալ,
Որ զմի բնութիւն յերիս հատեալ։
Եւ Սաբելի չեմք հնազանդեալ,
Որ չարաչարըն ժողովեալ։
Ոչ Նեստորի յարկած մտեալ,
Որ մարդածին զԿոյսն ասացեալ․
Ոչ Եւտիքի տեղի առեալ,
Որ ոչ ասաց մարմին եղեալ։
Այլ մեք 'ի Հայր հաւատացեալ,
Եւ Միածնին երկրպագեալ,
Եւ ըզՀոգին խոստովանեալ
Յէութենէ Հօրըն բղխեալ։
Յերից անձանց մին խոնարհեալ,
Եւ զադամեանս մարմին առեալ
Ընդ իւր ինքեան միացուցեալ․
Եւ 'ի կուսէն սրբոյ ծնեալ,
Նովին մարմնով կամաւ խաչեալ
Եւ վասըն մեր եղեւ մեռեալ․
Երեքօրեայ նա յարուցեալ,
Եւ ուստի էջըն վերացեալ․
Գալ միւսանգամ է խոստացեալ,
Եւ անվախճան Թագաւորեալ։
Բարեգործաց բարիս տըւեալ,
Չարաց տանջանըս հատուցեալ։

Արդ յայսպիսի սեան խարըսխեալ
Գրիգորիոս զհօտն իւր թողեալ,
Զարիստակէս փոխան եդեալ,
Ինքն 'ի Մանեայ յայրըն ծածկեալ:
Սըմա Տըրդատ յոյժ բաղձացեալ
Լուսաւորչին իւր հետեւեալ,
Ըզծիրանիսըն մերկացեալ
Եւ զերկրաւոր թագն ընկեցեալ:
Հովուապետին անյայտ եղեալ,
Լուսոյն մերոյ լոյսն ամփոփեալ.
Ի հովուական դասուց թաղեալ,
Թափառական այր կարծեցեալ:
Զի որք փըրկչին սպասաւորեալ,
Նոքա զծառայն գիտապատեալ:
Որպէս զՄովսէսն անքոյթ եղեալ,
Զի մի՛ պաշտօն ըղնա առեալ:
Արիստակէս տեղ ինչ կացեալ,
Եւ շաւղաց հօրըն հետեւեալ,
Ի յանբարուց առնէ սպանեալ,
Ի Թիլն աւան իւրում թաղեալ:
Վըրթանէսի փոխանակեալ,
Ի հայրենի յաթոռ նըստեալ:
Ի նոյն շաւիղ ուղեւորեալ,
Իւրում հօտին առաջնորդեալ:
Այլ մերասեր ազին եղեալ
Զչարիսն ասեմ որ գործեցեալ:

Ըղձնի որոյ Թագաւորեալ
Խաւարամ որդի Լուր անուանեալ,
Հօրըն բարւոյ ոչ նըմանեալ,
Ամենեւին գոլով յեղանեալ.
Արիութեանցն ոչ հետեւեալ,
Եւ հասակաւ յոյժ յոռացեալ.
Վատ և յետին այնպէս կացեալ,
Յետ սակաւու ինչ վըճարեալ:
Բայց մինչ Տըրդատըն վախճանեալ,
Նըւաճելոցն ապըստամբեալ.
Որպէս Աղուանքն արեւելեան,
Ուր Գրիգորիսն առաջնորդեալ,
Լուսոյ բանին ոչ հանդուրժեալ
Չար բարբարոսքըն խաւարեալ,
Այլ շիջուցին զջահըն փառեալ,
Ի չարչարանս ձի ընթադրեալ:
Յամենայնի հարց նըմանեալ,
Եւ կուսութեամբն առաւելեալ.
Ի Վըրթանայ որդի ծընեալ,
Համբակատիպ քաջապետեալ:
Յետ Խոսրովու Տիրան եղեալ
Յաթոռըն հօր Լուրոյ նըստեալ.
Արիութեանց ոչ հետեւեալ,
Այլ փառութեամբըն համբաւեալ:
Բայց Վըրթանայ զերկիր լըքեալ
Եւ յերկնայինս վերափոխեալ,

Ի յիւրական աթոռն եղեալ
Զցուսիկ որդին իւր կոչեցեալ:
Որ բարիոք վարուք կեցեալ,
Ցանդիմանիչ չարեաց գըտեալ,
Ի Տիրանայ գանիւ մեռեալ
Ընդ պատկերին՝ զոր խորտակեալ:
Սուրբ ծերունւոյն Դանիէլի
Հեղձմամբ մահու վըճիռ տուեալ,
Ինքն 'ի յաչացըն խաւարեալ,
Սաւուղաբար յիւրմէ մեռեալ:
Յետ այսր Արշակ թագաւորեալ,
Ի Տիրանայ որդի ծընեալ:
Որ 'ի սորին աւուրս եղեալ
Ներսէս Հայոց հովիւ նըստեալ.
Լուսաւորչին շաւիղ ծագեալ,
Առ 'ի նմանէ չորրորդ սերեալ:
Վարուքըն սուրբ, հոգւով մաքրեալ,
Եւ հանճարով իմաստնացեալ.
Առաքելոց հաւասարեալ,
Մարգարէից շնորհօք լըցեալ.
Յաստուածային Հոգւոյն օծեալ,
Իբր աղաւնի հովանացեալ:
Որ ըղձարեաց արմատ խըլեալ,
Եւ զբարիոք կարգըն տընկեալ.
Զողորմութիւնըն հաստատեալ,
Եւ զըլրտմութիւնըն հալածեալ:

Ընդդէմ չարաց սուսեր սըրեալ,
Եւ առ բարիսըն հեզացեալ։
Որ և զԱրշակն ամբարըշտեալ
Սաստող բանիւըն կըշտամբեալ,
Զարիւն Գնելի անպարտ հեղեալ,
ԶԱրշակաւան քաղաք շինեալ․
Զորոյ զընակիչս ախտացուցեալ,
Եւ աղօթիւքըն տապալեալ։
Մինչ 'ի կըղզին յայն աքսորեալ,
Աստուածաբար հրաշագործեալ․
Ձուկն 'ի յալեաց վերաբերեալ,
Ջուր 'ի կըղզին աղբերացեալ։
Ի յարքայէն վերադարձեալ,
Որ Թէոդոս մեծ կոչեցեալ,
Ի սուրբ ժողովն՝ որ գումարեալ՝
Յերից յիսնից մին սա եղեալ։
Բայց 'ի Շապհոյ Արշակ կալեալ,
Եւ խըրովի զինքըն սպանեալ,
Եւ փոխանակ թագաւորեալ
Որդի նորա Պապ անուանեալ․
Որ ընդ Շապուհ խաղաղ արարեալ
Ընդ հօրն արեանըն՝ զոր հեղեալ։
Որոյ յաշխարհըս մեր եկեալ,
Անթիւ զօրօքըն բանակեալ,
Յորժամ հանդէպ միմեանց կացեալ
Թագաւորացըն ռազմ եդեալ,

Սուրբն 'ի Ներսէս ըմպլինն եղեալ,
Որպէս Մովսէսըն պաղատեալ·
Որքան ըղձեռաւըն տարածեալ,
Հայոց զօրացըն զօրացեալ·
Եւ մինչ 'ի վայր կոյս խոնարհեալ,
Պարսկականացըն դիմացեալ:
Բայց Պապ զաղէր գործովք կացեալ
Եւ 'ի սըրբոյն յանդիմանեալ·
Որում մահու դեղ արբուցեալ,
Եւ 'ի կենաց աստի հանեալ:
Ա՜յլ նա հոգւոյն ականք յառեալ,
Մինչ 'ի վաղճանըն հուպ եղեալ,
Զապագայիցըն հանդերձեալ
Մերձակայիցն իր ծանուցեալ·
Յարշակունեաց զարմէ սերեալ
Թագըն փառաց ամէ բարձեալ,
Եւ 'ի յազգէն լուսաւորեալ`
Հովիւ բայց մի այլ ոչ նըստեալ·
Հայք 'ի հիմանցըն տապալեալ,
Ազգաց բազմաց կոխան եղեալ
Եկեղեցիքըն խաւարեալ,
Մանկունք նոցին յազգըս գերեալ·
Ծառայական ազգին ծընեալ,
Հայոց ազատքըն ծառայեալ·
Եւ Քանանու զարմն անիծեալ
Օրհնեալ զարմին Հայոց տիրեալ:

Իսկ 'ի նեւլին սըլծոյն մերձեալ,
Արփական զօրացն ելեալ,
Իսմայելին տոհմին յաղթեալ,
Զերուսաղէմ քաղաքն առեալ.
Ամըս բազումըս մարտ եդեալ,
Հանդէպ միմեանց պատերազմեալ,
Հռոմայեցւոցըն նըւաղեալ,
Ի նետողացն յաղթահարեալ.
Ցետ այնորիկ յոյժ զօրացեալ,
Եւ զանհաւատըն հալածեալ:
Եկեղեցիք լուսաւորեալ,
Աշխարհ ամէն խաղաղացեալ.
Մինչեւ ըզրումն երկիր եկեալ,
Դատաստանին օրըն մերձեալ.
Ամբարտաւանաց յերկրէ բարձեալ,
Եւ արդարոց թագաւորեալ:
  Մինչ զայսպիսիս հոգւով խօսեալ,
Հրաժարական երգ յօրինեալ,
Ամենեցուն ողջոյն տըւեալ,
Ի սըրբութեանցըն հրաժարեալ,
Զհոգին մաքուր սուրբ աւանդեալ,
Ի հրեշտակաց վերընկալեալ:
Զոր յամբառնալըն ծանուցեալ
Որք 'ի լերինս միայնացեալ:
Իսկ ըզմարմինն ողբովք առեալ,
Ի Թիլն աւան ըզնա տարեալ,

Յերգ հոգեւոր պարաւորեալ,
Ընդ նախնի հօրցըն հանդուցեալ:
Սակայն Պաւլոյ պարտաւորեալ
Վասն այս չարեացս որ գործեցեալ,
Թէոդոսի ըզնա սպանեալ,
Ըզվրէժ արեան սըրբոյն խնդրեալ:
Վարազդատայ փոխանակեալ,
Յարշակունի զարմէ ցեղեալ.
Ի քաջութիւն գովաբանեալ,
Մինչ Տըրդատայ համանմանեալ:
Զի մինչ մանուկ յՈլըմպիա լեալ,
Առեւծս յոքունս կոտորեալ.
Այլ և ըզհինգ այր քաջացեալ
Ի յերերաց վերայ սպանեալ:
Եւ այլ բազումս արիացեալ,
Ապա արքայ Հայոց նըստեալ:
Որ ընդ Եփրատ անդրաքայլեալ,
Եւ զաւազակըն սատակեալ:
Նոր Աքիլեւս սա երեւեալ,
Ընդ Սկամանդրոս գետըն վազեալ.
Եւ զՔխոնոս գերազանցեալ,
Վըրանուերկու կանգուն քայլեալ:
Բայց մանկարար անմտացեալ,
Թէոդոսի բասրաբանեալ.
Ուստի նորա զնա ըմբռնեալ,
Եւ 'ի մահու պատիժ արկեալ:

Յորում երկուց թագաւորեալ,
Որք 'ի Պարսից որդիս ծնեալ.
Մի ումն Արշակ վերակոչեալ,
Եւ Վաղարշակ միւսն անուանեալ.
Մինըն Յունաց հարկատու լեալ,
Միւսըն Պարսից հրապարակեալ:

Յայսմ վայրի եղեւ յայտնեալ
Այն որ Մեսրոպըն կոչեցեալ.
Որ տեսական ուսմամբ վարժեալ,
Գործնականաւ գերազանցեալ.
Ճգնողական վարս ընկալեալ
Եւ յանապատըս հեռացեալ,
Որ ըստ օրէ զմահ յանձն առեալ
Եւ Քրիստոսի չարչարակցեալ.
Բարեաց արմատ Հայոց եղեալ,
Զիմաստութեան գանձըն խնդրեալ:
Զոր աղօթից մասամբ գըտեալ,
Հոգւոյն մասամբ ուղղաւորեալ.
Ըստ Մովսէսի արժանացեալ
Զաստուածագիծ տառս ընկալեալ
Երեւք տասամբք վեցիւք յանդեալ,
Արեգական ելիւք չափեալ:

Այսմ շնորհի, սովաւ տըւեալ,
Սուրբըն Սահակ օժընդակեալ.
Որ 'Ներսէսի որդի ծընեալ,
Համանըման նախնեացն եղեալ:

Որք երկոքին տոքա ընտրեալ
Եկեղեցւոյ ամուք լցեալ,
Զբանին ակօսըն պատառեալ,
Զիմաստութիւնըն սերմանեալ։
Մանկունս ուշեղըս ժողովեալ,
Նոր դըպրութեանն այնու վարժեալ.
Որք Թարգմանիչք Հոգւոյն եղեալ,
Ըստ Պտղոմեայ 'ի նոյն շարժեալ,
Յաթենացւոց քաղաքն երթեալ,
Զիմաստութեան ծաղիկս առեալ.
Որպէս մեղուք թեւօք բարձեալ,
Յեկեղեցիս Հայոց բերեալ։
Այս է Մովսէս Դաւթիւ եղեալ,
Եւ Մամբրէիւ այլք հետեւեալ.
Այնքան շնորհօք վերին լցեալ,
Մինչ զի Յունաց զերազանցեալ։
Բայց Մեսրոպայ շըրջագայեալ,
Զամենեսեան լուսաւորեալ.
Վրաց ուԱղուանից գիր ըստեղծեալ,
Հոգւոյն շնորհօք առատացեալ.
Զեկեղեցւոյ կարգս յօրինեալ,
Եւ պանծելեօք վախճան առեալ.
Նոյս 'ի յերկնից վերածագեալ
Ի ձեւ խաչի մարմնոյն խաչեալ։
Բայց 'ի սոյին ուսուցըս լեալ
Խոսրով անուն ալեաց նըստեալ.

Զօր և Պարսից ըզնա կալեալ,
Ըզվասակապուհ փոխան եդեալ,
Եւ յետ սորա Հայոց տիրեալ
Պարսիկ Շապուհըն կոչեցեալ.
Ապա վերջինըն վերջացեալ,
Որ Արտաշէսն էր անուանեալ:
Ո՛ւմ Նախարարքըն ոչ հանդուրժեալ
Ի յաղտեղի գործոյն եղեալ,
Թագաւորին Պարսից մատնեալ,
Փոխան նորա պարսիկ տուեալ:
Եւ ըզՍահակ սուրբըն մերժեալ,
Որ այնմ իրի ոչ հաղորդեալ.
Որում փոխան Սուրմակ նստեալ,
Եւ Բարդիշու զնա յաջորդեալ:
Այլ Նախարարքըն զղջացեալ,
Առ հովուապետըն քաղցր եկեալ.
Աղերսական բանիւ մաղթեալ,
Լինել տեսուչ նոցա դարձեալ:
Սակայն սըրբոյն ոչ յանձն առեալ,
Այլ զհրաշալին տեսիլ պատմեալ.
Որք ողորմութեամբ մեծաւ լըցեալ,
Զկորուստ անձանց իւրեանց լացեալ:
Իսկ նա յաւուր, յորում ծընեալ,
Ի նոյն աւուր մահուամբ լուծեալ.
Մահկանացու յաշխարհ մեռեալ,
Անմահ յիշումն իւրեան թողեալ:

Տեսիլ սըրբոյն աստ կատարեալ,
Թագ և հովիւ Հայոց բարձեալ·
Զոր նախորոտմբն եցոյց ծալեալ,
Եւ գունդն ոսկի կատաւով ծածկեալ։
Սակայն սակաւ ամաց անցեալ,
Թոռըն սորին յառաջացեալ,
Այն որ Վարդան վերաձայնեալ·
Աստուածային հոգւով լըցեալ·
Մամիկոնեան զարմէ սերեալ,
Եւ սպարապետ Հայոց եղեալ։
Եկեղեցւոյ սիւն հաստատեալ,
Վասըն նորա նահատակեալ։
Արեամբ բազումք նիզակակցեալ
Սուրբ նախարարք հանդիպացեալ,
Որք վարդագոյն արեամբ գըննեալ
Զարքայութիւնըն խոստացեալ։
Զոր թէ կամի ոք հաւատեալ
Զեղիշային առ վերծանեալ·
Որ ցուցանէ զայս գործեցեալ,
Ի Յաղկերտի աւուրս եղեալ։
Ըզգըլուխն ոտիւքն 'ի բաց բարձեալ,
Զմեծըն փոքումբք տարամերժեալ·
Զհօտըն հովուօք սըրոյ տըւեալ,
Զգառինս գայլոց յափըշտակեալ·
Զերիտասարդըս խողխողեալ,
Ի մարց գըրկաց տըղայք գերեալ·

Ընկուսանս ոչ ոք սրգացեալ,
Ներքք յաղթուոյ պատուոյ անկեալ.
Ընքահանայս 'ի սուր մատնեալ,
Զայրս նոցա ոչ ոք լացեալ.
Որպէս Ղեւոնդ ալեօք ծաղկեալ,
Խմաստութեամբ պայծառացեալ.
Հեզըն Սահակ պատարագեալ.
Ոչ խոյ փոխան, այլ ինք զենեալ:
Սուրբըն Յովսէփ Հոգւով մաքրեալ,
Եւ այք նոցին աշակերտեալ.
Որ զերկնային լոյսըն տեսեալ,
Եւ պսակացն արժանացեալ.
Ստեփանոսի համանմանեալ,
Որպէս և ձայնըն վըկայեալ:
Զայս տեսութիւնըն գուշակեալ
Հարցըն մերոց նախատեսացեալ,
Ընքարկութիւնն անոխ սկըսեալ
Եւ մինչ առ մեզ ոչ կատարեալ:
Քանզի Պարսից յանժամ տիրեալ
Տանըս Հայոց Թագաւորեալ,
Սակաւ իշխանք ինչ ամրացեալ
Յամուր տեղիսըն բռնացեալ.
Եկեղեցիք հըրձիգ եղեալ,
Մանկունք նոցա ողբովք ցըրուեալ.
Պայծառ զարդուցըն խըրթնացեալ,
Կըտաւըն Թուխ նըշանակեալ:

Իսկ յետ ամաց սակաւ անցեալ,
Ժամանակացըն յերկարեալ,
Փոքր ինչ չարին աղօտացեալ,
Հայոց ոգի և շունչ առեալ.
Բագրատունեաց Թագաւորեալ,
Եւ մանաւոր Հայոց տիրեալ.
Եկեղեցիք լուսաւորեալ,
Նախարարաց գահ նորոգեալ:
Դարձեալ մեղաց մեր զարթուցեալ,
Զհարաւային ազգըն շարժեալ:

Նախ ըզՊարսից աթոռն առեալ,
Արեւելից տիրապետեալ.
Ապա 'ի մեզ հուրն այն վառեալ,
Եւ զընդհանուրըս Ճարակեալ:
Այս 'ի վաթսուն թուականին լեալ
Ամք չորք յիսուն զերկիր մանրեալ:
Եւ յետ սոցա այլ ազգ եկեալ,
Յանապատէ ինչ հեռացեալ,
Կրօնից նոցին հաւատացեալ.

Ի.քսան և չորս ցեղս որոշեալ:
Որոց և չափն էր ոչ չափեալ,
Բնութեան թըւոյ թիւըն յաղթեալ:

Արեւմտրրուք գաղմանացեալ,
Զաղէր գործովք անմանացեալ·
Զխիստմանութիւն տաճկաց առեալ,
Թէ և կրօնիւք հաւատարեալ,
Եւ ընդ աշխարհըս տարածեալ,
Ծովու յայս կոյս հանուրց տիրեալ:
Զօսկերըս մեր ըղչորացեալ,
Զոր էր նախկի ազգաց ծըծեալ,
Վիշապօրէն սոցա կըլեալ,
Եւ առխծուց նըման մանրեալ:
Զի 'ի համար թիւ ոչ անկեալ,
Անպարտ արեանցըն զոր հեղեալ·
Կամ ծառայից անգին գերեալ,
Եւ կամ յայանին որ վաճառեալ·
Կամ ըղջեցին յափըշտակեալ,
Որք ընդ ձեռամբ նոցին անկեալ:
Որոց այնքան աղքատացեալ,
Որպէս յերկաթ գոլով պընդեալ:
Թողից ըզչարըն մեծ առեալ
Զհոգւոց կորուստըն գործեցեալ,
Ի հաւատոցն ուրացուցեալ,
Եւ չար գործովք ապականեալ:
Արդ այսպիսի ազգօք տանջեալ
Վասն մեղաց մեր դառնացեալ,
Ի Սահակայ սըրբոյ սկըսեալ
Մինչեւ առ մեզ ոչ վըճարեալ·

Ի յաշխարհէ ծննդեան եղեալ,
Ի հայրենեաց տարամերժեալ։
Ցերկիր օտար պանդըխտացեալ,
Մինչ զի ըզմերըն մոռացեալ·
Զաշխարհըս մեր օտարք կերեալ,
Մեր առաջի աչաց տեսեալ·
Անմիտ ազգաւ զկըծեցուցեալ,
Բայց 'ի մեղաց ոչ ոք դարձեալ։
Նախնոյն աթոռ, յոր Լոյս ծագեալ,
Այն 'ի միգի կայ խաւարեալ·
Աթոռակալքըն հեռացեալ,
Տարաշխարհիկ շըրջագայեալ։
Տոհմ, որ Թագիւ փառաւորեալ,
Անարժանից ըստրուկ եղեալ·
Որք աշխարհաց բարձանց տիրեալ,
Ի քաղցելոց հաց մուրացեալ։
Սակայն բնութեան ազգին պահեալ,
Որ պահլաւունիկըն կոչեցեալ·
Թէ և Թագուն իւր ամփոփեալ
Ցռամիկ ազանց միջի ծածկեալ,
Միայն ինքեանց ներհուն եղեալ
Որ յայնմ' ազգէ գոլով սերեալ,
Որդի ըզհայր փոխանակեալ,
Մինչև առ մեզըս հասուցեալ·
Ի նախնական հօրէ սկըսեալ
Ի Պարթևէն լուսաւորեալ,

Մինչ 'ի Վատիկ քաջըն հասեալ՝
Այն որ արեամբ նահատակեալ։
Յորմէ Գրիգոր որդի ծընեալ,
Որ մազխարոս վերապատեալ.
Աստուածային շնորհօք լցեալ,
Իմաստութեամբ պայծառացեալ.
Հօրըն մերոյ նա հայր եղեալ,
Ըստ մայրականըն միջնորդեալ։
Ի յարքայէն Յունաց պատուեալ,
Եւ նահանգաց յորունց տիրեալ.
Տեառնականաւըն ճոխացեալ,
Եւ երկիւղիւըն զարդարեալ։
Ըստ Հոմերոյ տաղաչափեալ,
Ըստ Պղատոնի պերճաբանեալ.
Յունականին ներհուն եղեալ,
Յարն իմաստիցըն մակացեալ։
Զաստուածաշունչ տառ. վերծանեալ,
Որ ըստ օրէ 'ի նոյն կըրթեալ։
Եկեղեցիս վայելչացեալ,
Եւ հայաստան աշխարհ շինեալ.
Ըզկրօնաստանըս յարդարեալ,
Ըզվանականըս յանձանձեալ.
Զարդիւնական անձն ընկալեալ,
Զվարդապետաց հօյլ ժողովեալ։
Հայր ըստ Յորայ որոց եղեալ,
Այրեաց զարանց ըզխնամ՝ ածեալ։

Ըզնիւթական գանձ ըստացեալ,
Տնանկաց յանձինս սերմանեալ.
Զի մինչ գարուն հոգւոյն հասեալ,
Բազմաբեղուն պտղաբերեալ:
Սա այսպիսի վարուք կացեալ,
Ըստ Աստուծոյ ուղեւորեալ,
Ժամանակաց ինչ յառաջեալ,
Եւ առ նախնիսըն յաւելեալ.
Ժառանգ կենաց յետ իւր թողեալ,
Այս է զորդին բարեմանեալ,
Պալհաւունին յիւրմէ սերեալ.
Ի գրիգորեանց շառաւեղեալ.
Որոյ Վահրամ անուանադրեալ
Յառաջագոյնըն կոչեցեալ,
Մինչ դեռ զօրաց իշխող եղեալ.
Ի հայրենին յաթոռ նըստեալ,
Մինչ յաշխարհի օրէնս կալեալ,
Եւ 'ի խառնիցն արտակացեալ.
Քանզի Հոգւոյն էր նըւիրեալ,
Եւ 'ի նորա մասին հասեալ:
Իսկ յորժամ զայսպիսիկ ըւծեալ,
Զառ 'ի սորբեւս արհամարհեալ,
Ըստ ամենայն իր փոփոխեալ,
Մինչեւ անուանըն փոխադրեալ:
Որպէս Սաւուղ վայրենացեալ,
Ըզկնի Պաւղոս ընդմանացեալ.

Նոյն և Վահրամ նախատացեալ,
Գրիգորիս վերաձայնեալ։
Քանզի մինչ խուրքըն կամեցեալ
Թէ առ Նովաւ զուարճացեալ,
Նա զՅիսուսի բանըն յիշեալ,
Եւ այնոքիւք զինքըն խրատեալ,
Թէ որ ոք ոչ զանձն ատեցեալ
Եւ ըզկնի իմ զխաչըն բարձեալ,
Նա աշակերտ իմ ոչ եղեալ,
Անճառ փառացն ոչ հաղորդեալ։
Զայս ոչ բանիւ լոկ ասացեալ,
Կամ 'ի սըրտին խորհըրդածեալ,
Այլ և գործովըն կատարեալ,
Եւ յերկնային ուղին սկըսեալ։
Զաշխարհական ձեւ մերկացեալ,
Զիշխանական կամար լուծեալ.
Ըզհեզութեանըն կերպ առեալ,
Զխոնարհութե լուծըն սանձնեալ.
Ի յիւրայոցըն հրաժարեալ,
Եւ յանապատըս հետեւեալ.
Ճամանկրոնից հաւատարեալ,
Առաքինի վարուք կըրթեալ.
Յօրէնըս տեառն 'ի տուէ խորհեալ,
Ի գիշերի 'ի նոյն տքնեալ.
Ըզվկայութիւն տեառըն քըննեալ,
Եւ բոլորով սրտիւ խնդրեալ.

Ընդ Ճանապարհն ամբիծ գնացեալ,
Երանութեանց արժանացեալ.
Յանապատի առանձնացեալ,
Ըստ Յովհաննու պահօք սնեալ:
Բայց չէր արժան լուսոյն թաքչել,
Կամ քաղաքին անտես եղեալ.
Այլ յաշտանակըն բարձրացեալ,
Եւ ընդ հանուրըս ծաւալեալ:
Զի մինչ յաւուրսըն յայն հասեալ,
Հայոց հովուացըն վախճանեալ,
Տուն պետրոսեան 'ի բաց բարձեալ
Որպէս Հեղեայն այն ծերացեալ.
Որով Յունացն ընդ մեզ 'չարեալ,
Այլում լինել թոյլ ոչ տուեալ,
Զի անտերունչք՝ ամէն՝ եղեալ,
Լիցին 'ի կրօնըս մեր դարձեալ:
Յայնժամ արքայն մեր կոչեցեալ
Գագիկ անուն վերաձայնեալ,
Այն որ ըզԿարս 'ի Յոյնս տուեալ
Եւ զԾամընդաւ գըղեակն առեալ,
Զանխիւ մեծաւ գուն գործեցեալ,
Ինչըս բազումն անթիւ ծախեալ,
'Նա և ըզԿարս նախատացեալ
Այլըր խընդրոյ փոխանակեալ,
Զի հովուապետ Հայոց դարձեալ
'Նըստացի յաթոռն ունայնացեալ:

Որդ ըղձից այսըր հասեալ,
Եւ մատանեաւ ոսկի կընքեալ,
Մինչ ըղձեհին հրաման առեալ,
Զհարըս Հայոց անդ ժողովեալ.
Եւ միաբան խորհըրդածեալ,
Զարժանաւոր խընդրոյն գըտեալ.
Ի վերնական խնամոց յայտնեալ
Յագարակի գանձըն ծածկեալ,
Այն որ ղօղեալ և թաքուցեալ
Յանապատի լոյսն ամփոփեալ:
Ընդ որ հանուրց կամաց հաճեալ,
Առ 'ի խնդիրըն յորդորեալ,
ԶԳրիգորիս յառաջ ածեալ,
Որ և Վահրամ նախաձայնեալ:
Ուստի նորա զայն ծանուցեալ,
Եւ 'ի պատուոյն յետ նահանջեալ,
Զինքըն անարժան այնմ ասացեալ,
Ընդ Աստուծոյ միջնորդ եղեալ:
Բայց յամենից բռնադատեալ,
Եւ յականց հարկաւորեալ,
Օծմամբ Հոգւոյն ըզնա օծեալ,
Յաթոռ նախնոյն վերանըստեալ:
Նոր Ահարոն խոյրիւ պըճնեալ,
Եւ Սամուէլ տեառն ընծայեալ.
Եկեղեցւոյ վէմ հիմն եդեալ,
Վերուստ կոչմամբ անօթ ընտրեալ:

Որ և սոցունց համեմատեալ,
Զեկեղեցիս լուսաւորեալ.
Երկրորդ Մեսրոպ մեզ երեւեալ,
Զգիրըս բազումըս Թարգմանեալ.
Առ 'ի Յունացն և յասորւոց
Ճառըս սըրբոց վերաբերեալ:
Տօն յիշատակ Նոցա կարգեալ,
Ընթերցուածովքըն զարդարեալ.
Զորս ոչ միայն լոկ վերծանեալ,
Այլ և վարուցըն նախանձեալ.
'Ստ որում անուն իսկ ընկալեալ,
Վըկայասէր վերաձայնեալ:
Ժառանգութիւն ոչ ըստացեալ,
Ոչ 'ի միում վայրի բնակեալ.
Պանդըխտաբար յերկրի շըրջեալ,
Զքաղցեալ հոգիսըն կերակրեալ.
ՅԵրուսաղէմ քաղաքըն երթեալ,
Ուր փըրկութիւնըն մեր ծագեալ.
Եւ 'ի սըրբոց գիրըս հասեալ,
Յոր վայր Նոցա նահատակեալ.
Յարեւմտականըն ժամանեալ,
Ուր ազգ Հայոց բազում լիջեալ.
Անդ ըզնոսին լուսաւորեալ,
Եւ 'ի հաւատըս հաստատեալ:
Անդուստ ընդ ծովըն մեծ անցեալ,
Յեգիպտականըն փոփոխեալ.

Յայլասեռիցըն մեծարեալ,
Եւ յարքայէ նոցունց պատուեալ։
Ընդ սուրբս որ անդ շրջագայեալ,
Առ կենդանեօքն և հանգուցեալ․
Յորոց ծաղիկըս հաւաքեալ,
Քաղցըր վարուց ըղձիւթ առեալ։
Անդ 'ի յաթոռըն սուրբ եդեալ
Զառ 'ի քեռէն որդի ծընեալ,
ԶԳրիգորիոս համանուանեալ,
Զհօրըն մերոյ եղբայր եղեալ․
Զայն որ շնորհօք Հոգւոյն լցեալ,
Անբիծ վարուք սըրտիւ մաքրեալ․
Զայն որ լուսոյ հանգոյն ծագեալ,
Գետոց նըման առատացեալ․
Որ Յովսեփայ մեծին նմանեալ,
Ըզհամազգիս ըզկնի ձըգեալ,
Զարի եղբարս իւր քաջացեալ,
Ըստ Յեսուայ զօրապետեալ․
Որոյ Վահրամ վերաձայնեալ,
Միւսոյն Վասակ անուանադրեալ․
Որք վեհագոյն փառս ընկալեալ,
Եւ մեծարգի պատուոյ հասեալ,
Ըզպատերազմ ազանց վանեալ,
Հակառակաց յաղթող գըտեալ։
Վասն այսորիկ շըքեղացեալ,
Եւ աշխարհի նոցունց տիրեալ։

Ուստի մեծի հովուին դարձեալ,
Գալ յարեւելս խորհեցեալ,
Զխուր սիրեցեալն որդիացեալ
Եւ չհամանունն անդ հաստատեալ,
Ինքն 'ի նոյեան լաստին եւեալ,
Ցերկիր ուղիղ առաջնորդեալ.
Զօթեւանօք զանց արարեալ,
Մինչ 'ի Տաւրոս լեառն հասեալ.
Անդ ուր սրբոցն բնակք եղեալ,
Եւ 'ի մարմնի հրեշտակացեալ.
Միշտամբրունս փառաբանեալ
ԶԵրրորդութիւնն ամենօրհնեալ:
Ի վայելուչ յայն վայր եկեալ
Հովուապետին ըղձօնացեալ,
Ի Սեաւ մրթին լեառն անուանեալ,
Ուր են հոգիք լուսաւորեալ.
Զյորդնավերրդով կեանըս թողեալ,
Զոր և երազ էր ծանուցեալ,
Ցաստուածային փառըս ձըգնեալ
Եւ զանմարմնոց կեանս ընկալեալ,
Զբանի սիրողըն հաւաքեալ
Եւ առ ինքեան բնակեցուցեալ:
Զգիրըս Հոգւոյն միշտ ընթերցեալ,
Եւ ընդ նոսին յար խօսակցեալ:
Ի մէջերկրեայս անդուստ փոխեալ
Որ Նփրատայ մերձ առկացեալ

Քաղաք Քեառն իմն անուանեալ,
Ցոր հուպ է վանք Կարմիր կոչեալ։
Անդ յիշխանէ պատուասիրեալ,
Աստուածասէր անձն երեւեալ,
Որդ Վախլ անուն ձայնեալ,
Նախ եղուզակ մականուանեալ.
Այն որ յաւուրսն յայն ոչ եղեալ
Նըման Նըմա գովաբանեալ.
Նըմին հանգոյն գերազանցեալ
Եւ ամուսնոյն բարեմասնեալ։
Նոցա զհովւէն խուրեանց բերեալ,
Որպէս ըղձայր սուրբ յանձանձեալ.
Զոր ըսփոփմամբ ծերատածեալ,
Յաշխատութեանցըն հանգուցեալ։
Փոքր ինչ նորա անդ յապաղեալ,
Բնաւորականն ախտի շարժեալ,
Թէ երկրային է՝ ծանուցեալ,
Եւ ընդ բնութեամբ մահու կապեալ.
Որով մարմնոյն կապից հատեալ,
Հոգւին արագ յերկինս թռուցեալ.
Եւ որոգայթ որսոյն փըշրեալ,
Որպէս ձընձղուկ հոգւին ապրեալ։
Պատկերն յերկրի զնիւթըն թողեալ,
Առ սկըզբնատիպն ինքեան փոխեալ.
Զգանձըն տուողին ՚ի մէնջ բարձեալ,
Խեցըն անօթ ունայնացեալ։

Զոր սաղմոսիւք օրհնաբանեալ
Քահանայից դասուցն ասեալ.
Եւ 'ի շիրիմ մահու եդեալ
Հուպ 'ի խորանն՝ որ անդ շինեալ.
Ոչ 'ի նախնեաց գիրըս թաղեալ,
Այլ յօտարաց պանդխտացեալ.
Աբրահամու յայս նըմանեալ,
Գնոց արծաթոյ շիրիմ ստացեալ:
Այլ 'ի յաթոռ իւր հաստատեալ
Բաղխելոս անուանագրեալ,
Արեանատուն հարազատեալ,
Օծմամբ Հոգւոյն նախ ձեռնագրեալ:
